

# ՊԱՐՈՒՅՐ



# ՍԵՎԱԿ



ԳՄԴ 84<7

Ս 411

Կազմեց՝ Հ. Հ. Ֆելիքսովը

# ԱՆԼՈՒԼԻ ԶԱՂԱԿԱՏՈՒՆ



Սևակ, Պ. Ռ.

Ս. 411 Երկերի ժողովածու: 3 հատորով/Կազմ.— Հ. Հ.

Ֆելիքսովն.— Եր.: Սովետ. գրող, Հ. 2, Պուբլիշ. 1983,

464 էջ/

Հատորում զետեղված են «Անլուլի զանգակատուն», «Եռաձայն պատարագ», «Եվ այր մի՛ Մաշտոց անուն», «Ուշացած իմ սեր», «Երգ երգոց», «Նահանջ երգով», «Հավատարմությունը սրտի արատ չէ» և «Ֆրանչեսկա դա Ռիմինի» պոեմները:

Ս 4702080200 (966) 83 «Տ»  
705 (01) 83

ԳՄԴ 84<7  
Ար 2



# ՅԱՅԳԱԼՈՒՅՍԻ ՀԱՄԱՁԱՆԳ

## ՂՈՂԱՆԶ ԱՎԵՏԻՍԻ

Հավար ութ հայրուր վաթառնինն թվին  
Հայոց ալգիներն ի՞նչ պտուղ տվին.  
Հայոց արտերում ի՞նչ բերք էր հասել,—  
Դժվար է ասել:

Սակայն այդ թվին Մայր Հայաստանի  
Արգանդը եղավ սրբորեն բեղուն:  
Մի մանուկ ծնվեց Լոռվա Դսեղում...  
Նա հետո պիտի դառնա պատանի,  
Եվ երիտասարդ, և այր իմաստուն,  
Անբախտ Մարոյին լացով սպանի,  
Մեր հառաջանքը հասցընի Աստծուն:  
Մըուռից դադված նրա բերանով  
Սարովի նանը պիտի որք ասի,  
Մսրա զորքի հետ Դավիթը խոսի,  
Գիքորը կանչի. «Էստի՝ համեցեք...»:  
Նա պիտի երգի՝ ինչ է կամեցել  
Իր մոխրակալած-իրակեկ հոգին  
Եվ՝ որքան տրտում—նովնքան կենսագին՝  
Տարիներ հետո նա պիտի դառնա  
Մի ժողովրդի ազնիվ կենսագիր...

Մինենուն թվին, Լոռուց շատ հեռու՝  
Անատոլուի խավար խորքերում  
Մեկ ուրիշ մանուկ լուս աշխարհ եկավ:  
Մինչ հայրը նրա՝ Գևոն կոշկակար,  
Գոգնոցը հանեց, արխալուղ հագավ,  
Հարևան-դրկից՝ մի-մի շիշ օդով՝  
Նրա տուն մտան՝ աչքալուսանքի:  
Հետո հերթն եկավ կանանց հոսանքի.  
Մի թաս խավիծով կամ ձվածեղով՝  
Ծննդկանի շուրջ նատեցին նրանք՝  
Որդուն մաղթելով արևշատություն,  
Նորատի մողը՝ շուտ ապաշխարանք,  
Աղվորիկ մի հարս,  
Բարի տատություն...

• • • • •

Երևի այդօր—  
Եթե ոչ մարդկանց,  
Գեթ ամենալուր և ամենապոր բնության համար—  
Տոն էր անսովոր.  
Չէ որ նա գիտեր, թե ում է ծնել,  
Լսում էր չէ որ,  
Թե ինչ նվագներ և ինչ անհամար,  
Ինչ հայաշխարհիկ երգեր են հնչում  
Այդ երկու թիվիկ նորածինների  
Դեռ ոչինչ չասող առաջին ճիշում...

Երևի և լուր ցերեկը ձգվեց՝  
Քսից նոր զարթնած կտրիծի նման,  
Ծով ստվերները՝  
Հարված սպասող շնիկների պես պոչերը քաշած՝  
Լուր կծկվեցին...  
Երևի ահեղ ջրվեժներն այդօր  
Հոսեցին անձայն, ինչպես նկարում,

Եվ լույսը երգեց,  
Քարը պար եկավ...

Անատոլովի ավագութներում երևի այդօր  
Մարդիկ—քնի մեջ—ըմացեցին զովը Լոռվա ձորերի,  
Զահել այրու պես ծարավ արտերը և այգին պայպակ  
Հագուրդ ստացան կրօու Դնբեղի ջրից անապակ...

Իսկ Լոռվա ձորում քուն մտած մարդկանց  
Երակ այցելեց,  
Մի հրաշչի՝ ց-անսուվո՞ր երակ.  
Հարավից չված հապարան մի հավք,  
Սոխակի ձայնով-ուժով անգըղի,  
Աքլորների հետ լուսայգ շեփորեց կտուրներն ի վար,  
Հետո դարավոր կաղնու փչակը կտցով քչփորեց  
Եվ—մե՛կ էլ հանկարծ—

Իր կտցի վրա այստեղից հանեց  
Չողեր ծալծըլված,  
Չողեր դարսիդարս՝

Օձունի վանքի Շարակնոցի պես:  
Մինչ այդ շողերը, ծալ-ծալ բացվելով,  
Հենց այն է պիտի— ծլընգ հա՛ ծլընգ—զնգային կտշմիր,  
Հապարան հավքը հրթիռվեց-գնաց՝  
Վերև սուրացող ասուայի նման,  
Եվ... թառե՞ց արդիոք Լուսաստղի վրա,  
Թե՛ ինքը դարձավ Լուսաստղը մի նոր...

... Երևի այդօր—քանի՛ դար հետո—  
Երկինք ու երկիր հաշտվեցին նորից...  
... Երևի այդօր— քանի՛ դար հետո—  
«Հայաստան» բառից պոկվեցին-ընկան  
«Ռուսա»-ն ու «Տաճկա»-ն...

## ԴՈՂԱՆՁ ՈՐԲՈՒԹՅԱՆ

Իր ժողովրդի զավակն իսկական  
Ժողովրդի պես ինքն էլ որք մնաց.  
Նա նույնիսկ չկար և մի տարեկան,  
Երբ... մայրը գնաց:

Ա՛յս, եթե գնաց՝  
Նրա լույս հոգին թող որ համբառնա,  
Արժանի դառնա  
Իր հավատացած երկնային գահին:

Բայց ինչո՞ւ գնաց Հայոց Թագուհին:

Մնար  
Ու ծիծ տար  
Իր Սողոմոնին— մեր Կոմիտասին:  
Մնար  
Ու հոգար  
Մեր մինուճարի— իր որդու մասին:

Մնար ու նրան մայրություն աներ.  
Հուսահատության, տրտմության պահին  
Նրա ձակատի ամպերը վաներ,  
Նախ՝ նրա ոտի  
Ու հետո՝ սրտի  
Փշերը հաներ:

Մնար, որ հետո,  
Ըա՞տ ու շա՞տ հետո,  
Երբ որդին քայլեց մութ արահետով,  
Որ անդարձ եղավ ու եղավ անել,  
Թերևս նա իր մայրական սրտով  
Իր մինուճարի ու մեր հանճարի

Սև ցավը տաներ...

Մնար,  
Որ նրան մի ողջ ժողովուրդ  
«Մեծ Մայր» անվաներ,  
«Վեհամայր» կոչեր.  
Մի ողջ ժողովուրդ սուրբ ձեռքը նրա  
Իր բերնին տաներ,  
Փեշերը պաչեր...

Մնար... Զմաց:

Գեթ հայրը մնար...  
Բայց հայրն էլ գնաց,  
Երբ որդին չկար տասը տարեկան:  
Իր ժողովրդի զավակն իսկական՝  
Ժողովրդի պես նա որբուկ մնաց:  
Նա մնաց անտուն, մնաց բնավեր:  
— *Տո լա՛ձ տնապեր...*

Եղավ անդադար, եղավ բնավեր:  
— *Տո լա՛ձ տնապեր...*

Գրկանոց հասակ, վիրավոր սրտիկ,  
Աչքերում արցունք, ճակատին՝ քրտինք,  
Աշնան պաղ քամուն ու ձմռան ցրտին  
Որբուկն ո՞ւր մնա, որբուկն ո՞ւր գնա,  
Որտե՞ղ տաքանա, ո՞ւսի թոնրան շրթին:  
— *Տո լա՛ձ տնապեր...*

Որբուկի սիրտը՝ ապակի փշուր,  
Ա՞խ, դրսից կարմիր— ներսից փուշ մասուր,  
Որբը՝ մոլոր գառ, աշխարհքը՝ մասուր,—  
Ո՞վ նայի վրան կամ ո՞վ տա նրան  
Մի պատառ ժպիտ, շոյանք մի փշուր:  
— *Տո լա՛ձ տնապեր...*

Դռնեդու երգեց— ձայնը՝ կլկըլան,  
Բերանն էր կերգեր, իսկ աչքը կուլար,  
Դունչիկից կելներ ծխի տաք քոլան,  
Սրտիկն էր երվում, սրտիկ սևավո՞ր,  
Ցավերն էին փուքա, անձիկն էր քուրան...  
— *Տո լա՛ձ տնապեր...*

Երկու ձիգ տարի նա այսպես պիտի  
Ման գա երգելով ու շուրջը դիտի  
Մի հացի հուպսով կամ մի հավկիթի,  
Միտքը՝ հազար տեղ, աչքը՝ մի կետի...  
Սկիպրդ խոց էր, վերջը՝ ո՞վ գիտի...  
— *Տո լա՛ձ տնապեր...*

## ԴՈՂԱՆՉ ՑՆԾՈՒԹՅԱՆ

Գևոն չթողեց որդուն ապարանք,  
Ոչ էլ թագուհին թողել էր գանձեր,  
Բայց ինչ ունեին-չունեին նրանք՝  
Իրենց որբացած որդուն էր անցել:

Իսկ ի՞նչ ունեին: Լոկ ձայն կլկըլան.—  
Մերթ այնպես մեղմիվ,  
Ասես թե զինով լցնում են կուլան.  
Մերթ այնպես զնգուն,  
Ասես թե կիրճում հովն է շնկշնկում.  
Մերթ այնպես խաղաղ,  
Կաքավն է ասես սաղմոսում «կղա».  
Մերթ այնպես հորդուն,  
Ասես ընկել ես ջաղացի ջրտուն...

Նրանք գիտեին իրենց Կուտինան՝  
Անատոլուի խավար խորքերում:  
Բայց նրանք, դիցուք, և գիտենային,  
Թե իրենց պապի պապին ու քեռուն  
Գաղթի Ճամփան է բերել հասցըրել  
Ինչ-որ Ցղնայից այս Կուտինային:

Այսքանը թեկուկ և գիտենային:  
Ո՞վ պատմեր սակայն, որ գյուղն այդ Ցղնա  
Եվ Մասյաց փեշը Գողթանն է չքնաղ:

Արդեն կիսակույր՝ տաճկախավարից,  
Ո՞վ պատմեր նրանց Գողթան գավարից,  
Գողթան գավառի երգասաններից՝  
Վիպող-վիպասան մեր գուսաններից:

... Փանդիով գրկած ու վինը ծնկան,  
Իրենք իրենցով ու դիցով լեցուն՝  
Դուռ-դարպասների սալքարին նստել,  
Երգել են նրանք վեպը Սաթինկան,  
Աչքերն են գովել Ալանաց դստեր,  
Եվ խոսքը խելոք, և մեջքը բարակ,  
Եվ Արտաշիսի սիգալը արագ՝  
Զեռքին շիկափոկ-ոսկեօղ պարան...  
Իսկ Արտավաշ փըր, որին և տարան  
Քաջքերը ի վեր Ազատն ի Մասիս...  
Իսկ հապա հպարտ Տրդատի՛ մասին,

Որ սեգ սիգալով՝  
Իր հումկու քայլով  
Գետերի թմբեր և ամբարտակներ  
Ավիրեց տարավ...  
Իսկ Շամիրա՛մը պազշոտ  
Ու տաքշող,  
Գեղեցիկ ապրած-գեղեցիկ մեռած  
Գեղեցիկ Արա՛ն...

Հաճախ կույր ծնված, անուս ու թերուս,  
Բայց միշտ ողողված կրակով ներքին,  
Իրենց յոթնադի տավիղը ձեռքին՝  
Նրանք են երգել ծնունդն այն աստծո,  
Որ հուր հեր ուներ, բոց ուներ մորուս,  
Երբ երկնում էր ծով, երկիր ու երկին,  
Երբ ծովս էր ելնում եղեգան փողից,  
Երբ բոց էր ենում եղեգան փողից...

Երգել են նրանք մեր պտղած հռոյից,  
Գինուց, խաղողից,  
Մեր սրտի դողից,  
Երգել են նրանք մեր ցորեն հացէց,  
Մեր խինոյ ու լացից,  
Մարտում ընկածից.  
Խորհել՝ երգելով,  
Նվազով ցավել,  
Երգել ձեռքերով՝  
Պարել-կաքավել...

Ո՞վ է մեզ տվել, եթե ոչ նրանք,  
Փող ու թնբուկին խաղացող մատներ,  
Լեռն ի վար վարգող եղնիկի ոտներ,  
Եվ նավասարդան թարմ առավոտներ,  
Եվ առավոտներ վառ Վարդավառի,  
Եվ ծուխ ծխանի՝ հայրենի կրակ,—  
Ո՞վ է մեզ տվել, եթե ոչ նրանք՝  
Վիպասանները Գողթան գավառի:

... Ո՞ւմ մտքով կանցներ, թե Գողթնից գարված,  
Գերանը շարդած ու պյունը խախտած  
Խնչ-որ տնակի կիսախավարում,  
Գողթնից շատ հեռո՞ւ, մի խորթ գավառում,  
Որտեղ վարակը օտար շարավի  
Ուտում էր մարմին ու հոգի կրծում,—  
Ո՞ւմ մտքով կանցներ, և ո՞վ էր կարծում,  
Թե այսի շողա Գողթան շառավիդ,  
Պիտի բոցկլտա Գողթան պայապատ՝  
Նույնքա՞ն հարապատ,  
Նույնքան հայ ապատ,  
Որքան և նրանք,  
Արժանի ժառանգ  
Գողթան գավառի հայ գուսանների,

Փողիար փանդրահար վիպասանների՝  
Օտարի շնչից վանագանելի,  
Այդքանով՝ նաև անհասանելի...

Ո՞վ է հասկացել քմայքը բախտի,  
Եվ այն էլ... հայոց.  
Հանկարծ կեռմանը ազգավեր գաղթի՝  
Կածանը վայոց,  
Դառնում է ճամփա համահավաքման,  
Խոյանք է դառնում թոփչը անկման...

Ո՞վ է հասկացել քմայքը բախտի,  
Եվ այն էլ... հայոց:

## ԴՈՂԱՆՉ ՀՈՒՍՈ

Ութառնմեկ թիվ: Վաղարշապատ: Եջմիածին:

Միրգ ու փողի: Ասխիղճ արև:

Շողամըցում Մասիսների, Արագածի:

Սրբագրծված հին-հին քարեր:

Եվ Մայր Արաքս: Եվ Մայր Տաճար:

Տաճարի շուրջ՝ սուրբ-սուրբ վանքեր,

Հնչող,

Հնչող,

Կանչող զանգեր...

Եվ Ճեմարան՝ մտքի կաճառ:

Ճեմարանի բակում արձակ,

Որտեղ էլ որ աչք ես ածում՝

Զարմանալի հավաքածու

Խոսվածքների, տարավների:

Ու բոլորի դեմքի վրա՝

Վայն, տպասում, անքնություն,

Խոսուն հետքեր երավների:

Ամեն մեկը՝ մի գավառից,

Եվ բոլորը՝ դեռ աղվամազ:

Ամեն մեկը խիտ խավարից՝

Երավում է լուսի մի մաս,

Նույնն է ուզում.

Ուսո՞ւմ, ուսո՞ւմ...

Եվ նրանց մեջ՝ սրան նայիր,  
Հազին տարած տաճկահայի.  
Կարմիր շապիկ, կանաչ վարտիք՝  
Վրան պնդած մազե գոտիկ,  
Նախշուն գուլապ՝ վրան զոլեր,  
Ու պշչավոր մաշված սոլեր:  
Դեմքը՝ գունատ, բայց խորոտիկ,  
Իսկ հայացքը՝ քեե՞ր-ցոլե՞ր...

Ամենքն՝ իրար մոտիկ-մոտիկ,  
Իսկ նա՝ անվերջ մեն ու մենակ:  
Թե վարնեին սրտին դանակ՝  
Մի պուտ արյուն դուրս չեր հոսի:  
Ո՞նց չմնա նա մեկուսի,  
Ո՞նց խառնչվի, ասի-խոսի,  
Թե... հայերեն վատ է խոսում:  
Բայց նա, մեկ էլ աստված գիտի,  
Թե ինքն ինչպի՞ս, ոնց է ուզում  
Ուսո՞ւմ, ուսո՞ւմ:

Սակայն նրան

Ո՞վ կընդունի, այն էլ... որտե՞ղ—

Մի հոգնոր ուսումնարան,

Որի անը մի օր պիտի

Հազնի սքեմ վարդապետի:

Իսկ նա...

Եվ նա վաղը պիտի

Երգի ի լուր և ի վճիռ

Համայն Հայոց Հայրապետի...

## ԴՈՂԱՆՉ ՆԵՐՄԱՆ

Եվ նա սկըսեց... թուրքերեն երգել:

Մանկական ձայնը՝ մկրում կերկեր,  
Վայրիանմեր հետո ինքն իրեն գտավ,  
Հունի մեջ մտավ  
Ու գնա՞ց-զնա՞ց:

Կաթողիկոսը մթագնեց մնաց:  
Մինչ հանկարծահաս զայրույթի ծնած  
Կրակը վառվեց ծեր աչքերի մեջ՝  
Հենց նոր սկսվող ժպիտը հանգավ:  
Առաջին անգամ,  
Առաջին անգամ  
Ա'սո՛ Վեհարանի իին պատերի մեջ,  
Սրբապղծորեն թուրք երգ է մխում...  
Ա'սո՛ հայոց հոտի այս սուրբ փարախում,  
Հովքապետն ինչք ականջ է կախում  
Ինչ-որ մի մանկան անօրեն երգի...  
Ա'սո՛, ուր հնչել են մեղեդիք ոսկի՝  
«Հայր մեր», «Միայն սուրբ»,  
«Ա բ ե գ ա կ ն ա ր դ ա ր»,  
«Ո վ կ ա ր մ ա ն ա լ ի»  
Կամ «Խ ո ր հ ո ւ ր դ ի ն ո ր ի ն»,  
Ուր գրաբարն է հնչել դարեդար  
Եվ շարականն է հուզել բոլորին,—  
Ա'սո՛ Վեհարանի իին պատերի մեջ,

Առաջին անգամ,  
Առաջին անգամ

Սրբապղծության մանանելու ընկավ...  
Բայց Վեհափառը իր վեհ դերի մեջ՝  
Ինչպես վայել է՝ անայլայլ մնաց:

Իսկ մանկան ե՞րգը... թա՞փ առավ գնաց:

Գնա՞ց-բարձրացա՞վ,  
Եկա՞նց-ցածրացա՞վ,

Քարեքար ընկավ, պատեպատ խփեց,  
Եվ հետո՝ կրկին պոկվե՞ց ու գնա՞ց,  
Մի վայրկյան օդում կախ ընկավ մնաց,  
Մի անտես թելով կարծես թե կապվեց  
Եվ, մի պահ հետո, հանկարծ ցած թափեց.  
Թափլեց՝ նշենու ծաղկաթերթի պէս,  
Հին վանքի ծեփի ճաքած շերտի պէս...

Բառե՛րը... եղո՛ւկ: Իսկ ձայնը... զուզա՛,  
Այդպես լեռնային վտակն է կարող

Քարերի վրա ծիծաղել ու լալ:  
Բառե՛րը... եղո՛ւկ: Իսկ ձայնը... գերո՛ղ.  
Մերթ բողոքում է ու գանգատ անում,  
Մերթ՝ դառնում այնպես կսեմ ու բարի,  
Կարծես հինավորց այս Մայր Տաճարի  
Երկինք խոյացած կանգակատընում  
Լուսիւլ են մի նո՛ր-անլեզվա՞կ մի զանգ՝  
Մի համակ հուզանք...

Թվաց՝ ամպերն են բացիսուփիկ խաղում,  
Թվաց՝ երկինքն է կապուտ ծիծաղում,  
Թվաց, թե շոգը հանկարծ կոտըրվեց,  
Թվաց, թե մի հին երդում կատարվեց...

Կաթողիկոսը մի պահ մոռացավ,  
Թե ինքը որտե՞ղ և ի՞նչ է անում,  
Ովքե՞ր են շուրջը՝ իր Վեհարանում,—

Եվ այդքանի մեջ,  
Ասես քնի մեջ,  
Նա դանդաղ ժպտաց  
Աչքերով իր թաց:

Հետո ժպտը սկըսեց հալվել  
Ու հետպիետե անհետ վերացավ,  
Մինչդեռ աչքերի թացն ավելացա՛վ,  
Թացն ավելացա՛վ ու ավելացա՛վ...

Փղձկացող Վեհը հազիվ բարբառեց.  
— Որյա՞կ իմ, ո՞րք իմ...  
Ու ձախը մարեց:

## ԴՐԱՆՉ ԱՐԹՆՈՒԹՅԱՆ

Եվ վարանումից, վեճերից հետո,  
Իբրև եկակի մի բացառություն,  
Կանոնագրքի մի վանցառություն,  
Անհայտ օրենքի չգրված կետով՝

Լոկ ձայնի՛ համար  
Համարվեց նա սան:

Այդ կիսիչ ամառ  
Նոր բոթեր հասան:

Սուլքան Համիդը, ի փառս աշահի,  
Ի նշան ահի  
Ամեն մի հայի  
Եվ ի գիտություն  
Իր երկար քթով ամեն տեղ մտնող  
Այդ Եվրոպայի,—  
Սուլքան Համիդը տարավ ու բերեց  
Եվ—

Ապտակի տեղ,  
Ապտակի նման—  
Ծը՞իսկ՝

«Հայաստան» բառը արգելեց,  
Լեզվից, քարտեզից, գրքերից քերեց.  
— Զնշում եմ, չկա՛,  
Ալլա՛հը վկա:  
Եվ չի՛ էլ եղել,

Եվ չի՝ շինելու,  
Քանդողը ես եմ,  
Ո՞վ է շինելու...

Խվապես, քանդածն ո՞վ պիտի շիներ,  
Թե Ալեքսանդրը ցարն է իր հերթին՝  
Սուրբ խաչելության նշանը սրտին,  
Քրիստոնեական ժախտը շրթին՝  
Իր «ամենագութ» ձեռքով ցարական  
Հայոց պատմությունն, իբրև առարկա,  
Արգելեց բոլոր հայ դպրոցներում.

— Զկա՛, չի՝ եղել...

Սուլթանն ու արքան  
Ձեռք ձեռքի տպին  
Միննույն թվին...

Իսկ ձեմարանո՞ւմ...

Թուրքախոս սանի կարոտ բերանում,  
Անուշ մրգի պես, բայց չհավելով,  
Ի՞նչ բառեր էին հիմա քաղցրանում,  
Անհայտությունից հանկարծ բարձրանում

Քաջն Հայկ, Արամ,  
Տիգրան Մեծ, Արա,  
Մաշտոց, Եղիշե,—  
Ո՞ր մեկին հիշել...

Եվ չժանգուած հին բանալիքը մեսրոպյան տառի,  
Նախ դժվարությամբ,  
Բայց հետզիետե մի լուրջ բարությամբ,  
Ուրախ վնագոցվ անվերջ պտղուվեց կողպեքում բառի.  
Ու բացեց դռներ՝  
Սիրագործության,  
Դարպասներ բացեց՝

Ահեղ փորձության,  
Եվ զարմանալի՝, անհավատալի՝, ճշմարի՛տ դեպքեր՝  
Մահադարձության...

Իր այդ բանալուն հավետ պարտական՝  
Ընկել էր տղան մի կախարդական,  
Մի հեքիաթային վիթխարի դյուակ,  
Որին մինչև այդ ինքն էր անտեղյակ:

Ե՛վ մերտարանում, և՛ իր պաղ խցում,  
Աղոտ լուսի տակ իր նավթավառի,  
Մինչևսկ երե ականջն էր խցում՝  
Փանդիոն էր հնչում Գողթան գավառի  
Մարտ ու սեր երգող ձայնեղ գուսանաց.  
Ե՛վ խրախճանքը իին Վարդավառի,  
Ե՛վ մեհյաններում մորթվող տափարի  
Բառաչը խռպոտ, բոռոցը հորդուն  
Տարածայնում էր արդեն կուսանաց  
Քրիստոսասեր թախծոտ մեղեղուն.  
Հետո խուժում էր, մեղեղուն խեղդում  
Վայրի աղմուկը վայրի քուշանաց,  
Դոփի ու տրոփը բարբարոս հոնաց

Ու քաղաքակիրթ—

Նույնքան բիրտ—

Հունաց...

Թե՛ խժաձայն սուլլ հոռվմեական մարտափողերի,  
Թե՛ բութ խօխոց պարսից ահավոր մարտափողերի,  
Թե՛ սելջուկական սրերի շառաչ,  
Թե՛ կորիձների մահավոր հառաչ,  
Թե՛ մոնղոլական աղեղից պոկված երկարեն նետեր՝  
Ասես թշնամու հեռավոր մատեր,  
Որ աչք են հանում մի աջ ու մի ձախ,  
Թե՛ վահանների ծնծղան անծիծաղ,  
Թե՛ շեփորումը զորապետերի,

Խող եկեցը արյան գետերի,  
Հրդեհի ձեռքում հողմերն անսահման,—  
Արձագանքում են նրա ականջում,  
Եվ ինքնամոռաց՝ «Մարե՛ ջան, ամա՞ն»,—  
Տեղից ցատկելով ականա կանչում,  
Ճշում է ձայնով փոքրիկ գավանի  
Եվ արթնացընում մի քնած սանի,  
Որ վեր է թռչում, նովնպես վախեցած,  
Աչքերն է ճմում, մազերն է խառնում,  
Վերակացուի անվամբ սպառնում  
Եվ, մինչև անգամ իր տված հարցի  
Պատաժանի դեմ ականջը խցած՝  
Հակում է նորից իր գլուխը ցած՝  
Սագնիսի նան ձգող չոր բարձին...

## ԴՈՂԱՆՉ ՀՍԿՄԱՆ

Ամիսներն են դանդաղ հոսում,—  
Ու կարդում է նա Մանրուսում:

Թո՛ղ օրերը տրվեն վավքի,—  
Նա զննում է մեղյալ խազգիրք:

... Գանձե՛ր, գանձե՛ր՝ փականքի տակ,  
Իսկ գանձերի տերն՝ անգիտակ:

Անբանալի-գոց գանձարան...  
Կյանքը լինի թող տանջարան,  
Թեկուզ մեռնես, բայց ման արի,  
Փնտրիր, գտիր այդ բանալին:

Եվ աչքերն է ցավով թարթում:  
— Տարիները թող որ վավեն:  
Աչքերի դեմ, քուն թե արթուն,  
Չվերծանված խազե՛ր, խազե՛ր,—

Մեղեդիներ ու սաղմուներ՝  
Ոչ թե մինչև վանքի գմբեթ  
Սուրբ խորանից երկարացած,  
Այլ բրածո և քարացած.

Աստվածային վսեմ «Տաղ»-եր,  
Որ ծալքերում մագաղաթի  
Ժամանակն է փոշով թաղեկ.

Գանձի նման անգին «Գանձ»-եր,  
Բայց ի՞նչ օգուտ, երբ չեն կարող  
Կիվել անձեր,  
Հոգի խանձել.

Արձանացած-անշարժ «Փ ո խ»-եր,—  
Ինչպե՞ս շարժել, տեղից փոխել.

Դիակացած «Քարոզ» ու «Ճառ»,—  
Ի՞նչպես գտնել հարության ճար.

«Ե դ ի ց ի»-ներ, «Ա վ ե տ ի ս»-ներ,  
Ա՞ս, թե նրանց հնչող տեսներ...

Տարիներն են նորից հոսում,  
Խոկ նրա դեմ միջտ Մանրուսում,  
Խոկ նրա դեմ անվերջ Խազիրք,—  
Շունչը, հոգի՞ն, տրո՞փն ապի,  
Որ դարձել է խազ ու նշան,  
Մագաղաքի թերթեր խշշան:

Կարծես թե մարդ հանկարծակի  
Ընկել է լուս մի շիրմատուն,  
Ու լեզվապորկ շիրմաքարեր  
Նախանձով են նայում մարդուն:

Շիրմաքարե՞ր, շիրմաքարե՞ր, շիրմաքարե՞ր,  
Եվ մամուռի ու փոշու տակ՝ շիրմազըրե՞ր,  
Եվ ի՞նչ խոսուն շիրմազըրեր,—  
Արծիվ, Աղամսնեկ, Բազե, Վարուժնակ,  
Տանուտրակ, Ծիծեռն ու Տիրոցի ձագ,  
Յուրաքանչյուրը ինչպե՞ս է ճախրել,  
Եվ ո՞ւր է իշել, ինչպիսի՞ թեռվ...  
Աղաշանք, Հիվանդ, Տժգուն ու Լալկան.

Յուրաքանչյուրը ինչպե՞ս է տխրել,  
Ինչպե՞ս ս հառաչել, լացել ի՞նչ ձևով,  
Դարբին ու Երկար.  
Ինչպե՞ս էր զնդում,  
Ինչպիսի՞ սալի,  
Ինչպե՞ս էր մարդու հոգին պար ածում...  
Հովիվ ու Ռշար.  
Ո՞նց էր շնկչնկում,  
Ի՞նչ քար ու տարի,  
Ի՞նչ շշուկով էր հոտը արածում...

Եվ նա վիրավոր աչքերն է թարթում:  
— Թո՞ղ ժամանակը անշտապ վազեր:  
Խոկ աչքերի դեմ՝ քնած թե արթոն՝  
Նորից բերանիակ խազեր ու խազեր:  
Խազեր Զայնուժի.  
Աստված չի՛ հուշի...  
Խազեր Բանալի.  
Ի՞նքը ման արի...  
Խազեր Կոչական ու Կետաղըրող.  
Մի՛ հուսահատվիր,  
Կարո՞ղ ես, կարո՞ղ...  
Խազեր Կիսանիշ և Ամանակի.  
Կարիք ես զգում  
Լոկ... Ժամանակի՞...

## ՂՈՂԱՆՁ ՄԵՂՍԱԿԱՆ

Իսկ ժամանակը իրենն էր անում:

Ամիսներն ամային՝ անցնում են տարիք,  
Եվ զգում է նա... այդ ինչի՞ կարիք...

Դեղնած գրքերի փոշին բերանում՝  
Նա դուռն է բանում իր խոնավ խցի  
Ու դուրս է գալիս՝ փոքր-ինչ օդ ծծի:

Կանաչ բնառվից անվայել թռնում  
Եվ այգիների ձանիան է բռնում:

Ճամփան տանում է դեպի Արարատ,  
Դեպի Մայր Արաքս՝ ճոխ դաշտի միջով:

Գարուն է գալիս:

Օդը՝ անարատ,

Բույրով ու թուրով, լույսով է առատ  
Ու նրա շահել սրտի պես՝ ձիչով:

Գարուն է գալիս:

Չներն են լալիս,

Որ առու-առու՝

Կրքից պղտորված՝

Իրար գիրկ վազեն:

Բացվող գարնան ինը վերադառնալիս՝  
Շուշգեր են կազմում տատրակը, բագեն:

Ծառեր ու խոտեր ծաղիկ են տալիս,  
Որ բնափրական-բուսական սիրով  
Իրար փոշոտեն:

Որսի դուրս գալիս՝  
Քիչ է մնում թե գավաններն անգամ  
Իրար հողոտեն:

Իսկ սի՞րտը, սի՞րտը...  
Իսկ սիրտը մարդու,  
Սիրո հովերից այլեւս արթուն,  
Գարնան գետի պես մերթ՝ վարար հորդուն,  
Մերթ՝ անձրևի պես լալիս է-լալի՞ս,  
Ուզում է մեկին ասել.

«Յանկալի՞ս»,  
Ուզում է մեկին խեղդվելով ասել.  
«Իմ երա՞զ ու սե՞ր,  
Դու ե՞րբ ես զալու»...

Գարուն է, գարուն:

Դադի բուրմունքից հարթել է առուն  
Եվ ափերին է մի գրուս վարկվում ութածն քայլով,  
Ինչպես գինովն է խիվում պատերին:  
Նայողի աչքը խտուտ են ածում գույնով ու փայլով  
Խլվան փնչեր կարմիր պուտերի,  
Կապույտ անմոռուկ ու խորոտ-մորոտ:  
Ճամփի եղբերին, կարձլիկ ու կողու՝  
Բարեգութ դահձի ձեռքով գիխատված շարքն է թթերի,  
Որ արդեն խուրձ-խուրձ շիվեր են տվել՝  
Մեկի տեղ քսան ու դեռ ավելի,

Եվ հեռվից հյսա  
Նևան են արդյոք... մի փայտե պոչով մեծ ցախավելի՝,  
Որ բի երկնքից պիտի որ— ա՞յ-ա՞յ— ամենավերջին  
Ամպերը շնչի,  
Թե՞ կորի վրա տնկված վրձինի,  
Որ բի երկնքը ուր որ է պիտի կանաչ դարձնի...

Նա ինքնամոռաց գնում է առաջ:

Հրավիրականչ շեփորի նման՝  
Հնչում է ցովի կարոտի բառաչ...  
Եվ ջրից թափուր սափորի նման՝  
Քամու շնչի տակ անբառ երգում է փշակը ծառի:

Այգիների մեջ թաղված Տաճարի  
Գմբեթն է միայն հեռվից երևում  
Ծաղկած ծառերի գլխավերնում՝  
Անհայտ թռչունի գիշիվայր շրջված մեծ բույնի նսան:

Մի փաղուց ջարդված կավե հին աման,  
Նա՛ էլ չի փրկվել գարնան վարակից.  
Նրա շուրջըոլոր մամուռն է քաշել կանաչ պարագիծ:

Վիրավոր մածի բացված երակից  
Տաք արյան տեղակ պաղ կաթ է ծորում:  
Դեղձենիների անքոր կրակից  
Կայծեր են թռչում դիմացի ձորում:

Իսկ մամուակալած վիմափոր գուրին  
Մի հին փշակված-բնաքանդ ուժի  
Ծեր մուրացկանի ձեռքերի նման  
Իր կոշտովկապատ ձյուղերն է մեկնել  
Ու սրբարթում է կարծես թե քաղցից...

Եվ դաշտն են եկել հարս ու աղջիկներ,  
Որը՝ սիբենի, իսկ որը՝ դաղձի:

Մերթ հեռանում են  
Ու մերթ՝ կուտակվում,  
Մեկ կունում են  
Ու մեն՝ շիտակվում,  
Մերթ՝ ուրախ ճիշով, ասես կարոտով՝  
Իրար են պարզում լիտիկ թները,  
Ցուցադրում են, կարծես թե դիտմամբ,  
Փակ մարմինների բողոք ձևերը,  
Որ... արեղայի սիրտը խոռվեն,  
Որ... արեղային անհուր խորովեն,  
Որ... աստված ու նա կովեն-խոռվեն...

Եվ մի անօրեն՝,  
Մի անվանելի՝,  
Անանվանելի՝ ինչ-որ զգացում  
Կայում է նրա սրտին ու անձին՝  
Կարի պես սնձի:

Նու շրջունքներն է ակամա կրծում,  
Որ ցավը օգնի:  
Իզուր է կարծում,  
Թե ամենավոր գարնան դավերին  
Կիաղթի ուժովն ինչ-որ ցավերի:  
Եվ, ճարահատյալ, աչքերն է գոցում,  
Որ սատանեկան տեսիլքն ավերի,  
Բայց մթությունը... սա էլ իր սնով  
Նրանց վառվըռուն ձևերն ընդգըծում,  
Մաքրագըրում է, շեշտում ավելի:

Խաչակնքել է ուզում արեղան,  
Բայց նրա աջը շարժվել չի ուզում,  
Ռևում է կանչել մի բերան «մերա»,  
Բայց... կապ է ընկնում և խոսնակ լեզուն:

Եվ, բնապդաբար, նա սիրտն է քոնում և սքեմի տակ,  
Նա սիրտն է սեղմում ափերով իր տաք,  
Որ չտըրոփի այդպես խենթորեն,  
Որ չտըրոփի և... չտըրաքի՝  
Պղպջող գինու ափնափ լեցուն սափորի նման։

Մինչդեռ անվտանգ խուցի դարակին  
Ննջում են տաղեր՝ կարոտ հորինման,  
Մինչդեռ անփորձանք խուցի դարակին  
Կարոտով նրա ճանփան են պահում

Անեկու խապեր։

Նա ետ է դառնում, ուզում է վազել,  
Գնալ ու նորից վերծանել համառ,  
Որ ցավն աչքերի թերեւս մի օր

Փոխարկվի մի նոր  
Տնծուն հանդեսի՝

Իր, ուրիշների... ականջի համար։

Նա ետ է գառնում իր ճամփի կեսից,  
Որ գնա կրվին աչքի լուս մաշի  
Եվ մի կերպ պրծնի իր սրտին կպած

Այդ կաթից անձի,  
Սոսընձից,  
Խեժից,—

Եվ այդ վայրելյանին հանկարծ՝

Սոնա՞ յար,  
Սոնա՞ յար,  
Թնդում,

Ու երգը խնդուն

Ընկնում է եւթից ու հետապնդամ,  
Կախվում է նրա փիլոնի փեշից,  
Թառում է նրա վակված կոպերին,  
Հալչում է նրա այրվող ափերին,

Ոտքերի առաջ թափալ է տալիս՝  
Ճամփան է փակում և հիշեցընոսմ,  
Թե Վարդավառն է վերստին գալիս.

Սոնա՞ յար,

Սոնա՞ ...

Ցնծությամբ օծված ծաղիկ է ծնում,  
Ծաղիկների պես դաշտերով ցանում  
Զանգուլում կանչող հարս-աղջիկներին.

Սոնա՞ յար,

Սոնա՞ ...

Քայլը հնչում է նո՛ւն չափով՝  
Սոնա՞ ...

Կուրծքը շնչում է նո՛ւն չափով՝  
Սիրո՞ւն...

... Ու երբ, հոգնատանջ, աքլորականչին  
Նա լուռ ննջում է,  
Ինչ-որ մի Սոնա

Գալիս է թեքվում նրա ականջին  
Ու շշնջում է,  
Թե սարալանջին

Պառկած է քույրը՝ պնունը կումար,  
Ու երեսն է բաց՝ տեսնելու համար:  
... Շողերով հինված իր գորգը թողել,  
Առվի արծաթով երեսը ցողել,  
Կանգնել է ճամփին մի շաղուտ Շողեր՝  
Բոլոր գլուխը պասկած ծամով,  
Աչքերը նման տուրք աստվածամոր։

— «Իսկ դու՝ անխելքը, վախւենամ ընես,  
Վախւենամ քնես, քնով ընկրնես՝  
Արտերքը մնան առանց հերկելու,

Ու երբ վեր կենաս,

Վազեվազ գնաս՝

Հա՞ կանչիր հումար, Շողեր ջան, Սոնաս,—  
 Իումար-իդ առան,  
 Սոնա-իդ տարան,  
 Շողեր-ըդ մնաց առանց գրկելու...»

Մի խառնակ երավ տանջում է նրան մինչև լուսադեմ:

... Նա մեկ տեսնում է, որ մի շենք Սաթը թերը կանթել,  
 Կանգնել է իրենց կալի պոնկին.  
 Քամին խուս է նրա մինթանան,  
 Որ նրա թմփիկ ծնվները բանա  
 Ու ցույց տա խալը՝ ծալի մեջ ծնկի:  
 Հետո այդ խալը դառնում է հանկարծ մի պուտ մե՛ բանաք՝  
 Այս Շարակնոցում Սադյուսավանքի,  
 Ուր այդ կաթիից իրար են ձուզկել զարդախավերը...  
 ... Ու մեկ էլ քամին քանդում է հարսի դեղձան մավերը,  
 Եվ այդ մավերը— լարերի նման—  
 Զգվում են մինչև ոտքերը նրա,  
 Ու շեկիկ-մեկիկ, աչքերով ծավի  
 Այդ հարսը հանկարծ... դառնում է տավիո,  
 Եվ այդ ոսկեար, և այդ մաեղեն տավիդի վրա  
 Քամին նվազում ու... վերծանում է մեռած խավերը:  
 Ուսում է որսալ ու ձախնազըրել  
 (Ա՛), հիմա՝ հիմա՝ լռած խավերի  
 Մեռած գաղտնիքը նա պիտի պարսի  
 Եվ իր մեծ գուտով աշխարհը տարսի),  
 Բայց մինչ այդ արդեն նախանձու քամին այնպես է փչում,  
 Որ կտրատելով լարերը բոլոր՝

Վերև է ցցում.

Հիմա ո՞չ տավիդ,

Ո՞չ էլ վերծանվող մեռած խավերը:

Հիմա հուրիցըրան բոցեր են թփում դեղձան մավերը,

Դեղձան մավերը թփում են հուր վառ՝

Բարակ ծխի հետ պարզված երկնքին:

Եվ հարսը հիմա դառնում է բուրվառ  
 Ու շուրջը փոռում բուրմունքը խնկի:  
 Աղջկը բուրվա՞ն, — որտե՞ղ է լսկած...  
 Բս յօ հանկարծակի քամին դադարում  
 Եվ, գունդուկծիկ, բարդուն է թառում  
 (Ի՞նչ անտանելի շոր է, տե՛ր աստված)...

Ու դարձայ նրա մավերը դեղձան,

Որ ծովի-ծուփի էին՝ ծալեծալ դարձան.

Բուրվառ չէր արդեն,

Այլ կրկին

Սի կին,

Բոցավառ մի հա՞րս,

Թե՞ խարսյաշ աղջիկ,

Եվ տղամարդու հայացքից ապդված՝

Պառուս է գայիս, որ թողնի փախչի

(Եղ ո՞ւր, անհոգի՛, Եղ ո՞ւր, անաստվա՞ծ)...

Մինչ տեսիքով է աչքը հիանում՝

Սուրացող հարսը մինթանի փեշով

Պտտահողմի այս սյուն փոշի հանում

Եվ թեպետ—շո՞գ է— քիչ զով է անում.

Բայց ոի սեղման բուռ փոշի է ցանում

Խեղճի աչքերը...

Ու նա քնի մեջ

Չեռն ականայից աչքին է տանում,

Որ կակըծում է ու մրմրում է:

Աչքերը ձեռքով նա ճմջում է.

Քնից արթնանում...

## ԴՈՂԱՆՉ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ

Հետևում է տարին տարուն, միտքը՝ մտքին,  
Հետևում է դեռ նոր գտած ելքը մուտքին:  
Սպրում է նա աչքը՝ գրքին,  
Ուշքը՝ երգին:

Ե՞րգ և ուսո՞ւմ,  
Ծարակոցնե՞ր ու Մանրուսո՞ւմ...  
Մինչ օրերն են համըր հոսում՝  
Մտքի հետ է միտքը խոսում.  
— Խավե՞ր, խավե՞ր,— թող փորձ անի,  
Գուցե մի օր և վերծանի,  
Ու ժողովուրդն ապերջանիկ  
Նախանձելի բախտ ստանա,  
Աղքատացած մի ընտանիք  
Ծով գանձերով հարստանա:

Բայց խավն է խավ ու գիրքը՝ գիրք:  
Իսկ գրքից կատ կա կյանք ու գիրկ,  
Իսկ խավից կատ կան խաղ ու տաղ՝  
Կենսաթրթիո, լուսաթաթի,  
Որ ապրում են, շնչում-հնչում  
Մարդկանց շրթին, իր ականջում.  
Որ կենդանի մարդն է հյուսում  
Ու կենդանի մարդուն հուպում.  
Որ հոսել են ու տեղ հասել  
Ու չեն դարձել դեռ Մանրուսում,

Ու չեն դարձել մեռած խավեր...  
Ո՞ւր են դրանք, ո՞ւր են սնկայն:  
Այսօր թե կան՝  
Վաղը չկան.  
Շուրջն ամեն տեղ  
Երգվում են դեռ,  
Բայց երգվելուց թե դադրեցին,  
Խավերի պես, մեկ էլ տեսար,  
Համրացան ու քար կտրեցին:

Որտեղի՞ց են դրանք գալիս,  
Եվ ի՞նչ ձամփով ո՞ւր են գնում,  
Ի՞նչն է անցնող փրփուր տալիս,  
Եվ ջրի պես ի՞նչն է մնում:

Ի՞նչն է այնտեղ ռգեսորիչ,  
Ինչո՞վ է խորյօ և հարապատ,  
Ինչո՞վ մոտիկ, ինչո՞վ է զատ  
Աշխարհիկը ինգմորից:

Ի՞նչն է պայծառ, ի՞նչը՝ մթար,  
Ո՞րն է քոնց, ո՞րն է օտար,  
Ի՞նչն է եղծված կամ անվթար,  
Ի՞նչն է կոպիտ կամ նավելի...  
Իսկ թե հանկարծ այդտեղ գտար  
Բաւուլիքը մունչ խավերի...

## ՂՈՂԱՆՉ ՕԾՄԱՆ

Եվ որտեղ երգն էր՝  
Այստեղ էլ նա էր...

....Ուրա՞խ է կյանքը,  
Տիտուր, դաժա՞ն է.

Միշտ ժողովրդից երգն անբաժան է.

Նա միշտ երգով է բանում ու դատում,  
Սիրում ու առում,  
Վիշտը փարատում.

Երգով է ուրախ,  
Երգով է տխուր,  
Երգով է վառվում, երգով է մխում.

Երգով է նա միշտ փարում ու հերկում,  
Մանում ու ներկում,  
Երեխա գրկում.

Երգով քաղում է,  
Աղում-մաղում է.

Երգով է կնունք, հարամիք անում,—

Երգով է օրը բացվում-տաքանում,  
Երգով է նորից օրն իրիմնանում...

Իսկ նա՛...

Այդ Ե՞րբ էր,  
Այդ Ե՞րբ էր,  
Ե՞րբ էր.

Տամներկուակյա թշվառ մի որբ էր,  
Երբ ձեռքից բռնած ձեմարան բերին,  
Եվ որբովկ Սողոն Սողոմոն դարձավ:

Ու չար թե բարի այդ ճանապարհին  
Ե՛վը տասներկու բոլորակ տարի  
Ճեմարանի մեջ եկավ ու անցավ,  
Ու Սողոմոնը... Կոմիտաս դարձավ՝

Ի խոր հարգանքս  
Այն հոգեսվարթ կաթողիկոսի,  
Որ տասներկու դար դրանից առաջ  
Ապագա հունձի հունդերը ցրած՝  
Ծիրը բաց արեց  
Հայոց մեղեդու անթաղ ակոսի:

Նա բանաստեղծ էր  
Ու երգաստեղծ էր.

Նա ուներ փառ ձայն  
Ու նվազման ձիք.

Եվ իր անվան հետ թողեց մի արձան՝  
Խոտուն,  
Բայց անձայն՝  
«Նուիրեալք անձինք»:

Զգիել էր դարը, ու երկարածիգ  
Դարի ետևից նորն էր սողացել.

Եվ իայ մեղեդին  
Դար դարի վրա  
Կրակի սման վառ փողփողացել,  
Տարուբերվել էր ծփան գետի պես,  
Շեշտվել նետի պես,  
Մխմել սրտերում  
Ու դողդողացել:

Աշխարհաւայրուու հայոց թեմերի  
Պատարագատու բոլոր բեմերին  
Քանիսնե՞րն էին մի պահ շողացել,  
Քանիսներն էին...

Եվ սակայն ոչ ոք  
Հայոց իինակուրց կաթողիկոսի անունը երբեք  
Ո՛չ ստացել էր որպես թանկ ընծառ,  
Ո՛չ էլ գողացել:

Եվ հիմա—հանկա՞րծ—հայոց նորընծառ  
Երկրո՞րդ Կոմիտաս,  
Որ Հայրապետի  
Սնվանը պիտի  
Ամենալն ինչում  
Տա նո՞ր մի հնչում,  
Սուրբ Իիշատակը մշտավառ պահի:

Ո՞ւմ մտքով կանցներ այդ վսեմ պահին,  
Թե այդ նորընծառոր Կոմիտասը  
Պիտի մոռանա իր պարտավորիչ  
Ասխոս ստացած սխատվիրան դասը՝  
Պիտի նա մի օր երախտավորից  
Յուրովի դառնա մի չար ապերախտ՝  
Պիտի կողոպտի մի թափուր դբախտ.

Հոգևոր պապի՝  
Իր անվանատուր  
Կաթողիկոսի անունն ստվերի,  
Հակառակ անխոս տրված պատվերի՝  
Եվ հիշատակը մոռացության տա,  
Իր շենշող կյանքի կարմիր բոցերով  
Մատիտի նման թավ ընդգծելով  
Իր մեծ նախորդի մեռածության տակ...

## ԱՐԵՎԱԳԱԼԻ ՀԱՄԱԶԱՆԳ

### ԴՈՂԱՆՁ ԱՄԱՌՆՈՐՅԱ

Եվ որտեղ երգը՝ այստեղ էր հիմա և Կոմիտասը:

Նա՛, որ դեռ երեկ, իբրև մի ձայնեղ երգիչ-տիրացու,  
Երզաքամբի մեջ մեներգ էր միախն վսեմ տարածում  
Ու լարանում ենք պատաժանում սերտումի դասը,—  
Հիմա դարձե էր խմբավար վանքի,  
Դարձե էր հիմա երգի դասառու:

Թեթևանում էր երբ աշխատանքից,  
Ծառայությունից օձիքն ալատում,  
Հեռանում էր նա խուցից ու վանքից,  
Գնում էր այնտեղ, ուր երգն էր հնչում:

Իսկ նա հնչում էր ամենո՞ւր ու մի՞շտ,  
Ամենո՞ւր ու մի՞շտ,  
Ուր հայն էր շնչում:

... Ինչպես աղջիկն է հանկարծ հարսնանում՝  
Գարունն էլ այդպես դառնում է ամառ.  
Համբարձման տոնը պաղ հովն է տանում  
Ու տեղ է բանում,  
Որ գա Վարդավառ:

Քանի չեն թոշնել կաթնառատ խոտեր,  
Կանաչ ու ծաղիկ,  
Չերանդիներն են սրվում-քթանում,  
Եվ ծարձակման հաղթ օրենքի դեմ  
Կարճ հաղթանակ է վերտին տանում  
Ոգին խոտքաղի:

Բայց քիչ առաջվա մարտում կատաղի  
Յուրաքանչյուրը մի անգութ մարտիկ՝  
Հիմա տմարդիկ  
Նույն տղամարդիկ

Ասես գթուկյան եղբայր են դառնում՝  
Իրենց ավշաքամ կոհերին առնում  
Իրենց խակ ուսին, իրենց շալակին,  
Խնամքով դարսում սայլ-պատգարակին,

Զորուն են բառնում  
Կամ ավանակին,—

Եվ մեռած խոտեր, ծաղկունք մահացող  
Գերեզմանի տեղ մարագ են գալիս,  
Որ այնտեղ դառնան բույրի պահածո:

Շոգը, որ մինչ այդ իյուր էր ցանկալի,  
Աներեսորդն դառնում է տանտեր  
Ու խոռվեցնում կնկան ու մարդուն:  
Անբոց վառվում են արոտ ու հանդեր,  
Արծաթ է հալում վաղահաս գարին,

Այսինչ հաճարի,  
Ցորենի արտում  
Հասկերը հասուն,  
Հասկերը հոսուն,

Յուրաքանչյուրը մի իրե լեզու,  
Զգիում են վերև, կարծես թե ուզում  
Մոտիկ երկնքի կապուտակ ծովից  
Զովություն ըմպել,  
(Ինչպե՞ս չէ՝ կըմպես),

Չեն ըմակում սակայն, այլ միայն լիկում  
Եվ անմիջապես քաշում են լեզուն,  
Երբ հասկանում են բռւսական խելքով  
Որ մինչև անգամ երկինքը ծավի  
Նույնապես կապտել է անհագ ծարավից...

Ամառվա արփին այնպես է կիպում,  
Որ արևի տակ,  
Թեկուզ անկրակ,  
Եթե ուզում են՝ «իշխան» տապակիր.  
Անշարժանում են լճեր ու լճակ,  
Դառնում են կարծես կապույտ ապակի,  
Մինչդեռ նրանց տեղ օդին է ծփծփում ալիքով հրն,  
Եվ օդի հետ էլ երգն է ալիքվում.  
— Հովան արեք, սարե՞ր...

Սարերը սակայն  
Հովը պահում են հոտերի համար և սարվորենքի,  
Որ գորոզը թողած՝ սար են բարձրանում:  
Պղնձի նման հողին է կարծրանում,  
Ու երգն էլ հիմա  
Աղոթքի նման  
Երկինք է թռչում,  
Ամպերին կառչում.  
— Մի քիչ զո՞վ արեք...

Ամպերը սակայն ինչպե՞ս զով անեն  
Եվ ինչպե՞ս անձրև թափեն, ծով անեն,  
Եթե բռվանդակ երկնակամարին  
Դեղի համար էլ ամպիկ չես ճարի:

Եվ աշխատանքի ոգին է կրկին  
Խելահեղորեն տիրում ամենքին:  
Գյուղացիները, տղամարդ թե կին,  
Հավ-աքորի պես զարթնում են հիմա

Գիշերը դեռ կես և ոչ թե ծեզին  
Եւ, աքորների-հավերի նման,  
Իրիկնանավիս՝ դեռ հացը բերնում՝  
Չեն թառում — օ չէ! — հոգնած ու դադրած  
Ոչ թե քնում են, այլ կարծես մեռնում.  
Իրենց խշխան անկողիններին

Քրիստոսի պես  
Խաչվում են այնպես,  
Որ կրկին շուտով  
Հարություն առնեն  
Եվ կիսամութով  
Վերստին բռնեն  
Նույն աշխատանքի  
Վառվուն պոչը  
Ու նորից խառնեն  
Հրդեհին ծեզի

Իրենց աչքերի հրաւառ բոցը,  
Եվ որ քրտինքի շիթը ծորացող  
Անվերջ շտկըվող-անվերջ կորացող  
Իրենց թիկունքին վագի մանեման՝  
Ճամփան կորցըրած մրցունի նման...

Եվ աշխատում են մրցման մեջ մտած,  
Աչքերը հովսից ու երապից թաց,  
Ու հետև էլ երգում.  
— ... Զո՞վ արեք մի քիչ...

Հովից են երգում,  
Չովից են երգում,  
Որ շուտ չդադրեն տաքից ու շոգից:

Խսկ շո՞գը, տա՞քը,  
Խսկ տո՞թը, տա՞պը...

Թո՛ղ որ շները՝  
Բները մտած,  
Ըսդից շնչասպառ՝ լեփուն դուրս գցեն,  
Իրենց կաս-կարմիր բոցաձև լեփուն.  
Կարծես սխալմամբ կրակ են կրծել  
Եվ հիմա, իկո՞ւր,  
Ործկալ են ուզում...

Ըսդից սիրահար դրումներ ցնիքը  
Թո՛ղ որ թխսի պես նորից ետ տանեն  
Փարթամ թևերը իրենց թաղերի  
Եվ ճտերն իրենց ետևը գցած՝  
Ցանկապատն ի վեր արևորդ անեն,  
Թառեն եյվանի փայտե ձաղերին...

Ուրիշի աչքին խխտ ծիծաղելի  
Արևածաղկի մի պուճուր գնդիկ,  
Կապկելով հակա մեր երկրագնդին՝  
Երկրագնդի պես ծանրորեն ու լուրջ  
Թո՛ղ որ պտտվի ինչպես արևի,  
Այնպես ել նաև իր առանցքի շուրջ՝  
Անշարժ պահելով ծաղկատերնի  
Դիրքը նախնական...

Թո՛ղ որ շոգն իրոք չարամտորեն  
Մարդկանց խեղթելու մահափորձ անի,  
Եվ շուք ու շվաք տան վկայություն,—  
Միևնույնը չէ՝ գյուրքացու հաւար,  
Թե նա մեռնի եղ՝ պիտի գործ անի,  
Քանի որ ամա՞ռ, ամա՞ռ է, ամա՞ռ...

Խեղած այրի կնոջ անծեփ-անսպաղ տանիքի նման՝  
Աչքիների մեջ հասած պտուղն է անվերջ կաթկթում.  
Պիտի հավաքել-փոքը տանիքին

Ծեկ ծիրանները՝  
Մանրակոտրակ արևների պես,  
Սև սալորները՝  
Եփան աչքերի միամիտ փայտով,  
Եվ կորիփահան դեղին դեղձերը՝  
Անանուն ծաղկի փերթերի նման...

Սայլը բեռնաբարձ՝  
Ծանր խրձերից խղճովկ ճռայլով՝  
Ասիվի կունդից իր մաշված սռու  
Քիթն է մերթ հանում  
Ու մերթ՝ ետ տանում,  
Աղուրի փոշում, լորձունքի նման, մազութ ծորալով:

Իսկ ջառջառների սեպերը երկաթ,  
Քար ատամները գիշատիչ կամի  
(Ծամի, հա՛ ծամի)  
Հաջանն են ծամում, հաջանը ոսկե,  
Որ չուպենալով դարմանը խառնել  
Սրսուո ցորենի արևահամին,  
Մի բան է տենչում  
Էրանի քամի.  
— Սարե՛ր ջան, սարե՛ր,  
Մի քիչ հո՛վ արեք...

Իսկ քամին  
Կարծես մարդու գնացած աղջիկ է դարձել  
Քանի ամիս է՝ հերանց չի գալիս,  
Իսկ եթե եկավ՝ չի ուզի գնալ.  
— Օտար դո՞ւռ ընկնեմ,  
Լավ է ջո՛ւրն ընկնեմ...

Մղեղն է թառում պատահած տեղում և ամեն ինչի,  
Մինչևսկ վանքում կիսաբաց ննջող Աստվածաշնչին.

— Մեղա՛ք...  
Ասոված բարին կատարի:

Իսկ բարին՝  
Թառած դեպի կատարին,  
(Պարզ խրտվիլակի ծիծաղկոտ տեսքով)  
Ծայի պարսերն է շեղերից քշում.  
Իսկ բարին՝  
Մաղված ցորեն-գարու հետ  
Փայտե ամբարի դռնով է խշշում:  
Մեծ կարասները

Ծուլ հորանջում են դատարկ մառանում,  
Բայց վնաս չունի՝,  
Խաղողի վասն է կրկին մայրանում,  
Ճութը, ծոցի պես, ուղղում է հյութից  
Եվ օգոստոսյան եռացած օդից  
Ու խեղդող տոթից  
Ծնչահատ արդեն,  
Մի պահ կրկվելով աբուռ-ամոթից,  
Անզգուշորեն կոճակն է բացում զմրուխտ թփերի —  
Հերն էլ անիծած.  
— Ի՞նչ անեմ, մարե՛,  
Արևն ինձ կերե՛...

## ԴՐԱՍՆ ԱԾՆԱՆԱԾՈՒՆՉ

### Բայց ահա

Նաև շոգն է կոտրվում՝ գոռովության պես,  
Եվ տեղը վիշում իր գինն խնացող համեստությանը:  
Կապող անձրեկի միջամտությամբ  
Երկիր ու երկին  
Գրկվում են կրկին՝  
Վերջ տալով իրենց սուր գժտությանը:

Եվ աշունն էլի,  
Զարչների պես ու բոշաների,  
Տեղից տեղ գնում,  
Դռներ է ընկնում  
Եվ վրադվում է իր ներկարարի սիրած փեշակով:

Զարչին բարձրականչ կիպարտանա  
Իր հոկունքների հազար տեսակով.  
Ասեղ ու շրուդեր, ծամոն կծախի  
Պառավ տատերին, հարսներին շարմաղ:  
Բոշան ցորենով զամբյուղ կփռիսի  
Եվ ինչով ուզես՝ մեծ ու փոքր մաղ:  
Մինչդեռ աշո՞ւնը...  
Նա բա՛ն չի ծախում,  
Օդ ու եղանակ, գովսեր է փոխում:  
Մինչդեռ աշո՞ւնը  
Միայն բաշխում է՝  
Ցորեն ու գարի,

Խմիչք ու փշատ,  
Հազա՞ր մի բարիք  
Եվ, ամենից շատ,  
Անվարձ ու ձրի  
Միայն նախշո՞ւմ է...

Եվ այսպես դանդաղ, որ չես նկատի.  
Ավելուկների ծամերը կանաչ  
Եյվանի դեմքին ու տան ճակատին  
Դեղնում են հանկարծ, դառնում անճանաչ:

Ու քաղցրությունից ճաքող սեխերի  
Սնուշ բուրմունքով  
Օծվում են կրկին բռատան-քաղերը,  
Իսկ ձմերուկի կերպած ճաղերը—  
Լուսի հաստ-քարակ փուլնրի նման—  
Հող ու փոշով են ամպուտվում հիմա:

Ընկուզեաներն իրենց սաղարթով  
Այնպես են մեկից դառնում հուրժուրան,  
Կարծես թե լինեն հսկա ծխամորձ,  
Եվ որպես ծխի առկածող քուա՝  
Մօրւջն է սողում դաշտերի վրա  
Ու պտույտ տալիս  
Ծերումների պես պայպած լեռների  
Սանըր չտեսած-փոչոտ զիսի շուրջ:

Մինչ դեղձին պարկեշտ ու ծիրանին լուրջ  
Իրենց սաղարթն են աշխատում կոճկել լիրք քամու հանդեպ,  
Հաստիկ ուռենին ու ձիգ կեռասին  
Պատրաստ են խկույն իրենց լաշակը գիմներից քանդե՝  
Մարդաթող հարսի,  
Լաշառ կնկա պես:

Նորից, իսկապե՞ս,  
Աշում է, աշո՞ւն:

Նորից սանդի մեջ ծեծում են կորկոտ,  
Զավար են խաշում,  
Տաք հնձաններում ձմկում են խաղող  
Ու գինի քաշում:  
Նորից արիշտան,  
Որ ձողերին են շարթար փոել,  
Թաց՝ օրորփում է լուռ ու անշաւակ,  
Չորացած՝ խշում  
Ու փշուր-փշուր  
Թափվում է գետին՝  
Խսիր-կարպետին:

Քամին կարծես թե բան է կորցըրեն  
Եվ որոնելով ափում է գետինն  
Ու տեղից տեղ է խաշամը քշում:  
Եվ տերևների հաստ ծածկույթի տակ  
Առվակ ու վտակ  
Հոսում են ոչ թե խշողով ջրի,  
Այլ կարծես անվերջ տժութում-քշում՝  
Իրենց մեջ ընկած բոց տերևների  
Չմարող հրից:

Մերկմիները սրտի թրթիռով  
Վերջինն են լքում անխռով այգին  
Ու տեղափոխվում-մտնում են սնդուկ,  
Որ հաստակաշի ու կողքապնդուկ  
Զառ խնձորների հարևանությամբ  
Պլղվեն սիրով ու գորովագին  
Կանանց պահուստի շորերին փոթ-փոթ  
Եվ իրենց բույրը խենթորեն խառնեն  
Նրանց մարմնային բուրմունքին տարփուտ:

Աշուն է, աշո՞ւն:

Լուսատղը հիմա

Նույնիսկ ցերեկվա դռներն է մաշում  
Եվ ճառագայթուն ու մեծ է այնքան,  
Կարծես թե թացված հովհար է որ կա:

Հովհարը սակայն

Ո՞ւմ է հարկավոր, երբ շոգ չէ արդեն,  
Երբ եղանակը այնքան է ցրտել.  
Որ նորից ահա տան խոնավ օդից  
Մինչ աղջ լալիս՝ լավաշն է ծաղկում,  
Իսկ պատ եղամի հալվելոց հետո  
Կալում մնացած կրկտը ծղոտի

Կպչում է իրար,

Կարծես թե թաղքում

Մազերի նման շեկիկ աղջըկա:

Անցած ձմռանը նշանվածների կոպերի տակով

Անհամբերությամբ սահում է հիմա երավանքն այրող

Այն հարսանիքի,

Որ պիտի լիներ, բայց դեռ, ա՞խ, չկա:

Գիշերվա կեսին ոռնոցն է լսվում

Հոտ ու նախրի հետ սարից գյուղ իջած անկուշտ գայլերի,

Ինչ նույնքան անկուշտ շրադացների անխոնչ չախչըկան

Կոշնակի նման կանչելով անվերջ՝

Ճանփան է պահում աղունով թարձված սողուն սալերի:

Եվ ահա՝,

Կամաց քշեք սելերը...

Եվ ահա՝

Աշուն եկավ սարիցը...

Եվ ահա՝,

Այստեղ—

Երկինքն ամպել է...

Եվ ահա՝,

Այնտեղ—

Էս լուսնակ գիշեր...

Եվ ահա՝,

Այսպե՞ս՝

Միշտ նա է ներկա,

Նա՝

Շինականի հար հավատարիս,

Հավետ անբաժան

Մեծ օգնականը,

Նա՝

Շինականի համկալ-Ծմկերը,

Հոտադ-մշակը

Ու... երրորդ ձեռքը.

Նա՝

Ինքը... երգը:

## ԴՈՂԱՆՉ ԱՀԱԳՆԱՑՈՂ

Ե՞րգը...

Կարծես տնից ելած մի պանդովստ էր բազմաթափառ  
Եվ ուպում էր կրկին փարզել հայրենիքին:  
Հայրենիքն էր... նրա հոգին:

Ե՞րգը...

Կարծես մի թռչուն էր, որ չվելով բնապդաբար,  
Ետ էր թռում զիշերն ի լուս և օրն ի բռն:  
Եվ նրա շեն ականջն էր... բույն:

Այդ ակա՞նջը...

Զքվորների,

Սարվորների ուրախ կանչը,

Չույլ զանգերի ծույլ դորխնջը,

Առվի հիմար բլրջոցը,

Ճրագների պրայոցը,

Հովի հունչը,

Թռնըրի շունչը,

Մերժված սրտի խուզ մրմունջը,

Երավների ու ծաղկումքի փոփութը,

Ողբասացի կոծն ու սուզը,

Արտատուքը,

Որ ծնվելով վառ ցավի մեջ,

Դուրս չի պոռթվում,

Այլ կայտում է սրտի խորքում,

Խնչպես մթին անձավի մեջ,

Եվ այդ ահեղ կաթերոցը

Մինչև անգամ քար է ծակում.

Կեսչոր-կեսթաց փայտի նման

Վառվող հույսի ճթճթոցը,

Որ վառ ցրտի դեմ-հանդիման

Ոնց էլ լինի դուռ է փակում.

Չարաձձի քամու առաջ

Տերևների սրսըփումը՝

Աշնան փառած անհուր բոցում.

Նոր մայրացած ստինքների

Մեկմեկի հետ լուռ շփումը՝

Այգու նման բուրող ծոցում.

Ջրի ձամփին աղջիկների քչփչոցը,

Մինուճարին հեռու ճամփող

Մոր խելագար պաշպչոցը,

Տաք հնձանի կպչուն դռան վիլ ճոխնչը,

Անգրդ տեսած թռփսախ սարսապին ու կոխնչը,

Նորածինի ապդարարիչ-հրամայող բարակ ճիչը,

Ամեն, ամեն, ամեն ինչը

Ալիք տալիս,

Գալի՞ս-գալի՞ս,

Ծովանում էր այդ ականջում,

Հազար ձեռվ այնտեղ ինչում,

Հետո տանջում ու պահանջում՝

Ենե՛լ-թափիկե՛լ սրտեթից սիրտ,

Հոգուց հոգի,

Հույսով ցողել

Ու ողողել

Ամեն ոքի...

Այն, որ այնպես ցիրուցան էր,

Կամենում էր լինել հավաք.

Այն, որ միայն աղմուկ էր դեռ,

Ցանկանում էր դառնալ նվազ.

Այն, որ հնչյուն, անկապ ձայն էր,

Եղանակ ու երգ էր ուզոսմ,—  
Վարարումի ու հորդումի  
Ելք էր ուզում:

Իսկ թղթերին՝  
Հապար ու մի երգ-եղանակ,  
Դարձած նոտա.  
Իսկ թղթերին՝  
Հապար ու մի խաղիկ-տաղիկ  
Հայաշխարհիկ,  
Նաև օտար:

Իսկ թղթից դուրս  
Որքա՞ն երգեր,  
Որ չեն տեսել ձայնազըռող,  
Օսար ժանգը գոնե քերող  
Հմուտ ձեռքեր:

Իսկ թղթից դուրս՝  
Որքա՞ն-որքա՞ն  
Ծինականի ձեռքով ցանկած,  
Բայց շննձկած-անտեր բերքեր...

Այն, ինչ ականջն էր հալաքել,  
Այն, թե հիմա իր շրթունքով  
Կրկնապատկած եւտ տար կրկին,  
Սիրով բաշխեր նրանց, ովքեր  
Իրենց արյամբ ու քրտինքով  
Խնորում են տվել երգին:

Իր հետ մեկտեղ այն ժամանակ  
Գյուղացին էլ գուցե երգեր.  
— Հովիկ, հովիկ, հովիկն ընկավ,  
Դարդս ծովին ընկավ...

## ՂՈՂԱՆՁ ԲՆԱԾԽԱՐՀԻԿ

Սակայն դարդը խեղճ ու կրակ գյուղացու  
Եթե անգամ  
Ծովն ընկավ,  
Նույնիսկ ծովն էլ դարդի վրա գյուղացու  
Իր ծովային աղաջրի փոխարեն  
Կարծես դիտսամբ յուղ ածում,  
Դարդը յուղով է օծում,  
Որ... ջրի մեջ չընկդմի  
Ու չդառնա կեր տղի:  
Կարիքների ալիքային մոլի ծա՛փ,  
Զրկանքների կրիակացող խաղացո՞ւմ,—  
Եվ նույն դարդը ողջ-առողջ  
Շարտվում է նորից ափ  
Ու... կաչում է գյուղացուն,  
Ինչպես շապիկը մեջքին,  
Տաք քրտինքից թաց մեջքին,  
Եվ ի՞նչ քրտինք.  
Հիմա արդեն իսկապե՞ս որ աղաջուր:

Զուր է գեղջուկն աղաջում  
Եվ հույսի շողն իր աչքի  
Նետում երկնի հրաշքին:  
Է Վերում  
Աստված ծանրականչ,  
Ցածում  
Աղոթք ու զուր կանչ,

Արտեր՝ պատառ-պատառիկ,  
Սարի լանջին կարկատան.  
Ծխուտ-մրուտ պատ-առիք,  
Բոբիկ ոտներ, իին քաթան.  
Եվ հազար ու մի կարիք,  
Հազար ու մի ծակ ու ծուկ.  
Պիտի ուզեն հարսնացու,  
Առնեն շոր ու մատանիք,  
Պիտի փոխեն ծածկը տան,  
Պարտքը մարեն, հարկը տան  
Ու կաշառեն ջրպետին:  
Նաև պիտի... դեռ պիտի...

Պիտի վարեն ու հերկեն,  
Վարեն-հերկեն  
Ու երգեն.  
— Օրինյա՛լ է աստված,  
Հիշյա՛լ է աստված...

Աքլորը կանչեց գոմի դռանը,  
Դեռ նոր է բացվում աղոթարանը.  
— Աստվա՛ծ, փառքդ շա՛տ...  
Եպնարած տղան թող անուշ քնի,  
Գութանավորը վեր կենա բանի.  
— Աստվա՛ծ, փառքդ շա՛տ...  
Գութանն է գնում-գութանն է գալիս.  
— Այ ձը՛լ-վը՛սո, ձը՛լ-վը՛սո...  
Ուրախությունից, ակերն են լալիս.  
— Այ ձը՛լ-վը՛սո, ձը՛լ-վը՛սո...

Մաճկալը՝ մաճին,  
Իմ պաշն իր աջին.  
— Ծո՛ւտ տուր, մն՝ արա:

Հոտաղը՝ լժին,  
Մատադ վարոցին.  
— Զե՛ն տուր, թև՝ արա:

Հո՛ արա, Ծեկո՛,  
Ծո՛ արա, Լաշի՛ն.  
— Մեջը կորդ մնաց:  
Քշիր հա՛, Նիկո՛,  
Դաղի՛ր սատկածին.  
— Գնաց հա՛ գնաց:

Գնաց հա՛ գնաց.  
— Ոտըդ լե՛ն արա,—  
Են էլ ո՞նց գնաց:  
Գնաց հա՛ գնաց.  
— Տղա՛, ձե՛ն արա,—  
Էլ բան չմնաց:

Արտը լեռ քար է,  
Առը երկար է.  
— Բայց խոփն էլ սուր է:  
Քաղցած ենք, ծարավ,  
Ա՛յ հարս, ի՞նչ դառավ.  
— Բա գալրո՞ւր է:

Ե-հե՛յ, հորիփա՛ր, Ճխատի՛ն տուր,  
Սևին հո՛ արա, Կապտի՛ն տուր.  
— Կապո՛ւտ եկ, չսատկե՛ն հա:  
Թե իո ես անում՝ լա՛վ արա,  
Բերան չես բանում, ա՛վարա.  
— Վարել ենք արտի վատ կեսը:

Ծիր տանք հա՛ ծրենք,  
Մեր դարդը ցրենք.

— Ես քեզ եմ ասում,  
Արա՛պ շան,  
Հողը սևանա:

Հացն եկավ: Բանանք,  
Ուտենք կշտանանք,  
Որ, քեզ եմ ասում,  
Արա՛բ շան,  
Ուսող հովանա:

Չեզ՝ խոտի լավը,  
Մեզ ել՝ փրավը.  
— Հորովէ՞լ, իո:

... Դե՛, ելեք, լծենք,  
Խռիը հոդ գցենք.  
— Հո՛, հորովէ՞լ:  
Նո՞ր ակոս բացենք,  
Խո՞ր ակոս բացենք  
Ե՛լ առավել:

Հաջող է տարին.  
Նամուսով վարի՝  
Մեկին յոթ կտա:  
Խոտի տեղ դու, տե՛ս,  
Չոր ձիպոտ կուտես,  
Ա՛յ եզ անպիտան:

Գիտե՛մ, ոտմաշ ես,  
Ոտերիդ մատաղ,  
Բա ե՞ս, Ծիրան ջան,  
Իմ սի՞րտն է մաշած:  
Քրտընքախաշ ես,  
Իմ համե՞ն հոտաղ,

Բա ե՞ս, Ծիրան ջան,  
Իմ սի՞րտն է խաշած:

Ականջ մի՛ դրեք.  
Հո՛ արեք,  
Դարդներըդ ցրեք,  
Շո՛ արեք:

Դարդը քա՞ր կանի...  
Աստված ձա՛ր կանի.  
— Հորովէ՞լ:  
Աստված ինչ չանի՝  
Մարդը դի՛նջ կանի.  
— Առավե՞լ:

Եկո՛, զո՞ւտ արա, ո՞տ արա, ախաե՞ր,  
Դադրած մաճկալը քո ցա՞վը տանի  
— Պրծնենք ու զնանք:  
Վրան են զարկել սև ու մութ ամպեր,  
Չեռ ու ոտ արեք, ա՛յ, անձրև կանի.  
— Մոլո՞ր կմնանք:

Ուժ տուր՝ վերջանա,  
Զանըդ դինջանա.  
— Հո՛ արա, էյ ե՛կ:  
Վարենք ու ցանենք,  
Խոփը դուրս հանենք,  
— Լինենք պարզերես:

Թող չկտրվի ակի ճռինչը,  
Գութանի անուշ ձլվստիկ ձենը.  
— Իր ձենի՞ն մատաղ:  
Առանց գութանի աշխարքը ի՞նչ է,

Նրա վրա է աշխարքի շենը.

— Իր շենի՞ն մատաղ:

Հո՞ արա, եկո՞ ջան, հորովե՞լ,  
Ծարավ ես՝ ես էլ եմ ծարավել,  
Դադրած ես՝ ես քեզնից առավել,  
Ինձ էլ է արևը խորովել.

— Հորովե՞լ:

Թե մեզնից աստված է խոռվել՝  
Աստղծուն ձեն կտանք առավել,  
— Օրինյա՞լ է աստված,  
Հորովե՞լ.  
Հիշյա՞լ է աստված,  
Հորովեեեեել...

## ԴՈՂԱՆՉ ՑԱՎԻ ԵՎ ԲՈՂՈՔԻ

Մեր խելքն էր մեզնից խոռվել.  
Մոռացած Կալերգ, Հորովել,  
Մոռացած խաղիկ, զվարթ տաղ՝  
Նեյնիմ-ով ու Բնյթ-ով էինք  
Շատերս մեր հոգին պարպում,  
Թողած մեր գիտին անխարդախ՝  
Օտարի շերբեթ-ով էինք

Մեկ խաբում  
Եվ ոչ թե հարբում:

Մենք կայինք,  
Մենք Դավիթ էինք,  
Սակայն դեռ մեկ չգիտեինք.  
Դեռ պառվի շաղգամի արտում  
Քիչն ուտում,  
Շատն էինք շարդում՝  
Մանկորեն ոտքի տակ տալիս:  
Եվ մեկը պիտի գար ահա,  
Մեկ նորից կայծակը տար թուր  
Ու թամբեր Քուրկիկ Զալալի,  
Տար նաև մկունդ ու վահան,  
Որ... Մսրա նվոցին ընդդեմ  
Զգայինք մեկ Զենով Օհան:

Ակպօւմ ինքն էլ վարանում՝  
Գործում էր, բայց դժվարանում

Իր գործին տալ հարմար անուն:  
Եվ ահա իր գործը նաև  
Ստացավ անունն իր վայել.

— Աշխարհում դուք ձե՛ր երգն ունեք,  
Ձե՛ր երգը, խլացա՛ծ հայեր...

... Ու թե հայ խաղի ու տաղի հանդես!  
Խլացել էին մեվսից շատերը,  
Եթե մերային խեղճ ու վատերը  
Մեր արդար հացն ու պանիրը թողած,  
Աչք էին տնկում օտար փակալավ-ին,  
Ապա օտարը՝  
Ամենա՛յն սիրով,  
Ապա օտարը՝  
Խոսքերո՛վ,  
Գրո՛վ...

Թաքուն-բացահայտ մեկ էր բանսարկում  
Մի ամբողջ ապգի հեշտորեն զրկում  
Իր անկապտելի երգից ու պարից,  
Մի ողջ ժողովուրդ կապում օտարից,  
Օտար դռանը տնիկնա սարքում  
Մի տղամարդու, որ շեն տուն ուներ,  
Տան մեջ պուն ուներ,  
Սյան վրա՝ տանիք  
Ու տանիքի տակ՝ հսկա ընտանիք,  
Որ, ձիշտ է, գիտեր հյուրեր ընդունել,  
Բայց գիտեր նաև ճանապա՛րի դնել,  
Ու թե կտուրը կաթեր անձրևից՝  
Գիտեր վերստին պատել սվաղով...

Մինչդեռ խուլ, անկուր և կամ չարալուր  
Ականջներն օտար միշտ հակված էին  
Հայոց երգի մեջ

Լսել սոսափը պարսկավենդական,  
Հայոց տաղերում  
Որսալ մեղեղին հովին-բյուզանդական,  
Հայոց խաղերում  
Թուրք-թաթարական բայաթի-շարքի-ն:

Հայերն աշխարհում բանսարկված էին,  
Սրերից հետո,  
Թրերից հետո՝  
Հիմա էլ լեզվի թունավոր նետով—  
Առ—  
Զարկված էին...

Քեզ հարվածողին որպեսվի զարկես  
Եվ ունեցվածքը ու կյանքը փրկես,  
Պիտի զարկողին իր զարկից զրկես:

Թե ոստայնի պես ստեր են հյուսում,  
Եվ դու կեղծիքը ձեղքել ես ուզում,  
Պիտի սովորես ստողի լեզուն:

Խսկ նա շատ հաճախ ինքն էլ էր զգում,  
Որ իր հաղթ բավկում  
Տալիք հարվածի թափը պակաս է.  
Դատապաշտպանի իր լեզուն արդար  
Պտտում է հավիվ,  
Պտտում է այնպես, կարծես կակապ է:

Մինչդեռ ուզում էր  
Ու երավում էր  
Պաշտոն ստանալ և դատախավի.—  
Աշխարհի առաջ բարձրանալ տեղից  
Ու հատ-հատ ասել.  
— Խոսենն իպուր է, ճառելն՝ անտեղի:

Միատը՞ր, աղա՛, սը՛ր,  
Տիկնայք մեծարգո, պարոնայք ավնիվ,  
Քար ու կշեռքին ի՞նչը կհասնի:  
Այս՝ կշռաբարը, այս է՝ կշեռքը.  
Մեզանից՝ ահա մեր տաղն ու երգը,  
Չեզանից՝ կշեռքն ու կշռող ձեռքը:  
Թող դժվարությամբ ու հսկա ջանքով  
Բարձրանան-իջնեն կշռաբարերը,  
Անվտահությամբ ու կասկածանքով  
Իրար հոտոտեն կշռաբթերը,  
Եվ ճիշտը խոսի, լռեն ստերը:

Այս էր նա ուզում,  
Այս օրը հուսում,  
Բայց և զգում էր,  
Որ հաղթ բավկում իր  
Տալիք հարվածի թափը պակաս է.  
Դատապաշտպանի ու դատախափի  
Իր արդար լնուն  
Շարժվում է հապիվ՝  
Պտտում է այնպես, կարծես կակապ է:  
  
Իսկ եթե սուտը հերքել ես ուզում,  
Պիտի սովորես ստոդի լնուն՝  
Հրաժարվելով դատարկ վեղումից:

Պետք է սովորել,  
Իսկ ո՞րտեղ, ումի՞ց:  
Պետք է սովորել,  
Իսկ ո՞ւմ մոտ, իսկ ո՞ւմ ..

## ԴՈՂԱՆՁ ՊԱՆԴԽՍԱԿԱՆ

Հայ դատատուներն իրենք են զգում,  
Որ ջահել սանի առաջմղումից  
Հոգնում կես ճամփին ու ետ են մնում:

Եվ կոսիտասը Բեղին է գնում:

Ու գերմանական քաղաքում խոժոռ  
Ինչո՞ր վանական՝  
Աչքերը խոշոր,  
Դեմքը՝ բանական,  
Քայլքն՝ անբնական,  
Պաղ անցորդների հայացքն է անվերջ վրան սեռում,  
Մինչ մուեռանդի նայվածքը նրա՝  
Որքան ներհայաց-նույնքան բնեռուն,  
Զի մեխվում սրա կամ նրա վրա,  
Այլ այեղում կարծես անծանոթ հեռուն:

Եվ կոշտ ու կոպիտ գերմաներենը  
Շուրջ երեք տարի, հարկադրաբար,  
Ճկվում է անվերջ նրա բերանում,  
Սակայն չի ջարդվում վերջնականապես.  
Կարծես թե թողած լնուն կենդանի,  
Գրում-կարդում է նորից գրաբար՝  
Ճեմարանական խելոք սանի պես:

Ի՞նչ անենք. ջատ էլ հոգ չէ, որ այդպես  
Գերմաներենը նեղում է հային:

Կար այլ մի լեզու՝ համամարդկային,  
Այդ լեզվով խոսող գերմաններ կային,  
Ու չեր վերջանում նրանց վրույցը:

Կոտրելով բարի բարակ սառույցը  
Ոչ իբրև օտար-սառն ու կեղծամիտ,  
Այլ մեծ պապի պես՝ առանց կեղծամիտ,  
Գալիս էր Բախը ու ծանըր նստում  
Երգեհոնի դեմ, ֆիշիարմոնիայի  
Ու բարի ժապում մրահոն հային:

Եվ ալիքվում էր մի վսեմ մեսասա,  
Ու Բախը կարծես ասում էր.

— «Տեսա՞ր»:

Սնիուն սրբությամբ երկինք էր միտում  
Մի հոգեսրբիչ հոյակապ խորայ,  
Եվ ծերուկ Բախը շահեկին դիտում,  
Հարցնում էր կարծես— և գրաբարով.

— «Իմա՞ստը դորա»:

Խսկ այնուհետև՝

Օրատորիա-ի նարեկանման ծփացող մի ծով  
Լոիկ մեղմությամբ, աղոթքի ձիչով  
Դիմում էր դանդաղ, փլչում շատ արագ,  
Մինչդեռ ականջում մողեռանդ հայի  
Օրատորիա-ի ծփանքի միջով,  
Խեղդելով խորը ձայնն Օրատորիա-ի,  
Իրենն էր հնչում  
Մի նոր Պատարագ...

Ու մեկ էլ հանկարծ Մոցարտն էր գալիս,  
Գեղեցիկ, շահել, կայտառ ու խնդուն,  
Եվ պաղ դահլիճում ծիծան էր թնդում:  
Նա մերթ՝ բարեկիրթ մանկան պես՝ ուշիմ  
Լսում էր հային, խփում էր ուսին,

Մերթ՝ հանպատրաստից երգ եղանակում,  
Եվ մեկ էլ՝ խոսում համբույրից կույսի,  
Մրա վեղարը ծաղրուծանակուն,  
Պատմում արկածներն իր և ուրիշի՝

Չափից ավելի անկեղծանալով:  
Խսկ երբ տեսնում էր՝ իր կատակն է զուր,  
Հուսահատորեն ձեռքը թափ տալիս,  
Եբրև միշնարար՝ մի բերան հազում

Ու լրջանալով,

Անկեղծ ջանալով՝

Նորից էր ուկում հային համոզել,  
Որ պետք է այսպե՞ս-ո՞չ այնպես խոսել:  
Մեջտեղ էր գալիս ուրախ Ֆիզարոն,  
Դահլիճում սարքում շքեղ հարսանիք,

Խսկ նրա մտքո՞ւմ...

Աղջիկ-պատանիք

Սարից իջնելով ենում են տանիք,  
Որ մեկ էլ տեսնեն, թե ինչպես Սարոն  
Անուշի տեսքը հեռվից որսալով,  
Մոռացած ադաթ, ընկեր ու աշխարհ՝

Գետնում է Մոսուն...

— Դուք ինձ չե՞ք լսում,

Այս է ձիշտը, հե՞ռ, այս է պետք, սյարո՞ն:  
Խսկ հեռ-պարոնը լսում էր ուշիմ,

Զմեռ ու ամառ

Ուսանում համառ,

Բայց և կրկնում.

— Ուրիշն՝ ուրիշին,

Ես ի՞մը, ի՞մը, ես ի՞մն եմ ուկում,  
Ի՞մը, դուք հասկա՞ն...

Ու չեր ավարտում «հասկանում եք»-ը:

Խսկ երբ այս հսկան

Եվ կամ թե ուրիշ վիթխարու մեկը

Հայ վարդապետի հոգին էր հուզում  
Եվ գերեվարած տանում իր հետքով՝  
Երբ նա չէր գտնում փրկումի դեղձար,  
Նրա բերանից ձգում էր «Խղճա»-ն,  
Հայցում էր Բախի մեներգ-աղոթքով...

Այս, նրա հեռո՛ւ-հեռո՛ւ հայրենիք,  
Լսո՞ւմ ես արդյոք մենակ ու մենիկ  
Զղացող որդուդ: Մի՞թե չես զգում,  
Որ հեռվից-հեռու անձայն գոռալով՝  
Այդ քեզ է դիմում Բախի խորալ-ով.  
«Քեզնից հեռացա, բայց դարձա խալում»:

Այս, նրա հեռո՛ւ-հեռո՛ւ հայրենիք,  
Այդ ինչպե՞ս, ինչպե՞ս դու դարձար կսիր  
Եվ ինչո՞ւ դու հենց ընտրեցիր նրա՞ն  
Ու դրոշմը քո, իբրև սուրբ խարան,  
Դրեցիր վրան՝  
Սսերով. «Ո՞մն ես,  
Ո՞ւր էլ որ գնաս՝ իմ ճո՛րտը, ծառա՞ն,  
Իմ մինուճարն ու հավատարի՞մն ես»:

Այս, նրա հեռո՛ւ-հեռո՛ւ հայրենիք...

Ժամեր շարունակ մենակ ու մենիկ,  
Եվ համբերությամբ մի անհատնեի  
Խեղդելով հոգու ներհակությունը՝  
Պաղ ստեղներին հաղորդում էր նա  
Իր ամենապգա ու ջերմ մատների  
Սրսփումն այրող ու տաքությունը:  
Նրա վեղարի թողած ստվերը  
Ժամեր շարունակ անվերջ ընկնելով  
Ֆիզիարմոնիայի սևափայլ ներկին՝  
Մթագնում էր այն կրկին ու կրկին:  
Գոթական ոճի գրադարանում

Նա, աղեղի պես, անջարժ կորանում  
Եվ ամե՞ն ինչ էր շուրջը մոռանում:

Բայց ամեն անգամ իրիկնամուտին,  
Երբ մոտենում էր գիշերը՝

Մթին,

Ինչպես փակեղը,

Եվ Վարդապետին

Փակեղի նման նեղություն տալիս,  
Մի անկոչ հյուր էր մթան հետ գալիս,—

Այս, գալըս ո՞րն է,—

Կարոսից մարող կնոջ պես վազում,  
Գոնե մի թերև հարց էլ չէր տալիս,—

Հարց տալըս ո՞րն է,—

Զնի համար էլ նույնիսկ չէր ասում,  
Թե Վարդապետը ուզո՞ւմ է,—

Վազում

Եվ թմերն իր տաք՝

Մեկ-երեք-չորստակ՝

Փաթթում էր, պլում պանդուխտի նրա կարեվեր սրտին:  
Թո՛ղ նա վերստին

Կուսակցրոնի կոչմանն իր վայել,

Սրբուն հաստատ իր տված ուխտին՝

Անկոչ սիրուկուն իրենից վաներ:

Թե դռնից հաներ՝

Պիտի երևար բաց լուսամուտին,  
Լուսամուտի պես աչքերը փակեր՝

Հիմա էլ մտքի դուռը կթակեր.

— Ընդունիր տունըդ:

— Ո՞վ ես, անո՛ւնըդ...

— Սուտիկի՞ս մի տես,

Դու ինձ լա՛վ գիտես:

— Ո՞վ ես, անո՛ւնըդ...

— Հայրենակարո՛տ...

Եվ Վարդապետի հայացքի դիմաց,  
Նրա կարուտած աչքերին ի տես,  
Չգլում էր հանկարծ կածանը քարոտ.  
Սարավանդակից գութանի խոփն էր հանկարծ պսպղում.  
Թուրի պոռունգին, սև պուտուկի մեջ, ապուրն էր պաղում.  
Ճակատին շարված բոլոր «արծաթի» ծափերի ներքո՝  
Արմաղան մի հարս նախշուն կարպետին ձավար էր մաղում.  
Իրենց մացառե ցանցառ բեղի տակ  
Ծիծաղում էին քարափներն անտակ՝  
Աղունակների ու կաքավների  
Խոտուտ հարուցող կրկրան ձայնից.  
Բարակ գոլորշին, անուշ խնկի պես,  
Ծիփում էր այգում, ենում հնձանից.  
Հարյուրուներին ծփծփում էին  
Ասերեսորեն կանաչած խոտեր.  
Զահել ու բորիկ կանացի ոտեր  
Թփթփում էին  
Ու տպում էին  
Իրենց հետքերը աղուրի փոշում...  
  
Հստակ էր այնպե՞ս ու ջոշափելի՝,  
Տեսնում էր կարծես և ոչ թե իիշում:  
Եվ աչքերն էին բացվում-մշուշվում  
Ինչ-որ մորմոքից, որ անուն չունի.  
Թիկունքի վրա զգում էր կարծես  
Վագքը երթևեկ ինչ-որ մրջյունի.  
Ու դուռը զարկող կարոտ կոչվածը,—  
Էլ ի՞նչ հրավեր,—  
Մենակ էր խուժում  
Եվ անմոռացն էր վերիիշում.  
— Կո՞նկ...  
Խաբրիկ մը չունի՞ւ...

## ԴՐԱՆՑ ԿՈՏՈՐԱԾԻ

Չէ՛, կոռունկ չկա՞ր Բեղիին քաղաքի երկնքում մթար,  
Որ վարագուրված հայոց աշխարհից գեթ խաբրիկ մը տար:  
Բայց Գուտենբերգին ծնած աշխարհում  
Սև կոռունկների մեջ երամի պես՝  
Սև տառերն էին լրագըրերի էջերին թառում:

Եվ մի օր հանկարծ  
(Ահավո՞ր վայրկյան) ...  
Եվ մի օր հանկարծ այդ տառերը սև՝  
Քիչ առաջ հանգած  
Ածուխներ ասես՝  
Մատներն են այրում գրաշարների,  
Ու տաք ոսպի պես  
Ընթերցողների լեզուն են վառում:

Նորի՞ց ու նորի՞ց  
Հայոց աշխարհում  
Մինչ թռնիրները՝ արյունից մարում,  
Խաղաղ ծխացող լուռ երդիկներին  
Աքաղաղի տեղ բոցերն են պարում:

Եվ լեղապատառ մայրերը հայոց  
Զո՞ւր են մրմնջում աղոթքը կերկեր,  
Համըր Տիրամոր նիհար ծնկներին  
Նկո՞ւր են այդպես աղերսով փարում.

Եթե ունենար  
Որևէ հնար՝  
Խեղճ տիրամայրը իրեն կփրկեր,  
Մինչդեռ քիչ հետո ինքն է դառնալու  
Դիղդ հանաքնեղի,  
Կեռ դանակների  
Եւ ա'յն հրդեհի չար կրակին կեր,  
Որ նորից հիմա  
Մարդկային մսեր ու ոսկորներ է շան պես ձարակում:

Տարաբախւտ երկրի  
Եվ աստծուց քափուր երկնի արանքում,  
Դրբն ամոթի ծանըր վարագուր,  
Փովում էր ծուխը,  
Եվ ձենձահոտը օդի շերտերն էր այնպես վարակում,  
Որ—անժամանա՛—  
Կոռուկներն անգամ թողին-չվեցին  
Եվ ուր թմեցին՝  
Ահ ու սարսափից լեզուն կապ ընկած  
Հայ մանչուկների խմբերի նման՝  
Կը՛վ-կը՛վ հա՛ կը՛վ-կը՛վ՝  
Անվերջ կվկեցին,  
Անլուր աշխարհին իմաց տվեցին,  
Որ հայոց երկրի ձորերում անտակ,  
Կիրճերում խորունկ...  
Ա՛խ, էլ ի՛նչ կոռուկ,  
Երբ հիմա վառեան թռնիր էր դարձել  
Թռնիրի երկիր Հայաստան ինքը,  
Ու թռնիրն դրված սև խուփն էր կարծեն  
Հայոց երկինքը...  
Եվ ո՞ւր է ինքը.  
Այստե՛ղ՝ Բեռլին՛ւմ,—  
Մրամիտ բախտի ինչպիսի՛ հանաք,

Ճակատագրի ի՛նչ ծաղրուծանակ:  
Ե՛հ, հայի կյանքում ինչե՛ր չեն լինում.  
Վաղուց է վրկվել նա զարմանալու կարողությունից:

... Երբ ոռւս-տաճկական կովում հերթական  
Ռուսաց ավինը, թուրն ու բերդանկան  
Անձնատուր արին ճամփին հանդիպող  
Թուրթական բազում բերդ ու բերդակալ,--  
Ե՛լ գերմանացի,  
Ե՛լ ֆրանսիացի,  
Ե՛լ անգլիացի՝

Յուրաքանչյուրը խփեց իր ծնկան,  
Ու բոլորը մեկ ձեռ ու ոտ ընկան,  
Սան-Ստեֆանո քաղաք գնացին՝  
Այնտեղ գումարվող Վեհաժողովին,  
Որ... Պետերուրը հաղթության դաշտից  
Իր սպասածից քիչ բերք ժողովի:

Երկար նստեցին, ուշ-ուշ վեր կացան,  
Դրսից Ժպտալով՝ ներսից բարկացան,  
Անգամ լոելով՝ իրար հասկացան,  
Ու երբ, վերջապես, պիղատոսաբար  
Մաքուր լվացած իրենց ձեռքերով  
Հայկական հարցը մեջտեղ բերեցին,  
Քանի տաք էր դեռ՝ մերթ վերցըրեցին,  
Մերթ էլ վերստին ներքև դրեցին,  
Եվ ամեն մեկը մատներն իր վառեց:  
Բայց ասեն մեկը այնքա՛ն շատ ճառեց,  
Մինչև որ հարցը բավական սառեց,—  
Ու ցիների պես ընկնելով վրան՝  
Կտուցով, ձանկով լա՛վ քրքրեցին,  
Առան-տվեցին, տվեցին-առան  
Ու վերջում... հարսի լեցուն կոնքերով  
Փետայի աչքին լավանարդ դառան.

Այս ու այն կողմից միավորների վրոն քերեցին,  
Ու մնաց մի թիվ,

Որ էլ չի քամի՝ ինչքան էլ քամես,  
Ու մի թիվ մնաց... համեստից համեստ.

Մնաց 16—

«Հայկական հոդված»—

Հայկական հարցի բվկտված մարմնից

Ոչ թե մինչեւսկ դաշումնով հատված,

Այլ քաջօղոց՝ վ, այլ եղունգներո՞վ

Մի կերպ ծվատված...

Սակայն... աշխարհում ինչե՞ր չեն լինում:

Սակայն... աշխարհի ցնփոր տերերին դա էլ շատ թվաց:

Եվ ահա նրանք վերստին եկան Վեհաժողովի՝

Այս անգամ արդեն այս նույն Բեռլինում,

Հայկական հարցը— հուշաթելի պես—մատին փաթ տված:

Երկար վիճեցին, տվեցին-առան.

— Հայ պատվիրակը թող նստի դրանն...

Ամենքը մի-մի պողպատե կռաս՝

Իշա՞ն մեր սալին.

— Վա՞յ տամ մեր հալին...

Մեր արյան դիմաց՝ ծախսեցին թանաք.

— Այ քեզ խաչապաշտ թրի հաղթանակ...

Աղվեսությանը խառնած շնություն,

Ներհակությանը՝ միաբանություն,

Մեր արցունքի դեմ մի կում ջուր տվին,

16-ն այսպես մի կերպ ջուռ տվին:

Աչքը լո՞ւս լինի,

Դու օգտվեցի՞ր, թվաբանությո՞ւն.

Շուռ գալով՝

Աձեց քո 16-ը—

Դարձավ 61:

Իսկ մեր հա՞րցը, մե՞նք:

Իսկ Հարցը Հայոց քամվեց վերստին՝

Կարծես թե թափված արյան համեմատ.

Մի թիվ էր եթե Սան-Ստեֆանոյում,

Բեռլինում արդեն նա դարձավ մի մատ:

Այո՛, այստեղ էր՝ այս նո՞յն Բեռլինում,

Որ բարեխընամ մի Վեհաժողով

Որոշում համեց... հայ հոդվառությին

Չբավարաքել վեց արշին հոդով,

Այլ— ընդամե՞նը— չխենթացընել

Մահվան ու շարոդի մշտական դողով...

Քաղցած հավի պես, քուն թե արթմի,

Հայն էլ ինքն իրեն տեսնում էր անվերջ

Ինքնավարության կորեկով լեցուն հովա մարագում,

Ինքնավարություն, որ հիմա դարձավ... բարենորոգում:

Բարենորոգո՞ւմ...

Գլուխը քա՞րը.

Թո՞ղ լիներ թեկուք բարենորոգում,

Բայց ոչ թե թղթին, ոչ թե թանաքով:

Բարենորոգո՞ւմ...

Եթե ամեն ինչ

Զարդում ես քարով ու դագանակով,

Փրառում ես թրով ու կեռ դանակով,

Խուժանի խուժմամբ՝ ասես հանաքով,

Նաև լրջորեն՝ կարգին բանակով,—

Ի՞նչ ես նորոգում.

Իհարկե լա՞ցը,

Որ չի չորացել,

Եվ կոտորա՞ծը,

Որ չեն մոռացել...

Եթե անջրդի հող ես ոռոգում,

Ի՞նչ է, եթե ոչ բարենորոգում...

Եվ ահա Նարմիր սուլթանն իսկապես  
 Հայի... ջուր դարձած արյունի գետով  
 Հայոց անջրդի հողն էր ոռօգում,  
 Եվ այդ էր կոչվում բարենորոգում՝  
 Այս նույն Բեղյինի 61 կետով:  
 Եվ իհմա... դատարկ այս դրոշման տակ,  
 Իբրև մի կնիք վավերացումի,  
 Կարսիր սուլթանը՝ պաղ թանաքի տեղ  
 Լավ թաթախելով մեր արյան մեջ տաք՝  
 Դնում էր վայրի մի կրունկ...

— Կոռ' նկ...

Ախ, ել ի՞նչ Կոռունկ, ել ի՞նչ ան Կոռունկ,  
 Սրտավեր պանդուխտ,  
 Ո՞րտեղ ես տեսել երկինք հասցընող  
 Փրկարար սանդուղք.

Ո՞վ կըկշտանա՝

Հացի փոխարեն թե նրան տան թուղթ...  
 Սրտամն՛ո պանդուխտ,  
 Ել ինչ ես այդպես լայխ,

Զայն տափիս

Կոռ' նկ հա Կոռ' նկ,  
 Ախ, ել ի՞նչ Կոռունկ,

Թե ճռչոցով դարպաս ու դրունք

Հայոց հուսիս դեմ ուժգին փակվեցին,  
 Թե հայոց Ուխտի

Հոգնատանջ ուղտի

Երկու ծնկներն ել երեքտակվեցին.

Նորից մոլեզնեց մահվան հարսանիք,

Եվ Պոլսից մինչև պատժիած Սասուն՝

Հայոց աշխարհի ամեն մի մասում

Անբան անսառն դառնալը թվաց մի մեծ արժանիք.

Թող կթե՞ն, շորթե՞ն,

Միայն... չմորթե՞ն,

Միայն...

## ԴՐԱՆՉ ԶԱՐԹՈՆՔԻ ԵՎ ԿԵՆՍԱՏՄԱՆ

Եվ խարիել, որ այդ նույն աշակին,  
 Երբ թուրք սուլթանը այսպես վեհաշուք  
 Տնում էր ծնունդն ու չմեռնելը հորելյար Մահի,  
 Միևնույն պահին  
 Այդ նույն աշխարհում  
 Գարուն էր, գարո՞ն:

Քարայծը նորից

Իր քարայծիկի դունչիկն էր լիպում կիրճում ու սարում՝  
 Ենպի ծայրով էր թուլ չդիպչելով բերմի ընձյուղին.  
 Արագին էլի

Ծեր խնձորենու ծաղլիի բոցի մեջ իր ոտն էր վառում՝  
 Վերցնում ու դնում միևնույն ճյուղին.

Իբրև կշտամբանք ուշացած մարդուն՝

Իր իսկ սեփական նախաձեռնությամբ լույս աշխարհ եկած  
 Մի ինքնագուխ արևածաղիկ աշիկն էր թարթում  
 Հերկա բոստանից.

Գութանի խոփը ժանգից էր նեղվում,

Ինչպես որ մարդը՝ իր դեմքին կպած սարդի ոստայնից.

Բահն աղջկա պես ուզում էր փարվել

Ու հետո մարել կարուսած հողի կրքու հպումից.

Սամին ուզում էր անկրակ այրվել՝

Եկան մկանուտ վկի շփումից.

Լծացու բարդին գոհ չէր երևում սուր կացիններից.

Դեղձեսիներից մարջան էր կարուս,

Ըեփորուկներից՝ երկնքի կաթի.

Եվ ձյունի փաթիլ՝  
Ակացիներից...

Գարուն է, գարո՞ւն...

Անցած աշնանը հարսնացածների մայրությունը սուրբ

Զարթնում է հանկարծ՝  
Ծնվելիք մանկան  
Թուլ քացիներից...

Հողերն են ընկել օրորոցի մեջ խաղացող մանկան

Հինգչակիան ձեռքի պարզված մատներին,

Խչպես մուսերին՝ բոցը բարակող...

Առվույտից թափուր հսկա մարագով

Պաղ ստվերների հսկա ամբոխն է դես ու դեն անում,

Լուռ հրմչոցով իհար ուր կրիսում, շարդում իհար կող.

Դուրս գալ են ուզում, բայց սիրտ չեն անում...

Անուն են ուզում ծաղկունքն անանուն,

Ծաղկունքն անվանի ուզում են նորից

Քնքանքով իրենց անունը լսել

Կույս աղջկների շրթներից լուսե...

Գարուն է, գարո՞ւն:

Անփորձ ու անգետ մի ճուտ հիմարիկ

Փակ բողբոջների ստվերին ընկած՝

Երևի սխեն կամ ոսպ կարծելով՝

Կտցահարում է հա՛ կտցահարում...

Կիսով չոր ու թաց խաղաղ բակերում,

Կալատակերում,

Ուր ծիլ են տվել

Աշնան կալսումից հոդում մնացած հատիկներն արդեն,

Աքաղաղն այնպես գոռով է քայլում

Անկիրք հավերի անփակ հարեմում՝

Աչքը շուր տալով մեկ դես ու մեկ դեն,

Ասես երեկվա ասկյարը այսօր դարձել է սպա...

Սարալանշերին, հարսների նման,

Կրքոտ պուտերը բռնել են նապար՝

Հարսների նման մոռացած մի պահ,

Որ աշխարհում կա բիրտ առևանգիչ...

Մի տարի առաջ թուրք թնդանոթի երկաթե ձանկից

Վիրավոր վանքին

Սրբատաշ քարի սկաղ վիրակապ է վերստին ձարում

Չեռքը ձարտարի...

Նորից հաճարին

Սեփական խեժով

Թուրքի գնդակից տեղ-տեղ պատրոված կեղևն է կարում...

Գարուն է, գարո՞ւն,

Բայց մարդասպանին դա չի խանգարում:

Դա չի խանգարում,

Որ արյամբ հորդի հայկական առուն,

Որ ոխակներից քարափի անհատակ

Իր պոռնկներով գա հավասարվի...

Ա՛խ, եթե անգամ քարե սիրտ ձարփի՝

Մարդկային սրտում բա կրա՞կ կարվի...

Ո՞րտեղ եք տեսել, որ թել-ասեղով

Կտղրփած երակ վերստին կարվի...

Այս արհավիրքից, կուլումից այս չար

Դե, ե՛կ, տնափե՞ր, մի՛ խելագարվի...

## ԴՈՂԱՆՁ ԶԱՐՄԱՆՔԻ

Բայց նա այս անգամ չխնազարվեց:  
Ո՞չ, նրա միտքը դեռ չխանգարվեց,  
Դեռ չխանգարվեց և այն ժամանակ,  
Եթե նա բեղինից հայրենիք հասավ  
Եվ, իբրև կյանքի նոր ծաղրուծանակ,  
Ապշած աչքերով այստեղ էլ տեսավ  
Եթե ոչ արևոտ նույն ահն ու մահը,  
Ապա երկիլորյակ ախն ու վախը նույն,  
Նույն լաց ու կոծք, հառաչն ու վայը:  
Այստեղ էլ հայի ձեռքը ծոցումն էր,  
Այստեղ էլ հայի սիրտը բոցումն էր,  
Ու մոլորված էր գլխիկոր հայը:

Այստեղ էր արդեն ցար Նիկոլայը...  
Վաթունմեկ թվի ձևափոխությամբ  
Լոկ թղթի վրա ջնջված չարիքը  
Եվ չնվազած նույն հին կարիքը՝  
Ենթակա պարապ տեղափոխության,  
Չուկ դարձած՝ լողոս-չին խեղդըվում  
Ճորտատիրության անփոփոխ ծովում,  
Ու ծառանում էր հեղափոխության  
Մակընթացային կանաչ ալիքը:

Եվ Նիկոլայի աչքը ոխակալ  
Ամենուր ու միշտ  
Եվ ամենքի մեջ,

Անգամ երակո՞ւմ,  
Տեսնում էր անվերջ

Միայն «տեղորիստ», «հեղափոխական»,  
Միայն «դավադիր», միայն «սոցիալիստ».  
Թվում էր նրան կայսրությունն իր ողջ  
Մի անժայրածիր ստեա օձալից...

Եվ կայսերական բանտին ու բերդին  
Բյուրավոր հայեր զոհվելու տարան,  
Դեմքին դադելով մի ահեղ խարան՝  
«Հեղափոխական» և կամ «դավադիր»:

Քա՞րջ տվին տարան,

Որ այստեղ մորթեն

Իբրև մատղացու զառներ ու հորթեր՝  
Ի սեր Հիսուսի արդար հավատի.

Գանուկներ անմեղ՝

Լոկ նրա՝ համար,

Որ միսն էր հարմար՝

Որ միսն էր համեղ,

Ու եթե եան հորթեր բազմամեղ՝

Լոկ ա՛յն հանցանքով պատժապարտելի,  
Որ սին հովսերի քաղված բոստանում  
Հորթուկի նման տրտինգ են տվել...

Այսպես է.

Որտեղ շատ են խոստանում,

Միշտ էլ այնքան են հետո խստանում,  
Որ ձեռք են կտրում, ոչ միայն թևեր:

Եվ կամոք ցարի՝

Նրա ոխակալ

Համայն Կովկասի պատիժ-ինիսարքան՝  
Հավետ անմոռաց մե՛ր Գոլիցինը,  
Երկու գլխանի արծիվը կրծքին

Այդ մոլի ցիսը,  
Փակում է հայոց դպրոցներն ամեն.  
— Օվսա՞ննա... ամե՞ն:  
Եթ խաչապաշտի անկշտում ձին էլ  
Թուրքավարի է կամենում ծամել՝  
Խոտ է որոնում... ջրված մարգերում.  
— Օվսա՞ննա... ամե՞ն:  
<նոց դարավոր գիրն են արգելում,  
Բռնազրավում վանքի հողերը,  
Գանձերը չեղած,  
Եղած փողերը,  
Պեղում մառանը,  
Շտեմարանը,  
Որ մի անգամ էլ քամվածը քամեն:  
— Օվսա՞ննա... ամե՞ն...

Փակել դարո՞ցը, ուսումնարա՞նը...  
Բայց ինչպե՞ս փակես մի ազգի լեզուն,  
Մի ժողովրդի խոսուն բերանը:  
Լեզուն կարող է սարսափից լալկվել,  
Կապ ընկնել ահից,  
Բայց ոչ թե փակվել:

Արգելել գի՞րը,  
Այրել գրքե՞րը...  
Բայց ո՞նց արգելես կակըծող սրտի,  
Մղկըտող հոգու ժայթքուն երգերը:

Այսպես է.  
Միշտ էլ երբ համն են հանում  
Ուղիղ հակառակ բան են ստանում:  
Եվ արդ՝ չուվելով և ակամայից՝  
Ուխտյալ հայտյաց այդ Գոլիցինը

Մինչևիսկ արդեն ռուսացած հայից  
Մոլի հայ սարքեց:  
Կրկընվեց հինը.—  
Ուր հայերենը վաղուց էր մնջում՝  
Հիմա հնչում էր,  
Նույնիսկ մողնչում.  
Ով հայ գրքի դեմ աչքերն էր փակում,  
Արդ սովորում էր հայ գիրը  
Թաքո՞ւն.  
Ով ռոմանսով էր թրչում իր բուկը,  
Բերան ողողում օտարի երգով,  
Հիմա գրգռոիչ մի հպարտությամբ  
Սեղան էր գցում հայ՝ երգի ձեռքով,  
Հայ՝ երգով վարում իր գինաբբութը,  
Հայ՝ նվագի տակ ուրախ պար գալիս,  
Հայ՝ խաղով-տաղով երգում ու լալիս:

Հայ երգն էր հուզում,  
Հայ խոսքն էր հոսում.  
Հակառակությա՞ն ոգին էր խոսում,  
Հակառակության այն զարմանալի՝  
Անիմանալի՝  
Արտառո՞ց ոգին,  
Որ պարգևած է եթե ամենքին,  
Ապա հայ հոգում այնքան է առատ,  
Կարծես բաշխելիս բնավ չե՞ն նայել,  
Իսկ թե նայել են՝ բա՞ն չեն խնայել,  
Փոել են այնպե՞ս շռայլ ու առատ,  
Որ չես հասկանում՝  
Ազգային արա՞տ,  
Թե՞ արժանիք է...  
Այն է թերևս,  
Որ մեկ շնչել է, բայց և պահպանել,  
Որ մեկ սպանել,

Ծնել է նաև,  
Ու որով գուցե ապրում տակավին  
Եվ աշխարհումըս կոչվում ենք հայեր...

Ինչպես մարդկանց մեջ՝ անցողիկ կյանքում,  
Այդպես պատմության ծանրը երկայնքում  
Երևի նաև լինում են ցեղեր,  
Երևի նաև ազգեր են եղել,  
Որոնց վիթխարի մարմինը թեաբեա  
Գինու տկի չափ արյուն է տանում,  
Բայց դա արյուն է, որ չի լերդանում.

Մի քերծվա՛ծք, մի վե՛րք,  
Ու բանը բռ՛ւրդ է.

Կողքը պատրսված գինու տկի պես  
Քամկում են խկույն,  
Եվ անհետուանում,  
Չքիում է ավգը էամ մռզովուրդը...

Խակ մեր արյո՛ւնը...  
Նա ջրի՛, ցեխի՛

Եվ մինչև անգամ գարշահոտ նեխի՛,  
Ամե՞ն ինչի մեջ խկույն լերդանում,  
Փակում էր վերքի բացված քերանը:  
Եվ այդ մակարդը, նույն այդ մերանը  
Որդուն է անցել հորից ու մորից.  
Եվ արյունաքամ,  
Կիսամեռ անգամ,  
Մենք քանի՛, քանի՛, մենք քանի՛ անգամ  
Հոգեղարձի պես փրկվել ենք նորից...

## ԴՐԱՆՉ ՀԵՐՈՍԱԿԱՆ

Ա՛խ, ի՛մ ժողովուրդ,  
Ես դեռ չկայի՛,  
Որ քեզ պես ես էլ քեզ հետ տոկայի՛  
Ծալվելու պատրաստ մեջքըդ գրկելով:

Սակայն դու,  
Որ քո պատմագրքերով  
Մի ձիգ ցուցակ ես  
Ու լեցուն ցանկ ես  
Նահատակների՛,  
Զոհի՛,  
Հսկայի՛,  
Դու չես զգացել երբեմէ կարիք  
Նաև քաշերի,  
Ասբեկ աշերի,  
Որ կրծքիդ վրա  
Դարձել են վրահ,  
Որ սուրբ են պահել պատիկդ ազգային  
Իրենց պարզ կյանքով-մահով հսկայի:

Ա՛խ, ի՛մ ժողովուրդ,  
Ես դեռ չկայի՛,  
Բայց կտրիճ որդիք մի՞թե քիչ կային,  
Որ— հողի՛ տակից— զենք էին պեղում  
Եվ քո արյան դեմ սև արյուն հեղում:

Սասո՞ւնը...  
 Արդեն ո՞րերորդ անգամ  
 Նորից տեր դարձավ նոր Դավիթ մանկան,  
 Որ—ինչո՞ւ սակայն—  
 Կոչվեց... Անդրանիկ;  
 Ահեղ շարդերի ճարակող բոցում  
 Ամեն սասունցի դարձավ Սասնա ծուռ,  
 Սասնա տուն դարձավ ամեն ընտանիք,  
 Սասնա դյուցապուն՝ թե՛ մեծ, թե՛ պուճուր,  
 Որ—բավակա՞ն է—  
 Քառոսունծամ կույսեր, հարսներ արմաղան  
 Օսմանցու համար էլ երկանք չաղա՞ն,  
 Որ—բավակա՞ն է...

Խանդութ խաթունի գովքի փոխարեն,  
 Սասնա զմբկմբան ջրերի նման,  
 Հնչեց սարերում, ճամփեքում ոլոր  
 Աչ ու ձախ հորդած  
 Երգը քաջորդաց՝  
 «Վայ-կուլում-վայ»-ը մի պահ խեղդելով...

Կիլիկիո տունը՝  
 Անառ Զեյթունը,  
 Որ մեն ու մենակ,  
 Սակայն միակամ  
 Կովել-հաղթել էր քառասուն անգամ,  
 Հիմա՝  
 Քառասունմե՛կերորդ անգամ,  
 Ծեկ բուրվարի հետ  
 Սև վառող խնկեց,  
 Խաչը վերստին դրոշակ տնկեց,  
 Ճորտության գիրը կրկին հերքելով՝  
 «Սուր ու թուր, գնդակ ու հրացանը  
 Մեր խաղաղիքն է» խրոխտ երգելով:

Միակուր դարձավ, ինչ ցիրուցան էր:  
 Կամք-սիրտ-նպատակ  
 Իրար հողվեցին:

Եվ մեր դարավոր թշնամու սրտում  
 Յուղոտ գնդակներ ճենճահոտվեցին:  
 Նրանց էր լսում մի ողջ Հայրենիք.  
 «Պատերապմիկ ենք,  
 Ոչ թե վայրենիք»:

Նրանց էր լսում թշնամին սաստված.  
 «Դուք ունեք սուլթան,  
 Մենք ունենք աստված»:

Նրանց ձայնի մեջ լսեցինք մեզ մենք.  
 «Մարդ կոտորելը  
 Սովորեցանք ձեզմեն»...

Ու եկեղեցիք պահքի մեջ մտան՝  
 Սգավորվեցին  
 Ամրոջ չորս ամիս,  
 Քանչի քայլում էր Մաքառօւմն ինքը  
 Իրեւ գինովցած մի Բարեկենդան:  
 Սուրբ սեղանների վարագույնները  
 Փակված մնացին  
 Ամրոջ չորս ամիս,  
 Քանչի բացվել էր Հերոսությունը,  
 Որպեսզի իր տաք  
 Կրունկների տակ  
 Ազատությունը ահարկու թնդա:

Հարսներ,  
 Աղջիկներ,

Մայրեր,  
Մանուկներ  
Մերկացան իրենց արդուպարդերից,  
Հազան քուոձ,  
Խչաբս հագնում են զրահ:  
Եվ ամեն հայ սիրտ  
Դարձավ մի սրահ,  
Որ Վահատությունն էր հոգեվարուս  
«Կա՛մ-կա՛մ»-ի հատու հարվածների տակ,  
Եվ Ազատության ողին էր պարուս՝  
Որպես վրնջող մի խենթ հովատակ:

110 000 զորքի հանդիման  
Մարտնչում էին 6 000 քաշեր:  
Չնարդկայնացած թուրքի հանդիման  
Մարդեղինացած մի ազգ էր խաչել  
Իր բախտն իր վրա:

Եվ սուրը նրա,  
Որ ամբողջ վե՛ց դար սնար էր դարձել  
Մեր մանուկների օրոցքի համար,  
Սուրբ մատյանների գրքածակերից  
Խենեց ժախտով կարել էր բարձեր  
Իր հաստ-իգացող նստուկին հարմար,—  
Եվ սուրը նրա  
Դիպավ մեր խոփին,  
Մեր թարթիչ-նետով վինավառ կոպին,  
Մեր մամիկների ասեղին ճարտար,  
Մեր մանուկների հայացքին արդար,  
Մեր մանգաղների շեղբերին տոկուն,  
Մեր թոնիրների խաչերկաթներին,—  
Երբեք չմեռած հայկան մեր ոգուն,  
Որ ճառագայթող տասը մատներին

Զեր դրել իինա՝  
Հռմանու նման,  
Այլ քսել արյուն՝  
Հովաննու նման,  
Որ Հայտնության օրն ի վերջո հասնի,  
Եվ ամեն մի ազգ արժանին տեսմի...

Իր վարդապետի մթին վեղարով,  
Թե ուզեր՝ գուցե և նա էր կարող  
Հարկադիր մարտին միջամուխ լինել՝  
Գոտեալնդումի խոսքերով վինել  
Հուսահատվածին,

Քաջին լաքառող,

Որպես նորօրյա մի Ղևոնդ երեց:  
Սակայն պայթարի զոհասեղանին  
Նա բոլորովին ուղի՞շ զենք որեց:

Իր ժողովրդի  
Երգահան որդին  
Իր ե՛րգը բերեց  
Քաջորդաց մարտին,  
Իր «Լո-լո»-ն՝  
Մի ջո՛կ,  
Մի դասա՛կ,  
Մի գո՛ւնդ,

Եվ կովողների հոգին հանեց թունդ,  
Մեկին տասն արեց  
Եվ հարյուր՝ տասին,  
Նա՝

Խրոխտ «Լո-լո»-ն լուռ Կոսիտասի:

Միփանա սարը գոռ արձագանքեց՝  
Խռապու Նեմրութից չափը խելով.  
— Միփանա՛ ... լո՛-լո՛ ...

«Սուրբ Կարապետ»-ի զանգը վիլ զանգեց,  
Ամեն մի զանգը՝ մի-մի յո՞թ հոլով.  
— Կողիձնե՞ր, լո՞-լո՞ ...  
Վարագա լեռը,  
Համիրամ-առուն  
Նոյն մեկ բայն էին անվերջ խոնարհում.  
— Սուրբ հագեցա՞վ...

Ներկված Եփրատը ափերին տալով,  
Վանա ծովակը տրտում խնդալով  
Իրար ձայն տվին.  
— ... Դրեցին պատյա՞ն...

Ո՛չ,

Չհագեցան սրերն, իհարկե,  
Սակայն խևապես դրվեցին պատյան,  
Ու երավելով մի ահեղ ատյան՝  
Հայ մաքառումը,  
Կոռ՞ ր առ կոռ՞ ր,  
Յուրաքանչյուրը՝ մի կարմիր հատոր,  
Այս անգամ նորից չավարտվեց.  
Հատվեց՝  
Բացականչության ու կախման կետով...

Հայի արյունը նորից լերդացավ,  
Ու վերքը դարձավ ապաքինելի:  
Կսկիծ ու մրմուռ,  
Ճմլող սրտացավ  
Աչքերի խոտուն ապակիներին  
Գրեցին, թե ե՛րբ ի չիք կդառնան...

Չմեռը նորից գարուն է դառնում,  
Ամառն է կրկին հետևում գարնան,

Ամառվա տերը աշունն է բռնում,  
Եվ նախ՝  
Վախվորած, շվար ու մոլոր,  
Ապա՝  
Աննկատ և ակամայից  
Ժայիտն է խաղում շուրթերին հայի.  
Թենքն է ծալում ուժասպառ Լո-լո-ն,  
Կոկորդն է ցամքում Վայ-աման-վայ-ի,  
Նորից է հնչում ուրախ Նայ-նայ-ը:  
  
Իսկ որտեղ երգը՝  
Այնտեղ էլ նա է...

Իսկ որտեղ երգը՝  
Այնտեղ էլ նա է...

## ՄԻԶՈՐԵԻ ՀԱՄԱՁԱՆԳ

ՉՈՂԱՆԶ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅԱՆ

Աշունն էլի վրաղվում է ներկարարի իր փեշակով.  
Նա օրն ի բուն տիշխատում է,  
Խսկ գյուղացին՝ հանգստանում,  
Երբ աղունը տուն է գալիս  
Ծանր սայլով կամ իշուկով,  
Երբ աղվում է թռու-թռուցին,  
Նորոգվում է ճոճկան քուրսին,  
Ու չորացած ցան-փթիրը ամրոցի տեսք է ստանում:

Ամբողջ ամսառ  
Ջրի համար  
Հոգի տվող հողը հիմա  
Ծծողական թղթի նման  
Կլանում է եղամ ու թոն  
Ու մեկ քրտնում, մեկ մրսում է:  
Փխրուն գետին աշնան ցրտի պա՛րզ գաղտնիքով  
Նորից իրեն, մումիայի պես, զմռում է:

Ընկուզենին ու խնձորին  
Իրենց խաշամն են ծալդում հասդ ու ձորին՝  
Նորահարսի փոթ-փոթ շորի  
Ալիքավոր դարսի նման:

Լոկ փշատն է կարմրատակված կախվել ճութ-ճութ՝  
Մեղվի գնդված պարսի նման:

Վերի-վերի, պարապ-սարապ ջահելի պես՝  
Զի կարենում քամին մի տեղ տիտիկ անել.  
Դես է վազում-դեն է թռչում,  
Մերթ ուզում է ծերպի խորքը մտիկ անել,  
Մերթ ծառի հետ կոխ է բռնում,  
Քիթը կոխում ուր պատահի՝

Սափորի մեջ,  
Հարս ու կանանց խորհրդավոր փեշերի տակ:

Լեռնաշխարհում աղբյուր-վտակ  
Իրենց սնդիկ մարմնի վրա նորից հագնում են ապակի,  
Մինչ տներում ներսի տաքից՝  
Ապակիներն ուրախությամբ լաց են լինում աննպատակ:

Ղավուրման է ամեն բոնրի  
Սղ ներծծում ու ճարպ հալում:  
Ամեն կողմից կանչում խաշի,  
Հարիսա են անվերջ հարում:

Այստեղ՝ ծնունդ,  
Այնտեղ՝ կնունք,  
Աչքալուսի ժպտուն օդի:  
Ամեն մատուռ՝ հավաքավայր,  
Եվ ամեն վանք՝ ուխտատեղի:

Ու վանք տանող ամեն ճամփա ու սայլուրի  
Նախշըվում են տեսակ-տեսակ ուռնահետքով,  
Տրեխավոր, մաշիկավոր, բորիկ ոտքով

Վանք են գնում  
Հեռու-մոտիկ ամեն գյուղից:

Տան առաջնեկ գառը՝ կապված էշի վսից,  
Առաջ վազում, կախ է ընկնում, շուրջը նայում,  
Ու տանչվում է այն հարկադիր ու կեղծ հապից,  
Որ անկասկած պիտի հնչեր իբրև մայուն...

Այսինչ շորու մեջքին կապված  
Չնգվնգացող սև կաթսայից՝  
Ինչպես ասպետն իր վրահից՝  
Մի վառ խորով,  
Գոռո՞ւ-գոռո՞ւ,  
Իր կատարն է մեկ դուրս հանում,  
Մեկ՝ ներս տանում,  
Եվ թափ տալով իր թևերը հրանման՝  
Չհրկիվող կայծերի խորձ  
Ու բոցեր է ցրում իր շուրջ:

Եվ սայլերն են առաջ սողում՝  
Լծից պոչուկ բեռնավորված  
Աղմրկարար ձիժ ու պիժով, . .  
Աման-չաման-կուլա-կժով,  
Աչքերն ածուխ աղջկների անծուխ բոցով,  
Նորածընի օրորոցով:  
Ու դալարուկ ճիպոտն ահա  
Իր ավդեցիկ սուկ սուլոցով  
Մինչև եկան մեջքը դադի՝  
Նախ երկնքի կապուտ երեսն է կտրատում՝  
Երկրից ճայթած կայծակի պես:  
Ումանք՝ ուրախ,  
Ումանք՝ տրտում,  
Սա՝ տիրադեմ-որբ ձագի պես,  
Նա՝ ժայտերես ու բախտավոր,  
Սա՝ կարմրաթուշ,  
Նա՝ ախտավոր,  
Եվ բոլորը՝ ուխտը սրտում—

Թը՛փ հա թը՛փ,  
Չը՛նգ հա զրը՛նգ,  
Ճը՛ռ հա ճորի՛նչ—  
Հասնում են վանք՝  
Ուխտատեղի:

Եվ մոմերի ու կանքեղի  
Բուրումնալից բոցն է ձթթում,  
Ծաղկի նման փունջ-վունջ փթթում,  
Ծուղկի նման վառ ու դեղին:  
«Տե՛ր» են կանչում մի-մի բերան,  
Մի-մի ծունջը աղոթք անում,  
Մատղացուի ուս ու վսից  
Արձակում են կապ ու պարան,  
Եվ գավիթի սալարկը պաղ  
Չոհի արյամբ է տաքանում...

Եվ հինչում է դիղ-վուտնան,  
Որ վանքերը հնասենի,  
Մատուռները մեկեն դառնան  
Խրախճանքի արբշիռ ու ցոփ հրապարակ:

## ԴՈՂԱՆՁ ԽԱՂԿԱՊԻ

Ու տեղներից վեր են թոշում  
Թիկունքը լախ-մեջքը բարակ,  
Բոյս թիլ-թիլ,  
Բեղը ծիլ-ծիլ  
Զահել տղերք,  
Տղամարդիկ մացառութուք,  
Կուրծքը՝ փոչոտ,  
Դեմքերն՝ այրված,  
Աչքնրն՝ այրող,  
Հազած-կապած՝  
Որը քաթան կամ շալ-շապիկ,  
Որը չոփսա կամ արխալոտ,  
Բյուե գրատիկ, արծաթ քամսր,  
Իսկ զոլավոր և կամ պուտ-պուտ գուլպաներին՝  
Խոռու սապոգ, մազե քոչեր,  
Սև կարիծի պոչի նուսն կեռքիթ տըրեխ:  
  
Վեր են ցատկում, գալիս շարվում իրար կողքի,  
Եվ թույս-թանաք, և պատ-կտրիճ տղամարդիկ  
Պարսպում են ու բըրգանում:  
  
Սկսվում է բոլորպարը:  
Ծանըր քայլքոլ,  
Անեղանակ-աներգ-անծափ,  
Բայց համաշափ,  
Երկու շրջան բոլորում են, պտույտ տալիս

Ինչ-որ զգույշ ու կարկամած,  
Հետո քայլքը արագացնում կամաց-կամաց:

Պահագլուխ ձայնեղ տղան խաղ է կապում.  
— Փեղի եմ ընկել, Ասովածածի՞ն...  
Խումբը բռնում վերջին բարից ու ձգում է.  
— Ասովածածի՞ն...

Իսկ հողեղեն աստվածածնի անմատչելի կախարդանքով  
Աղջիկները ծով-ծով տալիս,  
Մոտ են գալիս,  
Բայց չեն մոտնում պարաշրջան:

Իր խաղկապն է խաղասացը առաջ տանում.  
— Ա՛խ, շանեջա՞ն,  
Բարով՝ հասնեմ իմ սիրածին...  
Խումբը բռնում է վերջին բարից ու ձգում է.  
— Իմ սիրածի՞ն...

Լայնանում է պարաշրջանն ամեն րոպե,  
Դիղոն անվերջ շարունակում է տրոփել,  
Հանգուցներ է տալիս զուռնան՝  
Եղանակն է կոտորակվում,  
Իսկ դիղը՝ սպառնալով՝  
Այնուհանդերձ չի տրաքվում:  
Հետո նվազն արագ-արագ,  
Փշուր-փշուր կրւտակվում է,  
Զիգ է տալիս,  
Վրա գալիս,  
Եվ թե մեկ էր՝ չորստակվում է.

— Ա՛խ, թե չառնեմ,  
Ես կմեռնեմ...

Ու կոպափի թակութակից  
Մինչև անգամ փուչ դիղի անմազ դեմքն է փշաքաղվում,

Իսկ զուտայի ծակուտակից  
Արցունքներն են կարծես շաղվում:

Դարեկների ռդկուպ-ռդկուպ մագերի մեջ  
Մոլորդում է մեղվի նուան բարպացող աշխան քամին  
Կամ պլլընում նայողների վիզ ու լանջին՝ չխայթելով.

— Թամին զանա,

Ծոցրդ բանա...

Հարս ու աղջիկ, ջահել կանայք

Դեռ չեմուչում, նաև են անում

Ու չեն մտնում պարաշրջան.

— Ե՞կ, ջանեջա՞ն...

Հետո արդեն չեն դիմանում

Ուկորների ու հոդերի տանջող ցավին,

Ու հնչում է մի ձևացո՞ղ,

Թե՞ ամաչկոտ թուլ-թուլ ծիծաղ:

Իսկ երբ տեղից մեկը պոկվում

Ու թռչում է պարաշրջան.

— Ա՞յ, ջանեջան...

Մյուսներն ել՝

Նորերի պես քրիկ-մրիկ՝

Հնտնում են ողջ երաւով:

Ել արկի համ ունեցող,

Չորեքիսաց ծամ ունեցող,

Մեջքակոտոր, ծնկածալիկ,

Ծոցվոր,

Բոցվոր,

Խնկածաղիկ,

Խունչիկ-մունչիկ

Հարս ու աղջիկ՝

Սիրո հրշեց-սիրո հրձիգ՝

Տասի համար անգութ դահիճ,

Մեկի համար խոնարի ծառա,—

Ճակատներին բոլոր «ջահի»  
Այ մեջքներին ոսկե քամար,  
Երեգակից շատ ավելի  
Կարմ ատակած իրենց շորքից,—  
Շաղ են գովիս ծլընգւցով,  
Հնար շարվում իրամ կողքի՝  
Ինչպես անտէս թշի վրա  
Հազարքը նույնութի ծոր:

Պարաշրջանն է լայնանում,

Եվ փոխեփոխ՝

Հանօրվց-հանգուց, օղակ-օղակ՝

Երգ են կապում աղջիկ-տղա:

— Ի՞նչ ես կտոր-կտոր գու լու,

Ականջ արա, բան եմ ասում,—

Պարագիխի ձայնն է հոսում:

Խումբը խորմ ու ձգում է.

— Ա՞յ, բարե ջան...

— Երբ խոսելու տեղն է գալիս,

Խոսկան տղի թույթակ լեպուն...—

Մի աղջիկ է շըւտ սկսում:

Օգնություն է խումբը տախի.

— Ա՞խ, մարե ջան...

— ... Խոսկան տղի թութակ լեպուն

Սերից էրված խաղ է ասում,—

Տղան նրա խոսքն է կիսում:

— ... Զե՞, բերնի մեջ լնգուն ասես

Կոտրվում է բանարու պես,—

Ծամկտրածն է տղին կիպում:

Խումբը՝

— Հա՛-հա՛, հե՛-հե՛, հա՛-հա՛,—

Քրքջում է:

Ու թռչում է:

Իսկ շահելը թեպետ դադում,  
Բայց և ուշքն է գլխին ժողովում,  
Ու երբ նորից հերթն է գալիս,  
Պատասխան է մի կերպ տալիս.

— Երված սրտով եկել եմ ուխտ,  
Որ պաղ սրտիդ անեմ մեկ թուղթ...

— Սեղան պաշեմ մեկ-մեկ ու ջուխտ,  
Որ չքոնի ինձ գիր ու թուղթ...

— Օրոր-շորոր ով քեզ տեսակ՝  
Հաց ու ջրից կկտրվի...

— Հերի՛ք փչես, ա՛յ շան փեսա,  
Դալար շի՛կ եմ՝ չե՛մ կոտրվի..

— ... Հաց ու ջրից կկտրվի,  
Կգա ձեր տուն՝ դառնա մշակ...

— ... Դալար շի՛կ եմ՝ չե՛մ կոտրվի,  
Մուտ խոսեն են շինել փեշակ...

Խումբը նորից է խառնըվում

Իր գոչերով

Ու կոչերով.

— Դե, թը՛ո-թըրի՛,  
Հո՛պոս-տըմիք՛:

Եվ դիոլին ու կուռնաչին

Նվազում են թունդ թոնոց-ին:

Եղանակը ծալծվում է,  
Դարսվում իրար՝ ալիքի պես,  
Եվ փրփուրը կայտառության

Պղպջում, է շահեների գժված սրտում:

Նույնիսկ պարին չմասնակցող

Նույնանձ կանանց բերանի մեջ

Սև ծամոնը՝

Օգտըվելով իիացմունքի ավդու պահից,

Հանգուունում-շունչ է քաշում՝

Ալամեների հետքով կնքված իրավունքով:

Մրա վկի «նապոլեոն»-ի,

Մրա մեջքի արծաթ գոտու

Շողքն է ընկնում վանքի պատին

Կամ դիոլու նեղ ձականուն,

Հետո չքիւսի չաղ կուռնաչու չոված աչքում:

Կրակ կրտրած կաղ դիոլին

Հակայական իր կոպալով

Եղանակը ետ է կծկում.

Ու կուռնաչու թշնին ուռած

Փուքսի նման իշխուս են ցած,

Եվ աչքերը, որ խսիչքից ու կոռ տալուց

Լայնացել են ու կարմրել՝

Գութան քաշող եկան հսկա աչքնրի պես,

Հիմա նորից

Սուանում են մարդկայինի տեսք ու շնորհք..

Իսկ գավիթի պարագից լուրս՝

Դարձյա՛լ նոխազ, պարեր ու տաղ,

Մանրիկ ժայիտ, մնջուն ծիծաղ,

Ծիվ տված սեր,

Ծլած հուզներ,

Երավների,

Մուրավների

Լուռ թևածում,

Կարուտներից ծանրած հոգու թեթևացում

Այստեղ  
Հորթուկ լույգ պատանի  
Կօխ են բռնել՝  
Ափոցների հրամացով.  
Այստեղ՝  
Թաքուն՝  
Մի մասնանի  
Միրած տղի ձեռքով դողդոց  
Չոփսի գալիս սիրած յարի մատի վրա  
Ու վառում է մատն իր բոցով:

Այստեղ՝  
Ծերեր, որ մանկացած  
Վեզ են խաղում կամ ներկած ձու:

Այստեղ՝  
Զայդու պառավների  
Ստեկուն ու մերկացուն:  
  
Նոր ժամանած ուխտամիրներ  
Վանքի ներսում, լիւքի առաջ,  
Շեր չըստիւած հորժի տրախնգ  
Ը երինցի վերջին բառաց,  
Դեռ չներթած արքորդերի  
Մուտենանեկ զիլ ծուզբազու:

Եսկ այս կողմում՝  
Լարախաղաց  
Ու վազվաղ մի ծաղրածու,  
Եվ մի քամի, որ չգիտես՝  
Շաղրածովին կապկո՞ւմ է, թե՞ տնալ անում.  
Գյոյիկո՞ւծի-գյոյիկո՞նծի՝  
Գժուկի պես թավալվում է, փոշի հանում,  
Հեռո, հանկարծ, թափ է տախս կեղտ ու փոշին

Կիրակնօրյա հագուստներին տղամարդկանց  
Կամ ձեռքերն է շուտ մաքրելու սուտ փորձ անում՝  
Զահել կանանց ապղբերին քըսմըսելով...

Վանքի շուքն է մեկ երկարութ-մեկ կարձանում,  
Ասես կրիա մի վիթխարի՝  
Մերթ շոգելով-մերթ մըսելով՝  
Իր գլուխն է սև վրահից դանդաղ հանում  
Ու ներս տանում:  
Խակ լեռները՝  
Նովսպես իրենց սովերներով,  
Որ ձգլում են հետպիետն,  
Ասուխաի թունի սիրահար կանանց նման  
Մոտենում են լուս, թաթերին,  
Նայում պիշ-պիշ...

Եվ մինչ խարովկ-օջախների  
Անրոց շեղչերն են մարմբրում,  
Մատղացուի նախն զոհված արեգակի արյամբ բոսոր  
Երկնի ամպերն են կարմբրում:  
Մութն արես չի ընկրկում բամբ ձայներից,  
Որ մնջում են՝ շուկենալով,  
Կամաց-կամաց:  
Եվ լոռվայուն մի վիթխարի,  
Նախ դրդերող ու կարկանած,  
Հետո քիչ-քիչ սիրու առնելով՝  
Մուտենում է, ծանրը թառում  
Չշմած վանքին ու ձանձրացած սար ու քարին:

Եվ ոչ մեկը,  
Բացի գուցե մի անմարմին-ներողակիտ հրեշտակից,  
Եվ ոչ մեկը չի նկատում,  
Որ կարճմորուս մի անձանոթ,  
Բերանք-փոխայր պառկած կտրին՝ դիմացի տան,

Ողջ ժամանակ աչքը՝ նրանց  
Եվ ականջը՝ եղանակին,  
Անափ սրտում՝ հիացմունքի ծփան մի ծով,  
Սեղմ շրթերին՝ երանելի-շաղված ժպիտ,  
Նրանց երգ ու նվազին է ականջ դնում ինքնամոռաց,  
Եվ մատիտը ու թուղթն առած՝

Նկարո՞ւմ է,  
Թե՞ գրում է

Ինչ-որ նախշեր ծուռտիկ ու ծուռ՝  
Նման կարծես այն գրերին,  
Որ գրբացն է թուղթ անելիս միշտ գծմըծում:

Ո՞ր գյուղացու,  
Ո՞ր միամիտ-աստվածավախ շինականի մտքով կանցներ,  
Թե հոգևոր  
Ու կարգավոր  
Մի վարդապետ բեղ-մորուքով  
Վանք է եկել՝ վանք չի մտել,  
Վանք է եկել, բայց ո՛չ ուխտի,  
Ո՛չ քարովի կամ օրինության,  
Այլ հերանոս ու կռապաշտ  
Դատարկ-մատարկ խաղ լսելու,  
Որ կապում են աղջիկ-տղա,  
Լակոտ-լուկուտ:  
— Մե՛ղա քեզ, տէ՛ր...

## ՂՈՂԱՆՉ ԶՄԵՐՆԱՄՈՒՏԻ

Աշունն անվերջ խորանում ու խորանում է:  
Արագածն ու Մասիսներն են արդեն ձնել:  
Մինչ տանիքին աբքան աշոյոք չորանո՞ւմ է,  
Թե՞ թացանում շահուտ-ցողուտ առավոտից  
Եվ իրիկվա եղյամաշունչ խոնավ օրից,  
Նույն այդ պահին նկուղներում ու մառանում  
Կախանները սրացվալով

Սեղմըվում են,  
Կաչում իրաք՝  
Իրենց ճխոտուն՝ առանց այն էլ նեղ շարանում:

Այնպես հաստ է սերակալում մածունն արդեն,  
Իր գրալը պիտի խրեն բահի նման,  
Բայց իր տեսքով հիմա ամեն մի մածնաման  
Տեսնողի մեջ խկույն սարսուռ է հարուցում:  
Խև կարս-կարագն անգամ հարուստ տան խնոցու  
Երեկ՝ հսկա դրմի նման,  
Այսօր՝ դառնուու հավիվ մի ձու,  
Փոքրանում է՝ անհետանալ շտապելով:

Եվ մանրամադ ուշ անձրևներ վար թափելով՝  
Դատրաստվում է երկինքն արդեն  
Շնով նախշել գետինը պաղ:

Բարակում են, դառնում ձապաղ  
Ծիծղուն աղբյուր, ցատկան վտակ:

Օրստօրե՞ պատերի տակ  
Էլ ո՞չ նարդի չխացընել,  
Ո՞չ էլ խաղալ վեգ ու դամա.  
Արդեն կարգին ցուրտ է հիւա:

Եվ ներկարար աշնան հետքով  
Խւքը ձմեռն է մոտենում:  
Խնջնավստահ, ծանրաբարո՞  
Վարագուրված երկինքներից  
Դանդաղորեն իշնում է ցած,  
Անցնում, գալիս սար ու քարով,  
Նստում ծանըր ու պնդանում  
Եվ անշտապ մի լրջությամբ  
Զբաղվում է սա էլ արդեն... նկարչությա՞մբ,  
Նկարչությա՞մբ,  
Որ մեկ գույն է լոկ ընդունում:

Երբ արևը ցույց է տալիս իրեն մեկ-մեկ՝  
Սակավ, ինչպես թույլ ժայռը  
Հիվանդ դեմքին մի աղքատի,  
Սկսում են սարուց ու ձյուն դառնալ կաթիլ,  
Սկսում են, բայց և խկույն  
Իրենց սխալն իրենք զգում,  
Շար են շարվում սրա-նրա տան ճակատին,  
Չքիորդանի շիլ երկաթին,  
Եվ—թե ինչպե՞ս՝ չե՞ս նկատի—

Ամենուրեք

Ու հատկապես եկեղեցու բարձր պատից  
Կախ է ընկնում սարցի լուգան՝  
Մեկը մեկից երկար ու լայն՝  
Երեխեքի ախորժակը բաց անեղով:  
Կախ է ընկնում և— ըստ տատի—  
Ճերմակ Դմի դիտմամբ չըված մատների պես  
Երեխեքին ահ է տալիս՝ չանչ հանելով,

Որ փայտ-քարով ցած չզցեն,  
Վերցնեն ծծեն,  
Թե չէ՝ կապույտ հապ կկայչեն...

Երդիկներն են, որ ամեն օր լուսածագին  
Թռչիրների ծովին են անվերջ երկինք փնչում,  
Խնկապես որ կարծեն շնչում  
Խոր քուն մտած Սև Դիի պես:

Ու երբ ձմռան անծայրածիր սպիտակին  
Մարդիկ իրենց մժեղային սևն են խառնում՝  
Տաք աներից ենում են դրւս, ու, խսի պես,  
Ո՞ւր են գնում-ո՞ւր են դառնում՝ չես ըմբռնում,  
Եվ իրենց խսկ շունչն է խսկուն եղյամ դառնում  
Իրենց փոչոտ-թափ բեռերին,  
Որ սարյակի թևերի պես  
Սելինըլիւմ են տակ բայց կողմեր՝  
Հենց այդ պահին,

Նո՞ւն ժամանակ

Սառնամանիքն է ինքնակամ կարգվում հսկիչ,  
Ու պահակ են դառնում անվարձ  
Ամեն տեսակ պաղ-պաղ հողմեր...

Խսկ աղքատի դատարկ գոմում  
Մսրան պատի քարերն ամբողջ  
Այնպես առատ են եղյանում,  
Որ աղասեր ու դեռ անփորձ

Հորթ ու երինչ

Եղյամը ջինչ

Մոլորությամբ կարծելով աղ՝  
Լիզմրպում են ու ի՞նչ. ավա՞ղ,  
Լեզուն քաշել են շտապում՝  
Ծանոթացած  
Այն սրտփորիկ-կեռակտուց զգացումին,

Որ այդպես էլ չեն իմանա,  
Թե կոչվում է հիասթափում...

Տարվա այս ուշ եղանակին,  
Երբ դեռ վաղուց՝ աշնան տաքին  
Հարկավորը աղել,

Սաղել,

Ավելցուկը հորում թաղել,

Սարքավորել,

Կարգավորել,

Կժի ճաքին,

Ծորի ծակին

Կիր են դրել ու կարկատան,  
Երբ տանիքի ծուռվիկ դեպի  
Անզամ տեսքից մարդ է մրսում,  
Մինչդեռ այդ նույն դեպի ներսում.

Զյուն-սառցի տակ

Այնպես է տաք,

Ինչպես մարմինն անթև ձուտի,  
Կարծես վաղուց՝ ամռան մուտին,

Դրսում գերել,

Այստեղ բերել

Ու պահում են ձմռան համար

Մի պատառիկ շերմին ամառ

Եվ մի բաժին անուշ գարուն՝

Ծիածանի գույներ պահած իր խոտերով,

Իր զմրուսված ծաղիկների ծով հոտերով,

Տարվա այս ուշ եղանակին,

Երբ կոշտապատ ձեռք ու բազուկ

Հանգստանում փոքրիջատե

Ու դաշնում են մի քիչ նազուկ.

Տարվա այս ուշ եղանակին,

Երբ բահը թանկ, եղանն անգին,

Լուծը երկար, սամին թպուկ՝

Մի անկյունում,  
Իրար զիսի,  
Պարապ-սարապ՝

Վերսից են նայում հիւմա խեղճ թիակին,  
Ռյուկ անվերջ պետք է բակի  
Ու կոռուրի ձյունց սրբեւ. —

Տարվա այս ուշ եղանակին  
Էլ գյուղացուն ի՞նչ է մնում,  
Թե ոչ երգն լ, պարեն լ, հարբեն լ,  
Ժամանակն է սուրբ պսակի,  
Միկ-տասնըմնկ հայսանիքի...

## ԴՈՂԱՆՁ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ

Արդար լույսը դեռ նոր բացված՝  
Թագվորահոր տան տանիքին  
Զուռնան վլում է Սահարի  
Եվ հեռավոր ու թաղական,  
Ազգ-ազգական,  
Գյուղ-գեղովի  
Հավաքվում են կամաց-կամաց  
Ուրախության մի ժողովի,  
Որին թող որ աստծու կամքով  
Արժանանա ամեն օջախ:

Ու կուռնայի փողն է դառնում  
Թե՛ աջ ու ձախ,  
Թե՛ վար ու վեր:  
Մարդիկ օդուն գինին խառնում  
Ու մոռացած դարդ ու ցավեր՝  
Հանձնվում են ուրախության:

Ե՛վը մի փարչ չափից ավել,  
Ե՛վը մի գավ թռւնդից ըմպում  
Ու սիրտն ի սեր անկախության  
Գլխի դեմ է ապստամբում:  
Իբրև ապդու քաջալերանք՝  
Գոռ դիղն է անվերջ դմբում,  
Ու կորչում է ամեն վարանք.  
Պար են մտնում արդեն նրանք՝

Մինչև մի պապ կամ մի նանի  
Մոլությունից նրանց հանի.  
— Տո՛, կսպասե՞ն հարսի հերանք...

Եվ աղմուկով, ուրախ-պվարթ աղաղակով,  
Գլուխները նվազից ու խմչչից տաք,  
Իրար խառնած խոսքեր քնքուշ ու բիրտ կատակ՝  
Թագվորահոր տան լի բակով,  
Կալատակով,  
Հոծ ամբոխը հարսնահյուրի  
Գյուղամիջով հեղեղում է խնամոնց տուն:

Դիոլ-կունի խենթ նվազն է անվերջ թնդում:  
Եվ դիոլչու ու կուռնաչու առջևն ընկած  
Կրակ կտրած երիտասարդ մի թխաղեմ՝  
Թագավորի սրտամոտիկ մակարներից,  
Լող է տալիս գետնի վրա՝ կույզ ոտներով,  
Մինչ ձեռները օդի մեջ են թիավարում:  
Մերթ՝ պայըզով,  
Ասես հոգնած է՝ չպիտի տեղից ենի,  
Վեր է ոստնում մի պահ հետո  
Եվ մի ոտը կեռած օդում՝  
Տնկվում է նու մյուսի վրա,  
Ապա արդեն երկու ուսուկ  
Քայլ է անում մանր ու մոտիկ,  
Վակ է տալիս արագ-արագ,  
Վակ է տալիս ոչ թե առաջ,  
Այլ նույն տեղում դոփիդոչերով,  
Հետո քայլը զգուշորեն այնպես փոխում,  
Իր ոտները չի կամենում ասես թրչել  
Աներնույթ ջուր ու ցեխում:

Ու մի վայրկյան նայում է դուրս  
Չմեռային արփին քնկոտ,

Ասես զարթնած այդ զուռնայի ձայնից վայրի,  
Եվ ապակու ինչ-որ բեկոր՝  
Ափսոսանքով ջարդված մի շիշ կամ աղաման,  
Պապիում է կեղտաջրում՝  
Տերեկային ու Երկրային աստղի նման:

Պար է պարում հիմա արդեն  
Մի շորորուն-վրինգ պառալ՝  
Թագավորի մի մորաքույր կամ քեռակին,  
Եվ կարծես թե յուղ են ածում  
Ուրախության թեժ կրակին.  
    Ծափ ու ծիծաղ,  
    Սուլր-սուր խոսքեր,  
Որ չեն սրահում վիրավորանք...

Ա՞յս, Վարդապե՛տ,  
Այսպիս սրանք  
Երգ ու տաղով,  
Պար ու խաղով  
Դիտի հասնեն խնամոնց տուն,  
Դիտի այնտեղ ուրախ կոնծեն,  
Դիտի ուզեն հարսի խոնչեն,  
Դիտի պաշեն պառավներին  
Ու հագուրդ տան ծարավներին  
Վառ օդիով, գինին՝ ա:լէ:  
Ա՞յս, Վարդապե՛տ, այնտեղ նրանք,  
Ըստ ընդունված սովորույթի՝  
Դեռ կսաքէն անմնդ դավեր.  
Կգողանան թմիիկ հավեր,  
Աքաղաղներ կառ ու գիրով,  
Կրոցընեն ճաշի այնակ,  
Կքաջքընեն իրար ականջ, թեղ ու մորուք՝  
Իբրև զվարթ ուրախության անմնդ հանաք,—  
Ու դեռ կերգե՛ն, կերգե՛ն, կերգե՛ն,  
Կայրեն հոգի, սիրտ կմըրկեն...

Եհ, Վարդապե՛տ, ո՞վ չգիտի,  
Ել ուր մնաց դո՛ւ չիմանաս,  
Որ հարսնահոր տնից պիտի  
Դուրս գան սրանք ուրախ-խնդրուն,  
Ճամփա ընկնեն դեպի ժամտուն,—  
    Ումանք՝  
Արդեն ետևառաջ «ուր գծելով»,  
    Ումանք՝  
Կանանց կոնակներին պազշոտորեն աչք գցելով,—  
Դիտի գնան գյուղի ժամտուն,  
Լսեն փոշոտ-մաշված խոսքեր գրաբարի՝  
Հասկանալով իմաստը լոկ երկու բառի,  
    — Տէ՛ր ես, որդեա՛կ...

Հապա՛ր անգամ տեսած մի ծես,  
Սուլր է թեպետ,  
Բայց, Վարդապե՛տ,  
Նույնքան ծանոթ ու տաղտկալի.  
Վառվող մումեր ու խնկի ծովս,  
Որոնց հոտից հաճախ կարծես  
Մարդու քիթ է խոտուտ գալիս,  
Ուխտ պահանջող-երդում կնքող Ավետարան,  
Որ մազաղաթ իր շուրթերն է իրար տալիս,  
Բախտավորին օրինանք դառնում,  
Խսկ դժբախտին՝ ցմահ դարան...

Հարսանեկան բազմությունը տաք ալիքով  
Հինա արդեն, տե՛ս, հորդում է գավթից ժամի՛  
Ճանապարհին կանգ առնելով դռների քով  
Սեղան հանած մոտ ու հեռու բարեկամի:

Կարկրատում է ամբողջ թափով,  
Կարկրատում է կոպալը, տե՛ս,  
Եվ հավքերի երամի պես

Թթչկոտում են թղթե փողեր:  
Չուռնան գծում մանրիկ օղեր  
Ու ճարմանդրվ ելսէջի  
Կապ է գցում, իրար իինում՝  
Եղանակից շղթա շինում...

Եվ ընկնելով  
Հանկարծակի բարիացած քամու վիվը՝  
Չայ; է անում նաև խեղդված-կոնդված ձյունը:

Տեղ են հասնում:  
Կրակիում են իրացաններ՝  
Դեպի երկինք,  
Որ կես մի ժամ  
Ակատվել է մոլոր ամպերի ձեռքից դաժան:  
Կրակիում են իրացաններ,  
Եվ այդ անմեղ-անչարամիտ մահավորձից  
Մեծահոգի երկինքն անքեն  
Ո՛չ դատի է տալիս նրանց,  
Ո՛չ էլ նույնիսկ պահում վրեժ,  
Այլ ժպտում է կապո՞ւստ-կապո՞ւտ  
Ու ծիծաղբւմ մեծալվարի.  
Կրակոցը կարծես նրան  
Պատճառել է միայն խտուտ:

Հարսանքատուն մտցընելիս  
Թագավորի ու թագուհու զիմին  
Վերից  
Ցած է տեղում չամիչ-փշատ,  
Նողու-նաբաթ,  
Չիր ու չոր թութ՝  
Կարկտախառն հորդ անձրսի խշխշոցով,  
Եվ սերկնի, տանձ ու խնձոր՝  
Զատկին ներկած ձկերի պես գունակ-գունակ:

Դոան շեմին  
Թագավորի ու թագուհու ոտքերի տակ  
Փշրվում է բոլոր ափսե մի սպիտակ,  
Ինչպես լուսնի երկվորյակը՝  
Խաղաղ լճում ներկված քարից,  
Որ ցավ ու չոր, անբախտություն հետը տանի...

Դե՛, Վարդապե՛տ, իիմա նրանք  
Բաժակների չրիկոցին  
Պիտի խառնեն հարսանեկան  
Քեզ սիրելի ու դուրեկան  
Փունջ-փունջ երգերը Ծաղկոցի,  
Քիչը՝ ծանոթ,  
Չատը՝ նոր գյուտ,  
Եվ բոլորը՝ ուշագըրավ:

Եվ իսկապես, հարսանքատան  
Շխոտ-մրոտ օճորքի տակ  
Անկրկնելի եղանակով  
Գովերգվում է թագավորի մահուդ չուխան,  
Գովպան պուտ-պուտ,  
Քիրման գոտին,  
Չապիկը շալ,  
Զին հրեղեն՝  
Ինքն էլ վրեն.  
— Աստծո՞ւ բարին  
Մեր թագվորին,  
Մեր թագվորին թագն ի գուիւ:

Իսկ բբաջունչ ձմռան քամին  
Զարանում է իր մոտքի մեջ ու կատաղում,  
Ինչ է թե, տե՛ս,  
Հարսանքատան դուռն են ահա իր դեմ փակել,  
Ու րոպեն մեկ սկսում է դուռը թակել

Կամ ավելով ձյան շեղերը տանիքներից՝  
Բաց երդիկից նկրս է մաղում,  
Բուռ-բուռ շաղում՝  
Կարծես դիտմամբ ուտելիքն է անվերջ աղում,  
Որ ամեն ինչ... չուտպելու չափ աղի լինի.

Օձորքի տակ հարսանքատան  
Երգում են դեռ Գովքը փեսին:  
Այսուևետև— այդպէ՞ս— արդեն երգ են դառնում  
Ու թագուհու բույրին իրենց հոտն են խառնում  
Ճերմակ շուշան, ուսկեադիկ  
Եվ վարդենիս,  
Որոնց նման.  
— Ասուշ բուրեր քո բագուհին:

Կոշտ կոպալն ու վայրի վուռնան՝  
Քնքուշ երգից ամաչելով՝  
Ետ են քաշվել ու տեղ տվել,  
Որ կարկաչեն դափ ու դուդուկ.  
— Պնդուկի ծառ կապեր պնդուկ,  
Էնոր նման պտկեք և դուք:

Բարեբանող երգը իիմա  
Օրորվում է,  
Շորորվում է  
Այգու նման մի պտղաբեր.  
— Խաղողի ուռ կոճակ կապեր,  
Պտղեք դուք էլ էնոր նման:

Ու երգողի ձայնը ծորուն  
Երգի ծայրը ետ ոլորում,  
Ազարտում է՝ հանգույց տալով...

Ու տեսնում են դեմքերն իրենց  
Օդի-գինով լի բաժակում,  
Եվ կոնծերով նույն սբահին հենց՝  
Ավերում են դեմքերն իրենց  
Ու հետեւ շուտ ճաշակում  
Կես թաս շորվա,  
Մի ֆունտ գեր միս,  
Եվ այսպիսի՝ ախորժակով,  
Խեղձերն ամեն սրբի նման  
Պաս են սբահել մի ողջ ամիս:

Դափ-դուրսովից իիմա արդեն ծայր է առնում  
Նուրբ ու նավուն մի Զեռնախաղ՝  
Հարուցելով հիացագին «վա՛ լ-վա՛ լ... ա՛խ-ա՛խ»:  
Հասակակից հարս-աղջկա հրմշտոցից սրտապնդած՝  
Զեմուչումով վեր է կենում  
Մի թուխ-վարսեղ-հասուն աղջիկ,  
Ու նավում է մի ամաչկոտ թուլ-թուլ ծիծաղ:  
Շագանակէ իր աչքերը պատսպարած թարթիչներով՝  
Նա թափանցիկ իր ականչին  
Պահ է տախս անհնապանդ մի սև խոպոպ  
Եվ կեսմարած քայլ է անում  
Դեպի կենտրոն՝ պարաշրջան:  
Եղանակը մոտենում է ու հեռանում:  
Եվ որսալով մոտեցումը եղանակի՝  
Իր ամորն է անմիջապես նա մոռանում  
Ու դալարուկ մեջքը իսկույն կեռ-մեռ անում,  
Սահ է սահում  
Այսպե՞ս սահուն,  
Որ մի վայրկյան... ամենքի հետ՝  
Դուդուկահարն ինքն էլ նույնիսկ շունչն է պահում...  
Դյուրազրգիռ դափն է հանկարծ ընդուստ վարկում,  
Ու դառնում է նվազն ահա է՛լ ավելի լարաթրթիո,

Զեռքերն, ասես թե խրտնելով, վեր թևարկում,  
Հետո, կարծես ապահովված՝  
Ետ են զայիս, թառում սրտին:  
Իսկ ոտքերից մեկը՝  
Կարծես գորովանքով՝ ապտակում է  
Դաշ պահանջող գժուկ գորգին.  
Մերթ կրունկով ու մերթ թաթով  
Մանրիկ-մանրիկ տկտկում է,  
Մինչդեռ մուսը ինքն իր կարգին  
Սահում է լրւո, սակայն հուլված,  
Կարծես շոյում մաքուր խուլված  
Խիտ մավերը նույն այդ գորգի:

Պարո՞ւմ է նա,  
Եվ աչքերն են դառնւմ տամուկ:  
Պարո՞ւմ է նա,  
Եվ հագուստը խայտաճամուկ  
Մերթ ծալեծալ, փոթ-փոթ գալիս,  
Մատնիշորեն ցույց է տալիս  
Իր թաքցրած ձևերը պերճ ու խելքահան,  
Մերթ էլ կիտված ծալքերն ահա  
Ետ են դարավում,  
Բացվում-պարզվում  
Եվ վավաշոտ տղամարդկանց  
Հայացքների նետերի դեմ  
Կրկին դառնում մի յուրովի ավնիվ վահան:

Պարո՞ւմ է նա,  
Վառո՞ւմ է նա,  
Եվ բոլորը՝ մեծ թե պուճուր,  
Մոռանում են հասակն իրենց,—  
Դուրս են ենում տարիքներից,—  
Եվ չափ տվող թունդ ծափերի ալիքներից  
Արձանի պես անշարժացած նորահարսի

Քողն է ուռչում ու կուչ գալիս,  
Ու նորատի հարսնաքրոջ  
Զառ լաշակն է բաց-խուփ անում,  
Ամեն անգամ մերթ՝ թաքցընում չուսիկն այտի,  
Մերթ՝ դունչիկի ոսպաննան խալը բանում:

Ծափ է տալիս մինչև անգամ նորափեսան՝  
Մոռանալով, որ ուրիշի պսակ չէ սա,  
Մոռանալով, որ ինքն այստեղ  
Ոչ մակար է, ոչ էլ քավոր:

Իսկ նա... կարծես չի էլ լսում,  
Ուստ է հավիվ գորգին քսում  
Եվ շարժումով մի հարկավաքր՝  
Թե՛ նավելի, թե՛ հարգնոր,  
Պողոսվում է կրունկներին,  
Որից նրա շորը ճամուկ  
Քիչ ուռչում է թեթև քամուց,  
Հետո՛ կարծես ամաչելով՝  
Նորից կպչում սրունքներին:

Եվ խելքամաղ շահել տղեթք,  
Տղամարդիկ սիրակեղեք  
Իրենց մատնող-դավաճանող աչքերն ահա  
Թարթիչների սուտիկ-մուտիկն խաղով կոծկում  
Եվ բուլակամ շրթունքներն են բռնի կոճկում...

Ա՛խ, Վարդապե՛տ, իիշո՞ւմ ես դու  
Գարնանային այն օրն անցած,  
Դաշտում դաղձ ու սիրեխ քաղող  
Այն հարսներին, աղջկներին,  
Փախուստը քո դեպի պաղ խուց...  
Վաղուց էր դա,  
Վաղո՞ւց, վաղո՞ւց,

Հիշո՞ւմ ես դու,  
Ա'ն, Վարդապէ՛տ,  
Ո՞նց չիիշել,  
Երբ ողջ գիշեր

Մի տանջակից ծանրո երազ քեզ տվայտեց,  
Քեզ փարվելով՝ նաև խայթեց,  
Խայթեց՝ ինչ-որ անուշ ցավով,  
Անո՛ւշ-անո՛ւշ, ինչպես հիմա՝  
Այս վայրկյանին...

Նույն վայրկյանի ն  
Մի թուխ կտրիձ՝ մեջքին քամար,  
Հազին չուխսա մեջքապնդուկ,  
Հնոցի պէս բոց աչքերին  
Ածուխի պէս սև-սև կամար,  
Հայացքը՝ լուրջ, դեմքը՝ հանդուզն,--  
Արջի նման մեջ է գալիս,  
Ծանրամարմին պառսյու տալիս,  
Բայց... կոպալի տեղին հարված—  
Նա՛ նվազին հավասարված,  
Արջից հանկահծ վագր է դառնում  
Թեթև ցատկով վեր է թքնում  
Ու թեև նա ոչ մի բանից  
Ո՛չ կախվում է, ո՛չ էլ բռնում,  
Բայց մնում է վեր՝ օդի մեջ:

#### Ու պարուիու

Սև հոնքերի երկաչքանի կոր կամրջով  
Անց է կենում  
Մոլորաքայլ մնջախաղի մի մտածում:  
Հետո կամուրջն իր հոնքերի  
Կշեռքի է նա վերածում  
Եվ թույլ տալիս իր աչքերին,  
Որ վեր ու վար նժար ճոճեն.

Մնջախաղով կշոռում է նա  
Նրա բախտը՝  
Իր «հա»-ն ու «չե»-ն...

Ու քայլում է աղջիկն այնպես զգուշորեն,  
Քայլ է փոխում կարծես ոչ թե գետնի վրա,  
Այլ սառուցի.  
Ամա՞ն, հանկարծ չսայթաքի ու չընկնի վայր,—  
Ցավը՝ ոչինչ, փակ տեղերը բաց կլինեն՝  
Կդառնա խաղը ու խայտառակ:

Նույն այդ պահին  
Տղան այնպես է կտկտում,  
Այնպե՛ս արագ,  
Կարծես սրա ոտների տակ, ընդհակառակն՝  
Արդեն ոչ թե սահուն սառուց,  
Այլ լոկ կրա՞կ,  
Խարուկի մեծ շեղ է փոած,  
Եվ որածեսպի չայրի իրեն՝  
Աշխատում է քիչ դիպցընել ոտքը գետնին  
Ու շատ մնալ օդում թռած...

Կոտրատվում է աղջիկն էլի ու նազ անում,  
Եվ ժպիտը՝  
Գարնանային երիժնակի ցողունի պես,  
Որքան քաղցր է ու հուկափի— նույնքան՝ փշոտ:  
Ու տեսնելով, որ աղջիկը չի հեզանում,  
Պարեկ տղան, ցավը դեմքին, ցատկում է օդ,  
Փլվում, գետինն է սասանում:  
Ուներն արդեն հաճախ-հաճախ  
Թեք ես տալիս մեկ աջ-մեկ ձախ,  
Մինչ իրանը՝ գոտկատեղից՝  
Չի էլ շարժկում անզամ տեղից:  
Իսկ ձեռքե՛րը... մի կատարյալ,  
Մի կատարյալ... ի՞նչ... գալարա՞նք.

Առաջ ու Ետ, վերև-ներքին՝  
Բան են որսում ասես նրանք,  
Մերթ՝ բարեկացած ու կատաղի,  
Մերթ էլ հանկարծ տատամուս նն ու վարանում,  
Նարծես արդեն մժան մեջ են բան որոնում:

Նորից՝ ընդուստ.  
— Տաշի-տուշի...  
Հետո՝ հուշիկ.  
— Հոպտոս-տոմբա...

Եվ դառնում է պարն ավելի առույգ ու ժիր:

Ու պարեկի ջայի թումբանն  
Իր խսկ հանած հողմի առաջ  
Փռփռում է՝ կարծես դառած  
Դարբնոցի մեծ փուքսը կաշվե:

Հետպիետե մեծ ու փոքր ավելի են մոտիկանում,  
Իրար սեղմված՝ պարողներին մտիկ անում,  
Հետո սրտի ամրող տապով  
Ծափ են տալիս պարի չափով  
Ու պարն անվերջ տաքացընում.  
— Աը՛-սը՛, սը՛-սը՛...

Իրենց դմբո էրիկներից դժգոհ կանայք  
Մտքների մեջ կամ բացահայտ հոգոց հանում  
Ու ձեռքերն են ցավով տանում  
Իրենց կրծքին... ինչի՞ց ուշող:

Մինչ պարեկը  
Զմուն պաղած հողն է— թը՛կ-թը՛կ-- այնպես դոփում,  
Մեխ է կարծես այնտեղ ինփում՝  
Իր ոտքերո՛վ, ոչ թե մուրճով.  
Մինչ պարեկի ուսերը, տե՛ս, պար են պարում  
Իր իրանից ու ոտքերից ասես անկախ ու ինքնավար,  
Հոնքերն, ահա՛, պար են գալիս իրենց համար՝  
Կամ շինելով, կամ քանդելով երկու կամար,

Պար են գալիս աչքերն՝ անջատ,  
Դաստակը՝ ջոկ,  
Թաթն՝ առանձին,  
Ծունկը՝ ծալված,  
Իրանը՝ ձիգ,  
Օրուխն՝ ուղիղ,  
Խսկ վիկը՝ թեք.

Բոլորն՝ անջատ և առանձին,  
Բայց և այսպես՝ բոլորը մեկ,—  
Նույն ժամանակ

Շիվ աղջկա թեկիները, աղավնու պես,  
Մերթ տնանում ես՝ քիչ է մնում թառեն գետնին,  
Ասես սրտու կուտի վրա,  
Մերթ էլ տեսար՝ վեր են սուրում,  
Ճախր են տալիս,  
Հետո, ինչպես բույնի չորս կողմ,  
Գլխի շարքն են պտույտ գալիս,  
Ու վերջում էլ,

Եբբ նազելի մի շարժումով կանգ են առնում,  
Խոնարհաբար գլուխ տալիս՝  
Իբրև նշան ներողության,  
Որ դադարում են պարեկոց,—  
Չեռքերն այնժամ հեկ ու հյու՝  
Երկու հոգնած աղավնու պես՝  
Թևը ծալած կուչ են գալիս,  
Որ անհանգիստ-վայրիվերող կրծքի վրա  
Հանկատանան,

Մինչդեռ տղան վերջին անգամ  
Ոտքի վրա օղակ տալով՝  
Ցատկում է վեր,  
Յոթ-ութ վայրկյան օդում մնում արձանացած  
Եվ, քարի պես, ընկնում է ցած՝  
Ընկած տեղը ծնկի գալով...

Ու հնչում է կենաց մի նոր՝  
Թագվորահոր,  
Թագվորամոր,  
Կա-չկայի, ծետ ու պետի:

Այս, Վարդապե՛տ,՝ հիմա պիտի  
Պատկառելի մի նոր տաղով  
Կանչեն փեսի պապ ու տատին.  
Հորն ու մորը,  
Քուր-ախպորը՝  
Ասեն մեկին մի տուն խաղով.  
— Որ զան նատեն, դարձաս անեն,  
Ծնրիկ զարկեն սուրբ սեղանին,  
Հրաման բարին մեր թագվորին...

Հետո արդեն մի բաղաձայն կատակասնը,  
Սկսելով զավեշտական իր խաղն ասե՝  
Գովքի դիմաց պիտի չուպի, այլ պահանջի՝  
Փեսահորից՝  
Մել մի սեղան...  
Փեսախպորից՝  
Խոյ մի խորվու...  
Փեսաքուրից՝  
Գուրզա յոթ ջուխու՝  
Իմանալով, որ կսուանա  
Իր խռագածայն երգի դիմաց  
Երկու ձնձու,  
Մեկ գարեհաց...

Հետո պիտի կարգով հնչեն  
Կարգի դրված հազար կենաց  
Ավանդական ու կրկնվող՝  
Համեն թեպետ,  
Բայց չփոխվող ճաշերի պես հոգնեցուցիչ,

Որ և սրանք սիտի կու տան  
Թունդ օղով, գինով անուշ  
Ու հետադարձ ճանիքան փալեն  
Խաշլամայի պատառներով:

Դեռ, Վարդապե՛տ, դու կտեսնես  
Ալիք-ալիք ծիփան Ծորոր,  
Ասյա Նազպար,  
Եվ, հակառակ իր իսկ կամքին,  
Մի կաքավող աղջիկ կամ կին,  
Այս, Վարդապե՛տ,  
Մինչև անգամ վարդապետին կրուսակրոն  
Հիշել կտա... սիդ մի ջաննաթ՝  
Մեր անալի դրախտի տեղ,  
Հիշել կտա պիդ մի ջաննաթ՝  
Խարդավանքով անգո չարի:

Հետո... ապա...  
Դեռ կա Դարձպար,  
Նա Թռնցի, կա Քոչարի,  
Երբ սկսում կոնաբոնուկ՝  
Քիչ ծալվելով,  
Շատ տարվելով,  
Հետո արդեն թևատըրուկ՝  
Ծեղտով հատու և կտըրուկ  
Դեպի առաջ քիչ են տարվում,  
Այլ մոտենուտ ծնկածալվում,  
Ասես իրար ուժ գումարած,  
Մի սի՞րտ, մի կա՞մք, մի ևա՞րդ դառած՝  
Աչքի համար անտես մի պատ  
Պիտի քանդեն իրենց ուսով.  
Հետո, հանկարծ, ամբողջ ուժով,  
Ասես իրար խիստ կարոտած՝  
Պիտի ամուր գրկեն իրար

Մեջք ու իրան  
Եվ թի՛ռ՝ թոշեն մեջքագրկուկ:

Եվ ժամանակ առ ժամանակ՝  
Իր կոպալի զարկերի հետ  
Խսդացնելով ողկույզի պես գոռու բաշը,  
Խսնած գինուց ու եռանդից կարմրաակած՝  
Աքլորի պես կծդրտա գեր դիոլչին.

— Այ ջաբասաասա՝ շ— հա,—

Ու փույաչան թքուտերով թուման-տասնոց՝  
Կկացընի իր ճակատին  
Կամ կիսրի գդալի տակ՝  
Կեսը իախած իր ծոծրակի,  
Իր հոնքերի, դեմքի վրա՝  
Թղյե գունեի ծոպքերի պես:

Եվ կըտեսի դա մինչև լուս,  
Մինչև բարի աղոթարան,  
Եբբ որ Պարոն աքլորն, իկո՞ւր,  
Եբբ որ Տիկին հավերն, իկո՞ւր,  
Ուժ պիտի տան կոկորդներին՝  
Հայտարարն լուսը բացված,  
Ու չլսեն իրենց ձայնը անգամ իրենք՝  
Դ-հոլ-կունի կորույչյանը կու գնալով...

Ա՛խ, միամի՛տ իմ պապերի  
Մանկաբարո ուրախություն,  
Որ տնում էր յո՞թ օր-գիշեր,  
Որ անցնում էր երգ ու պարով,  
Կոհվներով գինեհարուց,  
Ու հաջուռթյամբ գինեմիջնորդ...  
Ա՛խ, միամի՛տ իմ պապերի  
Մանկաբարո ուրախություն  
Սերմի առթիվ՝ դեռ չցրված,

Մանկան առթիվ՝ դեռ չծնված...

Ա՛խ, անգիտա՞կ իմ՝ պապերի

Բնապարզկ հարստություն

Հապար երգ ու եղանակի,

Որ չունեին տեր-տնօրեն

Ու զուրկ էին հեղինակից.

Անհատնելի մի զանձանակ,

Որ շաղ տալիս անփութորեն,

Ցրում էին հայ գյուղացիք

Իրենց մաքուր շրթունքն ի վար՝

Ինչպես որ միշտ և ամենուր,

Այս անգամ էլ հարսանեկան

Ուրախության այս առիթով՝

Ցանկանալով սե՞ր, միտություն, երշանկություն,

Բոլորովին մոռանալով այդ վայրկյանին,

Որ հեջտորեն չի կատարվում ամեն մաղթանք,

Որ կարող է նաև լինել...

## ՂՈՂԱՆՁ ՄՐՄՈՒՌԻ

Իսկ թե լիներ— աստված չանի—  
Իսկ թե հանկարծ այնպես լիներ,  
Որ այգու պէս անուշ բուրող նորահարսի առագաստում  
Գաոխ նման մշմըշալով  
Ամեն գիշեր հանգիստ քներ  
Ըսդամենը մի տասներեք գարուն տեսած նորափեսան՝  
Մեշքը հարսին, դեմքը պատին,—  
Այնժամ պիտի հարսն ի՞նչ աներ:  
  
Ա՛յս, նա ինչպես բուք մանգաղին անվերջ քսկող անորոշ հեսան,  
Քար էլ լիներ՝ խարտովեր պիտի,  
Փոշի՝ փոշի՝ պիտի մաշվեր,  
Եվ ձեռն ի ծոց ու վիզը ծուռ՝  
Մի խուզ անկյուն պիտի քաշվեր,  
Գրտնակի պէս լիք ու լիստիկ իր թևերը հոջոտելով,  
Անիծելով իր բախտը սև,  
Երավելով զգվանք ու սեր՝  
Պիտի երգեր ողի՝ կ-ողի՝ կ.  
— Իմա՞լ էնեմ, իմա՞լ չենեմ,  
Յար պատիկ ա, շիվարե՞լ եմ...

Իսկ թե լիներ, այնպես լիներ,  
Որ ընշավոր  
Ու վրնջավոր՝  
Ծամո՛վ մեկին,  
Որ կարճուիկ

Ու կարճուիկ՝  
Համո՛վ մեկին  
Օր ծերության դարձներ կին  
Մի անատօս կծու խոչա—  
Քիթը՝ բարդան, ոտքը՝ քոթուկ,  
Աչքը՝ ձափո, վիզը՝ ճոճան...

Իսկ թե լիներ, այնպես լիներ,  
Որ լի տունն իր վանդակ շիներ  
Ու այդ ոսկե նեղ վանդակում  
Փակեր կաքավ մի կլորիկ՝  
Մի սիրավոր  
Ու վիրավոր  
Եվ սևավոր  
Անբախտ լորիկ,—  
Իսկ թե ահա այսպես լիներ,  
Այդ օր մահու քավթառի հետ  
Նովսն չոր բարձին

Լերկ գիխի դեմ վարսեղ գլուխն ինչպես դներ,  
Ծմակի պէս պաղ այդ ծոցում ինչպես քներ,  
Կրակ կողերն ինչպես հայեր լուկա-սառցին,  
Ինչպես, ինչպես մալու երգով ծունկ չծեծեր,  
Ծամկտրածը իր մարեին ո՞նց չանիծեր,  
Ինչպես չասեր, որ նա արեց իր բախտն ավեր,  
Զահել պրտում կրակի պէս վարեց ցավեր,  
Արար-աշխարք լիքը լավեր՝  
Ինչո՞ւ թողեց կտրիճ քաշին,  
Ինչո՞ւ տվեց քավթառ խոչին.  
— Իմ կեղու էնոր մեղրի միջին,  
Էնոր ուկուն նատեն հավեր,  
Քա մարե՛ շան, քա տնապե՛ր...

Իսկ թե տային ո՛չ թե հարուստ, բայց ծեր խոչի,  
Այլ հենց մի լավ՝ պրտով սիրած շահել քաշի,

Մինչև անգամ չոր քարի տեղ խսիր տային,  
Չոր գետնի տեղ տային նաև մաշված կարպետ,  
Ե՞հ, Վարդապետ,  
Ի՞նչ է, պիտի բախտավորլած հա խնդային:  
Զե՞, Վարդապետ,

Աղքատութան ճանկը չընկնի մինչև անգամ քո թջնամին...  
Հարսանիքի դիղլ-կուռնան դեռ չլուծ,  
Եվ պահունի ջորերն անգամ սնդուկի մեջ դեռ չդրած՝  
Պանխիստութան անգութ քամին,  
Հարսի ծոցից նորափեսին փրցընելով  
Եվ քարեքար ու սարեսար թոցընելով՝  
Իր սիրածի անուշ համին  
Բաժանումի դառնությունն է արդեն խառնում.

Գնում է նա

Եվ... մի՛ տարի, երկո՛ւ, երե՛ք... ետ չի դառնում:

Եվ կարոտից ու տանջանքից,  
Անկարելի անրջանքից  
Մարմինն ասես վերք է դառնում համատարած  
Ու նվո՞ւմ է, տնքո՞ւմ, ցավո՞ւմ:  
Սերն է մխում կուրացուցիչ-դառըն ծխով,  
Ինչպես ծառից հենց նոր ջարոված-խարուկ դառած  
Թաց ոստերը՝ անթթվածին քարանձավում...  
Անկողինն է հարսին այրում կրակի պես,  
Օրն է մթնում, իսկ իր սերը տուն չի գալիս:

Եվ

— Ես անտեր բարձի վրա  
Առանց յարի քո՞ւն չի գալիս...

Ու վերքերը դառնում են երգ,  
Ու երգերը դառնում են վերք,  
Ու սրտերը՝ ծանըր մի քար,  
Երբ զինվոր են տանում յարին.  
— Ա՞յս, երգար ու էլ ե՛տ չգար

Քեզի սոլդար գրած տարին...  
Երբ չեն տալիս յարը յարին.  
— Որ ախ էնեմ, կուգա արի՞ն...  
Երբ խախտում են խոսք ու երդում.  
— Տաք արի՞նն է մեջս լերդում...  
Երբ...

Վարդապետ, ի՞նչ էիր դու,  
Մորից ծընված հող հո չէի՞ր,  
Որ լուռ ու մունջ ներծընեիր  
Անձրև ու ջուր,  
Եղյամ ու ձյուն,  
Կարկուտ ու ցող:

Թե լինեիր մինչև անգամ անլեկու հող,  
Այս ամենը ինչպե՞ս և ո՞ւր հոգիդ տաներ:  
Զե՞ որ հոգիդ պիտի մի օր  
Պոռթկա՞ր,  
Որպես մի արտեսպյան խորունկ ջրիոր,  
Ժայթքե՞ր,  
Չորս դին ցրեր ցայտքեր,  
Ծիածանված շատրվանե՞ր...

## ԾԱՎԱԼՎՈՂ ՀԱՄԱԶԱՆԳ

### ԴՈՂԱՆՁ ՀՐԱՍԱԳՈՐԾՄԱՆ

Թե մինչև հիմա որտեղ որ երգն էր՝  
Այնտեղ էլ նա էր,  
Սյսուհետ արդեն որտեղ որ նա էր՝  
Այնտեղ էր երգը:

Առաջին անգամ լայն դակիճների  
Բեմից էր լսում ինքն իրեն հայը,  
Եվ բոլորովին ուրիշ էր հնչում  
Իր խակ «Տուշ-սուշ»-ը,  
«Վայ-լե-լե-վայ»-ը,  
Նո՞ւյն արտն էր հուրթի,  
Նո՞ւյն սերմը ցանված,  
Բայց... խորն էր հերկը,  
Ու բեղուն՝ բերքը:

Հայ եկեղի վայրի տարերքը,  
Հեղեղ մեղեղին,  
Տարափ պարեղզը  
Ել չէին արդեն հնչում ու կորչում,  
Խնչպես հողմերը՝ դաշտերում լառնում,  
Ցատկան ջրերը՝ ձորում ու կիրճում—  
Անօգո՛ւտ այնպես,  
Այնպես ապարդյո՛ւն:

Հայ եկեղի վայրի տարերքը  
Մի կախարդ ձեռքով, որտեղ որ պետք էր,  
Դառնում էր անձրն՝ ծլարկած արտում,  
Դառնում ջրաղաց,  
Էրանի քամի՝  
Ցանկացա՛ծ ժամին:

Հայ եկեղի հոսքը լվարարուն  
Մի կախարդ ձեռքով մտել էր խոր հուն,  
Գտել էր անշեց ու որոշ հասցե.  
Հասնում էր սրտին՝ ում էլ պատկաներ,  
Մոտիկ դրացո՞ւ,  
Ռուսի՛, վրացո՞ւ,  
Թե՛ օտարածայն հեռավորների՝  
Լեհի՛,  
Ֆրանկի՛,  
Ավլստրիացո՞ւ:

Այսպես՝ կալակիտ ցորենն է դառնում  
Ընտիր սերնացու,  
Ապառած քարը՝ սեղան խորանի  
Ու պատի վրա ջուր խմող այծյամ:

Այսպես՝ դաշտերի ծաղկունքը ցանցիր  
Պասկ են դառնում հարսների ձեռքով  
Հարսների լանջին:

Այսպես՝ եղյամն է ապակիներին  
Լուսամուտների ջրջանակի մեջ  
Հանձարեղագույն բնանըկարի կերպարանք առնում:

Եվ հույսը—այսպե՛ս—հայատ է դառնում...

Նա մելամաղձու հայ եղանակին  
Հայկական ուրախ հորդան էր կցում,  
Եվ կարծես արփին ծագում էր հանկարծ,  
Ցրում մուժ ու մեզ:

Նա վիրաբույժի հմուտ ձեռքերով  
Ինչ-որ կուր աղիք կտրում էր գցում,  
Եվ մարմինն ասես ծնվում էր նորից,  
Դառնում մորեմեկ:

Նա... ի՞նչ էր անում:  
Լոկ այն էր անում,  
Ինչ-որ անում է ավազն ամանին՝  
Մաքրում է ժանգից.  
Ինչ-որ անում է ջուրը մանչուկին՝  
Դունչիկն է սրբում.  
Ինչ-որ անում է մայրը մանուկին՝  
Ինն ամիս կրում իր կողերի մեջ  
Ու օերմարդկային-մայրական ցավով  
Ավելացնում է թիվը աստղերի՝,—  
Մի սովորակա՞ն... անսովո՞ր իրաշք:

## ԴՐԱՆՉ ՀԱՂԹՈՒԹՅԱՆ

Եվ արտերի փոխանակ  
Հորովելը գեղջուկի  
Դահիճներում է հնչում.  
— Զի՞գ տուր, քաշի՞՝, ա՛յ եվ չան...  
Բաց երկընքի փոխանակ  
Ծրտունքները պանդուխտի  
Բեմերից են մրմզնչում.  
— Շո՞ւր են ձգե մեջ իմ շան:  
Գյուղակների փոխանակ  
Քաղաքներում է ծորում.  
— Սուվրեն կալում զցած ա:  
Հյուղակների փոխարեն  
Սրահներում է բուրում.  
— Խնձոր ունեմ, կծած ա:

... Խսկ մեր խնձորն խսկապես  
Արնածոր ու վիրավոր՝  
Հավա՛ր տեղից էր կրծած  
Առևանգած իրարից՝  
Մեր խնձորը դարավոր  
Հավա՛ր ձեռքից էր պրծած:

Հավա՛ր եղունգ ու ճիրան,  
Հավա՛ր մագիլ էր խրվել  
Նրա փխրուն կողերում:  
Տիղմաբեր ու թմբատար

Հազա՞ր հեղեղ էր ցրվել  
Նրան սնող հողերում:

Ոստիներից բարբարոս  
Շատերն անգամ հավիտյան  
Կորել էին աշխարհից,  
Չքվել էին՝ թողնելով  
Լոկ պաղ մոխիր կամ մատյան  
Բնեոագիր ու քարից:

Բայց մնում էր մեզ վրա  
Հետքը նրանց ժանիքի՝  
Նրանց արնոտ կնիքի:  
Խառնըվել էր մեր երգին  
Օտարի ջունչն անմաքուր,  
Օտար երգի եկեղ.  
Աղ էր ցանվել մեր վերքին,  
Ավագ լցվել մեր բերքին  
Եվ ջուր՝ արդար կարի մեջ:

Ականջ էր պետք, որ ջոկի,  
Ու ձեռք էր պետք, որ պոկի  
Օտարամուտ ամեն քո՞:  
Դետք էր կոկորդ ու ոգի,  
Որ տաղ դարձած մեր ոտքին  
Համերգանար, ամեն կողմ:

Մարդուն երը ցավ են տալիս՝  
Հետն էլ արցունք է գալիս,  
Որ կսկիծը քիչ մարի:  
Վերք է տրվում և դե՛ղ կա,  
Ելք է ձարվում թե նե՛ղ գա,—  
Այսպես է կարգն աշխարհի:

Ու եկար դու՝ վիթխարի՛  
Եվ մեր հայոց աշխարհի  
Աստերացած հայելուց  
Բիծ ու փոշին, խա՛վ առ խա՛վ,  
Բարեխընամ մի ձեռքով  
Կարծես հանկարծ սրբեցին.—

Եվ մեզ այնտեղ նայելուց  
Աչքերը մեր հարբեցին.  
Մե՛նք ենք՝ այսքա՛ն վայելուց,  
Այսպես կոկի՛կ, հարդարվա՛ծ,  
Գոհարներո՛վ վարդարվա՛ծ:  
Զկշտացա՛նք նայելուց...

Այսպես հանկարծ և անձայն՝  
Մեր հեքիաթի համաձայն՝  
Միայն փոխվում է այգին,  
Երբ որ այգում այդ անջուր  
Կախարդիչ երգն է հնչում  
Մեր Հազարան զառ հավքի:

Եվ ամենքըս մեր աչքին  
Երևացինք աշակերտ,  
Իսկ դու՝ երգի դասարան:  
Եվ ամենքըս մեր աչքին՝  
Թոշնած-խամրած ծաղկաթերթ,  
Իսկ դու՝ բլբուկ Հազարան:

Եվ այն օրից, Վարդապե՛տ,  
Դու ծայր տվիր հրաշքի՛ն,  
Եվ հաղթական մի շքերթ  
Չգվեց հեռո՛ւ և հեռո՛ւ  
Եջմիածնի կավակերտ  
Ու սրբատաշ պատերից:

Դու՝ սքեմիդ սևերում,  
Մինչդեռ քո լուս մատերից  
Ծորանք առան շող շիթեր:  
Եվ ինչ երկար դարերով  
Քո ժողովուրդն էր կիտել  
Նմո՞ւշ-նմո՞ւշ, հա՛տ առ հա՛տ,  
Դու լիաբուռ-լիառատ  
Շա՞ն տվեցիր աշխարհում,  
Որպես մի նոր վաշխառու,  
Որ տվածի փոխարեն  
Բարձը շահ է պահանջում  
Հիացմոնքի շող արև՝  
Գոռովուրժյան նահանջո՞ւմ:

Եվ այն, ինչ հայ գյուղացին ձիգ էր տվել դարերով՝  
Ապարանի կամ Լոռվա հերկում, կալում, խոզանում,  
Հիմա արդեն, Վարդապե՞տ,  
Ծավալվում էր քո՛ շրթից,  
Ծավալվում էր... Լուսանում:

Հայ պատանու վիրավոր սրտի մրմունջն էր հերւմ,  
Բայց քո՛ բերնից, Վարդապե՞տ,  
Այն էլ հեռու... Ժննում:

Կոմսուիիներ, բարոններ,  
Տիտղոսավոր տեր-տիկին  
Քո մատներից լսելով մեր Նազար-ը, Շուշիկի-ն՝  
Նետում էին ակամա գոռովուրժյան ու շիկ-ի  
Ամեն դիմակ ու կեղծամ  
Եվ, մանկորեն հիացած,  
Դրենց մտքում, պատրանքով,  
Տեսնում... պարող մի այծամ:

Հեռվից հեռու, մոտ ի մոտ  
Մեր կարոտն էր սավառնում,  
Ու մեր սրտի խոսքը տոյք  
Շիկանում էր քո բերնում,  
Սակայն ո՞չ թե խաղողի մի ծանրածոց այգու մեջ,  
Ո՞չ էլ կտրից հայկական,  
Ո՞չ էլ արտից, այլ... բեռնում:

Մի գիշերում դու ձայնով նվաճեցիր Վիեննան՝  
Ստիպելով, որ բոլորն օտար երգով հիանան:

Լոկ ծիրանի մի փողով  
Ու շարժումով մատներիդ  
Տեր-տնօրեն դու դարձար խորթ ու խոժոռ Ցյուրիխում  
Ստիպելով, որ զգան, թե ինչպես է մեր գինին  
Տաքանալով մեր երգից՝ սարքում զվարթ կերուխում:

Նրբաճաշակ-բարեսուն  
Երեսառած Փարիզում  
Բեմին բուսնեց ու ճոճվեց տղամարդկանց պարի սյուն,  
Սակայն... լոկ քո՛ երգերով,  
Քո՛ նվագով— ո՞չ մի խումբ:  
Ու խենթացած ծափ տվեց Փարիզն ինչպես ձեռքերով,  
Այնպես նաև բաց ու խուփ  
Թարթիչներով՝ զարմացած...

Ասես մեկեն թարմացած՝  
Ներընդունած կապդուրիչ ինչ-որ առողջ շիթ արյան,  
Քեզ լսելով, Վարդապե՞տ, ջահեկացա՞վ Դուալիան,  
Երբ դու հասար Վենետիկ:

Ու մոռացած խստապահ ծես ու կանոն, սնոտիք,  
Ու մոռացած հավատի կապ ու կապանք, կողապար՝

Ամեն մոլի ուղղափառ,  
Բողոքական, կաթոլիկ,  
Լուս զգացին, որ իրենք մարդ են երանքում ու եղբայր,  
Երբ մեկ դարձավ փոթորիկ,  
Մեկ էլ ծփաց մեղմաբար  
Հայ հոգևոր երգը ծով,  
Որ քո՛ շրթից, Վարդապետ,  
Այի՞ք-ալի՞ք, փերթ առ փերթ  
Ծափալվում էլ,  
Թափալվում  
Ելնող-ընկնող կոր գծով:

Ու Եփուպան, որ գիտեր միայն ինչ-որ Արմելք՝  
Միաշերտ ու միաշուրթ,  
Դժոխքի պէս մոտակա,  
Դրախտի պես հեռավոր,—  
Հիմա արդեն Եվրոպան  
Գտավ մի նոր ժողովուրդ  
Եվ հասկացավ, որ ունի  
Նա մի անցյալ դարավոր,  
Երակներում հոսք ու եռք  
Քազմադարյան  
Տոթ արյան,  
Եվ երկիրն այդ նորագյուտ  
Նոր անունով մկրտեց՝  
Արմելքի Խտալիա՝...

## ՂՈՂԱՆԶ ՄԻԶԱԿՈՒԹՅԱՆ

Աշուն է նորից:  
Սարից ու ձորից  
Գալիս է կարծես մայրության բուրմունք  
Ու համ պտուղի:  
Ողկույզներն իրենց ճարահատ լացով  
Խնդրում են դառնալ գինու քաղցր ծոր  
Եվ կամ պյուտ օդի:

Քամու ջնորիիվ ծառերի վառ-վառ  
Խաշամն է թռչում թավալ առ թավալ,  
Այնպե՞ն, որ հեռվից անծանոթ մեկին  
Մի վայրկյան նույնիսկ կարող է թվալ,  
Թե փայտանների երամն է ծառից  
Պոկվում ու հետո իրարից կատվում:

Կանաչ եղեգնի սրերն անպատճան  
Դեղնում են՝  
Սաեւ ժանգով են պատվում:

Լաշառ փշերը՝ արդեն չորացած,  
Արդյոք ո՞ւմ վրա, ինչո՞ւ չարացած՝  
Զգալ են տալիս անցուդարձողին,  
Որ իրենք են տերն այս անփորձ հողի:

Իսկ մեջքակոտրուկ մեղու և պիծակ  
Համերգ են տալիս անփող ու ձրի

Բնության հսկա անբեմ տաճարում,  
Եվ ամբողջ օրը ինչ-որ մեծերի  
Դուր գալ ցանկացող ճպուռներն անվերջ  
Քարոզչի նման ճառո՞ւմ են, ճառո՞ւմ:

Իսկ չորամամուռ չեշոտ ժայռերի,  
Քարերի վրա

Արև են կորպում մողես գորջավուն  
Ու կանաչ խեն՝  
Յուրաքանչյուրը,

Իրեն աստըծո սուր ծաղրուծանակ,  
Մի ցամաքային ու քարաբնակ  
Խեղճ կոկորդիլոս:

Ասպետությունից բոլորովին վուրկ  
Ամպերն անքանակ

Գրոհ են տալիս բանակ առ բանակ  
Մեն ու մենափոր արեգակի դեմ,  
Որ կարծես իբրև փոքր ազգի հերոս  
Բյուր գաճաճների հոծ ամբոխի մեջ  
Կոփէ է մղում ողջ օրը՝ մենակ  
Ու երեկոյան... նահատակվում է իրեն մարտիրոս...

Այնպէ՞ս դուրեկան,  
Այնպէ՞ս փայփայիչ

Աշուն էր կրկին, երբ Եվրոպայից  
Առօք ու փառոք ետ դարձավ նա տուն՝  
Եվրոպան հաղթած:

Բայց թափ չէր տվել դեռ ճամփի փոշին,  
Ճակատից ճամփի քրտինքն էր կաթում,  
Դեռ չէր իսկ փոխել հագուստ ու կոշիկ,  
Երբ ոտքերի տակ ճահիճը ճոճվեց,  
Վտառը վխտաց:

Նա, որ գալիս էր Եվրոպան հաղթած,  
Հիմա հաղթության արևը սրտում,  
Վաստակած բավկով, հոգով տոնական,  
Շերոսի նման դառնում է իր տուն,  
Եվ հանկա՞րծ

Այստեղ... ուժը չի պատում  
Իր իրով հալել պաղը տնական,  
Եվ հանկա՞րծ  
Այստեղ... զգում է իրեն  
Իր գալո՞ւց առաջ ջարդված  
Ու պարտված...

Ամբաստանության ամեհի քամին  
Լցնում է նրա աչքերը փոշով,  
Ու բանարկության մացառն իր փշով  
Հոգի բվկում, խոցում է մարմին,  
Քանի ոսոխ է փտածը թարմին  
Եվ հասարակը՝ ապնվազարմին,  
Քանի չի պրծել ու չի վերջանա  
Նրանց դարավոր վիճարկությունը:

Կարկին-քանոնով,  
Կարգ ու կանոնով

Արտակարգի դեմ գրոհ էր տալիս  
Նույն ինքը... Նորին Միջակությունը:

Միջակությո՞ւնը...

Նա աչքեր ունի՝,  
Սակայն... ծոծրակին.

Եվ տեսնում է նա,  
Բայց ո՞չ թե պայծառ բոցը ճրագի,  
Այլ նրա գցած ստվերը միայն,  
Եվ ոչ թե գլուխ

Մի առաջամուխ,  
Այլ պոչը, ագին:

Նա ունի՝ ականջ,  
Բայց ո՛չ թե նոր կանչ,  
Այլ անցած կանչի  
Թույլ արձագանքը լսելու համար:

Ունի՝ քաղցրություն,  
Բայց իիվանդագին-վաղահաս մրգի,  
Որ ցած է ընկնում դեռ չեկած ամառ:

Գուն է ճանաչում, բայց միշտ էլ համառ  
Սիրահարված է քսմավող ներկի՞ն...

Միջակությո՞ւնը...

Թե թռչուն է նա՝ ապա թութակ է,  
Այն է կրկընում, ինչին վարժել են:

Թե կենդանի է՝ կապիկ է միայն,  
Անում է լոկ այն, ինչին մարզել են:

Եթե ուժեղ է՝ ապա ջորո՞ւ պես.  
Ուժն իրենը չէ,  
Այլ ծնողների կորեղությունն է,  
Այն ծնողների, որ—ավա՞ղ—նրան  
Մի՛ բան չեն տվել,  
Հասարա՞կ մի բան՝  
Ծնող դառնալու կարողությունը:

Հուսվել էր ահա  
Ու տագնապում էր Միջակությունը:

Արյունապակաս-պաղած խեղձերին  
Տենդի չերմ թվաց այն տաքությունը,  
Որ անջատվում է սրտից վառվոուն  
Եվ ահագնանում ցրտից շուրջբոզր:

Ու մարդիկ, որոնց հագինն էր լոկ նոր,  
Իսկ հոգին իին էր ու կարկատանված,  
Կենարար հովին, զովարար քամուն  
Նայեցին իբրև ահեղ թշնամու,  
Որ գուցե հանկարծ իր շնչով պոկի  
Ու փուլ տա նրանց կարկատուն հոգին:

Եվ մարդիկ, որոնց խոսքերն էին նոր,  
Իսկ միտքը՝ մաշված,  
Խչպես դրամը առուծախի մեջ,  
Գոռ իրդեհ տեսան  
Լուսարար մտքի վառ օջախի մեջ  
Ու սրտապատառ աղմուկ գցեցին.  
— Հասե՞ք, ջո՞ւր ճարեք,  
Օգնեցե՞ք, մարե՞ք...

Ո՛վ Միջակության անխախտ բնություն,  
Դու՝ մտքի միայն թվաբանություն  
Եվ հանրահաշվի երդըվալ ոսոխ,  
Դու՝ անծայր երկնի լավուրի տեղակ  
Գնվող-վաճառվող մատչելի լեղակ,  
Բոլո՞ր դարերի դու մե՛ծ հաջողակ,  
Անցողիկ փառքի, էժան բախտի գող,  
Եվ ամենապոր... քո ա՛յն գաղտնիքով,  
Որ քաջ է հայտնի նաև մեծերին,  
Բայց որոնք մեծ են այնքանով նաև,  
Որ գիտեն թեն,  
Բայց այդ գաղտնիքից  
Չե՞ն կարողանում երբեք օգտըվել...

Ո՞վ Միջակություն,  
Ո՞վ երանելի ցմահ խակություն,  
Ծերություն հոգո՛ւ, մտքի մանկությո՛ւն,  
Գոհ տիպարը քո սուր ծամածովեց,  
Խչան բույժ ցավից կամ փոշուոցից,  
Եվ խեղճ գուտսն ահա Մեսրոպ Մաշտոցի  
Բոլո՞ր տառերով ի սպաս դրվեց  
Սուտ-Հիսուսների անփակ բերանին,  
Եվ օստար աչքի չեղած շյուղն անգամ  
Վերածվեց հսկա բարդու գերանի.  
Ե՛լ սրբագործված օրենքի խախտում,  
Ե՛լ արատավոր մոռքեր ու երգեր,  
Ե՛լ ստվեր տեսնել լուսե դրախտում,  
Կամ—մեղա՛ աստծո, դրա՛խտը հերքել,—  
Հազա՞ր մի տեսակ մահացու մեղքեր,  
Առագաստավոր ենթադրությո՛ւն,  
Ոյս ու քե՛ն, նախա՛նձ, խենթ ատելությո՛ւն  
Կիտվեցին անգիր, բարդվեցին գրով  
Նույն սուտ-սրբերի անսուրբ ձեռքերով:

Եվ նույնիսկ նրա օդը շնչելիք  
Ապականեցին շուրջբողոր այնպես,  
Որ նա շնչելիս— օդի փոխանակ—  
Մանրած ապակու փշրանք էր կարծես  
Բռնի կուլ տալիս...

Եվ սիրտը նրա ցավից կուչ եկավ,  
Խնչան գուրղացու սիրտն է կծկըվում,  
Երբ ամոան կեսին կարկուտ է գալիս...

Հացըդ, Վարդապե՛տ,  
Հացըդ դառնացավ թալկաթվի պես,  
Եվ գունաթափվեց

Ու պաղ քրտինքով ձակատըդ պատվեց՝  
Վանքի ծեփի պես:

Հայացքը նրանց, ում պիտի որ դու  
Ըստ իին օրինաց եղբայր կոչեիր,  
Կամ աջդ տայիր, կամ աջ պաչեիր,  
Հայացքը նրանց դադում էր հիմա  
Եվ այրում էր քեզ՝ եղնջի նման...

Այս անմիաբան Միաբանության պաղ պատերի մեջ,  
Չար ու փոքրոգի, խղճուկ ու չնչին այս վատերի մեջ  
Ել ինչպե՞ս պիտի դու քեզ զգայիր.  
Մայաց վիհն ընկած մի նոր հսկայի՛,  
Թե՞ չհասկացված մի իին սրբի պես:

ԶԵ՛, փոխվել էին ժամանակները,  
Պիտի զգայիր... միայն որբի՛ պես...

## ԴՈՂԱՆՁ ՀԱՐՑՄԱՆ

Նա որբ էր ծնվել ու սնվել կյանքում,  
Եվ ոնց սկսվեց՝ այնպես էլ գնաց.  
Անձնական կյանքում ևա միշտ որբ մնաց,  
Որբ օթնանող հինավուրց վանքում:

Այդպես էլ մնաց անտուն ու անտեղ,  
Եռկ խոնավ մի խուց, թղթեր ու կանթեղ:

Այդպես էլ մնաց մենիկ ու մենակ.  
<ոզին՝ աննեցուկ, ինքը՝ անհենակ:

Ամենից առաջ՝ նա հայր էր ծնվել...  
Այդպես էլ կյանքում չունեցավ բալիկ,  
Որ տան անկյունում օրորոց դրվեր,  
Կանարից կախվեր հուռութ-խաղալիք,  
Եվ ինքն էլ հակված նանիկ-նայ ասեր,  
Ինչ երբ մեծանար՝ տը՝պ-տը՝պ-տը՝պ՝ վավե՛ր  
Ու հոր թղթերը խառներ-խպբվեր,

Սնվերջ բլբըլար,  
Եվ շիվը դալար

Աննիմատ լցվեր ու նոր բուն դառնար,  
Երջանիկ մի օր տեղ ու տուն դառնար:

Նա ուներ մատնե՛ր.

Տաքուկ ու նրբին, աղերսո՞ղ մատներ՝

Ծոյելո՛ւ համար, ցավը մեղմելո՛ւ,  
Գրկելո՛ւ համար, կրծքին սեղմելո՛ւ:  
Սակայն որտեղի՞ց և ինչպե՞ս գտներ

Մի ժիրիկ մանչուկ,  
Հետոն էլ՝ թևանցուկ  
Գանգուրիկ  
Քուրիկ...

Նա ուներ շրթե՛ր.

Այրող կարոտից դողացո՞ղ շրթեր՝  
Պաչելո՛ւ համար ու համբուրելո՛ւ,  
Եվ... պիտի կյանքում անհագ մի պապակ  
Համար թաթիկից շոյանք մուրալու,  
Թմփիկ թուշիկից հայցելու մի պագ...

Եվ ուներ նա սի՞րտ՝ սիրելո՛ւ համար,  
Մի սիրտ՝ գերվելով տիրելո՛ւ համար.

Մի սիրտ՝ սե՞ր համակ,  
Մի սիրտ՝ սիրո ծո՛վ,  
Իսկ ինքը սիրուց հավիտյա՞ն ցամաք,  
Ինքը՝ սիրուց սո՞վ.  
Ինքը՝ մենակյաց ու կուսակըրոն՝  
Ինքն իրեն ծյուրող մի սիրո կերոն,  
Որ փառիւմ է հար խորանի խորքում  
Անմարդաբնակ-դափդատարկ վանքի  
Եվ լուսարարի աչքին ու հոգուն  
Իր մոլին է տալիս, լուսը՝ ոչ ոքի...

Ինչո՞ւ է կյանքը հաճախ այնպիսի չար խաղեր խաղում,  
Որ մտածելիս մարդու սրտի մեջ արյունն է պաղում:

Դեռ վնաս չունի,  
Թե աստվածն անգո չեղյալ Մովսեսին

Գերադասել էր ու նախընտրել  
Միջնորդ իր միջն ու ժողովրդի՝  
Միաժամանակ խեղա ու կրակին ծնելով կանքագ.  
Ե՞կ ու թարգմանիր քո թվատ լեզվով  
Պատգամներն աստծո, մտքերը խրթին:  
Դեռ կարելի էր ավել ու պակաս  
Չեղալի համար անգոյին ներել:  
Բայց... Միլտոններին վերցնել ու զրկել տեսողությունից,  
Բեթհովեններին՝ լսողությունից,  
Կոմիտասներին թույլ չտա՞լ սիրել...

Ինչո՞ւ է կյանքը հաճախ այնպիսի չար խաղեր խաղում,  
Որ մտածելիս մարդու արտի մեջ արյունն է պաղում:  
Ինչո՞ւ, և դարձա՛լ, և կրկի՞ն ինչո՞ւ,  
Եվ ի՞նչ է ուզում դրանով ասել.  
Իր ո՞ւժն է շեշտում, կարողությո՞ւնը:

Եկեք նախապես, առհավե՛տ ու մի՛շտ  
Ըստուննեք կյանքի զորեղությունը,  
Միայն թե երբե՞ք էլ այնպես չանի,  
Որ աշխարհ գալիք նոր մի Կոմիտաս  
Իր անմեղ սերը սրտում զնդանի՝  
Իբրև դատվածի,  
Դատապարտվածի՝  
Լերդ-լերդ արյունով ծեփելով բանտի դուռն ու պատերը...

... Ո՞վ էր այդ թաքուն-մեղավոր սիրո  
Ահավոր դժբախտ-երջանիկ տերը,  
Վարդապե՛տ, ասա՞՝,  
Զգա քեզ ապա՞տ.  
Քեզ իհմա ո՞չ ոք չի բանադրի,  
Ո՞ղջ մի ժողովուրդ քեզ կունկընդըրի:  
Վարդապե՛տ, ասա՞՝,  
Զգա քեզ ապա՞տ.

Մի՛ խոստովանիր, այլ հպարտացի՛ր,  
Ո՞ւմ է սուրբը պետք, եկ դու մարդացի՛ր:

Ինքը թեժ կրակ՝ մի՞թե, Վարդապե՛տ,  
Բովանդակ կյանքում հար սառել ես դու  
Կուսակրոնի քո սների տակ:  
Վա՞խ, դա կիխներ ծանըր մեղանչում  
Կյանքի՛ դեմ, գարնա՞ն,  
Պողաքաղությա՞ն:  
Թե՞ հաղթահարել և առել ես դու  
Քո սիրասարտու տաք թների տակ  
Խումար-Ծողեր-իդ կամ Սոնա յար-իդ՝  
Իբրև կյանքի դեմ գործած մեղքերիդ  
Միակ թողություն:

Ասա՛, Վարդապե՛տ,  
Ո՞վ էր քո սերը,  
Բախտի պես թաքուն  
Քո սիրո տերը:

Զէ՛, նա չէ՛ր կարող չլինել կյանքում,  
Նա պիտի լիներ: Բայց ո՞վ է եղեկ:  
Ինչպե՞ս իմանալ, որտեղի՞ց պեղել:  
Ասա՛, Վարդապե՛տ, մի՛ պահիր թաքուն.  
Մի՛ խոստովանիր, այլ հպարտացի՛ր,  
Ո՞ւմ է սուրբը պետք, ե՞կ դու մարդացի՛ր:

Ո՞վ էր նա, ի՞նչ էր անունը նրա.  
Սոնա՞ էր արդյոք, Խումա՞ր էր, Ծողե՞ր,  
Ականջին ուներ սրտածն օղե՞ր,  
Խա՞լ ուներ արդյուք, ո՞ր այտի վրա:  
Ուներ Տիրամոր աչքեր ու հոնքե՞ր,  
Տիրամոր ունկեր,  
Տիրամոր ծունկեր,

Տիրամոր հատակ,  
Մավերը՝ պսակ,  
Չափիկը՝ կապույտ, շորը՝ ոսկեկար,—  
Դարերից եկող մի մանրանկար;  
Որ կարծես և՛ կար, և՛ բնավ չկար,  
Որ թեպես ուներ  
Չխամրող գույներ...  
Թե՞ ոչի՞նչ չուներ, այլ ուներ լոկ քե՛կ,  
Այլ ուներ լոկ քե՞ւ—մի ամբո՞ղջ աշխարհ,  
Եվ աղաչում էր, որ դու չլքես,  
Դառնաս օրվա հա՞ց և ո՛չ թե... նշխար,  
Եվ աղերսում էր՝ առանց նայելու,  
Ու նվաղելով՝ տրվում թերիդ...

Զառ վառը նրա ո՞նց էր վայելում  
Վարդապետական ճնշող սևերիդ...  
Եվ մի՞թե քեզնից նա չպահանջեց,  
Եթե պահանջեց,  
Ինչո՞ւ նահանջեց՝  
Լացով ու հայցով ինչո՞ւ չտանջեց,  
Ա՞խ, ինչո՞ւ անվերջ չհանեց հոգիդ,  
Որ ուրիշ հագուստ նա տեսներ հագիդ,  
Որ ապատվեիր սքեմից քո սև,  
Որ դրսից նո՞ւնպես լինեիր լուսեղ՝  
Վանքից աշխարհի գիրկը դառնայիր,  
Ամենամարդը նո՞ր մարդանայիր...

Հայր սուրբ, ի՞նքդ ասա.  
Ո՞վ էր քո սերը,  
Նրբին ու տոկուն,  
Բախտի պես թաքուն,  
Երջանիկ-անբախտ քո սիրո տերը:  
Ո՞վ էր քո շաղոտ-շողոտ Ծողեր-ը,  
Քո Ծողակաթը-Ծողիկը-Ծողը,

Որ ընդունում էր սրտում իր լոիկ  
Անլուր ցավերիդ այրող դողերը,  
Ինչպես շանթերն է իր մեջ ընդունում  
Այս տարողունակ-բարեգութ հողը:

Ո՞վ էր, որտեղի՞ց, ինչպե՞ս էր գախս,  
Յուրայինսերին անվերջ խաբելով,  
Տնեցոց առաջ լեկու թափելով,  
Սիրուր հևիին, կարոտից մարած,  
Ահն ու երկյուղը,  
Վախն ու սարսափը  
Փայտփորի նևան հոգու մեջ թառած,—  
Որտե՞ղ էր գախս, որ իր ափերով  
Դալուկ ճակատիդ ամպերը վանի,  
Որ չար աշխարհից մի պահ քեզ հանի  
Ու տանի—և ո՞ւր—թըշվառն ո՞ւր տանի...

Թշվառն ի՞նչ աներ, ի՞նչ հող տար զիխին,  
Նա ինչպե՞ս դառնար քեզ համար նեցուկ  
Իր թույլ ձեռքերով ու սիրով ծածուկ,  
Ինչպե՞ս օգներ քեզ, ինչպե՞ս պաշտպաներ,  
Երբ տպիտության հազա՞ր դեսպաններ,  
Քուրմե՞ր մթության,  
Անվերջ, չո՞րս կողմից, առա՞նց գթության,  
Ամեն օր մի նոր առիթ հայթայթում,  
Հարվածում էին, խոցում քեզ, խայթում.  
Երբ քո շուրջբռոլոր հին ոխն էր պայտում,

Ճայթում նոր քենը,  
Ցայտում նախանձը.  
Երբ քո ոսկեհատ սրսուր ցորնի տեղ  
Սերս էին հաշվում բոված աղանձը,—  
Մի անբախտ Ծողեր իր սիրով ծածուկ  
Ել ինչպե՞ս օգներ, դառնար քեզ նեցուկ...

## ԴՈՂԱՆՁ ՎԱՅՐԱՑՄԱՆ

Մտքերով տարված խորհուն քայլելիս  
 Դավադրաբար ոտք էին տալիս,  
 Թիո-թափաղգըլոր անվի ճաղերում  
 Քինախնդրորեն փայտ ու ձող խրուս:  
     Բայց նա՝ Առաջյալ,  
     Պիտի՛ որ կյանքում  
 Զկարողանար երբեք ընդհատել  
 Իր ճանապարհը առաքելական:

Բայց նա՝ Ուսուցիչ,  
 Ի՞նչ էլ որ լիներ,

Պիտի՛ որ դառնար մեռած խազերի

Առաջին դպիր,  
 Միակ քերական,  
 Թաղվածը պեղեր,  
 Ծաղվածը թեղեր,  
 Բերեր մեկտեղեր

Մեր խաղ ու տաղի մոտիկ-հեռական...

Նա՛,

Որ ծնվել էր ապրելու կյանքով մի ընկերական,  
 Ուրախանալու միայն ապգովին,  
 Տրտմելու դարձյա՛լ ամբողջ համայնքով,—  
 <ինա ստիպված ապրում էր մնակ՝  
 Մենավո՛ր ծառի խշոցով տիսուր,  
 Մենավոր ծառի ամբո՛ դշ հմայքով:

Միայնա՛կ մի ծառ,  
 Պտղատո՛ւ,  
 Հսկա՛,

Որին առիթով և կամ անպատճառ  
 Անվերջ փայտլեխում ու քարում էին,  
 Պտղի պտկումին խանգարում էին  
     Մե՛կ օր, տասնըմե՛կ,  
     Բայց... քանի՛ տարի,  
     Եվ մի՞թե ցմահ...

Եվ ինչպես կոպը վտանգի դեպքում  
 Աչքերն է ծածկում բնազդով բարի,  
 Այդպես, Վարդապե՛տ, այդպես էլ հիմա,  
 Կտրելով իրենց խորդուբորդ ուղին,  
 Ուսներդ են ահա տալիս կարտուղի՝  
 Էջմիածնից քեզ հեռացընում,  
 Տանում և մի օր... Պոլիս հասցընում:

## ԴՈՂԱՆՁ ՊՈԼՍԱԿԱՆ .

Պոլի՛ս, Պոլի՛ս...

Նախ՝ հունական մի հետերա,  
Ապա՝ տիկին Բյուզանդիոնի,  
Այնուհետև՝ տաճկաց խանում,  
Իսկ իմ նախնին՝ կռվից դարձող  
Նոնակարուտ մի վետերան,  
Որ լեռնակույտ տենչանքի հետ  
Մշտախայտանք ծով խանդ ունի,  
Եվ ինքն իրեն շվայտելով,  
Ցոփ վատնելով  
Ու հատնելով՝  
Արդեն քանի՛ և քանի՛ դար  
Քենսից բնա՛վ չի կշտանում...

Պոլի՛ս, Պոլի՛ս...

Դու՝ հետերա-տիկին-խանում,  
Դու՝ պչրուիի մի կախարդիչ,  
Արմավալանջ, նոճեթարթիչ,  
Մարմարայի այրեգոտով,  
Բուֆորական կապուտ գոտով,  
Մահիկահոնք, արևայա;—  
Մի ըսպիլիչ սիրավաճառ՝  
Դեմքով բարի, իսկ սիրոց չար,  
Որ հնապանդ մեր ընտանուց մեզ սառեցնում,

Իր մատներին՝ ուսպածի պես՝ մեզ պարեցնում,  
Ծղթայում էր ոչինչ չարժող մի ժպիտով,

Մի ժպիտով,

Որ շատ շուտով

Պիտի բաշխեր ուրի՛շ մեկին,—

Հա՛տ հասկացող,

Քի՛չ զգացող՝

Անսե՛ր, անկի՛րք-լոկ շահադե՛տ,

Լոկ հաշվարա՛ր-ինկո՞ք մի կին,

Որ ո՛չ կարգին մոտն էր տանում,

Ո՛չ էլ գոնե կարգին վանում,

Եվ... մեզանից ամենամեծ հաջողակին,

Որ կարող էր Բյուզանդիոնում դառնալ կեսար,

Դարձնում էր շա՛տ-շա՛տ... միայն խեղճ տնիեսա...

Պոլի՛ս, Պոլի՛ս...

Հազարավոր հայ պապերիս  
Նախ՝ բորբոքել շինծու խանդով,

Հետո՝ փորձված հումանու պես

Տրված նրանց խենթ ափերին՝

Ու հրայրքի տենդ-տապերին՝

Հյութերն ամեն և արյունը,

Քրտինքը ծով և ավյունը

Քամել ես դու քո արգանդով,

Իսկ երբ նրանք հենց ժառանգից են խոսք բացել.

Դու՛, որ գիտես կատվի նման ցնկնել ոյուրին,

Փոխարկվել ես իսկույն ջորու՝

Չորացել ես ու ամլացել...

Պոլի՛ս, Պոլի՛ս...

Զանի՛ անփուտ ու սերտ կորիկ

Քո հողերում մենք ենք բաղել,

Մինչդեռ պտուղն ո՞վ է քաղել  
Քանի՞-քասի՞ հայ սերունդներ  
Յանել են սերմ, ցրել հունդեր  
Ու հասցըրել բերք ու բարիք.  
Ողջն՝ ուրիշի՞ն, իսկ մեն՝ կարի՞ք...

Պոլի՞ս, Պոլի՞ս...

Ծքեղ ու ճոխ, չքնաղ ու պերձ,  
Արծաթակուռ ու ոսկերիչ:  
Շուք ենք տվել քեզ դարերով՝  
Մեր սրբատաշ սուրբ քարերով,  
Մեր անասեղ նուրբ կարերով,  
Մեր աչքերի փայլ ու ցուքով,  
Մեր մատսերի ծով ջնորիքով,  
Զձարվելիք-չեղած ձարով,—  
Մեր քանքարով ու հանճարով  
    Պանել ենք քեզ,  
    Չուգե՞լ-զուգե՞լ  
Եվս ամեն ինչ այլոց ձգել...

Պոլի՞ս, Պոլի՞ս...

Մետաղաթել դու մի հանգույց՝  
Մեր պատմության պարանոցին  
Բախստի ձեռքով պնդված մանկուց.  
Դու՝ անշինչ գիր օրիասական,  
Մենք՝ մի ճակատ խեղճ ու դալուկ.  
Դու՝ նոր սֆինքս փոքրասիական,  
Դու՝ դարավոր մի հանելուկ,  
Մենք՝ դարավոր մի առեղծված.  
Դու՝ է՞ն գիսից սրբապղծված,  
    Եղծված,  
    Կեղծված

Մի չար տաճար,  
Խևկ մենք՝ դարձյա՞լ հավատացյալ...

Պոլի՞ս, Պոլի՞ս...

Դու՝ դիվասիրտ- իրեշտակադեմ,  
Ներսից՝ գեհեն,  
Դրսից՝ եղեմ,  
Կերտված ձեռքով մարդակերպար սատանայի...

... Նոր էր պըրծել հայ ջարդը նոր՝  
    Աղանայի,  
Ու 30 000 հոգի հող էր մտել,  
    Բայց չէր փտել,  
Ելդրզ քյոշքի տերն արևախում ու սևանուն  
Սալոնիկում իր ձեռքերն էր դեռ լվանում  
Գահը զիշած զավակներին իր արժանի,  
Որ նորածն եվրոպական տարապի տակ  
Ալժամանակ ծածկում էին ճանկ ու ժանիք.  
Գրավաճառ խանութների ցուցափեղկում  
Բուրուս էին դեռ հեթանոս արբշիո բույրեր՝  
Կախարդ ձեռքով ամենավոր Վարուժանի  
Խառնը կենով Գողգոթայի ծաղիկների հոտին անթով.  
Դեռ հրահան իր մատներով Միամանթոն  
Շանթագրել էր կամենում Կարմիր լուրեր,  
Ու թեքելան էր հղանում մի Հարություն հրաշալի,—  
Երբ Կոմիտասն այստեղ եկավ՝  
    Իո՞ւն գտնելու,  
Թե՞... արթըմնի քուն մտնելու...

Այդ գիշերը, ա՞ն, թող ձգիեր, երկարանար,  
    Այլ, գիշերը թող քարանա՞ր,  
Որ չբացեր բախտորոշիչ օրն այն դժնի  
    Ու քեզ հաներ  
    Պոլիս տաներ...

## ՂՈՂԱՆՁ ՆՎԱՃՄԱՆ

Թպուկ ծառերը հեջտ են չորանում  
Տաք ու պաղ քամուց,  
Քերծվածքից անգամ,  
Ճղակոտիումից:  
Վիթսարի մայրին կրկին նորանում,  
Չխտակվում է շուտ՝  
Մինչևսկա անգութ ճղակտրումից.  
Խորունկ նոր վերքին գտնում է նոր ճար՝  
Ապաքինվերկ բուժիչ այն խեժով,  
Որ ուրիշ դեպքում կոչվում է... հանձար:  
  
Եվ ահա նորից նրա թարմ վերքի  
Բերանն է գոցվում,  
Ու բացվում նրա բերանփակ հոգին,  
Ու բացվում այնպե՞ս,  
Որ բնաշխարհի զովի ու շոգի  
Հարություն տվող շունչն է զգացվում  
Պոլսու թաղերում հայրենապապակ:  
Բացվում է նրա հոգին բերանփակ  
Աղրիականի ու Մարմարայի հեռու ափերին,  
Եվ ինքնամոռաց-ցնծուն ծափերի  
Որոտից մի պահ  
Ծովերն իսկ հպարտ  
Ուշչում են թեպետ, զարկվում ափերին,  
Բայց... մի այնպիսի՝ հարվածով զգովշ,

Բայց այնպե՞ս անձայն, համրացած այնպե՞ս,  
Ինչպես... նկարին Այվազովսկու...

Մի հայ վարդապետ՝  
Ո՛չ միայն անվեն,  
Մինչևսկա առանց խաչ ու արծաթի,  
Եկել էր՝ նորից Պոլիսն առնելու,  
Եվ անառ Պոլիսն խսկապես առավ,  
Բայց ոչ թե իբրև գրոքագյոռ ֆարին՝  
Ահեղ հորդայի սանձը ձեռներում,

Զենքով ու զորքով,  
Բարբարոս ձեռքով  
Կրակի մատնած հյուսիս ու հարավ:

Նա անառ Պոլիսն խսկապես առավ,  
Վերագրավեց, միայն թե... երգո՞վ,  
Մի երգչախմբով ամենասասան,  
Որ նա՝ գողթնեցուց սերված երգասան,  
Խորին խորհրդով կոչել էր Գուսան.  
Մի երգչախմբով, ուր ձուլվել էին  
Ծուրջ երեք հարյուր պարման ու կուտան,  
Մի խումբ Վիթսարի՝

Մասյաց մայիսյան եղեգնութի պես  
Բազմասոսափուն,  
Վանա լէի պես ծփան ու ծափուն,  
Արաքսից առուցգ, Եփրատից հոսան,  
Բայց Արագածից շնչտված ու հավաք,—

Ծուրջ 300  
Հնապանդ, խոնարի ու կյու զավակ,  
Հնապանդ, խոնարի ու կյու մեկի՞ն,  
Որ դաժան կյանքի ահեղ տաժանջով  
Իր հայր դառնալու իրավունքն անգին  
Փոխել էր դրա լոկ երազանքով,  
Եվ հիմա...

Հանկարծ ջուրջ 300 սիրելի պավակ՝  
 Հո՛ր շնչով շնչող,  
 Հո՛ր ձայնով հնչող,  
 Մի սի՞րտ, մի հոգի՝, մի կա՞մք, մի արյո՞ւն:  
 Շուրջ 300...»

Իսկ ինչո՞ւ երեք:  
 Հայր սուրբ, վե՛ց էր պետք,  
 Այո՛, Վարդապե՛տ,  
 Պետք էր 600՝,  
 Որ... մեր վեցդարյա ահեղ որբության ամճն մի տարուց  
 Վեց հարյուր տարի անվերջ շամփուրված,  
 Փայփայանքից զուրկ ու չիամբուրված  
 Մեր ժողովրդի մըմուռից գոչեր  
 Ամե՛ն տարվա դեմ մի՛ անմեղ բերան,  
 Եվ... ա՛յն քաղաքում, որ շեները մեր  
 Իր լեզվով ասած՝ դարձըրեց վերան՝  
 Զարդելով այուներ, ձեղուն ու գնրան.  
 Ել... ա՛յն քաղաքում, որ վեց դար արբեց  
 Մեր գինով, արյամք և արտասուլքով,  
 Մեր հազուստի հետ մեր մաշկն էլ գոփեց,  
 Պղծեց ա՛յն, ինչ որ մենք էինք պաշտում՝  
 Մեր սուրբ սուվիրայով կոշիկը սրբեց,  
 Ուժերը լվաց մեր հացի տաշտում...»

Շուրջ 300՝ պարման ու կուսան՝  
 Մի համահավաք-բազմամի Գուսան,  
 Որ առանց մի պուտ արյուն թափելու  
 Եվ առանց դավի, առանց խարելու,  
 Մի դաշնամուրով ու սրինգ-փողով,  
 Վեց հարյուր ջուրթով ու ձեռքով մի վուզ,  
 Թե հարուցելով լաց ու արտասուլք՝

Ասլա հրւելով, ո՛չ ահ ու դոդով,  
 Թե հարուցելով կանչ ու աղաղակ՝  
 Ապա ցնծությամբ, ո՛չ թե երկուսով,—  
 Առա՛վ-նվաճե՛ց-զերե՛ց մի քաղաք,  
 Որ մի քաղա՞ք չէր, ո՛չ էլ տերություն,  
 Այլ միանգամից երկու մայրցամաք՝  
 Մի երկկողմանի յանոսյան դիմակ—  
 Կիսով ասիական ու եվրոպական,  
 Մեկին՝ միջնաբերդ,  
 Իսկ միուսին՝ մատուց,  
 Ալատեղ՝ ապական,  
 Իսկ այնտեղ՝ այտուց...

Եվ նա՛, որ երեկ տիրեց Եվրոպան  
 Ու հիմա դարձել Ասիան էր զերում,  
 Նա՛, որ ընկել էր մի հուռթի խոպան  
 Եվ իր քրտինքով ջրած հերկերում  
 Ե՛վ խոփ էր ինքը, և՛ լուծ, և՛ ճոպան,  
 Սերմանցան այնպէս՝ ինչպէս որ տափան,—  
 Հիմա թերեւս նա զուր էր ուզում  
 Պոլսում բաց անել երաժշտանոց.  
 Չէ՛ որ նա ինքը մի մարդ էր թեպետ,  
 Հապարի նման մի հայ վարդապետ,  
 Մի մարդ էր,  
 Սակայն կարծես մի մարդ էր բազմահատորյա,  
 Մի մարդ էր,  
 Սակայն ինքն էր մի ամբողջ կոնսերվատորիա՝  
 Երգիչ, նվազող,  
 Խաղեր հավաքող,  
 Որբան խմբավար՝  
 Նոյնքան ուսուցիչ,  
 Որբան հնագետ՝  
 Մեռած խավերի զաղտնիքը լուծող,  
 Նույնքան պատմաբան՝  
 Դարավոր երգի մայրուղին գծող.  
 Եվ մի երգահան, և մի տաղաստեղծ,

Որի քրտինքի ամեն մի կաթիլ  
Դառնում էր նոր երգ ու նոր եղանակ.  
Ե՛վ աստվածային մեր Պատարագի մի նոր հեղինակ,  
Ե՛վ զավեշտական օպերետայի ուրախ խաղաստեղծ,—  
Մի մարդ,  
Որ սակայն կարծես թե մարդ էր բավմահատորյա,  
Մի մարդ,  
Որ սակայն ինքն էր մի ամբողջ կոնսերվատորիա...

Եվ ահա նրա կախարդ ձեռքի տակ  
Ծերուկ խազերը դառնում են կարծես անլեզու մանուկ,  
Որ կամաց-կամաց իր թոթովախոս լեզուն է բանում,  
Թո՞ղ որ դեռևս ինչ-որ տեղերում թիրկ է տալիս,  
Բայց կանցնի և ս մեկ-երկու տարի,—  
Էլ համըր որտեղ, էլ ի՞նչ փակբերան...

Մարմին է դառնում Անուշ օպերան,  
Որ էլ հարց չտա հեգնող Ֆիգարոն,  
Թե ո՞ւր են հապա Մոսին ու Սարոն...

Մարմին է առնում Անուշ օպերան,  
Եվ ժողովրդի  
Ընդերքից հուռքի  
Միևնույն տարում լուս աշխարհ եկած  
Նույն ժողովրդի  
Կարեվեր սրտի  
Հոգսերից, ցավից, հույսերից երգած,  
Նույն հողը հերկած  
Սերմնացան երկու  
Մեկտեղ են բերում բերքը պանծալի՝  
Սիրով գումարում հանձար հանձարի...

Մինչ ինքը այստեղ՝  
Արդյոք Բերայի Բանկալթի թաղո՞ւմ,

Արդյոք Խշիանաց կղզո՞ւմ ման գալիս,  
Թե՞ քաղաքամերձ չքնաղ Հայգուղոսմ,—  
Մինչ ինքը այստեղ՝  
Իր միտքը լողում,  
Թողնում է Բերա—Բանկալթի—Պոլիս  
Ու հասնում նորից  
Ո՞ւր... Եջմիածին:

Ա՞յս, նրանք այստեղ հաճախ, շա՞տ հաճախ  
Խուզ էին մտնում լոկ լուսաբացին,  
Իսկ ամբողջ գիշե՞ր...  
Եվ ամբողջ գիշե՞ր  
Ծերուկ մոկացին...  
Ինչպե՞ս չիշե՞լ՝  
Որքան էլ թվա անցած ու հեռու:

Նա ձեմարանի պահակն էր ծերուկ՝  
Անտուն ու անտեղ այդ Նախո քեռին:  
Նրա մացափուշ խառնակ հոնքերի  
Տեղ-տեղ փլուզված կամարի վրա  
Դարսդարսված էին կուճոներ մռայ՝  
Ամեն մեկն ասես կամարին վայել  
Մի-մի ձեղնափայտ, փոքր ու մեծ գերան,  
Ու թե ծուռված վերից ու տակից,  
Ապա ճակատի պաղից ու տաքից:

Եվ ամեն անգամ, երբ Նախո քեռին  
Իր իսկ մտքերի քամուց սարսպելով՝  
Կամարն էր ցնցում քանդված հոնքերի,  
Գերաններն անվերջ վեր ու վար թռչում,  
Հա՞ ճոճվում էին, բայց չէին փլչում...

Թաղել էր քեռին՝ ինչ ուներ կյանքում,  
Թողել հայրենի Սասուն—Սոկս—Շատախ,

Եվ իիմա՝ զրկված տեղից ու տնից,  
Մենակ, չորգուխ՝ պահակ էր վանքում:  
Եվ ամեն գիշեր սոսինձ սաների  
Կայուն խնդրանքով և աղաչանքով  
Խեղճ Նախո քեռին կամա-ակամա  
Դառնում էր կրկին Սասուն—Մոկս—Շատախ՝  
Միշտ սկսելով.  
— Ե՞հ, լառ՝, մատա՞ղ...

Ու նոյն անմվազ խոր հառաչանքով  
Ամեն օր պատմում Սասնա մի ծոից,  
Քուռկիկ Զալալուց, Կեծակե թրից,  
Ազրավաքարից  
Ու Ծովասարից:

Դիցաբանելով վիպում էր քեռին,  
Բայց և վիպածին խորունկ հավատում՝  
Ապրում նրանց հետ, նրանց պես դատում,  
Նրանց աչքերով սիրում ու ատում:  
Վիպում էր քեռին ու երգում տեղ-տեղ.  
— Դառնամ զողորսին...

Ազգին ու տոհմին...  
Ու նորից վիպում ու երգում հերթով  
Իր ծերունական խզված կոկորդով.  
— Էնոր լե ծծե՞՞ր՝ լուսնակ էր ջուխտակ  
Սեփի լուս տալու...  
Էնոր լե ձակա՞տ մելդան էր, լառ՝,  
Քուռկիկ Զալալու...

Եվ Նախո քեռու միամիտ մտքով  
Ինչպե՞ս անցկենար,  
Թե ինչքան գնար,  
Այնքան ավելի հաճախ կիշչվեր  
Այն խելոք սանից, որ հետո թեպետ  
Հազար սև սքեմ, դարձավ վարդապետ,

Բայց ուշք ու սիտքը տվեց երգերի:  
Նախոյի մտքով ինչպե՞ս անցկենար,  
Թե սիշտ իշչվելին ինքը՝ խեղճ քեռին  
Կանգներ կողքին ինչ-որ... Վագների:

Սյո՛, Վարդապետ, վիզը ծոելով՝  
Այդ խեղճ ու կրակ անգրագետ քեռին  
Կողքից էր նայում գոռով Վագներին  
Եվ պահանջո՞ւմ էր,  
Թե՝ աղաչում էր,  
Որ դու քո գորեղ Սասնա ծռեր-ով  
Խրատես նրա Նիրելունգներ-ին.  
Ճեռքի դեմ՝ բազուկ,  
Շուրթի դեմ՝ բերան,  
Օպերայի դեմ՝  
Քո նոր օպերան...

Քո ժողովուրդը՝ արյան ծովերում.  
Նորոգվող վերքի անլուր ցավերում,  
Իսկ նրա որդիք՝ պատմության մուժից  
Գոռ գոչում էին իրենց հաղթ ուժից,  
Լենաց ու մահու պայքարից արդար:  
Այստեղ էր ահա, որ Դավթի կողքին  
Գալիս էր կանգնում մի Կարմիր Վարդան  
Ու հանում էր քեզ Պոլսո Բերայից,  
Դեպի Ավարայր ու Տղմուտ կանչում,—  
Եվ քո ականջում  
Խմբերգն էր ինչում  
Այն հերոսական նոր օպերայից,  
Որ այս անգամ էլ կոչվում էր Վարդան...

## ՂՈՂԱՆՁ ՄՐՅԱՎԱՐՏԻ

Եվ մեկ անգամ հաղթարշավով  
Արդեն անցած կես-Եվրոպան,  
Այնուհետև նվաճելով սիրտն Ասիայի,  
Խլացնելով նեյնիմական ու սազալին  
Երգացավի ծանրը նոպան՝  
Հիմա նորից հրավիրվեց նա Եվրոպա.  
Կանչվեց բեղին, հետո՝ Փարիզ:

Ականավոր երաժիշտներ ողջ աշխարհից՝  
Չմահավան, բարձրածաշանկ, անմիաբան,  
Միջազգային Ընկերության Համաժողով:  
Եվ սյունազարդ սրահներում լուսաղողող  
Յուրաքանչյուր ժողովորի երգ ու խաղից՝  
Զեկուցումներ,  
Յուրաքանչյուր ժողովորի պար ու տաղից՝  
Երգ-ցուցումներ:  
Իսկ բովանդակ ու բազմազգի Արևելքից՝  
Մե՛կը միայն...

Ուրիշները, սրտի դողով,  
Զեկուցման հետ բեմ են հանում  
Նվազախոնմբ, պարենկ, երգի՛չ:  
Իսկ սա՛... ինքը մեկնաբանում,  
Ինքն էլ ձեռքը ծոցն է տանում,  
Ծոցն է տանում  
Ու... դրւյս հանում

Օրկեստրի տեղ միայն մի... պարզ ծիրանի փող  
Եվ, փոխանակ մենակատար անհատների,  
Ինքն է հանձնում իր շուրթերին ու մատներին,  
Ու... մի փոքրիկ, փայտե մի փող  
Մերթ հիշում է օրկեստրային ամբողջ թափով,  
Մերթ դայլայլում ու գեղգեղում,  
Մերթ ժայթքում է ու մերթ զեղում,  
Մերթ կուտակում ու բարդում է,  
Մերթ՝ խենթ հոսքը մատով նեղում,  
Ուզածի պես հունից շեղում  
Ու վերջում էլ ավարտում է  
Ինքը՝ ինչոր հանգույց կապոլ,  
Իսկ դահիճը՝ ընդուած ծափով:  
Հետո՝ փողը ծոցն է տանում  
Ու վերստին մեկնաբանում,  
Եվ մի վայրկյան տալով դադար,  
Նորից դառնում մենակատար՝  
Ինքն է երգում սրտի ձայնով...

Ա՛յս, Վարդապե՛տ, նորից այնօր  
Մտքերից՝ մեզ, աչքերից մուժ դու ցրեցիր,  
Աշխարհում մեզ դու պարզերես դարձրեցիր,  
Իսկ ինքըդ քեզ՝  
Կրկի՞ն հաղթող մենամարտիկ,  
Որ ծափերի տարափի տակ  
Ցած է իջնում բեմից մարտի,  
Ցած է իջնում,  
Որպեսպի նո՛կն այդ ձեռքերով,  
Իբրև հերոս—  
Դեռ կենդանի՛—  
Վեր բարձրանա... պատվանդանի...

## Ե Ղ Ե Ռ Ն Ի Հ Ա Մ Ա Զ Ա Ն Գ

### ԴՈՂԱՆՉ ԸՆԴՀԱՏՎԱԾ

Եվրոպայից նա վերստին սիրով դարձավ  
Իր Գուսանին և խավերին,  
Իր Անուշ-ի նոր մասերին,  
Իր Վարդան-ի գոռ բասերին:

Հնչյուններից պիտի կերտեր մի հուշարձան,  
Որ հավասար պիտի լիներ  
Իր վեհությամբ Սասնա սարին.  
Պիտի երգով ողորմի տար  
Բաղդասարին, Սանասարին  
Ու նվովեր Մսրա չարին.  
Հորովելով Դավիթ տղան  
Պիտի մենակ՝  
Անեկ-անլուծ՝  
Գեղջուկի տեղ գութան քաշեր,  
Հետո՝ զորքին հանգիստ թռղած,  
Մսրա տիրոջ սիրտը խաշեր...

Պիտի՝, պիտի...

Վարդապետի

Գիշերածալ վեղարի տակ

Բացվում էին լուսաթաթախ առավուտներ՝  
Մեկը մեկից պայծառ ու տաք,  
Մեկը մեկից վառ ու հստակ:

Կրծքի ներքո սիրտը թնդուն  
Կարծես անվերջ նոյնն էր պնդում՝  
Երաժշտի՛ր.  
Ամենակով խորշակի դեմ ու երաշտի՝  
Երաժշտի՛ր.  
Թշնամու դեմ ահեղացող,  
Օղակի դեմ հար նեղացող,  
Ընդդեմ նրա երգի, ձայնի, նրա շեշտի՝  
Երաժշտի՛ր.  
Մինչև մահի երաժեշտի՝  
Երաժշտի՛ր:

Երաժշտում և դեռ պիտի  
Հորդաբխուն երաժշտեր,  
Վիշտ երգելով՝ ցրեր վշտեր,  
Հույս երգելով՝ հավատ շեշտեր,  
Սուտը հերքած՝ ձիշոը ծշտեր,  
Բայց... մի ահեղ գիշերվա մեջ  
Արյուն հագան կանաչ դաշտեր,  
Եվ հույս, հավատ, կյանք ու անուրջ  
Օր-ցերեկով հանկարծ դարձան մի վատ երազ.

Օդում կախվեց  
Աշխարհակով մի պատերազմ...

## ԴՈՂԱՆՁ ՏԱԳՆԱՊԻ

Օդում կախվեց աշխարհակու մի պատերազմ,  
Իսկ գարո՞ւն էր...

Լեռնաշխարհի կատարներին  
Ջունը՝ կիսված պատառների,  
Արտասվում էր գլու-գլու,  
Ծքանցելով լեռ ու բլուր՝  
Առու դարձած  
Հոսում էր ցած  
Այնքա՞ն սիրած ու չտիրած բարձունքներից,  
Եվ խառնելով պուտ-պուտ արցունքն արցունքներին՝  
Հովհիտներում լացն էր փոխում հեծկլսոցի  
Ու գալաքրով վիշապ օձի  
Չոր ու կիրճ էր իրեն գցում.  
Դառնում էր գետ, մի գետ երմա՞ն,  
Ու չէր գտնում խոսքեր ներման՝  
Ծանջր խարված կնոշ նման...

Ողջ աշխարհում՝  
Մահ ու արյուն,  
Իսկ գարո՞ւն էր...

Ծաղիկներն են աչքով անում այստեղ-այնտեղ,  
Եվ ամեն թուփ, ամեն ցողուն  
Դառնում է լար մի յուրովի, դառնում ստեղ՝  
Երգուն քամու մատների տակ:

Օրը՝ օրին, և օդն արդեն  
Մեղմ է այնպես, հողն այնպես տաք,  
Ասես համայն աշխարհով մեկ  
Մի մայր բարի, սիրազորով,  
Մանուկ հողն է ջերմացըրել  
Իր բերանի տաքուկ գոլով...

Մարտե՛ր,  
Զարդե՛ր,  
Հո՛ւր ու հրդեի,  
Արնակոլոյ հազա՛ր սրտեր,  
Իսկ գարո՞ւն էր...

Եվ շողակաթ առավոտներ  
Զինջ ցողով են թրջում ոտներ,  
Թավ սաղարթով ծառեր կուգում,  
Ծաղիկներով ու կանաչով  
Պձնում ոչ թե լոկ արոտներ,  
Սարահարթներ,  
Այլ մինչև իսկ ոտնահարված արահետներ...

Ամենուրեք քույրեր ու մայր  
Հարազատի մահ են կոծում,  
Իսկ մի թռչուն հիմա՛ր-հիմա՛ր  
Խչ-որ ուրախ երգի համար  
Ողջ ժամանակ ձայնն է փորձում...

Ամեն ծաղից՝ նոր մի տաղիկ,  
Ամեն քարից՝ նոր մի խաղիկ,  
Եվ դաշտերում՝ շաղն է շողում,  
Ու ծաղիկներ են փողփողում,  
Իսկ մի համեստ ծնկածաղիկ  
Աշխատում է ոտքի ենեկ՝  
Մի կերպ շտկել ծոված ցողունն  
Ու... ո՞չ մի կերպ չի հաջողում...

## ԴՐԱՆՉ ՆԱԽՃԻՐԻ

Ծնկածաղկի պես  
Մեկ էլ չաջողվեց ոչ միայն նորից  
Ծոկել վեցդարյա ցողունը մեր կոր,  
Այլ բարբարոսի նույն դաժան ձեռքով  
Յողունն այս անգամ արմատից հատվեց.  
Հայկական հարցից թուրքիան ազատվեց  
Հայաստան երկրում հայ չթողնելու մի ահեղ ելքով,  
Որ ոչ լսված էր, ոչ էլ տեսնըված  
Մարդկային ցեղի երթեւ կրած անպատվության մեջ  
Եվ մինչև անգամ իրենց՝ թուրքերի  
Արյունով հունցված սև պատմության մեջ:

Մի ո՞ղջ ժողովուրդ մեկ-մեկ թրատել,  
Մի ամբո՞ղջ անտառ արմատից հատել...

Եվ կուսեր, որոնց ծոցի մեջ լուսե  
Լուսնի լուսն անգամ ծածուկ չէր հոսել,  
Որ երկուու էին, ինչպես եղջերուն,  
Որ անկուր էին, ասես հորինված  
Մի հովվերգական վեպի էջերում.

Աղջիկներ,

Որոնք անպարկեցտ բարից ու շոյիչ խոսքից  
Երկնքի նման բռնկվում էին շիկնամքով ոսկի.  
Ամոթխա՛ծ, մաքո՛ր, լուսավո՛ր կույսեր,  
Որ ֆրանսերեն անգիր գիտեին  
Լամարթին, Վիյոն, Ալֆրեդ դը Մյուսե

## ԵՎ ԱՆԳԵՐԵՆ

Խենթ Օֆելյայի տրտում երգն էին արցունքով ջրում,—  
Օֆելյայի պես այժմ ցնորված՝  
Խելագարվածի իրենց ձիչնրում  
Դարձա՛լ մոռանալ չէին կարենում ա՛յն դժոխքը սև  
Եվ բռնաբարող ա՛յն ասկյարներին,  
Ա՛յն ենիշերուն,  
Ա՛յն անասունին ասուն, բայց անբան,  
Որի բութ գլխի կեղտուտ փոչերում  
Երեւ խվլում-շարժվում էր մի բան,  
Ասպա մարդկային մի՛տքը չէր, օ, ո՛չ,  
Այլ... միայն ոճի՛ր:

Մարդի՛կ, որ չունեն մարդկային ոչինչ,  
Մարդի՛կ, որ մա՛րդ չեն,  
Այլ ավելի շուտ մարդակերպ կապիկ.  
Որ յոթ տարին մեկ չեն տեսնում նույնիսկ օճառի երես,  
Տասը տարին մեկ չեն փոխում շապիկ,  
Եվ սուր բահ է պետք,  
Որ մարմինների սև տարթը քերես,—  
Հիմա ամենուր  
Նորապսակի տուրք առագաստ են պղծում անպատիժ,  
Հայոց մայրերին անում անպատիվ...  
Լկըվողները թող գոռան «հրե՛շ»,  
Սակայն ո՞վ գոչի ու լուծի վրե՛ժ,  
Թե տղամարդիկ՝  
Հեռու և մոտիկ՝  
Դարձել են արդեն լեզ ու փորոտիք...

Եվ մարդի՛կ,  
Որոնց բիրտ պձեղների քրտնքահոտից  
Անգամ հոպոպը իր շունչը կտար,  
Ճիւտում էին նույն այդ ոտներով  
Մեր մանուկներին դեռ նորատոտիկ,

Մեր մանչուկներին՝ լուսի պես արդար,  
Առավոտի պես մաքուր ու գերող,  
Գարնան պես բուրող...

Եվ մարդիկ, որոնց աչքերը ճպոտ  
<իշեցնում էին ոտաց ձանապարհ,  
Եվ որոնց միտքը— դավաճանաբար—  
Չեր կտրում այնքան, մինչևիսկ այնքան,  
Որ այդ ճպոտամից կարող են փրկվել,  
Եթե... լվացվեն օրը մեկ անգամ,—  
Միննոյն մարդիկ  
Մեր սուրբ մայրերի հանձարներ սնած ծիչն էին փրթում  
Եվ՝ չգոհացած սառն ու տաք գենքից՝

Մոր աչքի առջև

Քարերով էին փշրում ու ջարդում  
Գանգերը նրանց,  
Ովքեր ստեղծում  
Ու բանաստեղծում,  
Հրաշքներ էին աստծու պես կերտում,  
Եվ եթե աստծուց տարբերվում էին,  
Ապա այնքանով,  
Որ նա անգոր էր, իրենք՝ իրական:  
Եվ հիմա սակայն  
Զեռքն անասնական  
Զնջում էր և այդ տարբերությունը,  
Զնջում էր քարով.  
Հայոց աշխարհի հայկական քարը  
Զարդում-փշրում էր հայոց քանքարը...

— Ո՞վ արդարություն,  
Թող որ ես թքեմ ճակատին քո բաց,—  
Գոչել էր մեկը քարերով ջարդված այդ հանձարներից,  
Գոչել ո՛չ հիմա,  
Այնժամ էր գոչել,

Երբ խուժանն այս նույն  
Արյունով հարբած գավանի նման  
Դրդվելով միայն վայրենուն հայտնի իր պատճառներից,  
Ո՞րերորդ անգամ մոխիր էր թողնում  
Մեր արտ ու այգուց, մճը տաճարնեղից:

Եվ հիմա՝  
Հիմա՝,  
Երբ կոտորած չէր, երբ չարդ չէր,  
Այլ մահ՝  
Մահ համատարած և համազգային,

Մահ ծերի՝  
Մանկան,  
Խեղճի՝,  
Հսկայի՝,  
Երբ մահվան մրրիկ,  
Երբ մահվան բուք էր,—  
Այնըս որտե՞ղ, որտե՞ղ էր թուքը,  
Որ արդարության ճակատը փակեր:  
Այս, չորացել էր հայոց աշխարհի բերանն ու բուկը:  
Էլ ինչպե՞ս թքել,  
Եվ այդ ո՞վ թքեր,

Թե հայոց երկրում էլ մարդ չէր մնում,  
Բովանդակ մի ազգ թե կուլ էր գնում  
Թուքը յաթաղանի պաղբոց պողպատին,  
Հայոց հայլիք Տիգրիս-Եփրատին,  
Սև արաբների շեկ անապատին՝  
Օ՞ր ցերեկով,  
Ոչ թե աննկատ:  
Եվ ունեցե՞լ էր արդարությունը երեմէ ճակատ:  
Օ, ո՞չ, նա ուներ միմիայն քամակ,  
Քամակ մի խեղոք,  
Որ շուր էր տվել մի բնաշնչվող հինավորց ազգի՝  
Նախապես նրան զրկելով զարկող ու փրկող բազկից:  
Ու թե կար ճակատ,

Դա ոռւս-տաճկական այն ճակատն էր լոկ,

Որ մոտենում էր՝

Ասես լսելով

Կտրվողների,

Կոտորվողների

Ահավոր ծիչը,

Եվ—մեկ էլ հանկարծ— չգիտես ինչու,

Բոնում էր ճամփան արագ նահանջի՝

Թույլ տալով իշնի

Եվ զարկը վերջին,

Կարծես եղածը դեռևս քիչ էր...

Եվ սակայն նրանց մեղքն ի՞նչ էր, ի՞նչ էր,

Անսատվա՛ծ աստված,

Ինչո՞ւ էր արդում այնքան անօրեն

Եվ ահեղ մի դատ:

... Կար երկաթուղի,

Որ պիտի անցներ Բեռլինից—Բաղդադ:

Քայց ինչպե՞ս անցներ անապատներով այն արաբական,

Որտեղ կանաչը կայարանների դեմքը չի պատում,

Ուր չկան շեներ, ավաններ ու տուն:

— Մեղքը հայի՞նն էր, որ հոժարակամ

Չէր գնում ապրի շեկ անապատում,

Չէր լքում բնիկ հայրական տունը,

Իր բազմադարյան շենն ու ավանը՝

Ամուր Կարինը, անառ Սասունը,

Իր ծոցվոր Մուշը, պտղած իր Վանը...

... Բովանդակ մի դար, դարուց ավելի՝,

Տենչանքն էր կիզում ոռւսաց նավերին.

Իրենց ձնառատ ու պաղ հյուսիսում

Երազում էին, կարոտով հիշում

Լուսեղ արևելք, արևոտ հարավ,

Ու խենթ տոփանքի խոսք էին, բանում

Այն Դարդանելին՝ պչրուիուն պառավ,

Որ չէր դիմանում

Առանց հումանու,

Բայց սրանց— ինչո՞ւ— թողնում էր ծարավ,

Նավը՝ նազ, սակայն... հետո՝, ի՞նչ դառավ,—

Եվ ահա ոռւսներն էլ չեն դիմանում:

Մեղքը հայի՞նն էր.

Նա թուրքի աչքին այլ բան չէր թվում,

Քան հաջող քամի

Եվ մի առագաստ, որ ինքն է պարզվում

Մոսկովի կայսին...

... Այս շարժիչների թանկ-էժան դարում

Նավթի փոխարեն— իցավ խեղճ հայի—

Դեռ Անգլիայում ջուր չէին վառում:

Բոլոր ծովերը՝ նույն Անգլիային,

Մինչդեռ նավթի ծովն, ա՛յ, Մուսուլումն է:

— Եվ մեղքը ո՞ւնն է,—

Իհա՛րկե հայինն...

... Արդեն օսմանյան կավե հսկայի

Ծեփն է ճաքճքվում

Ու մեջքը ձկվում

Բանականության տաքով շողերից.

Ռումին ու բուլղար, սլովակ ու սերբ

Պոկվել են նրա կավե կողերից:

Նույն անսերեկի մտքին է հակվում,

Նույն ախտով նաև հայն է վարակվում՝

Իր մասն է ուզում իր իսկ հողերից,

Գրոշ է ուզում իր այն փողերից,

Որ հափշտակեն

Եվ ձչալ ուզող բերանն են հետո քացիով փակել:

Ու դժգո՞հ է նա,

Եվ ա՞յդ է ուզում անխոս ակնարկել:  
— Ուրեմն պարզ է. նա հանցագործ է,  
Եվ պիտի ջնջվեն իր էգն ու որձը:

... Եղունգ են քերծում, պտղունց են մաշում,  
Ժայռից վանք կերտում, քարից նուռ տաշում,  
Դարպասի աչքին հոնք կամար քաշում,  
Արձան են ձուլում, շինում ապարանք:  
— Եվ մեղավոր են այստեղ էլ նրանք...

... Հաշիչ չեն ծխում,  
Խնմում են գինի,  
Ապրում անթալան և առաքինի,  
Չեն պահում հարեմ,  
Ոչ էլ ներքինի,  
Եվ չունեն մոլլա,  
Որ կապի չալմա.  
Նրանց քեշիջը վեղարավոր է:  
— Եվ... մեղավոր են...

... Զեռքի հետքերը նրանց հայրերի  
Կնիք են դրել այս նույն վայրերին՝  
Իբրև սեպագիր  
Կամ շաղախ ու կիր,  
Իբրև շիրճաքար  
Կամ որմնանկար,  
Իբրև մագաղաթ  
Կամ լեռծակ-ջրամցք...  
— Եվ ո՞ւմն է մեղքը,—  
Իհա՛րկե նրանց...

... Խնչակն չկտրել այն կոկորդը չար,  
Որ ցավից հանկարծ կարող է ճչալ,  
Կարող է հայցել փրկություն ու ճար...

... Պիտի ապատվել այն լիրբ աչքից էլ,  
Որ երազանքից շողում է պայծառ  
Եվ կամ մատնում է ապրած կակիծը  
Ու դրանով իսկ դառնում է պատճառ,  
Որ օտարները... լացողին խղճան՝  
Տեսմենով նրա աղի արցունքը...

... Խնչակն չշարդել հանցավոր ծունկը  
Եվ այն մեղսակից համառ արմունկը,  
Որոնց հենվելով՝ մարդը արնաքամ

— Եվ գազա՞նն անգամ—  
Ուզում է դուրս գալ ժանտ գերությունից...  
Ուրիշ ավելի հանցավոր բան կա՞:  
— Դե եկ, մի՛ ելուի համբերությունից,  
Դե եկ, թուրքօղի՛, ցավից մի՛ վնգա...

... Կյանքում կան բաներ, որոնք չեն քերվում,  
Խնչակն չի քերվում արյունը սրտից  
Կամ գոյնը վարդից:

Կյանքում կան բաներ, որոնք չեն ներվում  
Խնչակն դրացուն,  
Այնպես էլ համայն մի ժողովրդի:  
Զի ներվում և այն,  
Խնչը կոչվում է առավելություն...  
— Եվ այդ ահոելի հանցանքի դիմաց  
Դեռ պահանջում եք ներման վեհությո՞ւն...

... Նրանք գիտեին սիրել ու ատել,  
Գիտեին խորիել ու համենատել,  
Խուլս տալ ցավերից, դավերից ծպտյալ,  
Ծարավել լուսին, արևին ծպտալ:  
Թե անսահման էր նրանց տանջանքը,  
Անծայր էր նույնքան և անբջանքը:  
— Ահա՛ և նրանց ծանր հանցանք...

... Ունեին նաև մեկ ուրիշ հանցանք,  
Որ ահավոր էր:  
— Գիտե՞ք, թե որը.  
Երբ մարդ ոչ մի կերպ չի կարողանում  
Ըստմիշտ մոռանալ մի հիմա՝ անուն՝  
Ի՞ր իսկ անունը և ազգանունը:  
— Ի՞նչ հանդգնություն, դուք հասկանո՞ւմ եք...

Եվ նա ուզում է նույնիսկ չդատվե՞լ,  
Խուսափել արդար կարգ ու կանոնից:  
Ուրեմն... պիտի այլ կերպ ազատվել  
Այդ լիրք անունից և ազգանունից:

Իսկ դա անունն էր մի ամբողջ երկրի,  
Ո՞չ մի ազգ էր դա կրում ու պահում...

Եվ քաղաքակիրթ այն Եվրոպայում,  
Ուր ով ծանոթ էր հայոց հին գրին,  
Հայոց պատմության ու պատմագրին,  
Դառնում էր որոշոր ու պրոֆեսոր՝  
Դեռ օրը նույնիսկ չդարձած կեսօր...  
Եվ քաղաքակիրթ այն Եվրոպայում,  
Ուր մարդկայնության փութանց նոպայում  
Շատերի համար դարձել էր փեշակ

Մեզ երկի՞նք հանե՞  
Հային անվանել

Ասիական մթնում գիտության մշակ,  
Ե՛ ջահ, Է՛ կերոն, Է՛ միակ փարոս,  
Իսկ թուրքին կոչել բիրտ ու բարբարոս՝  
Իրենց համեմատ այնքան վայրենի,  
Որ պետք է նրա հողը հայրենի  
Վաճառքի հանել  
Կամ մեշ-մեշ անել,  
Որպեսպի... հողը չմնա խոպան,—  
Հիմա լուսավոր այդ նույն Եվրոպան

Առանց շինանքի այնտեղ էր հասել,  
Որ ժառանգներին Կարմիր սուլթանի  
Դասեր էր տալիս՝  
Եղենի՝ դասեր,  
Դասեր նախադիրի՝, բարբարոսության,  
Իրենց պահելով... դերը բուզության:

Այդ նո՞յն Եվրոպան  
Նման չէ՞ր հապա  
Հարբած-արնախում այն թուրք վինվորին,  
Որ ձանձրանալով վառերից նարդու  
Կամ թուղթ խաղալուց,  
Իր թուրք դրած հայ իդի կսոց սուրբխորան փորին՝  
Գրավ էր գալիս, թե ի՞նչ կը երի.  
— Աղջի՞կ, թե տղա, —

Եվ մանկաբարձի նշտարի տեղակ  
Թուրք էր կատարում կեսարյան հատում...

Իսկ նա կին չէր, ո՞չ, այլ Մայր Հայաստանի,  
Որի սրբազն ու տաք արգանդում  
Մի լուս մանուկ էր սկսում խաղալ,  
Մի վահագնակերպ-դավթադեմ տղա,  
Որ հղացել էր փրկության լուսից  
Ու սնվել էր մեր անմոռուկ հուսից՝  
Այս ճանապարհին, որ դարավոր էր,  
Ծանր ու խորդուբորդ:

Բայց Եվրոպան էլ ուներ ճանապարհ  
Եվ, որպես ճամփորդ,  
Նա... կովացըրեց իրար հետ շներ,  
Որ իր՝ ճամփորդի բանը հաջողի:  
Իրոք, ի՞նչ էլ որ լիներ-չլիներ,  
Բայց պակաս չկար շան պես հաչողի:  
Եվ այս շնային գպտութի մեջ

Չան թաթերի տակ քիչ մնաց կորչեր

Մի ո՞ղջ ժողովուրդ՝

Բնիկ,

Տեղական.

Մազ մնաց դառնար թղթե տեղեկանք

Մի ազգ, որ կուռքնը շատ էր ճանաչել,  
Բայց որի... նովնիսկ տոտե՞մը շուն չէր,

Այլ եզր հերկող,

Այլ ջուրը երգող

Եվ ամպրոպածին փողը՝ եղեգան...

Ու երկրագնդի այն ծանոթ մասում,

Որին Հայաստան, Հայք էին ասում

Փարավոններից մինչ Պուանկարեն,

Հիմա Օսմանի թոռները բռի

Վիկերմ կայսեր հետ ուզեցին քերեն

Դարերով հնչող «Հայաստան» բառի

Բոլո՞ր տառերը,

Նրա ապագան,

Մշակոտ ներկան

Եվ մինչև անգամ... անցած դարերը:

Եվ համարյա թե իրոք քերեցին,

Իսկ Գլատըստոն—Զորջ Լոյդները

Չխանզարեցի՞ն...

## ԴՈՂԱՆՁ ԵՂԵՇՈՆԱԿԱՆ

Խանզարե՞լ: Ինչի՞ համար...

Գարուն էր: Չեկած ամառ՝

Փուլ եկավ երկնակամար,

Զյուն մաղեց մեր բաց գլխին,

Զյուն մաղեց՝ կրակի՞ պես...

— Գարուն ա, ձուն ա արել...

Գետերը մեր երերման

Հոսեցին՝ երակի՞ պես...

— Արունը ջուր ա դառել....

Չորերը շիրիմ դարձան,

Վիկերը՝ գերեզմանոց.

— Զուրը մեր տունն ա տարել...

Ամեն քար՝ լուռ մահարձան,

Ամեն տուն՝ վառման հնոց.

— Բնավեր հավք ենք դառել...

Ինչքան բառ՝ ո՞ղջը մրմունչ,

Ինչքան երգ՝ ո՞ղջը լալով.

— Զուլում էր, զուլո՞ւմ, լառ'....

Թրի դեմ, սրի, իրի՝

Լոկ մանգաղ, լոկ բահ ու մաճ.

— Տնավե՞ր-քնավե՞ր լաճ...

Մեր հողը, մեր հայրենին,

Մեր երկիրն ամայացավ.

— Աև՝ հազիր, սևսկրտ մարե...

Հինավորց տոհմիկ մի ազգ  
Չմեռա՛վ, այլ... մահացա՛վ.  
— Գարուն ա, ձուն ա արել...

Գարուն էր: Ամառ եկավ,  
Զագ հանեց ձորում կաքավ,  
Իսկ հայր զրկվեց ձագից,  
Իր պոռթկան թոնրի տաքից,  
Իր մորից, հորից, յարից,  
Իր բնից ու աշխարհից.  
— Գարուն ա, ձուն ա արել...

... Ա՛խ, ինչայե՞ս, ո՞նց մոռանալ  
Արհավիրքն այն օրերի.  
— Աշխարքում ով մոռանա՝  
Չուխտ աչքով թող քոռանա...

Գառնարած-հովիվ-նախրորդ  
Ետ չեկան սար-ձորերից...  
Կեսօրին էլ ո՞վ երգեր.  
— Սարերը հով չեն անում,  
Իմ դարդին դարւան անում...  
Հնձվորը արտում մորթվեց  
Իր ձեռքի սուր մանգաղով...  
Խեղճ հարսը էլ ո՞նց երգեր.  
— Քաղվորին հաց եմ բերում,  
Բերանը բաց եմ բերում...

Զկնորսը Վանա ծովում  
Չփրկվեց ճարպիկ լողով...  
Աղջիկը զո՞ւր էր կանչում.  
— Իմ ծամթել տամ լողվորչուն...  
Երկրի մեջ մարդ չմնաց՝  
Մարդ թաղեր մարդու նման...  
Ա՛խ, մնար մե՛կը գրնե

Ու կանչեր.  
— Դե յամա՞ն...

Ա՛խ, ինչայե՞ս, ո՞նց մոռանալ  
Արհավիրքն այն օրերի.  
— Աշխարքում ով մոռանա՝  
Չուխտ աչքով թող քոռանա...

... Զահերը վառ մնացին  
Ժամերգվող եկեղեցուն,  
Ժամհարին կախ տպեցին  
Պարանից գանգակատան...

Զաղացից աղուն բերող  
Ալրոտված խեղճ գյուղացուն  
Իր սայլը դագաղ դարձավ,  
Այսուը՝ արնոտ պատան...

Մայրն ընկավ՝ ծիծը թողած  
Իր թսկիկ մանկան բերնում,  
Ծծի տեղ ցից խրելով՝  
Խեղդեցին մինուճարին...

Տատն ընկավ՝ ձեռքը մեկնած  
Կչկչան հավի թառին.  
Իր հիփանդ թոռան համար  
Խորոտիկ ծուտ էր բռնում...

Կալի մեջ պապիկն ընկավ,  
Իր ոսկե թեղն էր էրնում,  
Որպեսպի տուրքը թուրքին  
Օր առաջ շուտ վճարի...

Ով ծաղիկ հաց էր թխում՝  
Խորովվեց թռնրի ծխում...  
Ով հասել ուխտատեղի,  
Վառել էր մոմը դեղին,  
Մոսի դեմ իջել էր ծունը  
Ու հայցում էր աստղօւն,  
Որ բաշխի մի լաճ տղա,—  
Իր արյամբ մոմը մարեց՝  
Չափարտած «Տե՛ր, քեզ մեղա՛»-ն...  
— Գարուն ա, ձռն ա արել...

... Խոցեցին ու ջնջեցին,  
Հատեցին հաստ ու բարակ,  
Հոչեցին ու տանջեցին,  
Փշրեցին, տվին կրակ,  
Վաթեցին արյուն-արցունք,  
Ներկեցին ձոր ու բարձունք,  
Քանդեցին երկինք մի լուրթ,  
Մորթեցին մի ժողովուրդ,  
Հացառատ մի ողջ աշխարհ  
Սարքեցին փշրանք-նշխար,  
Սո՞ւրբ նշխար՝ շա՛ն բերանում,—

Ուզեցին մեկ հայ թողնել,  
Եվ այն էլ... թանգարանում...  
— Գարուն ա, ձռն ա արել...

## ՂՈՂԱՆՉ ԱՔՍՈՐԻ

Իկո՞ւր աստծուն պաղատեցին...

Ալա՛ն-թալա՛ն,  
Կեռ յաթաղան...

Ում որ պետք էր՝ փողոտեցին,  
Գազանաբար ձղոտեցին,  
Խողիսողեցին սրածելով.  
Քարափներից ջուրն ածելով՝  
Դիակներով խեղդվողների՝  
Ծանրացըրին հոսք ու հոսանք.  
Չհարցնելով մանուկ ու ծնր:

Եվ ո՞վ կոծեր,  
Կուրծքը ծեծեր.  
— Էս ի՞նչ քյափուր դարի հասանք...

Իկո՞ւր աստծուն աղաչեցին...

Թե բյուրերով հայ խաչեցին,  
Հազարավոր այր ու կանանց  
Անդող ձեռքով տեղահանած՝  
Քշեցին... ո՞ւր,  
Դեաի Դեր-Զոր:

Մերկ ու բոքիկ, խեղճ ու անզոր՝  
Անցան նրանք ավազներով արաբական անապատի,  
Մի շիրմուդի, ուր ամեն քայլ դիակներով ուղենչվեց,

Եվ նորացավ նո՞ր Գողգոթան՝  
Ահագնացած տասնապատի՞կ...

Մեր փրկության աղաղակներն անցան իւսուր,  
Իւսո՞ւր հնչեց ողջ աշխարհով մի ահապանգ,  
Որ լոկ դարձավ, վերջ ի վերջո, թառանչ մի սուր.  
— Ես ի՞նչ քյափուր դարի հասանք...

... 15 թիվ: Ապրիլի 10...

Ապրիլական արբշիո բույրեր,  
Գարնանային ծաղկածլում,  
Կանաչների շքահանդես,—  
Եվ... ծաղկաբույր գիշերվա մեջ  
Հեռուներից մոտենալով  
Գաղտագողի-ծածուկ-անտես՝  
Խորշակը նույն,  
Որ շատ շուտով պիտի տաներ միջիոն հայեր,  
Խորշակը նույն անցավ նաև  
Պոլսո բոլո՞ր հայ թաղերով՝  
Իր հրեղեն ոտոների տակ  
Խաշխելով ու թաղելով  
Վերջին հուկայի շունչը մեր տաք...

Ահե՞ղ գիշեր,  
Որ բորբ ներկվեց ո՞չ արևով,  
Այլ մեր արյա՞մբ,  
Ու կողոպտեց խորանները հայ կաճառի,  
Խորանները հայ դպության սուրբ տաճարի,  
Բոլոր ճյուղերը կտրատեց  
Հայ հանձարի  
Ծաղկուն ծառի.  
Ու մատյանից հայ մեղեղու  
Ամենավա՞ն էջը հատեց...

Եվ անուննե՞ր, որոնք երեկ  
Հնչում էին փաղաքշական մասնիկներով  
Մերձավորի ու մտերիմ բարեկամի սիրող շրթից,  
Ու իիրավի հպարտության տրոփ պոկում  
Մի բովանդակ ժողովրդի լեցուն սրտից,—  
Թե կյանք էին՝ հիմա հանկարծ դարձան անզո՞  
Մի գիշերում, բարբարոսի կամք ու ջանքով  
Ու մղումով անվապելի  
Փոխարկվեցին առասպելի.  
Ապրող մարդուց հանկարծ դարձան  
Մի մտովին կերտված արձան...

Ա՞խ, Բերայի Բանկալթի թաղ...  
Ա՞խ, Ղալաթիո եռատաճար եկեղեցր...  
Չո դարավոր գմբեթի տակ  
Իրիկնային ժամերգության սուրբ պահերին  
Պատարագիչ Կոմիտասին չէ՞ որ երեկ  
Լսում էին հիացմունքով Զոհրապ... Սևակ...  
Քանքարալից հապար գլուխ՝  
Փոքր ու ավագ,  
Միահավաք  
Հակվում էին հայ մեղեղու սրբության դեմ  
Ու հղանում նոր մեղեղիք՝  
Հնչուններո՞վ, խոսքո՞վ, գրչո՞վ,  
Արձանակերտ նրբին մրճո՞վ,  
Երանգների պնակի՝ մեջ,  
Հետո, մեկտեղ ակըմբվելով  
Բանկալթի այնքա՞ն ծանոթ  
Ու սիրելի տնակի՝ մեջ՝  
Խնդրում էին Վարդապետին՝  
Երգել Կոռոնկ կամ հնակի ծառ,  
Երգել Զինար ես...

— Չինար ես՝ կեռանալ մի...  
 Մակայն ինչպե՞ս չկեռանաս,  
 Երբ կացին է բունըդ տաշում,  
 Երբ սղոցն է ճյուղըդ մաջում,—  
 Դե՛, արի և  
 ... Կեռանա՛լ մի:

Ի՞նչ.

— Մեր դռնեն հեռանա՛լ մի...  
 Ա՞յս, ո՞ր շունը կիեռանար:  
 Բոկ եթե շուն, գայլ ու զավան  
 Կամ անխնա սրի քաշում,  
 Կամ աքսոր են բռնի քշում  
 Ամբողջ մի ազգ՝ տասա՛ն-սատա՛ն,—  
 Դե՛, արի և  
 ... Հեռանա՛լ մի:

Ի՞նչպե՞ս.

— Աստվա՛ծըդ կսիրես...  
 Բայց ո՞ւր է, ա՞յս, ո՞ւր է աստված:  
 Եթե կույր ու խուլ է աստված,  
 Եթե «Գթա»-ն զուր է ասված,  
 Նման աստծուն ինչպե՞ս սիրես...

Ի՞նչ.

— Հեռու ես՝ մոռանա՛լ մի...  
 Ո՞նց մոռանալ: Ե՛կ մոռացիր,  
 Որ ապրիյան այն ահավոր  
 Ու ոճրապարտ լուսաբացին  
 Բարբարոսի խուժդուժ ձեռքնը  
 Սուրբ խորաններ կողոպտեցին՝  
 Խորանները հայ կաճարի,  
 Հայ դպրության սուրբ տաճարի,  
 Հայ հանձարի

Ծաղկում ծառի  
 Բոլոր ոստերն անգթորեն կտրատվեցին,  
 Սուրբ մատյանից հայ մեղեդու  
 Բոլոր էջերն ամենավառ  
 Դարձան մոլի հողմին ավար,  
 Մի գիշերում պոկոտվեցին ու զատվեցին,—  
 Ծեկ աքսորի սև փակուղուց չապատվեցին

Ո՛չ մի հանձար,  
 Ո՛չ մի տարանդ,  
 Ու մի քանքար՝  
 Ով որ Պոլսում եղեռնական այդ գարնան կար...

Մարդիկ, որոնք կամքով վերին  
 Անցնում էին և պիտի որ անցնեին դեռ  
 Իրենց ձամփան անլահության ու սխրանքի,  
 Բոլոր ըջ մեկ՝  
 Հիմա արդեն կտրում էին ուղին մահկան,  
 Ճանապարհը աքսորանքի...

Մի-մի քուրմեր՝  
 Լեցուն բանիվ ու մեղեդով մեհենական,  
 Հիմա պիտի ըմբոշինեին  
 Թուլն ու լեղին գեհենական...

Դե՛, բերա՛ն բեր, որ չքի,  
 Եվ քարե սիրտ, որ չձաքի:

Ու ձգվում էր ճանապարհը աքսորանքի:

Զգլում էր նա հայ բրգացած դիակների ստորոտով,  
 Միջահատված մանուկների թաղում հայցող բլրի մոտով...

Մարտիրոսած հայ մայրերի կոնքերը սուրբ  
 Ուզում էին ամոթն իրենց անապատի փոշով ծածկել,

Դեղին փոշո՞վ,  
Ո՞չ թե փեշով,  
Որ և չկար,  
Թնչան չկար ո՞չ սրբություն,  
Ո՞չ էլ աստված...

Լկանքի մեջ նահատակված անմեղ կույսեր  
Ու լրւս հարսեր

Զանում էին լանջերն իրենց ծածկել հողով անապատի,  
Դեղին հողո՞վ,  
Ո՞չ թե քողով,  
Որ և չկար,

Թնչան չկար ո՞չ սրբություն,  
Ո՞չ էլ աստված...

Դե՛, շրթո՞ւնք բեր, որ չանիթի,  
Դե՛, բեր բառ՞ւնցք, այրկված կոռ՞ւփ,  
Որ չդառնա քինահարուց կրթի խոյանք  
Ու միսրձի երկնքի մեջ՝  
Իբրև նպո՞վք,  
Ո՞չ, ի՞նչ նպովք.

Իբրև աստծու և երկնքի լիրը հասցեին  
Մի առնական թունդ հայիոյանք...

Իսկ աքսորի ճանապարհը վախճան չուներ:

Ավերակված հայ շեներից,  
Իբրև նշան կենդանության,  
Ահապարհուը ոռնում էին անբուն շներ՝  
Հիմարաբար չըմբռնելով,  
Որ այսուհետ  
Ծունք մարդուց ավելի է գերադասված  
Նրա՞նց կողմից,  
Որ կոչվում են մարդ ու աստված...

Բեկված անե՛ր,  
Այրված շենե՛ր

Եվ մարդկանցից գերադասված անտուն շնե՛ր,  
Որ երեկվա իրենց տիրոց  
Լուր դիակն են նախ հոտոտում,  
Ոռնում՝ կարծես այրող ցավից,

Ոռնո՞ւմ, վեգո՞ւմ,

Մե՛կ օր, երկո՞ւ,

Հետո՞ւ մղված ծանըր սովից՝  
Երեկ իրենց կերակըրող ձեռն են ռատում,  
Գոմալով իրենց տիրոջ դին հոշոտում...

... Ճանապարհն այս դժոխային  
Կարող էր և անվերջ տևել,  
Բայց սարսափի օրն է մթնում,  
Եվ քարվանը արդա՛ր-արդա՛ր,  
Եվ քարվանը մահապարտյալ  
Չանկըրըի բանտն է մտնում:

Բանտ թուրքակա՞ն  
Եվ պատրաստված... հայի՛ համար.  
Քստմեի լլկանքների՛,

Անարատվությա՞ն,  
Ոչ թե արդեն երազելի մահի՛ համար,—  
Մի բախտ դժխեմ,

Մի անողորմ ճակատագիր՝  
Հիմա արդեն ո՞չ անմարմին, ո՞չ էլ անգո,  
Այլ զնդանի դրան առաջ պահակացած  
Թուրք ասկյարի արյունկպակ կերպարանքով...

Եվ այդ պահին.

— Տէ՛ր, ողողմեա՛...

Առավել, քան երբեկցե,  
Եվ ավելի, քան այլուրեք,  
Այնքան տեղին, ժամանակին,  
ԱՇԽ, Վարդապետ, գութ է հայում  
Տիրալալուկ ամբողջ մի ազգ  
Քո սևասուց սուրբ բերանով.  
— Տէ՛ր, ողորմեա'...

Եվ զնդանում նեղ ու անձուկ  
Պղպջում է մի լայն փոճուկ,  
Մի տաք փոճուկ տղամարդկանց,  
Որ եղեգան իրենց փողով  
Թռւնդ են հանել սիրտը դռդով.  
Որ սրտառուչ իրենց տողով  
Ու երգերով իրենց թռվիչ՝  
Գարնան նևան լոկ վրդովիչ,  
Ծայր են տվել շիթ արցունքի՝  
Ո՛չ թե ցավի կամ տրտմության,  
Այլ հուզառատ հիացմունքի...

— Յաղագրս հարց, եղբարց մերոց,  
Դրբ են տարեալ ի գերութիւն,  
Տէ՛ր, ողորմեա'...

Իսկ հայրերը արդեն չկա՞ն,  
Եղբայրներին թուր ու ձգան  
Վերջ են տվել սար ու ձորում,  
Ուր ջրի պես և ջրի հետ  
Տաք արյունն է նրանց ծորում...

— Շիջն՝ պհուր վառ հնոցի,  
Փոլկեա' զմեկ, ամենազո՞ւր...

Բայց աղոյթից այդ ի՞նչ օգուտ,  
Թե հնոցի  
Ահեղ բոցին  
Կուկ է տրված հայոց աշխարհին,  
ԱՌզը հայոց՝ ցախի պես խառն...  
— Հայցեմք ի քեն արտասուելով  
Եվ պաղատիմք զայս ասելով.  
Տէ՛ր, ողորմեա'...

Ի՞նչ էր պահում վաղը նրանց՝  
Հանձարավոր այս մեծ արանց,  
Ի՞նչ մի վախճան բարբարոսի.  
Անշուշտ՝ զոհի՝, ո՞չ հերոսի...

— Ըսկալ զմեր աղաչանրս,  
Լո՛ւր, գթառա՛տ, և ողորմեա'...

ԱՇԽ, թե լսեր ու գթառատ եթե լիներ՝  
Գավանադեմ այս խուժանին նա կպինե՞ր  
Ու շա՞ղ կտար դաշտ ու սարին՝

Ակնից—Արձեշ,  
Վամից—Կարին...

— Ցո՛յց մեկ զքո ողորմութիւն,  
Տուր աշխարհին խաղաղութիւն...

Խաղաղությո՞ւն...  
Եթե այսպես գնար քիչ է՛լ,  
Մեկ էլ տեսար՝ խաղաղությունն իրո՞ք իշել,  
Վեր է ածել շեն աշխարհը մի շիրմատան,  
Ուր այլնըս չեն էլ ճարվի ապրող մարդիկ,  
Ուր բյուրավոր հանգչողներին երանի տան...

— Տէ՛ր, ողորմեա'ա...

Ո՞չ, Վարդապե՞տ, ո՞չ, չողորմա՞ց,  
Իսկ քեզ պատժեց պատժով մի նոր՝

Չառավ հոգիդ,

Ինչպես առավ նրանց հոգին,

Որոնք մյուս օր՝

Շիկադեղին անապատի ավագի պես ծարա՛վ-ծարա՛վ,

Աստվածային աչքերում՝ սով,

Չսնվելով նույնիսկ հուսով,

Անգամ թրից կամ զնդակից չխոցվեցին,

Այլ պարզապես... այլ պարզապես... քարկոծվեցին...

... Ի՞նչ էր արյոք այն պատճառը,

Որ քեզ զատեց

Եվ անջատեց

Քո բախտակից ու սրտամոտ ընկերների դժինմ բախտից՝

Քարկոծվողի սուր դրախտից

Քեզ նետերով մի լայն դժոխք,

Ուր ո՞չ մահ կար,

Ո՞չ կյանքի շողք:

Ա՞յս, նրանցից ինչի՞ համար քեզ զատեցին,

Քեզ— այդքա՞ն ուշ— ինչի՞ համար ազատեցին:

Եթե դա՛ էր ալատելը...

## ՂՈՂԱՆՁ ՄԹԱԳՆՈՒՄԻ

Ա՞յս, եթե դա եր...

Գթառատ Տերը

Թո՞ղ որ ազատի իր ազատելուց...

Ինչ է դաշնամուր և ինչ է ստեղ՝  
Մոռացա՞ն նրա ձարտար մատերը...

Իւքը Բանկալթու իր տան մեջ, այստե՛ղ,

Եվ Զանկըրը բանտի պատերը

Արդեն նրանից շատ-շատ են հեռու,

Բայց ուղեղի մեջ.. բայց ուղեղի մեջ,

Կարծես թե կպած նրա թաղանթից՝

Մթան մի քուա եռո՞ն էր-եռո՞ն և,

Մերթ իբրև ինչ-որ անմարւին զեռուն,

Մերթ իբրև ջրի խաշող գոլորշի,—

Պատույտ էր տախս ծանր ու բոլորշի,

Պտույտ էր տախս

Ու պոկ չէր գալիս...

Երբ անցնում էր նա Բանկալթու մայթով՝

Մի ձայն էր ինչում

Հաճախ ականչում.

Թվում էր՝ ձայնեց իր Սիամանթոն,

Թվում էր՝ իրեն Դանիելն է կանչում...

Իրիկնանալիս իր տան սրահում

Թվում էր՝ տեսավ զենք ու զրահում

Այն վարագաղեմ տաճիկ ասկյարին,  
Որ ձեռքը տարակ շիկացող քարին,  
Ու... ճշում էր նա,  
Ճշում սոսկալի  
Եվ իսկույն վառում մոմեր ու կանթեղ:  
Վառում էր, նըստում: Ու մեկ էլ հանկարծ  
Աչքերն էր ջրչում այստեղից ախտեղ.  
Արյո՞ւն էր թվում բոցը կանթեղի...  
Ու փչում էր նա մոմեր ու կանթեղ...

Վեր-վեր էր թռչում հաճախ անտեղի,  
Ավելի հաճախ... լինում էր այնտեղ՝ դ.  
Լինում էր... այնտեղ՝ իր Հայաստանում  
Կարինում, Մուշում, Վանա ոստանում...

Ինքը՝ Պոլսո՞ մեջ,  
Խսկ մի՞տքը՝ այնտեղ...

... Ասում են՝  
Այնտեղ՝

Հայաստան կոչված անհայ աշխարհում,  
Կումկոտրուկները, որոնց մոմազոյն ծաղկաթերթերից  
Փռվում էր չորս կողմ գինու թանձր բույր,  
Հիմա

(Եվ ընդմի՞ջո)

Կարմիր են հագել

Ու գինու բույր փոխարկել արյան մի ծանքը հոտի,  
Որ գրգռում է թռչովոր քրդերի նախրի պյունք:

Խսկ գեղեցկապաշտ բաղեղը կանաչ,  
Որ չի ախորժում տգեղություններ,  
Լուր մագլում է քարափներն ի վեր,  
Որ իր սեփական կանաչ թներով  
Արյամբ ողողված ժայռերը ծածկի,

Շղարջի քերծեր,  
Որոնց դուրս պրծած ցցերից քարե,  
Թնչան ժանիքից,  
Թեպետ չուկելով, բայց ծածանվում է պատմաբան քամուց  
Հայ հարս ու կանանց երեմնի գունեղ տարագից մի մաս՝  
Արևի՞ց արդյոք,  
Թե՛ իրենց կրած անլուր սարտափից  
Այժմ գունաթափ, այժմ ձերմակած,—  
Թեպետ չուկելով, բայց ծածանվում է պատմաբան քամուց,  
Իբրև պատվավոր ինքնասպանության սպիտակ դրոշ...

Խսկ այն ծերպերը,  
Որտեղ մազցել չի կարողանում բաղեղը նույնիսկ.  
Ու տեղ չի գտնում քարաքոսն անգամ,

Կարմիր ծերպերը՝  
Մեկ՝ երկար, մեկ՝ կարճ պյուներով ձերմա՞կ,  
Նման վիթխարի քարե բացօթյա մի երգեհոնի  
Հայոց լեռների ամֆիթատրոնում,—  
Խսկ այդ ծերպերը տնքում են խեղճ-խեղճ  
Լսողությունից բոլորովի՞ն կուրկ,  
Երգ ու նվագից բա՞ն չհասկացող  
Բարբարոս քամու պաղ մատների տակ,  
Երգեհոնի այս նույն տակտն են տնքում.

— Այս ի՞նչ պատահեց...  
Այս ի՞նչ պատահեց...

Խսկ հիմար կկուն,  
Որ իր թռչնախն անթռիչք խելքով  
Զգում է թեպետ, բայց չի հասկանուս, թե ի՞նչ պատահեց,  
Միամի՞տ կկուն  
Ամեն գարնան հետ ընդմիջումներով եթեր կմամփի  
Իր հայրենականչ ապդանշանը հեռագրային.  
Կո՛ւ-կո՛ւ-կո՛ւ (լու՛ք),  
Կո՛ւ-կո՛ւ (ի՞նչ եղաք) ...

Ա՞ս, իպո՞ւր կկուն կազդանշանի.  
Ովեր մեռել են՝ չեն լիի նրան,  
Ովքնը կցրվեն աշխարհի վրա  
Մի բուռ գարու պես՝ հավերի առաջ,  
Մի կուց արյան պես՝ պղտոր ջրերում,  
Թեկուկու որսան ապրանշանը՝ սրտերով իրենց,  
Բայց չէ՝ որ, ափա՛ղ, չէ՝ որ կարող են լոկ պատասխանել  
Կարտից ևարող սրտի բարախմամբ,  
Կակիծից թացվող թարթումով կոսի,  
Զայրութից ուշող երակի պարեով,

Սակայն ո՛չ երբեք

Ուրախ ու զգարթ վերադառնողի քայլով կենայինդ.

— Դո՞ւ-փ-դո՞ւ փ (գալի՛ս ենք),

Դը՞փ-դը՞փ-դը՞փ (եկանք) ...

— Դե ե՛կ, Վարդապե՛տ,

Մի՛ խելագարվիր...

... Այնտեղ՝

Երկնաչու Սասնա լեռներում,

Ժայռեր ու ծերպեր մագլելու մեջ

Ընկույզենիներն անգամ մրցում են իշայծամի հետ՝

Նրանց ճյուղավոր եղջյուրների պես

Բուսնելով ժայռի մակոտ ճակատին...

Եվ այնտեղ՝

Սասնա սարում ու ձորում

Ծարի տերեսին,

Փշերի վրա,

Սանանայի պես զազպեն էր ծորում,

Որ շինականը գար ու հավաքեր:

Սակայն... երկնային մանանան փոխվեց

Երկրային ահեղ մի պատուհասով...

Եվ իիմա այնտեղ՝

Հին Ծովասարի քարերի վրա  
Գառնարած Դալրի երկառ տրեխի թռղած հետքերում,  
Բնչան խաղալիք-փոքրիկ գուղի մեշ,  
Անձրևաջուրն է քմծիծաղ տալիս  
Պաղ կիսալուսնի ներում ակնարկող բառերի վրա...  
Սամա վիպական Մարութա վանքում  
Ովհուափորի տեղ բուերն են տնքում՝  
Այս փուչ աշխարհի բանը խորհեւով...  
Ընկույզի վրա ընկույզն է փտում.

— <Ավաքո՞ղ չկա...>

Ոչխարներ վայրի ու վայրենացած  
Բարձրիկ սարերից անվախ իշնում ցած,  
Համում են մինչև Մշո բաց հովիս.

— Կրակո՞ղ չկա,

Նովմիսկ գո՞ղ չկա...

Խմորի տաշտում ցնկում է կրտուն.

— Սկատո՞ղ չկա...

Եվ տանու կովեր,

Թեպետ մոռացած գումեր ու մսուր,

Ըստ սովորության

Տանջփում են սաստիկ

Իրենց սափորված-լեկիեցուն կրծից.

— Որ կթո՞ղ չկա,—

Եվ խոլ բառաչով քարերի չեչոտ ափին են քսում.

— Որ խտո՞ւտ չգա...

Արջերն են լիկում Սասնա մանանան

Եվ փորկապ ընկած՝

Թավալ են տալիս հին տաճարների սուրբ խորաններում՝

Իրենց ոռնողով Ձենով Օհանի տնապն անելով.

Ել չե՞ն վախենում Սասնա ծոերի ուրվականներից...

— Դե ե՛կ, Վարդապե՛տ,

Եկ ու մի՛ ծովիր...

... Լուսատղն այսպես պայծառ է շողում Նեմրութի վրա,  
Ասես աստղը չէ,  
Այլ մի պրլնձեն նոր կյայեկած թաս է հովքական,  
Իսկ Կաթընծիրը  
Օտարերկրացուն պարզապես ճերմակ մի ամպ է թվում...

Եվ հայի որդին,  
Հրաշքո՞վ փրկված հայի խեղճ որդին  
Օտար ճամփորդի իր անձնագրով  
Եթե երբեւ ուժով հաւրուրի փեշը Միփանա,  
Թերեւս պիտի Վահագնի ճամփան  
Նո՞ւյնպես շփոթի ճերմակ ամպի հետ...

— Դե ե՞կ, Վարդապե՞տ,  
Ու մի՞ ցնորվիր...

... Իջել է այսուեղ մի ծովլ լուրջուն սարդոստայնային,  
Որ հորանջում է՝ ականջ դնելով,  
Թե ե՞րբ կշտացած գայլերը գոնե պիտի վկրտան.  
Ինչքան չինի՞ ձայն է կենդանի:  
Եվ որովհետոն գայլը սակավ է հագեցած լինում.

Ել ի՞նչ է մնում,  
Թե ոչ մրափել

Քուն բերող «շարքու» նվագի ներքո,  
Երբ բախտը բերի՝  
Տարվա մեջ մի օր  
Այս բնակապուրկ վիլայեթը գան  
Զարիթ-ոստիկան...  
Տարին մեկ անգամ մրափի հարուցող նվոցը «շարքու».

Ո՞չ Ծիրանի ծառ,  
Ո՞չ Մոկաց Միրզա,  
Եվ ո՞չ Փեսին գովք,  
Զափիտի ծորա Հորովել-ն այստեղ,  
Ո՞չ Լուսնակն անուշ,  
Ո՞չ ել Կալի երգ.

Հայաստան կոչված անհայ աշխարհում  
Զափիտի՛ հնչի հայ պարեղանակ,  
Հայ երգ  
Ու խաղիկ...

— Դե ե՞կ, Վարդապե՞տ,  
Եկ ու մի՞ ցնորվիր...

...Եվ գեշ գոմշի պես  
Գիշերը պիտի ծանրորեն պառկի՛  
Իր եշտւրներին երկինքը պահած,  
Ու լուս որոճա մի կերպ կուլ տված նախածիր ու ոճիր,  
Որ հեշտ չի մարսում անսաս՛նն անգամ...

Մուլթի թանաքը  
Պիտի ողջ գիշեր եղեռնի մասին եղերեզ գրի,  
Բայց առավոտյան թանձը թանաքը կշնչվի այսպես,  
Ինչպես... արյունը և Հարցը Հայոց...

Իսկ առավո՞տը...  
Նա ամեն անգամ  
Երեխայի պես աչքը կրացի միամտորեն,  
Եվ ամեն անգամ այսպե՞ս կրվա,  
Թե ոչի՞նչ-ոչի՞նչ կյանքում չի փոխվել.  
Ուր որ է մայրը բակից ձայն կտա իր քնկոտ որդուն՝  
Ցնիկոր խնոցու շըմփ-շըրմփոցը մի պահ կտրեխով...  
Եվ գյուղի վրա նորից կալիքփի նախրի բառաչը,  
Այգիների մեջ ծովի հառաչը ծաղիկ կթափի...  
Չուրը՝

Մարգերի փիրուն թմբերը մկան պես ծակած՝  
Լորտուի նման առաջ կսողա...

Մոտիկ արտերից,  
Ասր շուտ տալիս,  
Խոփը կփայլի հայելու նման,  
Եվ շողքը կընկնի դրացու հարսի շարմադ երեսին՝

Նրան մի վայրկյան ահաբեկելով.

— Ամա՞ն, այ ամա՞ն,—

Այդ ո՞ր ջահեն է սիրտ անում նրա դեմքին շողք գցել,

Իսկ թե իր մարդը իմանա՞ հանկարծ՝

— Ամա՞ն, այ ամա՞ն,—

Իսկ թե իր մարդը իմանա՞ հանկարծ՝

Արյո՞ւն կթափվի...

Իսկ առավոտը,

Երբ ամեն անզամ աչքերը բացի,

Մի պահ խարվելով երեխայի պես՝

Քիչ հետո արդեն նա իրեն կզարդ հայի որբ մանչուկ.

Կուլենա կանչել,

Բայց ձա՞յն չի ենի,

Կուլենա լացել՝

Արցունքնե՞ր չկան,

Կուլենա գոնե— վերջապես— մեռնել,

Բայց... մա՞հ էլ չկա.

Զե՞ որ սերում է Փոքը Միերի: «անիծված» սերմից...

— Դե ե՞կ, Վարդապե՛տ,

Ու մի՛ խենթանա...

Մշո լայն դաշտում,

Ծայրից մինչև ծայր,

Անվերջ կուրա կարույալ քամին

Եվ մեն-մի հատիկ երդիկ չի գտնի,

Որ դուրս պոռթկացող ծովսը խլելով՝

Վայրի կատվի պես քինոտ զպպի կծիկը նրա...

— Դե ե՞կ, Վարդապե՛տ,

Եկ ու մի՛ գժվիր...

Բյուրակն էր կոչվում,

Օսմանցին եկավ

Եվ, թարգմանելով, Բինգոյլ անվանեց.

Տաս հազար աղբյուր,

Տաս հազար լճակ:

Եվ հիմա... հիմա

Այդ տաս հազարն էլ մարդ են երազում,

Որ գա ու թեքվի իրենց ակունքին,

Իրենց ափունքին,

Իրենց հայելում իրեն տեսնելով՝

Ծարավը կոտրի՝

«Օխա՞յ» ասելով,—

Թե չէ ի՞նչ աղբյուր,

Թե չէ ի՞նչ լճակ,

Թե չէ աղբյուր ես՝ լճակ կդառնաս,

Թե չէ լճակ ես՝ կդառնաս ձահիձ,

Կդառնաս տանը պառաված օրիորդ,

Մինչդեռ հարսնության առողջ բնապղը խտուտ է տալիս,

Մինչդեռ մայրական սուրբ հիվանդության

Նույնիսկ ծաղիկը ծեծելուց հետո

Քորը չի անցնում...

Եփրատ էր կոչվում

Եվ... Մուլադ ասկեց.

Զհանդամի գյո՞ռը, թող կոչվեր Մուլադ,

Միայն թե գետը գետություն աներ՝

Գերաններ տաներ

Եվ ոչ թե դիակ,

Առվույտի խրձեր, կոճեր ափ հաներ,

Եվ ոչ թե գանգեր, ուսեր ու թիակ...

Միայն թե գետը գետություն աներ.

Գեղջուկը բաներ,

Տնկեր ու ցաներ,

Գետն էլ իր ջրով մեկը տասն աներ,

Խոր քարափների ամայության մեջ

Նրա ջրերով աղորիք շաներ...

Բայց հիմա... հիմա  
Ել ի՞նչ վար ու ցանք,  
Ել ի՞նչ բան ու ջանք  
Եվ ել ի՞նչ ջրտուք,  
Ել ի՞նչ ջրաղաց:

Ինչպես մտքի մեջ հասուն աղջկն է տեսնում մատանի,  
Գետն էլ կամուրջ է միայն երազում:  
Ու... խեղճ Եփրատը կամուրջ է տեսնում... լոկ երազի մեջ...

— Դե ե՛կ, Վարդապէ՛տ,  
Մի՛ խելազրկվիր...

— Քանի՞ ժողովուրդ Վանա լիճ ունի,—  
Օտար գրքերում և օտար լեզվով  
Օտար մարդիկ են այս հարցը տալիս,  
Եվ ոչ թե Վանից զրկած վանեցին,  
Որ հա՛րց չի տալիս, այլ հաստա՛տ ասում.  
— Ես կյանքում մեր Վան,  
Են կյանքում՝ դրախտ...

Ա՛խ, Բիայնայի ու Բվնունիքի,  
Տուշպա և Վանա սրտաձև՝ ծովակ:

Վարագա սուրբ սար,  
Սիփան ու Նեմրութ

Իրենց սովերը — ուռկանի նման — նետում են այնտեղ,  
Եվ տառեխի տեղ  
Որսում են գույներ, որ անո՛ւն չունեն,  
Որ անո՛ւն չունեն...

Իսկ Այգեստանի բույրերից արբշիո  
Եվ Արտամետի հոտերից գինով՝  
Խոր քուն է մտնում քամին Ռատանում,  
Այն խնձորենու հոծ սաղարթի մեջ,  
Որի այտուղը թափահարելիս

Լուս եւ ներսից

Չույլ կորիւների իրար զարնումը՝  
Դեղին սարերի հատիկների պես:  
Փրկված վանեցին այսուհետ միայն իր երազի մեջ  
Կարող է լսել այդ ձայնը ծանոթ և օտարութի...

— Եթե խելք ունես՝  
Եկ մի՛ թուցըրու...

Նոյն Այգեստանում  
Ու նույն Ռատանում

Եթե զարթնում է գինովցած քամին,  
Ապա զարթնում է ծոցվոր ծառերից կաթող մրգերի  
Թմիկոցից միայն,  
Եվ գինովցածի մոլոր քայլվածքով լճափ է նետվում,  
Որ նրա ջրով քիչ զգաստանա:  
Ու տաքուկ քամու մոտիկությունից  
Լիճը — կնոջ պես — սրացվում է լուռ  
Եվ, ամաչելով սուրբ Աղթամարից,  
Մեղա է գալիս՝  
Իր ալիքները ձեռքի պես մեկնած...

Ա՛խ, ալիքնե՞րն այդ,  
Այդ ալիքնե՞րը...

Զիգ ամիսներով ջուր ու օճառի երես չտեսած  
Տափարածն անգամ  
Թե մերկանալով մտնի Վանա ծով,  
Իրեն լավ թոջի ու դուրս գա ջրից՝  
Կեղտի ո՞չ մի հետք,  
Եվ մաշկը մեկեն թավիչ է դառնում՝  
Անցու երինչի կռնակի ննան...  
Վանեցին ուրեմն օճառ չէր առնում  
Եվ հարստացավ ա՞յդ դրամներով,  
Թե՞ Շամփրամի դարավոր առուն

Այգիների մեջ,  
Արտերի վրա,  
Հանդում ու ձորում  
Ռսկի էր փռում...

Ա՞յս, Վանա ծովակ...  
Երբ մութն էր թառում Սիփանա գլխին,  
Նեմրութի լանջին  
Եվ ուղղահայց քարափին Վանա,—  
Զնշելով անջինչ սեպագրելը,—  
Ծովակի վրա երբ մութն էր թառում՝  
Երկինքը համակ հեզ շուր էր գալիս ջրերում ծավի,  
Եվ ալիքների աշխուց խայտանքը չէր թվում ծփանք.  
Կարծես թե ջուրը  
Իր կաթսան ընկած շեկիկ աստղերի հրից էր եռում:  
Բայց աստղե՞րն էին բոցկլուում այնտեղ,  
Թե՞ ապատվելու հուսահատ ճիգով  
Լող էին տալիս հազա՞ր ու հազա՞ր Վանա կատուներ՝  
Վառվող աչքերով,  
Թե՞ ցոլում էին հազա՞ր ու հազա՞ր քարեր թանկագին՝  
Չարժելով Վանա ակնսգործների նախանձը անկուշտ...  
Իսկ ամենից վերջ՝  
Երկնի ջատագով Մեծ Արջը իր մեծ փլավքամիջով  
Ցած էր կունում,  
Անձայն ձողփյունով թաքուն ներսուվավում Վանա լճի մեջ,  
Որ... թարմացընի նրա լապուրով  
Գոռով երկընքի գույները խամրած,  
Սակայն... քամիչի ծակոտիքներից  
Լավուրը նորից թափվում էր ներքև,  
Եվ Վանա լճի համեմատությամբ  
Երկինքը դարձյալ խամրած էր մնում  
Ու մի՞շտ կըմնա...

Ա՞յս, Վանա ծովակ,  
Բայց ախր քե՞զ ինչ երկնքի խամրելն ու չխամրելը,  
Եթե քո շուրջը և քո քաղաքում  
Ծնրադքրել է խավարը խոժոռ՝  
Աղոթքարարի շերմեռանդությամբ,  
Որ չհամենա՝, այլ հարատևի՝  
Իր շողահալած իշխանությունը:  
Իսկ քո հեռավոր-մոտավոր քուրքը՝  
Լիճը Սևանա՝...

Վարդապետ իմ խե՞ղձ,  
Բայց և բախտավո՞ր,  
Բայց և բախտավոր, որ չգիտեիր,  
Թե իր սեփական արյունի գնով  
Սևանա լիճը լուսեր պիտի տա ծերպերին անգամ՝  
Հարուցանելով քարայծամերի դժգոհությունը և փոշտոցը,  
Բայց և ո՞չ մի կերպ չկարողանա  
Լուս տալ մրնախեղդ քաղաքին Վանա,  
Վանա ծովակի խավար ափերին,—  
Նրա հեռավոր-մոտավոր քուրքը՝  
Իր թանկ արյունը լուսի վերածած լիճը Սևանա...

— Դե ե՞կ, Վարդապե՞տ խեղձ ու բախտավոր,  
Եթե կարող ես՝ եկ մի՞ խենանա...

— Համայն աշխարհում  
Այդ քանի՞ երկիր Արարատ ունի,—  
Ո՞վ էլ որ չափ՝  
Աստվածաշունչը իր մագաղաթե դեմքը դեմ կանի  
Ու կատի՞ կարդա՛:  
Այդ քանի՞ երկիր Արարատ ունի:  
Իսկ Արարա՛տը...  
Ե՞հ, անունը կա— ամանում չկա...

Վարդապետ իմ խեղճ,  
Բայց և բախտավո՞ր,

Բայց և բախտավո՞ր, որ չգիտեիր,  
Թե հայ կորովի երիտասարդներ՝  
Լեռնագնացներ բարձունքներ սիրող,  
Մասիսի դիմաց կնացք,

Որ գնան Կապեեկ,  
Ելբրուս գնան,  
Լեռներ մագլեն

Նույնիսկ հեռավոր սահմանի վրա հնդկառուսական,  
Մինչեւ Մասիսի լանջը կուսական:

Մատնե՞ր է տենչում՝  
Հայի տա՞ք մատներ,  
Որ հպե՞ն իրեն,  
Իրեն գուրգուրե՞ն,  
Իրեն ունենա՞ն...

Ու դեռ կան հայեր,  
Որ հավատում են գոյությանն աստծո:  
Թող գիտությունը նույնիսկ պապանձի՛.  
Աստծուն ժխտում է Արարա՞տն անգամ  
Աստվածաշնչի սրբազն լեռը՝  
Բախտո՞վ իր դժխեմ...

— Դե՛, մի՛ թոցըրու խելքը, Վարդապե՞տ...

Վարդապետ թշվա՞ռ, բայց և բախտավո՞ր.  
Քո մտքով անցա՞վ, որ Մասիսն, այո՞,  
Մեր նոր ու վերջին ոստանի առաջ,  
Մեր հայրենաքաղց աչքերի հանդեպ,  
Կարծես թե դիտնամբ ու միտումնորեն  
Մեկ անխղճաբար պիտի գրգո՞ի՛.  
Մեր փակված վերքը նորից-նոր բանա,

Մագնիսի նման անվերջ ձգելով՝  
Գեթ մոտիկանալ թույլ չտա բնավ...

— Դե ե՛կ, Վարդապե՞տ,  
Ու մի՛ խենթանա...

Ի՞նչ կա ավելի ծանր ու խղճալի,  
Քան թե Կոկիծը որդեկորույս մոր:  
Իսկ եթե դա էլ քիչ են համարո՞ւմ  
Եվ սպանվածի դիակը, դիտևա նը,  
Տնկում են թշվառ մոր աչքի առջն՝

Ո՛չ թե մի շաբաթ,  
Այլ ձի՞գ տարիներ...

— Դե՛, եթե մայր ես, եկ մի՛ ցնորվիր...

Մեզ լավ է ծանոթ ծաղրուծանակը այս հոգեխարտիչ,  
Դա ծանոթ է մեզ քանի՛ դար արդեն:  
Մեր հայրենասեր թագավորներին ու հերոսներին  
Այսպես պարսկական դահիճներն են մորթապերծ անում,  
Մեջը լցնելով դարսկան ու չոր խոտ՝

Խրտվիրակ շինում  
Ու բռնի դնում

Մորթապերծվածին պաշտողի առաջ,  
Որ... սքանչանան իրենք իրենցով...

Արարատն — այսպե՞ս — դրել են ահա Երևանի դեմ..,

— Դե ե՛կ, Վարդապե՞տ...

## ԴՈՂԱՆՁ ՑՆՈՐՄԱՆ

Եվ պատկերներից այս ահապարհուր, բայց և իրական,

Նախ ցնորվեցին աչքե՛րը նրա

Եվ ապա մի՛տքը, մի՛տքը տիրական...

Վայրի աղմուկի,

Խող աղաղակի,

Ժխորի տեղակ

Մի գերեզմանվոր լոռություն տիրեց նրա հոգու մեջ.—

Գլուխը նրա,

Որ մի երկնային լուսատու էր ցարդ,

Հյմա փոխարկվեց մի մոլորակի.

Նույնն էր արտաքուստ,

Բայց ինչպե՞ս, ինչպե՞ս, ինչպե՞ս էր նովնը,

Եթե լուսատուն... էլ լո՛կս չէր տալիս...

... Նա չիացըրեց զոհել Վարդանին

Գոռ Ավարայրի ձակատամարտում,

Եվ ինքը զոհվեց.

Ա՛խ, ո՛տ էր գոնե Վարդանի նման:

Մեր խաղ ու տաղի զորավարն ուժեղ

Վախճան ընդունեց՝ որպես նոր Մուշեղ,

Ում վերջին խոսքը նա գիտեր անգիր

Դեռ ձեմարանի առաջին տարուց.

— Բայց իբրև եհաս ինձ մահս վատքար,

Ո՛հ, թէ՛ դիպեալ էր ի վերայ ձիոյ...

Մեր խարդախս բախտից՝

Նա չընկավ մարտում ու ձիու վրա.

Այլ զոհվեց անլուր դավաճանությամբ...

Մեր դժխեն բախտից՝

Նա չիացըրեց իր օպերայում

Թշվառ Անուշին խելացընորել,

Եվ ի՛նքը, ի՛նքը, ի՛նքը ցնորվեց...

Մեր դաժան բախտից՝

Սասնա ծոերին երգել չտված,

Նա ինքը դարձավ նոր Փոքըր Մհեր

Ու դեռ կենդանի, ո՛ղջ-ո՛ղջ զնդանվեց

Հոգեբուժարան-Ագռավաքարում...

... Ով մապապուրծ էր մահից, Վարդանե՛տ,

Քեզ կորցընելու ցավից ահավոր

Աչքերս լիքը լաց ա... մրմնջաց,

Սոանց խոսքերի և անեղանակ

Էրկում եմ, էրկում այրվելով երգեց,

Սակայն... անօգո՛ւտ:

Ով առուփախով, գաղթով էր փրկվել,

Անսորությունից կրկին մոռացած

Հայի անարդար աստըծո հանդեպ

Իր քենը արդար՝

Երկնքին նայեց լուռ պաղատանքով,

Սակայն... ապարդյո՛ւն:

Ինչ եկեղեցի, որ չէր ավիրվել,

Եվ ամեն տաճար,

Որ ժամերգվում էր դեռ հայ աշխարհում,

Պատարագիչի դողդոց շուրթերով

Պահպանիչ ասաց՝ կրանքիդ ի խնդիր,

Սակայն... չփրկե՛ց.

Հայացքոդ կրկին անկենդան մնաց,

Գլուխըդ, որ ցարդ լուսատու էր մի,

Դարձավ մոլորակ՝ պաղած ու անլույս...

## ԴՈՂԱՆՉ ԱՆԱՆՑ ՍՈՒԳԻ

Պուսին մոտիկ, Շիշլի դաշտում,  
Երկու տարի զնդանվեց նա,  
Որին մի ողջ ապդ էր պաշտում:

Բժշկում են...  
Ի՞նչ են բուժում.  
Ուղեղի՝ վերք,  
Մթագնած մի՛տք,  
Որ մնում է թանձըր մուժում...

Ովքեր նրա միտքը պաշտում  
Եվ կորստին դեռ չեն հաջտվում,  
Ուղարկում են նրան Փարիզ:

Փարի՛զ, Փարի՛զ...

Երկու տարի դեռ չի անցել,  
Ինչ նա այդպես քեզ էր գալիս,  
Որ իր ձայնով, սրինգ-փողով,  
Որ իր մոքով, խելքով պայծառ  
Գերեր մի ողջ Համաժողով:

Փարի՛զ, Փարի՛զ...

Հիմա դարձյա՛լ,  
Վերստին է նա քեզ գալիս՝

Ո՛չ երգելու, նվագելու,  
Ո՛չ հիացմունք հավաքելու.  
Նա՝ մարմրող ու վիրավոր՝  
Էլ թև չունի, որ հաղթ սուրա,  
Էլ հուր չունի, որ հուրիուրա...

Ո՛չ «բռավո»,  
Ծափուն «ուռա»,  
Եվ ո՛չ էլ «բիս»:

Փարի՛զ, Փարի՛զ,  
Գալիս է նա, որ մի՛տք մուրա...

Փարի՛զ, Փարի՛զ,  
Եղիր բարի՛,  
Ի սեր աստծո՛ զքա՛ծ եղիր,  
Այս ծուռ ճամփից նրան շեղի՛ր  
Ու քեր շիտակ ճանապարի.  
Այնպե՛ս արա, որ նա դարձյալ  
Քեզ ողողի մտքով պայծառ,  
Որ երգերով սիրտդ գառի,  
Նվագի փող,  
Ծորող պարի...

Բայց խեղճ Փարիզն ի՞նչ դեղ ձարի,  
Խնչպե՞ս փրկի քո հանձարին,  
Թե մեկնելու, նավի վրա,  
Աշակերտներն իր սիրասուն  
Ծաղկեփունչ են տալիս նրան,  
Խսկ նա... նրանց բառ չի ասում,  
Ոչ էլ ժայռում բարի՛-բարի՛,  
Խսկ նա... փունջը չի հոտոտում,

Այլ— անտարբեր—ծովն է նետում  
Պաղ հայցքը՝ սար ու քարին...

... Տարվա հետքով սողաց տարին,—  
Բուժում չկա՝ քո հանձարին...

Տարվա հետքով տարին գնաց,—  
Եվ խապերը մեր իինավուրց,  
Որոնց ամբողջ տաժանակիր քսան տարի  
Նա մայրական իր ջանքերով  
Ախտնշորեն ոտքի հանած՝  
Քայլելու էր վարժեցըրել,  
Դրել ուղիղ ճանապարհի,—  
Նոյն խապերը հիմա դարձալ  
Քար կտրեցին ու կոնդացան.  
Ինչ արված էր երկար ու ձիգ քսան տարում  
Չար մի հողմով ցրիվ եկավ քար ու սարում...

Տարիների ոտնահետքով  
Նոր տարիներ վրա հասան.  
Մեկ-տասնըմեկ՝ դարձան քսա՞ն:

Տարվա հետքով տարին գնաց,  
Իսկ նա՝ մեռած անթաղ մնաց:  
Քսա՞ն տարի անթաղ մնաց  
Մի սո՞ւրբ դիմակ,  
Սուրբ ու միա՞կ...

Տարվա շունչը տարվա հնքին՝  
Մեկը մեկից սկիզբ առան,  
Իսկ նա՝ նման Զմրուխտ հավքին,  
Նման հավքին մեր Հապարան՝  
Ո՛չ գնդակված,  
Ո՛չ էլ մորթված,

Այլ ձակատի բուր հարվածից ուշակորուս,  
Քսան տարի լուր թպրտաց՝  
Գոնե...

Գոնե չթողնելով հնարք ու հուս  
Փարատելու մեր ցավը խոր,  
Ավարտելու կոծն ու սուզը,  
Մեր հոգու մեջ չողացնելու  
Սանդեր փորող աշուասուքը...

Քսա՞ն տարի մեռած-անթաղ,  
Ե՛վ մահացած, և՛ ողջանդամ  
Մի սո՞ւրբ դիմակ,  
Սուրբ ու միա՞կ...

## ԱՀԱԳՆԱՑՈՂԱՐՁԱԳԱՆՔ

### ԴՈՂԱՆՉՎԵՐԱԾՆՄԱՆ

Այս, Վարդապետ,  
Մեռած դանդաղ,  
Մեռած թեպետ,  
Բայց և անթաղ,  
Բայց և անփուտ մեր սրբություն.

Կարելի էր յաթաղանով,  
Զարդով,  
Խարտով,  
Դավով-անդավ  
Բնաջնջել մի ո՞չ անտառ,—  
Անմարդկային մի լրբությո՞ւն,—  
Եվ այդ մտքից վարհուրելի  
Շխենթանալ չէ՞ր կարելի:

Սակայն չարի խոփը դիաբավ ժեռ քարերի,  
Եվ ժանգոտած խոփը նրա չդիմացավ:

Դու՝ փարիպյան Վիլ-Ժուիֆում,  
Այդ չիմացար...

Դու չիմացար, որ աշխարհով  
Կայծակեցին ահեղ շանթեր,

Եվ ապօք քո՝ որիք ու անտեր,

Բվի՛կ-բվի՛կ,

Ծվա՛տ-ծվա՛տ,

Լքված աստծուց և մարդկանցից,

Զրկված անգամ հուսո գանձից,

Ի դեմս ամեն բարեկամի

Լոկ տեսնելով ծախու կավատ,

Մինչև մրուր դատարկելով

Վկատության զավ ու զավաբ,—

Նույն ապօք քո հանկարծ-մեկեն

Վերստացավ նոր մի հավատ.

Հոգեվարքի իր մահճում

Հոգեդարձը վերածնվեց,

Մի նոր կյանքի հուսով պինվեց...

Իմ ժողովո՛ւրդ հնամենի,

Ինչպե՞ս գտնել դեռ չստեղծված

Բառն այն, որով հնար լինի

Քեզ ճշտորեն անվանելու:

Դու՝

Պատմության մոլք առեղծված,

Դու՝

Մարդկության բարդ հանելուկ,

Տեղն ու տեղդ՝ վարմանալի...

Քեզ որտեղի՞ց այն բանալին,

Որով կյանքի դուռն ես բացել,

Այն դարավոր

Հաստ դուռը, որ

Ճակատի դեմ քո լուսավոր

Փակվել է միշտ, շրիւկացել:

Քեզ դարեդար հալածելով,

Խուժդուժորեն սրածելով՝

Սպանեցին,  
Խաչ հանեցին,  
Սակայն մնաց դեռ հայությունն.  
Առանք կրկին մենք հարություն,  
Եվ ո՞չ իբրև մի նոր Հիսուս,  
Այլ... հայի՛ պես:  
  
Դարեր ի վեր վառում են մեզ,  
Այրում են մեզ,  
Դարձնում մոխիր  
Հնոցի մեջ խուլ չարության,  
Խարովսի մեջ քեն ու ոխի,  
Ու տաք մոխիրն անգամ թրջո՞ւմ...  
Սակայն ոգին մեր հայության  
Թե այրվեց էլ, ո՞չ, չի՛ կորչում.  
Եթե է ճարում նո՞ր հարության,  
Եվ... ո՞չ որպես փյունիկ թըռչուն.  
Այլ... հայի՛ պես...  
Սակայն ոգին մեր հայության  
Ավելի ճիշտ՝ չի՛ մոխրանում,—  
Միևնույնն է, թե չարության  
Հուրը թեծ է կամ մարմանդ է.  
Չի մոխրանում,  
Այլ ճախր անում  
Սավառնում է ոգին հայի,  
Եվ... ո՞չ իբրև հեքիաթային  
Կախարդական սալամանդըր,  
Այլ... ի՛ր նման՝  
Հայ ոգո՞ւ պես...  
  
Դիակներով ձորն է լցվում,  
Դիակներով վիհն է խցվում,  
Արյուն հագնում սարավանդը...  
Հարվածում են մեզ մահացու,

Վերքի վրա նոր վերք բացում...  
Զարդեր հայտնի, դավեր ծածուկ,  
Կործանումներ գունակ-գունակ...  
Դժինեմ բախտի մատյանի մեջ  
Սպառումի հազա՛ր այունակ...  
Իսկ մենք՝ տոկուն ու կենսունակ,  
Ինչի՞ նման,— դե եկ ասա...  
Իսկ մենք՝ տոկուն ու կենսունակ  
Հենց... որպես հա՛յ,  
Հենց... որպես հայ...  
  
Արցունքն՝ աչքին,  
Վերքը՝ կրծքին,  
Պատա՛ռ-պատա՛ռ, ծվատ թեպետ,  
Քո ժողովուրդը, Վարդապե՛տ,  
Զնդանումիդ քսան տարում  
Զանաց ասել մնաս բարն  
Ամեն բանտի ու զնդանի,  
Մտավ հվոր մի ընտանիք,  
Ուր հույսը նույն  
Դարձել էր սյուն,  
Նույն երազը՝ ծածկող տանիք...

Մեր կեղեքման ու մեր տանջման,  
Մեր վերահաս բնաշնչման  
Ահեղ ստքից ցնորվելով,  
Դու չիմացար, որ հորվելով՝  
Հանձնվելով խովար հողին,  
Չփտեցինք մենք հողի տակ,  
Այլ վազի պես մեր խաղողի,  
Երբ որ հասավ գարունը տաք,  
Հողի մեջ էլ մեզ ուղղեցինք,  
Գարնան շնչով ընձյուղեցինք  
Ու կանգնեցինք՝ նորի՛ց շիտակ:

Իսկ գարո՞ւն էր,  
Ի՞նչ գարուն էր...

Եվ դարավոր մեր արյունը  
Պատանորեն տաք պղպջաց,  
Հին ավիշը, նոր ավյունը  
Կրկին եռաց մեր բնի մեջ,  
Անցավ շարդիված ձյուղի միջով,—  
Ու մեր ծերուկ հոգին ձաց  
Նորածինի վնգուն ձիչով:

Չիացանք փրկված քիչով.  
Թե պաղ էինք, զուտ հալվեցինք  
Ու շատացանք, ծավալվեցինք.  
Եվ ուր կուզես՝ հայ մի անուն,  
Որ մեր պատիվն է պահպանում,  
Մեր մեծությունն է վեր հանում,  
Դոներ բանում պանծացումի,  
Հեռու տանում համբավը մեր...

Երեկ դեռ որբ ու սովագար՝  
Մենք շողացինք անբավ գանձով.  
Ծովից կրկված, մի ազգ անծով՝  
Եվ տվեցինք մենք... ծովակալ...

Արդեն վաղուց, վաղո՞ւց թեպետ  
Կորցըրած զորք, սպարապետ,  
Ուտնահարված՝ բանակներից,  
Ապրած գրոհ, ջարդ ու արշավ,  
Եվ... քո ավեր տնակներից  
Ծնունդ առան բյուր զորապետ,  
Գեներալներ ու հայ... մարշալ...

Դարեր ի վեր  
Մարմինը մեր,  
Մարմինը մեր խեղճ ու տոկուն  
Հիսուսի պես չարչարեցին,

Բայց քիչ էր դա.  
Հասան հոգուն,  
Նաև հոգուց մենք Վրկելու  
Մի անհոգի ձար ձարեցին.  
— Ո՛չ մի երգիչ՝ մենք երգելու,  
Մեր մահն անգամ ողբերգելու:

Ո՛չ մի երգիչ...  
Եվ չարեցի՞ն:  
Այն էլ ինչպե՞ս, ի՞նչ արեցին...  
Բայց—ո՞վ հրաշք— պետք չէր մի դար,  
Ոչ էլ կես դար, որպեսսի մենք  
Ծնունդ տախինք մեր... Զարթնցին,  
Որ... չծնվեց մորից արդար  
Եվ ուժ չառավ նրա կաթից,  
Այլ... դոլս թռավ մեր հեքիաթից՝  
Իրըն եղբայր մի արժանի  
Սիհամանթո-Վարուժանի,  
Կրտսեր եղբայր, կրտսեր զավակ,  
Որ պիտի գա և այն անի,  
Ինչ չարեցին միջնեկ-ավագ...

Մենք՝ մատնըված ջարդ ու գաղթի,  
Անբախտներից անբախտ՝ կյանքում,  
Բազմաստեղյան հոծ երկնքում  
Մենք՝ զուրկ նույնիսկ աստոից բախտի,—  
Հիմա փրկված չար ու անզութ  
Մամուս-խորշակ-ուրագանից,  
Ողջ աշխարհին երեկ անհայտ  
Մեր երկնասնը Բյուրականից  
Ոչ թե անհայտ կամ դեռ հեռու

Աստղի ծինն ենք ավդարարում,  
Այլ գտնում հավարաբյուր  
Աստեղաբուլ-  
Աստղասըփյուռ,—  
Եվ գիտության հոգնած դեմքով  
Անց է կենում թարմ մի զեփյուռ...  
  
Նույն երկնի տակ, նորից այնտեղ՝  
Արագածի ձնոտ լանջին,  
Ուր չէր վառվել Լուսավորչի  
Առասպեյյա ոչ մի կանթեղ,  
Վերին կամքով ոչ արարչի,  
Այլ հայորդու  
Մտքով արթուն  
Փնջում են արդ,  
Դառնում կանթեղ  
Կոսմիկական ձառագայթներ...

Դու մեր անթաղ, բայց և անփուռ,  
Տրոփասիրու մեր սուրբ մուսիա,  
Թեկուզ մարած, բայց վառվելիք  
Մեր հոգու շահ հավարմովյա,  
Դու չիմացար և որտեղի՞ց իմանայիր,  
Թե Մասիսի սուրբ փեշերից  
Մինչն լանջը Հիմալայի,  
Անունովդ հայարտացող մի կվարտետ՝  
Զեկ յուրովի կրկնելով,  
Քո հարկադիր կաշկանդումն է, որ կավարտեր՝  
Սկիզբ տալով քո լեռահաս արձակ կյանքին,  
Հետպհետե ահագնացող անլոելի արձագանքին՝  
Երկրից երկիր,  
Սրտերից սիրտ,  
Ծուրթերից շուրթ՝

Արևաշատ հայրենիքիդ երկնքից լուրթ  
Մինչն կարպատ ու լանջերը Հիմալայի...

Դու՝ երավկոտ, և չիմացար,  
Ա՛խ, որտեղի՞ց իմանայիր.  
Որ այն, ինչ քո ազգամեծար  
Ու մեծ հոգով դո՛ւ կամեցար՝  
Որպես երա՛կ, մտքի շղո՛ւնչ,  
Պիտի մի օր ստանա շո՛ւնչ,  
Ստանա ձև՛...

Դու չիմացար,  
Եվ որտեղի՞ց իմանայիր:  
  
Մինչդեռ հիմա, հիմա... Նայի՛ր...

## ԴՈՂԱՆՉ ՄԱՐՄՆԱՎՈՐՎԱԾ ԵՐԱՉԻ

Քանի՛ աչիկներ, մանչուկնե՛ր քանի,  
Քանի՛ նորատի, պարման-պատանի՛  
Աչքները սևաթ, դեմքները սուտակ,  
Չերքներին սրիսգ, շեփոր ու ջութակ,  
Դպրոցից գալիս-դպրոց են գնում  
Պայուսակներում ու թևերի տակ  
Քո երգ ու տաղի պրակները տաք...

— Դե ե՛կ, Վարդապե՛տ, եկ ու հավատա՛:

Որպես նորորակ հոյակապ տաճար  
Եվ մեր պատության ու մեր քերթության  
Օչախ մի անցեց ու սուրբ մի կաճառ,  
Մատենադարա՛նն ահա, Խազագե՛տ,  
Մի շենք փառակապի ու հրաշակերտ,  
Ամենապարփակ մի շումարտան,  
Որտեղ պահվում է հունձքը մեր հոգու՝  
Մեարայան տառի կնիքը վրան,  
Եվ նրա կողքին՝ մեկ այլ շինություն  
Անցուդարձողի ուշք ու միտք գերող.  
Հայոց Առաջի՛ն Կոնսերվատորիան՝  
Քո ամենասուրբ անունը կրող...

— Դե ե՛կ, Վարդապե՛տ, ու խոսքեր ձարիր...

Մկրտված ոգով քո սուրբ հանձարի՝  
Քանի՛ երգչուիի, քանի՛ հայ երգիչ,

Եվ քանի՛-քանի՛ հայ երաժիշտներ՝  
Քոյասիրահար ու քեկապաշտներ,  
Ելած քո ապահի բեղուն ընդերքից՝  
Բեմերի վրա համայն աշխարհի

Մեր տաղ ու պարի  
Թուչանքն են ցրում,  
Բուրմունքը փոռում  
Մեր բան ու բառի:

— Դե ե՛կ, Վարդապե՛տ, մի՛ ժպտա բարի...

Մեր երգի հունը լայնացընելով,  
Համանվագի շարքեր ծնկով՝  
Ճախրում են Նորքից մինչեւիսկ Նյու-Յորք,  
Սևանից մինչև գոռ Նիագարա  
Քանի՛ երգաստեղծ ու նվազարաբ:  
Ու նրանց ամեն նոր համերգի մեջ,  
Ու նրանց իրե՛նց— և ամենքի՛ մեջ—  
Դո՛ւ ես. հոր նման արյուն ես դարձել,  
Փոխարկվել շղի, նոր ձև ստացել:  
Դո՛ւ ես, Նահապե՛տ, դու ես այն յան-ը,  
Որ հայություն է հաղորդում նրանց  
Խսկույն ճանաչվող հայ պագանվանը.  
Հայկական շունչն ու անտես այն ոգին,  
Որ համակում է նրանց ամենքին,  
Եվ որ աշխարհն է զգում-հասկանում,  
Խնչպես Եվրոպա՛ն, այնպես էլ Ասիա՛ն,  
Այն շունչն ազգային, մշտառկա ոգին,  
Որ կյանքում նո՛ւնպես ունի ազգանուն՝  
Քո՛ անունը սուրբ, քո՛՝ Կոմիտայա՛ն...

— Դե ե՛կ, մահացա՛ծ, ու մի՛ համբառնա,  
Դե արի՛, պանդո՛ւստ, երկիր մի դառնա...

## ԴՈՂԱՆՁ ՎԵՐԱԴԱՐՁԻ

Ու վերադարձա՞վ...

Նրանից առաջ  
Աշխաբահափուռ-մակապուրծ հսկեր,  
Դիպածն էր որոնց չար մահից պահել,  
Օրուեսպի հետո տա լաց ու հառաչ  
Եվ— ի տրիտուր—իր հերթին տանջի՛,—  
Աշխարհասփուռ-մակապուրծ հայեր,  
Երկին Խայրենի հողն էին դառնում,  
Մարած շեների կրակը խառնում,  
Որ ծովսը փնչի,  
Երդիկը շնչի  
Սեզ Մասիսների աչքի հանդիման,  
Փեշերի վրա Արագածների՝  
Ի հանգաւույցուն բյուր ընկածների:

Վերադառնում էր, գալիս էր հիմա  
Նա՝ անթաղ զոհը նույն առուփախի,  
Խելաբորբռքը նույն սար ու պաղի,  
Մեր պար ու խաղի,  
Մեր երգ ու տաղի  
Այն միակ հռչակը և ապագննը,  
Մեր հինն ու նորը իրար շաղկապող  
Ծիածանակերպ այն ժապավենը,  
Որ հատվեց մի օր դանակով չարի,  
Եվ որին ահա քսա՞ն ձիգ տարի  
Նախ՝ վերափոխման ակնկալիքով,

Եվ ապա՝ տենչով հանգստանալու,  
Սպասում էինք՝  
Սիրով բանալու  
Մեր վերքն՝ սպիտով, ներկան՝ գալիքով.  
— Գալուստի՛ մեռնի քո կարուտ յարը,  
Ախազե՛ր ջան, արի՛, դե արի երթա՛նք...

Նա՝  
Հեռագնաց մեր կարոտյալը,  
Նա՝  
Մինուճարը, զավակը մեր թանկ,  
Նա՝  
Հեզ պանդուիտը մեր քսանամյա,  
Վերադառնում էր, գալիս էր հիմա.  
— ... Քո գաղո՛ւն մեռնեմ,  
... Կարո՞ւրս առնեմ...

Սև էր գնացել՝ բեղ-մորուքը սև,  
Վարդապետական սև սքեմ հազած:  
Սև էր գնացել՝ եկավ ճերմակած...  
— Ա՛խ, շատը կուլ տամ, գոնե քի՛չն ասեմ,  
Անաստվա՛ծ աստված, բա քո ինչն ասեմ...

Գնացել էր նա,  
Հիմա բերեցին.  
Գնաց՝ սեփական ուռերի վրա,  
Իսկ հիմա նրան՝  
Մնը տաղերեցին  
Սիա բերեցին... ձեռքերի՛ վրա...  
— Վա՛խ, մերդ մեռնի,  
Ծաղկաթափ նոնի...

Գնաց այն պահին,  
Երբ ահի՛,  
Մահի՛

Ծունչն էր մոլեգնում որպես չար խորշակ,  
Երբ կու էր գնում ողջ ցեղը հայի,  
Ու դեռ չէր փակվել մի գազանային  
Մարդակերական անկուշտ ախորժակ,—  
Եվ հիմա հեռվից դառնում էր նա տուն,  
Մի տուն,  
Որ փրկված ամենի հողմից՝  
Շինվել էր կրկին և ամեն կողմից  
Խաղողի վազով երեսն էր պատում:  
— Գարուն է, արի՝,  
Վա՞խ, քեզ ի՞նչ արին...

Ու վերադարձավ հողն իր հայրենի,  
Որին առհավետ կորցըրած կարծեց,  
Եվ հենց ա՛յդ, հենց ա՛յդ միտքը վայրենի  
Որդի պես նրա ուղեղը կրծեց...

Ու վերադարձավ Արարատներին,  
Արագածներին իր քառակատար,  
Իր հող ու ջրին՝ անարատներին,  
Իր տաճարներին ու պալատներին,  
Իր արտին, այգուն և արոտներին,—  
Անցյալ,  
Ապաօնի

Ու հարակատար  
Բոլորանվեր ա՛յն կարոտներին,  
Որ մսում էին հավետ անվտար,  
Որ կիսվել էին քանիի՞նգ տարի  
Իր մթար սրտում,  
Վթար մտքի մեջ՝  
Ա՛յն դժբախտ օրից, երբ Մայր տաճարի  
Գավիթը թողած, ցաված ու խոռվ  
Նա գնաց Պոլիս  
Եվ ապա... Փարիս...

— Ա՞ս, գալրդ լիներ,  
Գնա՞լ չլիներ...

Ու վերադարձավ մեր սուրբ հեռական...

Ահավոր մտքից խնքը խելագար՝  
Զգիտեր թեկուզ, որ քառան տարում  
Վւար դուշնջումը իր վնգուն վանգի  
Արձագանքել էր խնլագար թափով՝  
Լացով հիացման,  
Օրոտուն ծափով  
Ելել էր, հորդել և նոր մի ափով  
Հասել, խառնըվել ուրիշ հոսանքի՝  
— Ումո՞ւդ ջան, նանին  
Քո ցավը տանի...

Ու վերադարձավ,  
Որ էլ չգնա՞՝,  
Որ մրած հոգին նորից տաքանս՝  
Ժողովրդական միրո տաք օդով,  
Որ, չխմանալով, դառնա սեզ կոթող՝  
Ողորկ գրանիտ ու բրոնզ հազած,  
Եվ այնտեղ... նրա հերքը ձերմակած  
Առաջիկա նման— ընդմիշտ—մզանա,  
Հայացքի մուժը այնտեղ չքանա,  
Աչքերը փայլեն իրենց հին ցուքով

Ու նորից ցրեն  
Ու փոնն  
Չորս կողմ  
Մարդեղացումը աստվածայնության,  
Եվ սուրբ բերանի մսջախաղ-երգով,  
Չարժումով ձեռքի  
Կրկին տա դասեր՝  
Դասեր մեներգի՝,

Բազմաձայնությա՞ն...

— Աչքերը՝ պայծառ,  
Բերանը՝ տաճար...

Նա վերադարձավ.  
Եվ ո՞ղջ մի երկիր,  
Ժողովուրդ մի ողջ սրտով վշտառու  
Ելավ հերթ ի հերթ,  
Եկավ շար ի շար՝  
Իր խաղ ու պարի, իր տաղ ու երգի  
Կախարդիչ մոգին հրաժեշտ տալու...  
— Իմ կանաչ արև,  
Ի՞նչ մնաս բարև...

## ԴՈՂԱՆՁ ՀՐԱԺԵԾԻ

Արագածի, Արարատի  
Հայացքի դեմ սգավոր,  
Սև տուֆակերտ մի պայտի:  
Տրտմահանդես դակիճառ  
Պառկած էր նա՝  
Որպես անբազ, բայց հիբավի բագավոր,  
Որ ունի գահ,  
Բայց ոչ երբեք իր սեգ գահից վարիչում:

Եվ գահապուրկ մի ժողովուրդ,  
Որ, իբր արդար հատուցում  
Հեղափոխել մի ողջ աշխարհ  
Ու չարդել էր իին գահեր,  
Հիւն ուրիշ մի արքայի.—  
Ծով հարգանք է մատուցում.—  
Ու փղծուկն են հավիլ պահել  
Կյև, տղամարդ, ծեր, շահել։  
Քարացել են ակնածանքից  
Սև երիվով դրոշներ,  
Հայ պետական դրոշները,  
Լսո՞ւմ ես դու, Վարդապե՛տ։  
Եվ մի ամբողջ մայրաքաղաք,  
Մայրաքաղաք, ո՞չ գաղութ,  
Իր հոգու մեջ— վերջի՞ն անգամ—  
Աշխատում է դրոշմել  
Կերպարանքը քո սիրելի,

Քո դեմքը թանկ, որ թեպետ  
Երգերիդ պէս չի շոշողում,  
Որ ցոլուն չէ ու ջղուտ,  
Բայց գուևատ է ո՞չ որբի պէս,  
Այլ մի արդար սրբի՝ պէս...

Ու կանգնում են պատվո պահակ

Մասիս,  
Սիփան,  
Արագած՝

Ճերմակահեր գլուխն իրենց աճյունիդ դեմ վար հակած...

Ու կանգնում են պատվո պահակ

Հայոց պետեր,  
Վարպետներ,  
Հայ աշխարհի մեծերն ասեն,  
Ամեն երեց ու ավագ...

Եվ քեզ ծնած մի ժողովուրդ՝

Հիմա դարձած քեզ զավակ,

Հրաժեշտի խոր տրտությամբ միաժողով ու հավաք,

Կրված ցավից հայրակորուս,

Կիւլված վշտի խոր տապից՝

Գալիս է լուս, գալիս հերթով,

Որ հոգու մեջ խոր տպի

Մասունքներիդ սրբավան տեսքն ու դեմքը քո,

Դեմքը սուրբ..

## ԴՈՂԱՆՁ ԹԱՂՄԱՆ ԵՎ ՀԱՐՈՒԹՅԱՆ

Թաղման թափորն անվերջ ձգվեց

Արովյանից մինչ Պանթեոն,

Որտեղ արդեն, ամենից վաղ,

Հրապրանն էր նշան կոծում՝

Եղերամոր եղանակով:

Եվ մարդկային ծովի վրա հանդարտ ձուձեց

Պատկաներով առագաստված մի սուրբ նավակ...

Դարձել էին հուղարկավոր

Բազմահավաք երևանցիք,

Եվ.. ո՞չ միայն վերջին ու նոր մեր ոստանի

Բնակիչներն արտասպաթոր,

Եվ ո՞չ միայն մի ժողովուրդ,

Որ ապրում էր իր պետության սահմաններում,

Եվ ո՞չ միայն մի ժողովուրդ,

Որ փոված էր ողջ աշխարհի լայնքի վրա,

Այլև.. բոլոր մեր զոհե՛րը միլիոնավոր,

Մեր բյուրավոր մեռելնե՛րը,

Որ մինչմիսկ չարժանացան... թաղման ծեսի, —

Բոլո՛ր նրանք, որոնց թախտից ահազարիուր

Կորավ և առ՝

Սա՝ զոհը մեր ամենամե՛ծ...

Հայաստանյան լեռներն էին հուլարկավոր  
Եվ գերեվար լեռները մեր՝ Կարսից-Ձեյթուն...  
Բուրփառում էր հայրենաշունչ բուրիչ քամին...

Զանգակաձայն իր դուստրերից  
Նա՛, որ ուներ Հայկից առած անուշ անուն,  
Շիրիմ կոչված այն փոսի մոտ,  
Որ հիրավի պիտի կոչվեր նոր Խոր Վիրապ,  
Անմարդկային լուսթան մեջ սկիզբ տվեց  
Պահիպատշաճ Զինար ես-ին.

— Կեռանա՞լ մի...

Ու կեռացան-խոնարհվեցին բյուր գլուխներ...  
Արցունք կաթեց պասկներին,  
Լսվեց փղձուկ համատարած՝  
Իբրև երգի մի յուրատիպ նվազակցում...  
Եվ չեր ճարպի բոլորի մեջ մի անձ գոնե,  
Որ ակամա և մեկուսի չմտածեր.

— «Չի՛ կեռանա».

Վկան, նաև առհավատշան՝  
Արարատն էր՝ երկնածիգը,  
Արագածն էր՝  
Իր չորս անկոր կատարներու,  
Ինչպես նաև այս երգը նույն,  
Որ հայցում էր.  
— ... Հեռանա՞լ մի:

Հեռանում էր:

Բայց հեռանում  
Սիհավասիկ այս իրիկվա արևի պես,  
Որ բնավ էլ մայր չի մտնում,  
Այլ իր լույսով ողողելու  
Ուրիշ ու նոր կողմեր գտնում:

Հեռանում էր:

Բայց հեռանում, որ մոտիկից հեռանալով՝  
Հեռուներում լայն ծավալվի ու տարածվի,  
Որ կիսատը նոր լրացվի  
Եվ տարածված ու լրացված՝  
Երբայց չմոռացվի:  
Եվ իսկուր էր երգը խընդրում.  
— Սոռանա՞լ մի...

... Երբ սկսեց աճյունն իշնել  
Շիրիմ կոչված այն փոսի մեջ,  
Որ հիրավի պիտի կոչվեր նոր Խոր Վիրապ,  
Նույն այդ պահին հայ երկնքից  
Հանկարծակի անձրև՝ տեղաց.  
Զարմանալի կուգաղիպոնմ,  
Թե՛ իսկապես երկինքն անգամ

Ողբում էր թեկ՝  
Խաղաղ՝ դ-տրտոն և հանգըստարա՛ր իր անձրևով...

... Երբ սկսեց աճյունն իշնել  
Շիրիմ կոչված այն փոսի մեջ,  
Որ հիրավի պիտի կոչվեր նոր Խոր Վիրապ,  
Այդ փայրկյանին ո՞վ չլսեց,  
Որ բովանդակ աշխարհով մեկ  
Փոված բրւոր եկեղեցիք հայահավատ  
Իրենց բոլոր զանգակներով ու զանգերով  
Դեպի երկինք դողանչեցին.

— Դռներըդ բա՛ց...

Եվ հայկական տաճարների բյուր բեմերից  
Կոմիտասյան Պատարագ-ով  
Ժամերգեցին թե՛կ, Կոմիտա՛ս:  
— Երբեմն էի լոյս, և այժըն  
Խալար եմ և սովեր մահու...

Ո՛չ, այս անգամ սխալվեցի՞ր, պատարագի՞չ,  
Նա լուս էր վառ ու լուս է արդ,  
Ու կմնա միշտ լուս զվարք,  
Լուս՝ աչքերում հայ մանուկի,  
Լուս՝ մտքի մեջ հայ պարմանու,  
Հայ հարսների պտղած ծոցում,  
Հայ թռոնօրոր նանիների  
Ինքնամոռաց ժայիտի մեջ,—  
Հայ այրերի ու հայ կանանց  
Չերս սրտերում սիրատըրովի:

Քեզ, Վարդապե՞տ,  
Անփուտ հողին ի պահ տալիս  
Իզո՞ւր էին պատարագում թաղման երգով.  
— Ի վերինըն Երուսաղեմ...

Ո՛չ թե թաղման երգն էր պատշաճ,  
Այլ հարության վառ մեղեդի՞ն.  
— Փառք ի բարձո՞ւնս...  
Օրինեա՞լ ես դու...

Օրինյա՞լ ես դու,  
Եվ չես թաղվում ու հող դառնում,  
Այլ թաղվելիս հարությո՞ւն ես կրկին առնում...  
— Օրինեա՞լ ես դու,  
Գա՞ռն աստուծոյ...

Ա՛խ, գա՞ռն արդար, որ զոհ գնաց  
Եվ անդանա՞կ զոհվեց չարին՝  
Արհավիրքի այն սև տարին,  
Երբ հայ երկրում հայ չմնաց...

— Են ի բարձունս... Էառ աւար  
Բաշխեալ պարզնս... որդւոց մարդկան...

Պարզն բաշխեց  
Որդիներին իր տարաբախտ ժողովրդի  
Եվ... մարդկությա՞ն:

Պարզն բաշխեց  
Աստծո՞ նման՝ շոայլորե՞ն,  
Եվ բաշխելով՝ հարստացա՞վ...  
— Գովե՞մք զքեզ,  
Բարեբանե՞մք...

Բայց դրվատման ի՞նչ խոսքերով  
Բարեբանենք և քեզ գովենք,  
Թե աղքատ է հանկարծ թվում  
Բառարանը մեր հայկապան:  
Ի՞նչ խոսքերով բարեբանենք  
Քե՞զ, Վարդապե՞տ...

Դո՞ւ—Վարդապե՞տ:  
Դու Ամենայն Հայոց Երգի Վեհավառն ես,  
Դու՝ մեր Երգի Մեսրոպ Մաշտոց,  
Գիրն ու տառն ես Հայոց Երգի:

Հայոց Երգի  
Անձիր Իերկի  
Ե՛վ ակոսն ու խորունկ առն ես,  
Ե՛վ մատնընտիր սերմը նրա,  
Ե՛վ խոստումը գալիք բերքի...

Եվ ծիրանի մեր այն ծառն ես,  
Որ խնչքան էլ ճղակոտոր՝

Ծտկըվել է և բար տվել,  
Ու... մեր դարդը իրար տվել...

Եվ հայրենի այն ծիծառը,  
Որ հավիտյան բույն է դրել  
Մեր հոգու մեջ,  
Մեր կիսավեր ու դեռ կանգուն տաճարների  
Ու մեր երկնի գմբեթի տակ...

Դու՝ մեր տավիղ,  
Եվ քո լարը  
Մինչև անզամ և հատվելիս  
Հայերեն է նորից ձնգում:

Դու՝ մեր սրտի ձախալարը,  
Մինչև անզամ վհատվելիս  
Հայերեն ես դարձյալ տնօքում...

Դու ես քարը  
Եվ սրբատաշ մեր պատշարը.  
Հացը օրվա  
Եվ նեղ ժամի մեր պաշարը.  
Մեր փակ հոգին, բաց աշխարհը,  
Սրբագրոծված մեր նշխարը.  
Եվ մեր ճարը՝  
Օտարամուտ ախտի դիմաց.  
Խնկածավալ մեր տաճարը՝  
Օտարահոտ աղտի դիմաց.  
Վերադարձի մեր պատճառը՝  
Մեր հարկադիր գաղթի դիմաց.  
Համահավաք մեր հանճարը՝  
Ազգասըմիուր բախտի դիմաց...

Դու մեր հաստատ Մասիս սարը՝  
Վստահեկի թիկունքն ես մեր,  
Մեր երգերի Ծովասարը  
Ու բյուրական ակունքն ես մեր,  
Մեր արնոտված հավքի լեզուն,  
Մեր կարոտած ֆիդան յարը,  
Մեր լեփլեցուն հոգիների ձայնատարը,  
Մեր երգերի խա՛վը-նոտա՛ն-ձայնատա՛ռը,  
Ձայնասըմիուր կենդանի  
Ու ձայների թանգարա՛նը,—  
Մեր հայկական երգարա՛նը...

Արտը մեպնից՝ դու ես մաճկալ,  
Հնարդը մեպնից՝ ցորենը դու,  
Հարթը մեպնից՝ կատար դու սեզ.  
Լուրթը մեպնից՝ երկինքը դու,  
Շուրթը մեպնից՝ դու համբույրը,  
Ցուրտը մեպնից՝ իսկ դու՝ կրակ,  
Իսկ դու՝ օշախ,  
Իսկ դու՝ թոնիր...

Եվ մեպանից արդ ընդունիր  
Երախտիքի այս խաչը՛ռը,  
Այս խաչը՛ռը՝ քո՛ իսկ հերկի:

Ընդունիր դո՛ւ, դո՛ւ՝ մեր երգի  
Մշտահնչուն նվազարան.  
Ընդունիր դո՛ւ՝ մեր ցաքուցիր  
Մասունքների հավաքարա՛ր.  
Դու՝ խավերի մեր քերական,  
Դու՝ հոգնոր մեր շարական.  
Դու՝ սրբապան մի ավապան,

Որ մեր հոգին ախտահանեց,  
 Դու՝ բիբլիական մի գավազան,  
 Որ ուր դիպավ՝ աղբյուր հանեց,  
 Դու մեր կարոտ ու մեր մորմոք,  
     Մեր տաղի քուրմ,  
     Մեր խաղի մոզ,  
 Մեր մշտահունչ ու մշտարթուն.  
 Անլոելի զանգակատո՛ւն...

11. IX. 57—28. XI. 58

Սոսկվա

# ԵՐԱՉԱՅՆ ՊԱՏԱՐԱԳ



**Երկնքնից առկախ մի լեռնաէղպի՝  
Հայաստան աշխարհ:**

Երկնքից առկախ այդ լեռնակղուու ուրիշ կենտրոնում  
երկու զանգ հսկա և անձեռագործ:  
Եվ այնքան հսկա, այնքան վիթխարի,  
որ չէին կարող որևէ կերպոց ոչ մի կերպ կախվել,  
ուստի պարզապես կործված են հողին:

Անուն՝ Արարատ  
կամ  
Միս ու Մասիս:

Նրանց ռումբածն կույզ լեզվակները խրված են հողում  
և, խարսխի պես, հանում են մինչ հրահեղուկի մթին հատակը:  
Ու երբ գործում են այդ լեզվակները՝  
երկրաշարժախն բոլոր սարքերը  
իրենց տագնապն են արձանագըրում  
լրագըրերի գունատ երեսին՝  
սև-սև տառերով...  
Խսկ ով ունկ ունի,  
հավատո բլթակ՝  
լա լսում է միջու և նրանց ձայնը,  
դադանշը նրանց:

Եվ ե՞ս չեմ, ոչ էլ դո՞ւք եք դողանջում.  
Միսն ու Մասիսն են դողանջում անվե՛րջ-անդադա՛ր-անդո՛ւ:  
Գողթան երգերի չափ ու կշռույթով,  
բամբ բամբիոների նվազակցությամբ,  
շարականների ելեջումով պատարագատու՝  
Միսն ու Մասիսն են դողանջում անվե՛րջ-անդադա՛ր-անդո՛ւ.  
ով ունի ականջ,  
բլթակ հավատո՝  
նա լսում է միջու,  
լսում է նրանց զանգը երկնաչու,  
որ թարգմանվում է լոկ երկու բառով՝

**ՈՂԲԱՄ ՄԵՌԵԼՈՅ**

Այս լեռնակղուու լեռքարե՛րն են շաս,  
թե՞ կերպածնված շիրմաքարերը:

Եվ ծառն՞րն են շատ այս լեռնակղուու,  
թէ՞ վեր ծառացած սուրբ խաչքարերը:  
Եվ ավելի չատ անտա՞ն է հատվել,  
թե՞ անսուրբ ձերքով խաչքար է ջարդվել  
դարեր ալեծեծ այս լեռնակղուու...

Սակայն ես այսօր և ամենայն օր  
մշտական վշտով նրա՞նց եմ ողբում,  
ովքեր չունեցան շիրմաքար-շիրիմ,  
ինչպես չունեցան պատանք-պատարագ...

— Ողբամ մեռելո՛ց,  
անթա՛ղ մեռելոց:

Մե՛կ չէին նրանք  
և ո՛չ էլ երկու:  
Նրանք բյո՞ւրք-բյուրո՛ց,  
նրանք՝ ակցք-ակցի նք,

և չվախճանվեց նրանցից ոչ ոք  
իր անկողնու մեջ մահով բնական,  
ո՞չ մանուկ, ո՞չ ծեր,  
ո՞չ կին, և ո՞չ այր...  
Չմեռա՞ն նրանք, այլ սպանվեցի՞ն՝  
լեզեն առ լեզեն,  
փաղանգ առ փաղանգ:  
Չմեռա՞ն նրանք, այլ սպանվեցի՞ն՝  
ո՞չ գոտեմարտում,  
ո՞չ խրամատում,  
այլ իրենց տանը, այգում և արտում,  
իրենց սրտի պես լեցուն ցորենի հորերում իրենց,  
իրենց հոգու չափ խոր-խորհրդայի ձորերում իրենց,—  
մահապարտվեցին հազա՞ր ձևերով,  
ամենքն՝ անխնա,  
ամենքն՝ անխտիր...

— Ողբամ մեռելո՞ց,  
բյո՛ւթք-բյուլո՞ց ողբամ:

Ես ի՞նչ իմանամ, և այդ ո՞վ կասի,  
թե ո՞վ էր արդյոք այն առաջինը,  
ում սպանեցին,  
ա՞յն առաջինը,  
որ ընդամենը դեռ միավոր էր:  
Բայց միավորի կողքին շարվեցին նոր-նոր կրօներ,  
և պրոների թիվն անցավ հնգից ու հասավ վեցի՝  
կես միլիոն  
ու  
մեկ,  
մեկ միլիոն  
ու  
կես,  
և ամենքն՝ անպարտ,  
և ամենքն՝ անմեղ...

— Ողբամ մեռելո՞ց,  
միլիո՞ն մեռելոց:

Ու ջնարակվեց հողը արյունով,  
լրած բերանը՝ սարսափով խոսուն,  
օղը՝ տագնապով անտեղիտալի,  
խկ ահից կապտած երկինքը լեղակ՝  
անխուփ աչքնրի մեւելափայլով...

— Ողբամ մեռելո՞ց,  
կապտա՞ծ մեռելոց:

Զարդված ապրերի ու սրունքների,  
անջատված թաթի ու կրունկների  
չչափարզված ձևերն այլական  
պահանջում էին էվկիդեսական գիտություն մի նոր.  
որ նոր էր միայն սկզբնավորվում  
էվկիդեսների շիրմին պպած  
ահեղ գորշ գայլի մութ ուղեղի մեջ՝  
ի տես սրածվող մի ամբողջ ազգի,  
որ հնամենի իր հողի վրա  
մի պտղունց հողով աչքը փակելու  
բայտից էր կրկվում...

— Ողբամ մեռելո՞ց,  
անհե՞ղ մեռելոց:

Բոլոր բանտերից ազատել էին մարդասպաններին  
և զինել քենով  
ու հրավենով.

— Կեցցե Բարաբբա՞ն...

Եվ լցվել էին բոլոր բանտերը մարգարեներով՝  
խոսքի՝ ու երգի՝,  
մտքի՝ ու ձեռքի՝,  
իո՞ւս ու հավատքի՝ մարգարեներով.  
— <Հիսուսին ի խաչ...

Կախաղաններից ճոճվող սրբերի դուրս ընկած լեզվից

հպարտությունն էր անընդհատ ծորում,  
արհամարիանքն էր շողիքն իր թորում  
մարդկության վրա,  
այն խեղճ ու կրակ-թշվառ մարդկության,  
որ ինքն էր նաև խեղդամահ լինում,  
քանի որ նրա կոկորդում նեղիկ  
մարդկայնությունն էր խրվել-մնացել...

— Ողբամ մեռելո՞ց,  
խեղդված մեռելոց:

Դրենց մինումար ու սրտահատոր դիակի. վրա  
մայրեր-մանուկներ,  
քույրեր-ծերուկներ

կաղկանձում էին, սակայն... անարցո՞նք.  
սպառվել էին նրանց արցունքի պաշարները ողջ,  
ինչպես որ իրենց անբան թշնամու գանձարան-խազնեն:  
Ու եթե հասնում էր մահը ցանկալի,  
իրենց ոսղից վրեժ լուծելուն այլևս անկարող,  
գեթ աստծուց էին վրեժն այդ լուծում  
թքելով դեպի երկինք,  
մի երկինք,

որ աշխատում էր նրանց հետ խոսել  
ստողերի լեզվով խոզ ու համրական.  
— այլևս այդ լեզվուն հասկացո՞ղ չկար...  
որ ասուաներ էր շաղ տայիս հերթով,  
ասես թե պառավ գուշակի նման գարի էր գցում.  
— ո՞վ կհավատար այսքանից հետո...  
որ արշալուսով, հարալեզի պես,  
լիսում էր նրանց կարմիր վերքերի բոցերը.  
— իսո՞ւր...

որ լուսնարուսով ցողում էր նրանց խոցերը.  
— իսո՞ւր...

Հասնում էր մահը՝ ցանկալին միակ,  
և ամուր սեղմած ատամն ատամին,  
մահանում էին՝ բաց ատամներով,  
ատամների տակ վրեժն անկարար...

Եվ Արարատից մինչև Արաֆաթ, Սիհանից—Սինա,  
Սև ծովից—Կարմիր, Կարմիրից—Մեռյալ  
փոլկած-սփոլկած մեռև լներն իրոք  
վրեժ լուծեցին թշնամուց իրենց՝  
արտաշնչելով ժանտա՛խտ, տն՛նդ ու տի՛ֆ...

Եվ երեսից առկախ այս լեռնակղզին  
դարձբեցին այնժամ մի թշվառ... բատրո՞ն,  
ուր կրակը լոկ՝ ողբերգա՛կն այդ կույր,  
խաղաց բազմաթիվ-բազմական դերեր:

Շուխն էր համբարձվում Հիսուսի նման,  
կրակն էր մասում Մուկամէնդի այնա...

Եվ իրից-մոլոյց  
երկնքի կապույտ սպումքը ցամքեց ու ձմռտորվեց  
վաչկաւունների տրեխի նման:  
Ու ձմռտորվեց հողն էլ ներքնում  
իշատակներով,  
ու ձմռտորվեց այն դրամի վես ս.  
որ շպրտում են... պոռնիկի դեմքին:

Եվ երկրի վրա,  
այրվող տներից-շեներից բոլոր,  
ողջ ու կենդանի բյուր կիվողների ձիչի հետ մեկտեղ  
փովեց կառանցանք.՝ ապանի՞ նման:  
Սարսափն էլ երկրի ձայները բոլոր  
հավաքնեց բոլում,  
կախեց մատներից՝  
նվազավարի-խմբավարի պես,  
և անիշրավիած-տարաբախտ երկրի  
ողբերգախաղաց բացօթյա բեմում  
հնչեց մի համե՞րգ,  
մի համանվա՛գ,  
որ մղձավանջն էր՝  
շարումնակելի՞ն...

Զարդեցի՞ն ալսպես՝  
ոչնչի՛ համար  
և  
ամե՞ն ինչի:  
Ոչնչի՛ համար  
և  
ամե՞ն ինչի:

2 000 000 մարդ ի խաչ բարձրացավ,  
2 000 000 խաչ չտնկվեց հողում,  
2 000 000 խաչ տապանաքարին չփորագրվեց,  
քանի... հասարակ տապան-դագաղը  
կարծես թե դարձավ աստծու պես մի բան.  
և մո՞ր չարժանացավ նրան տեսնելու եպակի բախտին...

Ինքը երկիրն էր մի անկափարիչ դագաղ վիթխարի,  
մինչ նրա բոլոր բնակիչները՝ անդագաղ դիեր...

Եվ ահավասիկ ես ասում եմ ձեզ՝  
տատնիրմեկերորդ պատվիրանի պես.

— Ամենից առաջ  
փայտե դագաղի՛ պաշտամունք պիտի ուսենալ կյանքում,  
փայտե դագաղի՛,  
նաև պատանքի՛:  
Դագաղ-պատանքի՛ պաշտամունք պիտի ունենալ, այո՞,  
փամնի եթե չի ճարվում դագաղ,  
ուրեմն արհավիրք-աղետ է ահեղ,  
վասնի եթե դին չի պատանվում,  
ուրեմն ամեհի-ահարկու օրիաս,  
մահ-տարաժամ է,  
եղեռն ու նախմիր...

Եվ դո՞ւ չես ասում, ոչ էլ դո՞ւք,  
այլ ե՞ս,  
ես՝ Միս-Մասիսը,  
այս ես եմ ասում

անդր՛կ-անդադա՛ր-անվե՛րջ զնգացող իմ անքուն զանգով:  
Գողթան երգերի չափով ահազդու  
բամբ բամբիոների հնչումով խրոխտ  
Միսն ու Մասիսն են դողանջում անվե՛րջ-անդադա՛ր-անդո՛ւկ...  
ով ականջ ունի,  
հավատո բլանկ՝  
նա լսում է միշտ,  
լսում է նրանց հանգերգն ահազդու,  
որ թարգմանվում է նույնաես կույզ բառով.

### ԲԵԿԱՆԵՄ ԾԱՆԹԵՐ

Բեկանեմ շանթեր  
իմ գլխի՛ վրա,  
որ ճերմակել է ո՛չ լոկ հարանքից ու չարչարանքից.  
որ ճերմակել է բեկված-բեկբեկված բազում շանթերի  
դարավոր փոշո՛ւց,  
աճյունի՛ց ճերմակ...

Բեկանեմ շանթեր՝  
իմ աչքերի՛ մեջ,  
որոնց բիբերը խառնարաններ են ծփացող հուշի  
և որոնց համար սպիտակուց է դարձել նո՛ւն փոշին՝  
բեկված-բեկբեկված բազում շանթերի փոշին սպիտակ...

Բեկանեմ շանթեր՝  
իմ հոգո՛ւմ մթին,  
կուպրանե՛րկ հոգում,  
ուր գահավիծված հրեշտակներն են անբառ մորմոքում  
մեռած հավատի  
և մանրած հույսի դիակի՛ վրա՝  
միակի՛ վրաս...

Բեկանեմ շանթեր  
և լեզվի՛ն վրա,  
իմ թլվա՛տ-կակա՛պ-կա՛պ ընկած լեզվի,

կա՛պ ընկած՝ ի տես մի իրողության,  
որ երբեկցե չէր եղել... եղավ,  
որ չէր կատարվել երբեք... կատարվեց...  
կա՛պ ընկած՝ նաև ի նշան անզոր անկարողության՝  
ասելու համար ողջ անասելին  
և անպատմելին պատմելու համար...

Եվ իրոք.

այդ ո՞վ կարող է հիմա  
թեկուկ կցկուր և անկապակից խոսքերով ասել,  
թե ի՞նչ կատարվեց:

Նախ՝

Քրիստոսը մեծացավ, ինքնին, ևս մի տարով,  
և երկրագնդի պտտվող կողին՝  
հասարակածի լայնության վրա  
սառցե գրիչով մեծատառ գրվեց  
նրա տարիքը՝  
1914 թիվը:

Եվ օրացույցը՝

կրկեսի բեմին կյանքն իր նվիրած  
ձեռնածու կնոց հայտնի նապանքով,  
մկնեց մեկ-մեկ ուսերից նետել իր հագուստները.  
ամեն օր՝ մի շոր:

Ուսայնությամբ էր արևն զբաղված,  
երկինքը՝ անվերջ դիմակ փոխելով,  
կորիվ էր տալիս օդը օդի հետ,  
օնն օդից պարտվում,  
հաղթում օդն օդին,  
և կնքվում էր այն հաշտությունը կարճ,  
որ ծանոթ է մեկ գարուն անունով:

Մարդկանց ու կանանց գրկաշփումից  
լուս աշխարհ էին գալիս մանուկներ՝  
իրենց ձիչերով մարգարեական:

Հողի և ջրի շփումից տամուկ  
թթվամորվում էր և՛ գինի, և՛ հաց:  
Թուղթ ու թանաքի հպում-շփումից  
բռնկվում էր միտք ու ժայթքում էր երգ:  
Իսկ բթամատի ու ցուցամատի շրջուն շփումից  
ծնվում էր դրամ...

Բայց բթամատի ու ցուցամատի շինկուն շփումից  
շատ հաճախ նաև հրդեհ է ծագում,  
եթե ցուցամատ-բութ մատի տերն է մի բութ բարբարոս:

Ո՞վ շրխկացրեց իր ցուցամատով ու բթամատով:  
Եվ այդ շրխկոցը մահացու փոթկաց  
ինչ-որ տաքգլուխ մի ուսանողի ատրճանակից,  
ու գնդակը տաք ոչ թե միշրճվեց  
ինչ-որ Ֆերդինանդ Ֆրանցի արտում,  
այլ հեզ մարդկության ուղեղի հենց ա՛յն կենտ բջիջի մեջ,  
որ մարդկայնության կենտրոնն է միակ...

Աշխարհը շրջվեց բերանի վրա և ապա մեջքի՝  
աշխարհն ինքն իրեն կործեց ու շտկեց,  
շուր ու մուռ եկավ ջղաձգվելով՝  
ավապախրված-խեղդվող ձկան պես,

և թափալ տվեց՝  
գոռեխ-մոկերից կարեվեր խոցված մտրուի նման,  
ու հանեց փոշի՝,  
այնպիսի՝ փոշի,  
որ խցեց աչքերն ամբողջ մարդկության,  
փակեց երկինքը և ծածկեց աստծուն,  
ա՛յն աստծուն,  
որի որդու տարիքը նույն այդ ժամանակ  
ավելացել էր և՛ ս կես տարով...

Եթե մինչև այդ դիվանագետներն անուշ ժպիտով  
քարկտիկ էին իրար հետ խաղում՝  
րոպեն մեկ երկինք (աստծո՞ւն) նայելով,  
17—Պ. Սևակ, Երկ. ժող. 3 հատորով, հ. II

իսկ մի պահ իւսո՞ւ սեփական ափին,—  
դիվանագետներն այժմ տեղ տվին տերերին իրենց,  
որ... ունագնդակ խաղան մղեգնած՝

արկով իւռահար

և իւռաթոշչը ոռւմք ու ականով...

Գնդացիրները

իւեղձ արտույտներին ու տատրակներին գործազրկեցին:

Հրացանների

թռքախտավորիկ հազն էր վերջանում արնահոսումով:  
Թնդանոյները

իրենց երախի քրքիջով խենեց

ծանակում էին պարսատիկալոր Դավթին խղճալի,

իսկ սպանվողը ինչ-որ Գողիա՛թ չէր,

այլ մը մարդկությո՞ւն իր մարդկայնությամբ...

Թթվել էր կարծես հողը բովանդակ,

ու թթվել էին ծովերը բոլոր,

և թթվածության խմբիչ մանրէն արկ-ականն էր նույն,  
որ հող ու ջրի պղպջակներ էր պայթեցնում ահեղ՝

դեպի վե՛ր, երկի՞նք,

որտեղ Հիսուսը, նստած Հոր աջում,

ինքնին մեծացավ արդէն մե՛կ տարով,

և երկրագնդի կիսարյունաքամ-գունատ ձակատին

արյունուտ մատով աղմեսագրվեց

1915 թիվը...

Եվ գոյորջու պես մանեման եկող տագնապն անսեռուկ,  
որ հարկահանն է համայն աշխարհի

և տանուտերն էր այս լեռնակղպու,  
ցրտից կծկվեց.

Կարկուտ դառնալու անբեկ վճիռով՝  
նա խտանում էր:

Եվ խտանում էր վտանգը նաև՝  
համայն աշխարհի մշտական քեռին  
և խորթ հայրիկը այս լեռնակղպու,  
խտանում այնպէ՛ն,  
ինչպես արյունը, երբ լերդանում է:

Ծպոյալ ոճիրը հանդերձ էր փոխում  
տեսակցությունից ուշացող բովի աճապարանքով:  
Քենը քողարկված, ովքը դավադիր  
իրենց վկերի կապն էին կրծում  
շղթայի կարկված շների նման,  
նո՛ւն այն շների,  
որոնց աղոթքը յեն հասներ աստծուն՝  
երկնքից ուկրի անձրև պիտի գար:

Ըների աղոթքն իսկապէ՛ս լսվեց...

Եվ մահը՝ մեծըն մաթեմատիկոս,  
Գորշ Գայի արևոտ ժանիք-գրիչով  
գրանցման մատյան—թակրիկ դեֆտերում  
համարակալեց մի ամբո՞ղջ երկիր՝  
իր քաղաքներո՞վ, շեներո՞վ ամեն  
և մինչև անգամ վերջի՞ն քողտիկով:  
Համարակալեց բովանդա՞կ մի ազգ՝

ծե՛ր ու մանուկո՞վ,

կին ու երիկով

և մինչև անգամ խելառո՞վ վերջին:

Անգլուս-անպոչ այդ պետության մեջ

չէ՛ր եղել երբեք ու երբեկցէ

այսպիսի ստո՞ւգ, այսքան ճշգրի՞տ

մի մարդահամար,

այնքա՞ն ճշգրիտ

և ստո՞ւգ այնքան,

որքան որ իրենց դերդամբարների

և կամ հարեմի հարձերի թիվը:

1915 թիվը...

Եվ եղավ... կյանքի ճոխ տոնավաճառ,  
բարբարոսության աճուրդ մեծագին  
և մարդկայնության փակ գրավատուն...  
Եվ եղավ... մի նոր՝ երկրո՛րդ շրիեղեղ,  
որ իր տակ առավ — առաջի՛ն հերթին—  
այն երկիրը հենց, որ Նոյին փրկեց:  
Եվ իր տակ առավ այն ժողովրդին,

որ 15 դար

սրտով ու շրթով հայցեց իր աստծուն՝  
«Արձակեա՞ զմեպ»,

բայց Տերն արձակեց նրա ոսոխի՛ն՝  
միան սաստումի թնդով ձերբակալ  
ու սուտ խոստումի մազով թնակապ  
ոսխի՛ն նրա:

Եվ ինչո՞ւ:

Արդյոք ո՞չ այն պատճառով,  
որ աստվածները տանել չեն կարող իրենց նմանին,  
ինչպես որ ազգը՝ իրենից բարձր իր հարեւանին...  
Եվ եղավ, օ ո՞չ, և եղեւ... խավար,

այսինքն՝ սկիզբ,

այսինքն՝ մարդու տարեգրության նո՛ր դարագլուխ,  
հիմնադրումը գիտության մի նոր.  
— առաջին դեպքը ո՞չ կոտորածի,  
առաջին դեպքը... ազգասպանության:

1915 թվին...

Եվ այդ թվին էր,  
որ մի ողջ ազգի աղոթքը սառեց շրթունքի վրա,  
լերդացավ բերնին՝  
բերնից դուրս ժայթքող արյան հետ ու պես  
մինչդեռ շների աղոթքը լավեց անտեր երկնքում...

Եվ ոսկրով ծածկվեց մի հսկա երկիր,  
ուր (Ճիշտ են ասել ու Ճիշտ են ասում)  
եղել էր ու կար շնից շատ իշխան,

բայց իշխանություն չի՝ եղել երբեք.  
Եղել էր ու կար թերևս արդար,  
բայց արդարություն... ազա՞հը թող տար.  
Երկի՛ր, որ տրվեց դարեր շարունակ աղան-թալանի,  
ուստի չէր կարող չինել աղքատ ու դատարկափոր:

Եվ ասում եմ ձեզ՝  
պատվիրանի պես.

— Պետք է վախենալ թագակիր ցովի՛ց,  
գահակալ ձի՛ւց,  
բայց ավելի շատ՝

գայխոնակիր մուրացկաններից պետք է սարսափել,  
վասնվի եթե փորը թափուր է և ափն է դատարկ,  
ապա գլուխը լեփի-լեցուն է միշտ ոճիր-նախճիրով:  
Պետք է սարսափել մուրացկիկներից գայխոնակիր,  
վասնվի եթե այդ գայխոնը ոսկուց է անգամ  
ու զարդարված է եթե մինչեւիսկ աղամանդներով,  
իմացե՞ք, որ դա խարկանք է աչքի.

— Նրանց գայխոնն ու մականը միշտ ոսկորն է միայն՝  
մարդու ող կամ կող,

ապդըր կամ սրունք:

Եվ ի՞նչ աստծու էլ նրանք դավանեն՝  
դարձյալ ոսկորի պաշտամունքն ունեն,  
ոսկորի՝,  
ո՞չ թե տապան-պատանքի:

Եվ ասում եմ ձեզ՝  
պատվիրանի պես.

— Վախեցե՞ք կյանքում սովագարներից  
առավել, քան թե խելագարներից,  
որ զահին՝ ինչպես մրջունին՝ բազմում  
ու ձեռքն են առնում ուղտին աժդահա:  
Իսկ երբ սովագարն ու խելագարն են միություն կազմում  
ինչ-որ ազգի մեջ,  
ուղտն էլ դառնում է խորիրդանշանն ուրիշ մի ազգի:

Ա՞յս այդ Ռւետը խեղճ...

Իր կուզ-սապատով դիվում էր նա գա՞նձ,  
կերակըրում էր մի ո՞ղջ պետություն,  
իսկ ինքը սնվում միա՛յն տատասկով,  
բայց և որոճում... միրաժնե՞ր լուսե,  
ոսկեղեն տեսի՛ք:

Ոսկեկար բանված և ընդելուպված  
կոշիկ-ոտնաման-մուճակ էր տալիս  
մի սմբակվոր ու բազմապձեղ հսկա տերության,  
իսկ ինքն՝ անապձե՞ղ,  
իսկ ինքն՝ անսմբա՞կ,  
բայց և՝ իր ոսկե՝ տեսիքների մեջ,  
բայց և՝ իր լուսե՝ միրաժների հետ...

Բեկանեմ շանթե՞ր՝  
անարդարությա՞ն:

Եթի ուղտն, ասում են, կոտոշ է ուզում՝  
նա կորցնում է և ականջները:  
Սակայն կոտո՞շ չէր Ռւետի ուզածը:  
Նրա երազը նույնքան փոքրիկ էր,  
որքան ուղտային իր իսկ ականչւ-  
ծարավից ճայթող իր աչքերի մեջ  
մի հորդ աղբյուր էր մտովին տեսնում,  
մի աղբյո՞ւր, որին հասնելը հեշտ էր,  
որքան... ասեղով ջրհոր փորելը...

Եկ... Ռւետն այս անգամ ո՛չ սիայն ականչ,  
ականջների հետ կյա՞նք էլ կորցըրեց...

Ծվ արաբական անբեղ-անմորուք անապատներու:  
ծաղկեց... ոսկո՞րը՝  
ավելի՛ ձերմակ,  
քան թե շուշանը՝ Մշո դաշտի մեջ,

քան թե հասմիկը՝ Բյուրակնի լանջին,  
ու կեռասենին՝ Ակնի շուրջբոլոր:

Ոսկո՞րը ծաղկեց՝  
Մի նորատեսակ մարիամածաղիկ,  
որ չի թառամում ամառ ու ձմեռ  
և չի թորշումում տարիներ բազում...

Եվ ձեզ եմ ասում,  
ձե՞զ, որ չեք տեսել.  
— Այդ արաբական անապատներում  
գիշեր ժամանակ  
մինչև հիմա էլ,

կես հարյուրամյակ անցնելուց հետո,  
պաղ ֆոսֆորային փայլ է արձակում ավազը մթին.  
ուղտի պես ծունկի բերված ու մորթված  
մի ամբողջ ազգի փոտո ոսկորի՝ ֆոսֆորափայլը:  
Փոտո ոսկորի ֆոսֆորափայլը,  
որ չի կորացնում մի՛ միայն նրանց,  
որոնց աչքերի ցանցաթաղանթը  
շնարակված է նո՞ւն այդ ֆոսֆորով.  
և այսպիսին են գայլի աչքերը.  
իսկ մեծատառված-խորհրդանշված Գորշինն՝ առավե՛լ...

— Բեկանեմ շամթե՞ր  
իմ աչքերի՝ մեջ՝  
անապատային ֆոսֆորափայլից կիսակորացող  
իմ կո՞ւգ աչքերի:

Եվ զո՞ց աչքերով ես ասում եմ ձեզ.  
— Եթե Փօքը ու Մեծ Մասիսները դուք զանգ չեք համարում,  
գեթ համարեցեք բրածոյացած վիթխարի սապատ՝  
ա՛յն, ինչ որ մնաց Ռւետավոր Ռւետից...

— Բեկանեմ շամթե՞ր՝  
ձյան փոթորիկով ինքն իրեն ծեծող,  
ինքն իրեն կոծող  
իմ զիմի՛ վրա...

Եվ իհմա արդեն՝ գլուխս բռնած՝ ես ձե՞զ չեմ ասում,  
ես ի՞նձ եմ հարցնում՝ գլուխը բռնած.  
— Այս ի՞նչ անհջալ հունդից ծիլ առավ  
և արմատ ու բռւն ձգեց աշխարհում  
այս տոհմածառը՝  
իմը և ձերը,  
որ ցցվեց իբրև կանաչ-կենդանի մի ուղեփակոց  
չորս չար խորշակի քառուղում ռանուկ,  
և մեկ ամենքիս դարեր ստիպեց  
և ստիպում է ասել վերատին.  
«Կորիցէ՛ օրըն, յորում ես ծնայ»...

### Թողեք ես լոեմ

և թող անկեռու քարերը խոսեն քարեղեն լեպվով.  
— Այս ազգը որի՞ց և ինչո՞վ է վատ,—  
պատասխան տվեք, քարե՞րն են հարցնում,—  
այս ազգը ումի՞ց և ինչո՞վ է վատ,  
որ դատապարտվեց այսափ վատության,—  
պատասխան տվեք, քարե՞րն են հարցնում:  
Եվ ո՞վ, և ինչո՞ւ սրանց «հայ» կոչեց,  
որ հանգավորի միմիայն «վայ»-ով:  
Եվ ինչպե՞ս, և ե՞րբ, ի՞նչ ուժով արդյոք  
(թեկուվէ՝ ինչպես ատումն ատումից,  
թեկուվէ՝ ահեղ պայմանի՝ գնով  
ու կործանումի սպասմանը թեկուվ)  
իրարից «հայը» և «վայը» պոկե՛լ,  
ինչպես ես իհմա շանթեր եմ պոկում  
և խշրոտութով բեկանում-թեկում  
իմ խավարադեն-կուպրածեփ հոգում,  
ուր գահավիթված հրեշտակներն են մորմոքում անխոս  
մեռած հավատի  
և մարած հովսի դիակի՛ վրա՝  
միակի՛ վրա...  
  
Ա՛խ, եթե իհմա կարողանայի և ձախնըս պոկել  
իմ խեղճ.

ինչպես կանգերի լեպվակներն էին Տարոնում պոկում  
և լեպվակի տեղ կախ տալիս շներ,  
որ ծամերգության վիհարեն սրանք,  
իրենց ոռնոցով ու վնասուցով,  
ծաղրեն Հիսուսին և Հորը նրա՝  
Տիրոջն Անտերաց.  
«Ծունք բավումք եղեն վինեւ:  
Արի՛, Տէր, եւ փրկեա՛ դու վիս»...

Ա՛խ, եթե իհմա կարողանայի ես ձախնըս պոկել  
կոկորդից իմ խեղճ  
և օգտագործել իբրև խարազան՝  
չգիտեմ, թե ո՞ւմ մեջքին կամ դեմքին,  
միայն թե մեպնից նա բա՛րձըր ոռնար  
և իր ոռնոցով մի պահ լոեցներ  
մեր ցա՛վը,  
ցա՛վը՝  
մեր անլոելի՛ն...

Բայց ո՞չ, թողե՞ք ես իմ ձիչը խեղինմ,  
ինչպես որ մայրն էր խեղդում մանուկին,  
որ կուրանալիք աչքերով իր կուգագանումը խուժանի ձեռքով...  
  
կոկոն գլխիկի քարագանումը խուժանի ձեռքով...

Զէ՛, թողե՞ք հեծնեմ իմ տառապանքին,  
ինչպես հեքիաթի այն խոյին ծանոթ,  
որի գույնն է լոկ որոշում, թե մենք ո՞ւր պիտի ընկնենք՝  
Լո՞յս թե Մութ աշխարի:

Եվ հաջողություն կոչվածը մարդու<sup>1</sup>  
կամ բախտ ասվածը մի ամբողջ ազգի  
կախված չէ՛ արդյոք  
այդ խոյի գույնից, գույնից միմիայն՝  
սև կամ ձերմակից:  
Ու եթե միայն գույնից է կախված ամեն բան կյանքում

թողե՞ք, որ ես այդ գույները չնշե՞մ,  
ո՞չ թե սպունգով,  
այլ իմ երեսո՞վ,  
որ և իմը չէ, այլ մարդկությանը:  
Եվ մարդկությունն էլ թող որ մումիանա  
ձառագայթային ախտի այս դարում  
ու մնա այդպես՝  
մի երեսը սև, երկրորդը ձերմակ...

Եվ թողե՞ք նաև...  
Օ ո՞չ, մի՛ թողեք,  
որ վերստին գան ու հասնեն օրեր՝  
այն օրերի պես,  
երբ կես մի երկիր, կանացի ձայնով,  
իր սրտակեղեք «Երանի»-ն գոռաց՝  
ի լուր աշխարհի,  
պատմությանն ի հուշ.  
— «Երանի» ամոց և որովայնի, որք ոչ ինչ ծնան»...  
Իսկ երկրորդ կեսը միևնույն երկրի,  
այս անգամ արդեն այրերի ձայնով,  
անվորությունից կիսացնորուն,  
ի տես լրբենի ապիրատության՝  
լեռների քունքին իր ձիչը մեխեց.  
— «Լերինք, անկերո՛ւք դուք ի վերայ մեր»...  
Եվ բլուրների կողերից կախեց  
իր աղերսանքը տղամարդկային.  
— ...«ծածկեցե՞ք զմեկ»...

Բայց նրանց վրա լեռները չընկան  
և չծածկեցին բլուրներն անսիրտ:  
Ո՞չ.  
Վրա ընկավ, ամենից առաջ, օրե՞նքն անօրեն:  
Խլված էր և՛ զենք,  
և՛ դանակ, և՛ ձեռք,  
մինչև անգամ ձե՞նք, բռո՛ւնցք ու կռո՛ւփ,  
կապկապկած էին թև՝ ու ձե՞նք անգամ:

Մնում էր... ատամ  
ու  
մնում էր... ոտք.  
ո՞տք՝  
ցլամարդկանց ամորձիքներին հասցեագրված,  
և ատամ՝  
ստո՞յգ հասցեագրված  
մարդ-գավանների փրչոտ կոկորդին...

Բայց խվում էին այդ զենքերն անգամ.  
ատամներն էին քարերով շարդում  
ու ոտքերն էին մարմնից անջատում  
ինչո՞վ որ կուկեք, ինչո՞վ կամենաք.  
թրով ու քարով,  
սրով, տապարով,  
արցով բահի,  
մանգաղ-գերանդով  
և կամ պարզապես հոդալուծությամբ,  
և այս ամենը  
ո՞չ միայն հանգի՛ստ-անվրդո՞վ-անդո՞ղ,  
և ո՞չ էլ միայն մոլի եռանդով,  
այլև մի տեսակ արթշիո ցնծությամբ...

Գնդակն ափասու էր.  
մեկ գլխի համար  
մեկ գնդակն արժեր երկու հատ ոսկի,  
որ հանգիստ մեռնել ցանկացողն ինքը պիտի վճարեր,  
բայց, դժբախտաբար, չկա՞ր... խլվա՛ծ էր...

Գնդակն ափասու էր,  
իսկ ձեռքն էլ՝ հոգնած.  
բթացել էին բահ-մանգաղ-կացին  
և ուժաթափվել դաստակ ու բազուկ...

Հոգնած չէր ջուրը,  
բայց նա՛ էլ հոգնեց.

իրենց մեջ առած բյուր դիակներից  
հունավոր գետերն ափերից Ելե-մոլորվել էին.  
խորունկ ջրհորներն իրենց վկերը հանել էին դուրս,  
առաջին անգամ իրենց կյանքի մեջ՝ հանել էին դուրս,  
և օդից հարբած ու լուսից գինով՝  
ուշաթափ փովել-մոլորվել էին  
դիակների պես,  
դիակների հետ...

Դուք վկա չեղաք, ե՞ս եղա վկա,  
թե ինչպես դարձավ այս լեռնակղզին  
բատրոնից բացի  
նաև մի կրկես,  
ուր՝ կրակի հետ մրցության մտած՝  
և ջուրը խաղաց բազմաթիվ դերեր:

Զո՞ւրը, նո՞ւն ջուրը՝  
ապականիչ էր և լվացարար՝ միաժամանակ,  
կործանարար էր, բայց նաև փրկիչ՝ միաժամանակ,  
կոհասեղան էր, բայց և վաշխառու՝ միաժամանակ,  
մի բաժակ չուրը՝ Եփրատի ափին,  
Տիգրիսի գետի մոտ,  
Բյուրակնի վրա,  
մի բաժակ ջուրը մեկ ոսկի արժեք,  
որ չկա՞ր, ավա՞ղ, խլված էր վաղուց...

Այս ջո՞ւրը, ջո՞ւրը...  
Վայրենիների վայրենի վարքով  
մարդընտելացավ ջուրը վայրենի.  
մրցակցում էին իրենց շատությամբ  
թոշուների չուն՝ խանձված երկնքով,  
դիակների չուն՝ ջրերի վրա,  
և ձկների չուն՝ նույն ջրերի մեջ:  
  
Նովրուզ բայրամ էր ձկների համար,  
մի նովրուզ բայրամ,

որ հարատևեց ամբողջ յո՞թ ամիս,  
իսկ հետո նաև՝ ամբողջ յոթ տարի՝  
— Ծյո՞ւքը ալլահա...

Ամբողջ յո՞թ տարի ջուրը տառապեց  
չար աչքացավով՝  
արնակոխությամբ:  
Եվ մեքքայական Զեմ-Զեմ աղբյուրից  
ոչ պակաս պաշտված ու սուրբ աղբյուրներ  
նույն աչքացավից հավե՛տ կուրացան.  
— Ո՞ւր ես, կույրերին բժշկող Հիսուս...

Զուրն էին նետում մայրերը մանկանց,  
ու նետվում իրենք  
ու նետվում այնպէ՞ս,  
ինչպես նետվում են գիրկը սիրածի...

Անպատվությունից ֆրկելու հույսով՝  
ջրացովերից ջուրը նախընտրած բյուրավոր կանանց,  
դեռ Կնիքավոր-չմատնահայված բազում կույսերի,  
դեռ մեղրամիսի  
ծանծաղ հատակը չհասած անծին հարսների վրա  
կարմիր ծին-խալ էր հապտապ դաշում  
ջրացովերի գնդակը կուրաչ՝  
գեղեցկացնելով վախճանը նրանց,  
այլանդակելով ջուրը գեղեցիկ...

Օ՛, տառապանքը բյուրիավար կանանց և աղջիկների,  
ա՛յն տառապանքը,  
որ իր ծանրությամբ պիտի՝ որ ապրեր  
ապուշի նման անվերջ թափալվող  
այս հողագնդի պտույտի վրա...

Օրացույցն էլի՝  
ձեռնածու կոնց հայտնի նապանքով  
շարունակում էր իր հագուստները ուսերից նետել,—  
ամեն օր՝ մի շոր,—

և մինչև հասներ իր կրկեսային ծանոթ վիճակին՝  
մինչև մերկանար,  
պիտի անցնեն շուրջ 365 օրեր,  
այնինչ բյուրհավար քոյլը երին նրա քույրերին,  
կիսացնորված-խեւագարվելիք նրա քույրերին,  
նույն այդ վիճակին հասցընում էին երեք վայրկյանում.  
բազմության առաջ, մահվան երթի մեջ,  
կճեպում էին ու կլայում նրանց՝  
հասած ու դեռ խակ ընկույզների պես,  
և կլայողների ձեռքերը բնավ չեին սևանում.  
կեղտից ու մրից, լերդ-լերդ արյունից  
ընդդիշու սևացածն ինչպե՞ս սևանար, մեկ ուրիշ սևով...

Արևի երես երբեք չտեսած  
և նշխարի պես սպիտակ ու սուրբ  
նրանց մերկացած մարմընի վրա  
իրենց արևառ ու հողմնահարված գլուխը կարծես  
ոչ թե սեփական,  
եվ փոխառնըվա՛ծ գլուխ էր թվում,  
մի գլուխ օտա՞ր,  
ասես դնովի՛....

Եվ հարսներ բազում՝ արդար կաթնակեր,  
միջտ մեծահարգո ու դեռ չխոսկան,  
մոռացած ավանդ ու սովորություն՝  
առաջին անգամ ձայն արձակեցին,  
ձչացին հանկարծ՝ առաջի՛ն անգամ,  
մերկ թևերն իրենց հագուստ դարձնելով  
իրենց մերկանդամ ապրուերի համար  
և ապրերն իրենց՝ մերկ որովայնի...  
ձչացին հանկարծ՝ առաջի՛ն անգամ,  
իրենց կեսուրի փեշից կախվելով,  
իրենց կեսրայի ոտքը պազնելով...  
Չայն արձակեցին-ձչացին հանկարծ  
առաջի՛ն անգամ՝  
ու վերջի՛ն անգամ՝

իրենց նետելով քարափի քթից,  
անդումնի շրթից,  
ժայի եղքորից,  
իրենց հանձնելով իրկարար ջրին՝  
եթե կար քարափ, անդունդ, ժայո ու ջուր...  
Իսկ եթե չկա՞ր...  
Զուր էր արևը նետում նիվակներ  
մարդացուերի թիկունքի վրա.  
Նրանք արևից չեին ամաչում  
և ոչ էլ իրենց ատյանից աստծո...  
Եվ իսուր էին երկնքից թափվում աստղի-ասուաներ,  
ինչպես որ Կենաց պտղաբեր ծառից՝ խնձորներ հասած.  
Եվան այլըս ուտել չէր կարող,  
քանի նա հիմա... բռնաբարվում էր օձից մարդակերպ,  
բռնաբարվում էր՝ բազմության առաջ,  
իր զավակների սահմանած-սառուծ  
հայացքի ներքո...

Եվ ո՞վ ձեզ կասի՝  
ի՞նչն էր առավել.  
գարշա՞նքը նրանց, թե՞ սահմովումը:  
Եվ ո՞վ ձեզ կասի՝  
ի՞նչն էր առավել.  
նրանց տանջա՞նքը, թե՞ վրեժն անլուր...

Նետերով լեցուն կապարձներ դարձան  
նրանց ափերը,  
նրբին-մոմաբռույր մատները նրանց  
նիվակներ դարձան,  
նրանց հինայլած եղունգները՝ տեզ:  
Կովեցին նրանք՝ կատվի պես վայրի,  
մայր վագրի նման,  
առյուծի պես էզ:  
Կովեցին նրանք ատամով, թուքով,  
կովեցին նրանք մարմնով ու հոգով  
և, աստվա՛ծ գիտի, հաղթեցի՛ն նրանք

իրենց հնօրյա անարգ թշնամուն՝  
ոչ միայն իբրև նորօրյա Հուդիթ...  
Թեպետ կապկպված ու գերի տարիված,  
թեպետ կեղեքված ու բռնաբարված,  
փերթվելով թեպետ,  
թեպետ շարդմելով,  
թեպետ պարտվելով՝  
հաղթեցի՞ն նրանք:

Հաղթեցին նրանք՝ թուղնելով մի հարց,  
որ ես եմ հիմա տալիս աշխարհին.  
— Որտեղի՞ց արդյոք, թուրքին հարց տվեք,  
որտեղի՞ց այսքան լվայրագ մոլուխոն:  
Մարդկության համար չհայտնագործված այդ ի՞նչ ակունքներ,  
բոլորին անհայտ այդ ի՞նչ ջրհորներ ունի տակավին  
հաճույք ասվածը նրանց ընդերքում:  
Իոդի երջորջված իրենց որչերում գալանաբանակ:  
Եվ ո՞վ կարող է, իրենցից բացի, հասկանալ մի կերպ  
հեջտին հաճույքը, վսեմ վայելքը այն վեհ վայրկյանի,  
երբ Մարիամ-Մարի-Սրբուհի կոչվող  
տակավին մանուկ աղջընակներին  
կեղեքում էին՝ բոլորի առաջ,  
կեղեքում էին՝ ամբողջ ուսմակով,  
կեղեքում էին՝ տաճարների մեջ, սուրբ խորաններում  
և մինչև անզամ մեկ ա՛յ Մարիամի՝  
միա՛կ Մարիամի սրբանկարի կտավի վրա...  
— Եվ դու, Կո՞չս Մարիամ, չմիջնորդեցիր,  
որ Որդիդ գոռա.  
— Բնկանեմ շանթե՞ր...

Եվ ո՞վ կարող է, բացի իրենցից, մի կերպ հասկանալ  
այն վեհ վայրկյանի վայելքը վսեմ, հաճույքը հեջտին,  
երբ կախում էին այսպես կեղեքված-տանջահար կանանց,  
կախում... ոտքերից,  
գլխիվա՞յր կախում,  
և այնպե՞ս կախում,

որ մայրակառկառ ձեռքերը մանկանց մորը չհասնեն  
և հոդախախտվող բազուկները մոր չհասնեն մանկանց...

Եվ դու, Տիրամա՛յր, լոեցի՞ր կրկին  
նրանց չարչարանք-հարանքի հանդեա,  
ու Որդիդ չատաց.  
— Բնկանեմ շանթե՞ր...

Եվ այսպես՝  
բոլոր խկուհի կանայք  
մեռան Գորշ Գայի որչերում մժին,  
մարմնապե՞ս մեռան, մեռան հոգեպե՞ս:  
Տիկնայք փափկառուն, գգյալ ու գգվալ,  
խորդենու նման տնաբուս կույսեր  
նահատակվեցին անապատներում  
և արմատախիլ, և՛ բնակոսոր,  
փլատակվեցին քարափներն ի վար,  
ու թե փրկվեցին՝  
խեղովեցի՞ն հավետ,  
խեղդվեցին և՛ մամ, և՛ աղջիկ, և՛ թռո.  
Կանացի մի ո՞ղ մահապուրծ աշխարհ  
դարձավ խեղանդամ և անդամալուծ...

Եվ դու, Տիրամա՛յր, դու չեղար միջնորդ,  
որ Որդիդ ասեր.  
— Տալի՞ք, կումի՞...

Փոքրիկ, շա՞տ փոքրիկ գութն էլ է ապդում  
մարդկության վրա համայն աշխարհի՝  
գալանի մորթուց և՛ս պնդարմատ մի մազ պոկելով:  
Այդ գո՞ւթը չկար:

Փոքրիկ և նույնիսկ շա՞տ փոքրիկ սիրուց  
փոխվում է օդի բարեխառնությունն ամբողջ աշխարհում:  
Այդ սե՞րը չկար:

Կար մի հրաման, անխայիտ հրաման.  
— Բովանդակ մի ազգ իր պետ ու ծետով,  
մի ո՞ղջ ժողովուրդ ճռաքաղ անե՝  
մոռացած ալլահ, փեղամբար ու խիղձ,  
խի՞նձ, որ մինչևիսկ շունը չի ուտում,  
իսկ սրանք նովինիսկ լափեցի՞ն, շուա՞պ,  
և թվում է, թե... մարսեցին նաև...

Ճռաքա՞ն անել և արմատախի՞լ,  
բոլո՞ր ձևերով ու միջոցներո՞վ...

Եվ սրածումին թիկնապահ դարձակ  
անլուր աքսորը,  
ու ծարավի հետ սովը դաշնակցեց՝  
ամենապորը:

Ու սրովիեցին բվկտված սրտեր՝  
մերկ թաթերի մեջ ու կրունկների,  
սրանց բարախուն ցավին համաշափ:  
Տրոփեց նաև մի կտոր տաք կամք՝  
նույն կրունկների ու թաթերի մեջ,  
սրանց բարախուն ցավին համաշափ...  
Ամենուր փոված անթաղ դիերից հողն էր որդնոտել՝  
<որ երանելու խեղճ մարմնի նման,  
իսկ սրանց ոտքերն՝ ավելի՝ նըս...  
Կարեներ ոտքից թունուտ փուզ կամ մեխ ձգել-հանելը  
արգելված էր խիստ,  
արգելված այնպե՞ս,  
ինչպես փեղամբար Ալիխն Վայի վերանվանելը:  
Դոկ եթե նույնիսկ իրավունք իմեր՝  
փաթաթա՞ն չկար,  
լաթի մի կտո՞ր.  
Նրանց վրայի հագուստ կոչվածը արտեն չեր պահում  
նույնիսկ կարկառան.  
որ խոզի նման մի բան էր դարձել...  
Իսկ ագռավների ու ցիների հետ

սրանց ամենուր միջու շրջապատող  
վաշկատունների կանայք գիշատիչ  
զարդարված էին սրանցից խված հագուստ-կապուստով,՝  
փոթ-փոթ զգեստներ  
(գարնան ու ամռան ձոխ մանրանկա՞ր),  
զառ-վառ գոգնոցներ և ուսանոցներ  
(աշո՞ւն պահածո),  
ակներ՝ հավվագյո՞ւտ  
(կարենցանքի՝ պես),  
նովյանքան հավվագյուտ զարդեր ու զուգսեր,  
որոնց միամիտ շողաբձակումը՝ տափս էր նոր փայլ  
իրենց նորահայտ տիրութիների վայրի հայացքին...  
Իսկ հապա նրանց դև տղամարդի՞կ...  
Իրենց մարմինը դեռ գավանների մորթիով ծածկող,  
տակավին քեչա ու փայտա հագնող այդ նախամարդիկ  
դեգերում էին իիմա ամենուր՝  
զուգված-զարդարված  
արծաթաբանյալ ու ոսկենըկար այն շուրջառներով,  
այն եմիփորոն-վակաս-լանջանոց-խույրով շողողուն,  
որ պոկել էին  
իրենց սպանած  
քահանա-երեց-եպիսկոպոսաց անթաղ դիերից...  
Ո՞վ պիտի ասի սրանց ահոելի երեմիականը:

Կրակի տալով սրանց ալեկպարդ բեղ ու մորուք՝  
տաքացնում էին սառնասրտորեն  
իրենց խոշտանգիչ պես-պես վենքերը,  
որ արեգակի կենտ աչքի առաջ  
կտցելով հանեն նրանց աչքը կուզգ,  
որ գամեր մեխեն նրանց քունքի մեջ,  
շիկացած մեխեր գամեն կրծքերին,  
մեջք ու միջակը սղոց՞վ հատեն՝  
իրենցից պաշտված Եսայու նման...

Ո՞վ պիտի գոչի նրանց ահարկու եսայիականը:

Իսկ ով տակավին հետն էր իր հոտի,  
ովքեր տակավին չէին սրբացել,  
հոտի հետ մեկտեղ ու հոտի նման:  
գլխաբաց ու մերկ  
քայլ էին փոխում  
և արնադրոշն իրենց ոտքերով քարշ էին տալիս  
իրենց մարմինը՝ թիապարտի՝ պես,  
կաշվի մեջ միայն ոսկոր պարփակող,  
փետրի պես թեթև իրենց մարմինը,  
որ ծանրացել էր  
տիղմի մեջ խրված մեծ նավի՛ նրան...

Ո՞վ պիտի գոռա նրանց ահարկու եսայիականը...

Եվ խոտածարակ ու քրծահանդերձ այդ հոտի տեսքից  
զարկուրում էին  
ու կաղկանձելով փախս էին տալիս նույնիսկ շները:  
Իսկ երբ պառկելու իրավունք էին հանկարծ ստանում  
մարդունտեղացած թռչուններն էին հարձակվում  
նրանց խմբերի վրա՝  
նրանց դնելով ծանոթ դիերի ու լեշերի տեղ  
ու թույլ չտալով, որ հանգչեն մի քիչ,  
մի փոքր քնեն:

Իսկ ինչո՞ւ քնել,  
եթե թռչնային նրանց քունն անգամ  
լեցուն էր ահով ու զարկուրանքով:  
Նրանց երակում  
գիշերը միայն փիռկ չէր կարծես,  
այլ նաև կավատ,  
որ ծախում կույսեր  
ու կուտակում էր անառակություն...

Իսկ ինչպե՞ս քնել, իսկ ինչպե՞ս քնել,  
եթե սատանան, քաղցի տեսք առած,  
քնակավայր է դարձըրել ներսը՝

խեղճ աղիքները՝,  
որ գալարվում են՝  
բռնաբարումից խուս տալ ջանացող  
հեգ աղջկների  
մերկ մարմինների վտառի նման...

Եվ մի ժողովուրդ,  
որ հացն էր պաշտում՝ նշխարի տեսքով,  
մեռնում էր ահա առանց նշխարի...  
Եվ մի ժողովուրդ, որ իր գոյությամբ  
հանապագորյա հաց էր միշտ եղել  
մի հսկայական կայսրության համար,  
մի ո՞ղջ ժողովուրդ մեռնում էր հիմա  
հանապագորյա հացի՝ կարոտով...

Մարդն էր հաց ուտում,  
իսկ հիմա արդեն... հացն էր մարդ ուտում...  
*Cո՞ւքը ալլահա:*

Եվ այսպես՝  
անհաց-անջուր-անհագուստ,  
հաճախ անհավատ,  
բայց և անվիատ՝  
նրանց կարեկեր քայլն էր տրոփում  
անծանոթ-անհայտ ճանապարհների անհատնության մեջ,  
անապատային հորիզոնների խուսափուկության,  
ակամա տենչված հանգրվանների անհայտության մեջ  
և ինքնահղով-ինքնակրկընող հուսաբեկության:

Եվ քայլում էին...  
Ետ նայող չկա՞ր:  
Ետ նայողն խկույն մեխսվում; Էր տեղում՝  
թշնամու թրով  
կամ սրով սովի:  
Եվ մահացածի վաղուց ցամաքած կուրծքը; ծծելով՝  
բյուրավոր մանկունք դրուն էին ծեծում

այն Քավարանի՝ այն Աղ Արաֆի  
որ ասես լիներ զնդան թուրքական.  
ասեղ գցելու տեղ անգամ չկար...

Իսկ ով չեր մեռնում այսքանից հետո,  
ով համառում էր տակավին ապրել՝  
մի բարեխնամ ձեռքով հավաքվում,  
տարփում էր մոտիկ որբանոց մի տաք,  
ուր սովալըլուկ-կիսամեռ որբին  
ճաշ էին տալիս, սովորանավայել,  
մի ճաշ, որ ուներ լոկ մի թերություն՝  
աղն էր քիչ պակաս,  
և շատ էր... թույլը...

Փոքրիկ, և նովսիսկ շատ փոքրիկ սիրուց  
փոխվում է օդի բարեխառնությունն ամբողջ աշխարհում:

Այդ սերը չկար:

Փոքրիկ, շատ փոքրիկ գութն էլ է ազդում  
մարդկության վրա համայն աշխարհի:

Այդ գութը չկար:

Կար մի չգրված-քնապդով տրված հրաման անգութ.  
Եթե կանգ առնել, ապա կանգ առնել  
հարևանությամբ հացի փոերի,  
որ յուրաքանչյուր բժիշըդ ոռնա,  
և ամեն ջիղըդ ապստամբ դառնա,  
և ամեն մավըդ քեզ ցնցի հուժկու...

Եթե կանգ առնել, ապա կանգ առնել  
գետերի ափին, աղբյուրների մոտ,  
և ոչ մի դեպքում... մի կում չխմել,  
որ հրատոչըդ քո լեզուն դաւնա  
կախվածի բերնից դուրս ցնէկած լեզու,  
և քո պտղտվող աչքերն էլ դառնան  
արևածաղկի նման ջրծաղիկ...

Իսկ եթե քնել՝ ապա լոկ քնել  
դափ-դատարկ ու տաք իշեանատան,  
զորանոցի մոտ դափ-դատարկ ու տաք,  
բայց ոչ նրանց մեջ,  
այլ երկնքի տակ՝  
արյունով թրչված,  
թարախով թացված  
քարին ու փշին ընկողմանելով  
և վերիիշելով կեղեքից տեսքը անկողինների՝  
բրոջ պես մաքուր,  
սիրած կրծքի պես ճերմակ ու փափուկ  
ու երեխայի ափի պես տաքուկ  
այս ավանդական անկողինների,  
որ սրանց առջև վակ էին արդեն՝  
դարպասի նման Օտոման բանկի,  
այն ծանոթ բանկի,  
փորձանո՞թ բանկի,  
որ դանախական տակառի նման  
կլելով սրանց՝  
բյուր մեռնողների ու բյուր մեռելոց  
արյուն-քրտինքը,  
միկոն-միկիարդը,  
չեր թողել նովսիսկ մեկ ուրիշ տակառ՝  
Դիոգենեսի՝ տակառը ծանոթ,  
որի մեջ սրանք ապրեին գոնե  
և հիմա այսպես չմրւնչային.  
«Աղուսանց գոն որջք,  
թոշնոց երկնից՝ բոյնք,  
այլ որդույ մարդոյ  
ո՛չ գոյ ուր դիցէ զգլուխ իւր իսկ»...

Դիոգենեսի տակառից էլ զուրկ՝  
յուրաքանչյուրը այս խյակներից  
Դիոգենես էր մի յուրատեսակ.  
մահվամբ ճառագող աչքերով երկու,  
իբրև ճրագով,

օրը ցերեկով  
մարդ էին փնտրում, սակայն... մա՞րդ չկար:  
Մարդը կորել էր,  
ինչպես որ հանկարծ կորչում է ջուրը՝  
անապատներում կամ լեռնածնրապում:  
Եվ նա կորել էր ո՞չ այստեղ միայն՝  
այս Գորշ Գայլ պաշտող միլիոնների մեջ,  
այլև ամենո՞ւր.

աշխարհում ամբողջ

մարդոն զբաղված էր մարդասպանությամբ,  
իսկ սրանք՝ նաև... ազգասպանությամբ՝  
աչքերի առջև բոլո՞ր ազգերի,  
և մե՞ծ ազգերի, հասղո՞ղ ազգերի,  
այս լեռնակղզու ազգովին խաչվող  
բնակիչներից բարեկա՞մ կոչվող  
ազգերի սառած աչքերի առաջ:

Այս, այս գերազնիվ-գերքաղաքակիրթ բարեկամները,  
որոնց սուլու ու փուլու բարեկամություն-բարերանումը

դարձավ այն պազզ,  
որ անմահացրեց հայտնի Հռւդային,  
իսկ հանրահայտնի մի ազգ... մահացրեց՝  
հոգեվարքի մեջ նո՞ր հասկացնելով,  
թե ով աշխարհիս այս ջուրերին է հավատ ընծայում  
միամտաբար և ասպետորեն՝ Դոն Կիխոտի՝ պես,  
նա վերջ ի վերջո մենախոսում է... Համբետի՝ նման՝  
չկարենալով խլացնել մեկ այլ մենախոսություն.  
«Հայոց հարց չկա, քանզի... հայ չկա»...

Սակայն հայ դեռ կա՞ր,  
և հայե՞ր կային:  
Կար աքսորյալի մի քայլք երերուն,  
կար սովագարի աչք անմարդկային,  
և անապատ կար՝  
տա՞ք,  
իբրև ապտակ:

Կար սոդք ու թոհչք համաձարակի,  
բայց և կամքի մի կենտ արագի,  
որ փլատակվող երկինքների տակ  
ու մշտաբորբոք անշեշ կրակի  
շեկ շեղչի վրա կանգնած էր արդեն  
ո՞չ թե մեկ ոտքով,  
այլ երկո՞ւ ոտքով...

Կար եռամատնյա մի խաչակնքում  
և եռամասնյա մի մեծ նպատակ,  
որ պիտի սրանք դեռ կատարեին:

### Նախ՝

կատարեցին միակ կարելին.

թրի-սրի դեմ,  
հրի դեմ, ջրի,  
հրանոթի դեմ ու գնդացըրի,  
երեկվա նման ու վաղվա նման  
մարտնչում էին ակոա-ատամով,  
կովում կրոսնկով,  
թաթով ու ծունկով՝  
Վանում, Ուրֆայում, Մուսայի վրա,  
Գարահիսարի կիսավեր բերդում...  
... անխուսափ մահվան կարմիր սգերթում,  
անհայտ-անվանի սրբազա՞ն խենթեր,  
որ մահվան շնչից չտատանվեցին  
և... դրշակո՞վ չպատանվեցին,  
այլ լոկ հեռափահաս ու բազմադարյան  
իրենց ծփացող ծիրանի արյամբ...

Եվ կատարեցին կիսակարելին.

ահի՞-մահի դեմ,  
հովի-սովի դեմ,  
արնահոսի դեմ  
ու բարբարոսի՝  
ջուրն էին նետում իրենք թե՛ իրենց,  
թե՛ իրենց որդոց,

թույն տալիս իրենց սիրասուն կանանց  
և աղջկներին,  
սպանում մորը,  
սպանում հորը  
և... խելագարվո՞ւմ,  
և... խելագարվո՞ւմ,—  
արդեն կրնակի՝ սրբազան խենթեր,  
որ զորեղ եին, ո՛չ, ամենազո՞ր՝  
այլըս անհաղթ ու անպարտելի,  
այլըս հաղթած ոսդին, աստծուն...

Կատարում էին և... անկարելին.  
այսքանից հետո չէի՞ն մահունում՝  
պահվելով իրենց հարազատների դժակների տակ,  
ապաստանելով ոչ երկոտանի, այլ չորքոտանի  
գազանի որջում,  
ապաստանելով այն միա՞կ աստծուն,  
որ դեռ չէր ժխտված  
և որ կոչվում էր ինչպես Պատահմունք,  
այնպես էլ Դիպված...  
Ապաստանելով, վերջապես, նաև... կանանց տարապին:

Եվ առյուծաձև-արջակոխ լաձեր,  
ձետեր արծվածագ  
ու մանչեր կորյուն,  
որ ծնվել էին կարծես գլխարկով,  
հիմա՝ զինազուրկ և ունայնաձեռ,  
հիմա՝ նշանված կսիթով մահվան,  
այլևս ուժաթափ,  
նաև ուշաթափ՝  
լաչա՞կ կապեցին իրենց գլխներին  
և խառնվեցին թափորին կանանց,  
որպեսպի գուցե հաջողեն փրկվել:

Կարծես գլխարկո՞վ ծնված մայրերից՝  
լաչակը հիմա այս խակ այրերի

գլուխն էր այրում առավել գուցե,  
քան թե շիկացած թասն այն պղնձե,  
որ դրվեց գլխին իրենց հայրերի՝  
լաչակի տակից փայլակ արձակող աչքի դեմ իրենց:

Եվ շրջապատը կայչում էր նրանց՝  
թերեւս ավելի խենեց ձևերով,  
քան առեւանգիչ վաչկատուների բազումները պիտօ  
իրենց մայրերի կողին սուրբխորան  
և քուրիկների երկամբեթ վանքին:

Եվ այս ամենը՝  
լաչակի տակից շանթեր արձակող իրենց աչքի դեմ...

Եվ ով ճողովրեց, փրկվեց մազապուրծ՝  
ո՛չ մի ակնթարթ նա չմոռացավ  
ու երբկիցն չի՝ մոռանալու  
իր կրած անլուր անպատվությունը  
և անպատմելի ողջ պատմությունը  
յուրանոց ու յուր...

Եվ ասում եմ ձեզ՝  
մարգարեի պես.

— Օ՛, կնատարապ այրերի ոխի՞ց վախեցեք կյանքում  
և սարսափեցեք նրանց վրեժի՞ց անբնկանելի:  
Եվ ո՛ւր էլ լինեն այդ կնատարապ այրերի որդիք,  
ինչքա՞ն էլ լինեն իրարից բաժան, իրար անձանաչ՝  
նրանց հաշվեցեք հատո՞ւկ վորագունդ,  
և նրանց շնչից դեռ օդը պիտի լցվի սարսուռով,  
ու հողն ունենա երկրաշարժային գլխապատուտներ...  
Օ՛, կնատարապ այրերի քենի՞ց դողացեք անվերջ  
և սահմոկեցեք վրեժի՞ց նրանց,  
որ սրբազան է այն շարժումի պես,  
ինչ երդում տվող աշն է կատարում  
կրծքի ձախ կողմին՝ սրտին դրվելիս...  
— Ուխտը ուխտակա՞ն, ո՞վ սրբազան խենք,  
Ուխտը ուխտակա՞ն...

Եվ դու՛ր չես ասում, ո՞չ էլ դուք,  
այլ ե՞ս,  
Ես՝ Սիս-Մասիսը,  
այդ ես եմ ասում  
անդո՞վ-անդադա՛ր-անվե՞րջ զնգացող իմ անքուն զանգով,  
Գողթան երգերի չափով մարտական,  
բամբ բամբինների հնչումով հատու  
Սլյան ու Մասիսն են դողանցում անվե՞րջ-անդադա՛ր-անդո՞վ.  
ով ականջ ունի,  
հավատո բլթակ՝  
նա լսում է միշտ,  
լսում է նրանց հանգերգը թնդուն,  
որ թարգմանվում է դարձյալ կույգ բառով.

## ԿՈՉԵՄ ԱՊՐՈՂԱՑ

Հեռագրական մեքենաները  
իրենց երկաթե սուր ժանիքներով  
անվերջ կծոտում ու խածոտում են  
թղթե բարայիկ ժապավենները,  
որ խուսափելով այդ խածոտումից՝  
տարածվում են ջուտ ու գոտևորում համայն աշխարհը՝  
«Վերջին լուրեր»-ով.  
— Ինչ-որ փլուզված հանքում մեռել են  
մի քանի հոգի...  
— Ինչ-որ տեղ մեկին աքսոր են քշել  
կամ սպանել են...  
— Ինչ-որ տեղ ինչ-որ մի հանցապարտի  
չեն մահապարտում...

Եվ անմիջապես գոռում-ձչում են  
աշխարհիս բոլոր օրաթերթերը՝  
տագնապից-ցավից-ցասումից չռված մեծ-մեծ տառերով.  
և ձայնափյուռի կետ-կայաններից  
հաղորդավարներն իրենց թավ-թավշյա-թունավոր ձայնով  
ողբերգականի շեշտերն են շարում

ամեն մի բառի ու տարի վրա.  
շարժանկարի սարքերն են խսկոյն չխսկում ու վխսկում.  
և ամենուրեք ժողովներ (Ճառե՞ր) ու ցուցեր (բողո՞ք),  
թաքուն-բացահայտ սպառնալիքներ  
(կառավարական հուշագրերի բառերով շխսուն) ...

Սակայն, դեռ երե՛կ, մի հա՞նք չէր փլվում,  
այլ մի բովանդակ երկի՞նք անողոք,  
և փլվում ո՞չ մեկ, ո՞չ էլ տասնըմեկ,  
այլ միլիո՞ն ու մեկ թշվառի գլխին,  
և փլվում-փովում աշտարակի պես բարելոնական.  
մարդիկ այնուհետ մոռացան իրենց մայրենի լեզուն՝  
մարդկայններե՞նք...

Եվ երեկ ո՞չ մեկ, ո՞չ էլ տասնըմեկ,  
այլ միլիո՞ն ու մեկ մարդ էր հինորում  
մի համատարած-բացօթյա բանտում...  
Եվ սովամահ էր լինում, բռնությամբ,  
քարից հաց քամող մի ամբո՞ղջ երկիր...  
Աքսոր էր քշվում բովանդա՞կ մի ազգ  
ու տաշվում-մաշվում բովանդա՞կ մի ցեղ...

Եվ այն ժամանակ, երե՛կ տակավին,  
ո՞ւր էր աշխարհը և ի՞նչ էր անում,  
ո՞ւր էր ականջը հանուր մարդկության,  
որ չանսաց, օ ո՞չ, չուզեցա՞լ լսել  
մի ամբողջ ազգի կանչը կաղկանձուն.  
— Կոչեմ ապրողա՞ց...

Եվ այն ժամանակ, երե՛կ տակավին,  
ո՞ւր էր աշխարհը և ի՞նչ էր անում,  
ո՞ւր էր օրենքը հանուր մարդկության,  
որ հանցապարտին չմահապարտեց...

Նա հանցապարտին չմահապարտեց  
և դրանով իսկ բրդեց մի ապուր,

որ 20 տարի անցնելուց հետո  
ինչ ինքը խոթե՞ց ամբողջ 10 տարի:

Եվ ասում եմ ձեզ՝  
ուշացածի պես.

— Մե՞ր, նա՛խ մեր, լո՛կ մեր ապրածը հետո  
վերապրեց ինքը աշխարհը համայն՝  
երբ Վիլիելմ Հաջին Հիտլերին ծնեց,  
և Թաթեաթը ծնեց Նեբբելդին.  
երբ չերեն իրեն էսէս անվանեց,  
և ևնիչերին կոչվեց գետապու,  
շեհիդն ու միլլին՝ պատերապմ տղոտալ,  
Նոր կարգ՝ հիքմեթի հոքյումեթը հին,  
հազար դին ասվածը՝ նորակոչ նացիզմ,  
և ցեղը՝ ռասաս,  
ժոյն թուրքը՝ ֆաշիստ...

Եվ ասում եմ ձեզ՝  
ուշացածի պես,  
կրկնում եմ նորից,  
որ կրկնեք և դուք.

— Հին Զանկըրըց իր սկիզբն առավ Բուխենվալդը նոր,  
Օսվենցիմների սկիզբը դրվեց Դեր-Զորում միայն,  
Մայդանեկները Զիարեններում իհմնադրեցին,  
Դախառները, Էնկյուրիներում, Ռաքքայում, Բաքում...

Մեր ականջները՝  
յուրաքանչյուրը մի զանգակատուն,  
լցված են ցայսօր կաղկանձ-կոոցով,  
քրքիչով խենեց,  
լացով ու կոծով,  
ճիշով օգնության,  
վրեժի գոչով,  
որ ասդրստում են թմբկաթաղանթը մեր ականջների:  
Ու մեր աչքերի ցանցամաշկը խեղճ  
իր մեջ է ցայսօր վանդակած պահում

այն պատկերները անպատկերելի,  
որ կրկնվելով նորացան էլի  
20—25—30 տարի անցնելուց հետո՝  
լեհերի հողում,  
ուստական բազում քաղաքների մեջ  
ու պատերի տակ Հիրոսիմայի...

Կրտսերը դատվեց  
և (ողջ աշխարհն է վերատին գոչում)  
դեռ պիտի՝ դատվի այսօր ու վաղը.  
սպանությանը վաղեմիության ժամկետ չի կայում,  
ինչպես չի կայում ներկը կրակին:  
Կրտսերը դատվեց  
ու դեռ կդատվի,  
մինչդեռ ավագը... ճանաչվեց անպարտ,  
մինչդեռ ավագը... քայլում է հպարտ՝  
այլնըս մաքուր, օսբայված, կոկիկ,  
երեսին ծպիտ՝ դիմակ չհանվող,  
և ձեռքն է մեկնում ու ձեռք է սեղմում:  
Ու ես չեմ կարող կամաց չգոչել.  
սեղմելուց առաջ դուք ստուգեցեք  
նրանց ձեռքերը:

Դուք ստուգեցեք նրանց ձեռքերը  
և... իհմաց նույնիսկ,  
կես հարյուրամյակ անցնելուց հետո,  
նրանց ինամված եղունգների տակ  
դարձյալ կտեսնեք... լերդացած արյուն...

Մի՛ նայեք նրանց այս կրկովավիլ-գոռող քայլվածքին:  
Ինչքան էլ նրանք առաջոր քայլեն քաները տնկած՝  
գլխահակ են միշտ նրանք մեր հանդեպ,  
ինչպես անպտուղ-փչակված ուռին՝ կենարար ջրի...  
Ու եթե նրանք  
քայլում են այսպես փքված-բարձրավիկ՝  
լոկ այն պատճառով,  
որ խուսափում են մեր հայացքներին գեր հանդիպելուց...

Մեր ազգանունից՝ այս «յան»-ից միայն,  
պիտի՝ որ նրանք սովորան առավել,  
քան թե Մակբեթը Դունկանի շուրջից...  
Այևս նրանց կանայք միգուցե  
իրենց երեսին չարավ չեն գցում,  
բայց տղամարդկանց երեսն ու դեմքը  
պիտի՝ որ ընդմիշտ չարաված մնա՝  
ամոթի՝ անմաշ և անպոկելի տաք սարդոստայնով  
և զարհուրանքի՝, և զարհուրանքի՝ ցանցով գունաքափ...  
Ու եթե իիմա ե՞ս չասեմ, ապա մեռեներն անթաղ  
պիտի հաստատեն իրենց սուր ճիշո՞վ,  
որ թռչուն-գավան որքան էլ կտցեն-գիշատեն իրենց՝  
մեռեներն անթաղ մասկալիւմ են կրկին ու կրկին  
և ամեն գիշեր սուսուփուս մտնում  
պաղ մարդասպանի անկողինը տաք՝  
պառկելով նրա ու կնոջ միջև...  
  
Որքան էլ դիերն արյունաքամվեն՝  
հողս իրենց արյամբ արծնապատելով,  
ամեն առավոտ, դարձյալ ու կրկի՞ն,  
իրենց արյունը խառնում են նրանք  
ու պիտի խառնեն դարձյալ ու կրկի՞ն  
արյունահեղի և իր լակոտի  
ըմպելիք սուրձին կամ օշարակին...  
  
Բյուր մեռեների անխուփ աչքերն են նրանց հետևում  
ա՛յն արևի պես, որ պոկ չի գալիս  
իրեն նայողի հայցքից մթնած:  
Եվ բաց մնացած միլիոն աչքերի մեռելափայլ՝  
իբրև ածելի՝,  
մահվան ահուելի իր երթեւեն է անվերջ կատարում  
սրանց ինքնագոր երեսի վրա, որ օճառվում է  
կտրված գլխի արյամբ համակված գիսակ-վրձինով  
ու լվացվում է լեղի և աղի արցունքով միայն...  
  
Եվ նահատակված-վլված կուսերի, հարսների, կանանց  
էլեկտրահաղորդ անփուտ մասերը, ինքնահյուսվելով,

դարձել-դառնում են ու դառնան պիտի  
փափուկ-մետաքսն մի գիշերանոց՝  
նրանց դուստրերի,  
նրանց հարսների  
ու կանանց համար,—  
մի գիշերանո՞ց,  
որ իրականում այրող ու վառող վապաշապիկ է...  
  
Հրաշքով փրկված,  
աշխարհեաշխարհ զարկված որբերի ողբը ողորմուլ  
և այրիների անեծքը անծովս,  
որ բռնի կլլված զսպանակի պես թռչում անդրադարձ,  
բայց չհասնելով ո՞չ սատանային և ո՞չ էլ աստծուն՝  
վերադառնում է զսպանակաթափ,—  
վերադառնալով բնակվում է նա  
այս անգամ արդեն նրանց տներուն,  
ովքեր հատեցին շիղը այրության  
և այրիության գիրը տպեցին  
ձակատի վրա մի ո՞ղ աշխարհի.  
բնակվում այնտեղ՝ աղակի տեղակ,  
վսրձք ու օրինության տեղը գրավում՝  
նրանց տներից դռւրս վրնդելով  
եղած ու չեղած շիներին բարի,  
ծղրիդին անգամ,  
ձոիկին նաև...  
  
Կապված ենք, այսպե՞ս, կապված ենք իրար՝  
ո՞չ սիամական երկվորյակի այես,  
այլ իբրև երկու իտեղձ տաժանակի՞ր.  
մենք՝ մեր ցավերի ծանրությամբ տանջող  
ու մեր հատուցման արդար պահանջով,  
իսկ նրանք՝ իրենց ամոթով (գուցե՞),  
իսկ նբանք՝ իրենց սոսկումով (հաստա՞տ) :  
Կապված ենք, այսպե՞ս, կապված ենք ամուր  
ու չենք բաժանվում ու չենք բաժանվի,  
մինչև կաթ թափած, ո՞չ, արյո՞ւն թափած  
19—Պ. Սևակ, Երկ. ժող. 3 հատորով, հ. II

կատուն պատժվի այն վագրի նսան,  
որ Պոտրադամում պատիծն իր կրեց  
առավել արդար և ծնանր ավելի,  
քան Նյուրենբերգի ահեղ ատյանում...

Եվ դարերն անգամ չեն տա թողություն  
թե՛ բոլոր նրանց, ովքեր կրկեցին,  
թե՛ բոլոր նրանց, ովքեր լքեցին:

Սրա՞նք ու նրա՞նք...

Նրա՞նք ու սրա՞նք

աշխարհն այս անմեղ դարձըրին մի մոմ  
և կրակ տվին... երկո՛ւ ծայրերից:  
Եվ այրվում է նա, դարեր շարունակ,  
այրվում-կարծանում երկո՛ւ ծայրերից...  
Իսկ ժողովուրդը՝ ծայրերի մեջտեղ,  
երկու կրակի սղվող արանքում,  
և քանի՛ անգամ գոչեց սրդողած  
ու քանի՛ անգամ դեռ պիտի գոչե.

— Կոչեմ աւրողա՛ց,

ապրողա՛ց կոչեմ...

Եվ մի՞թե, իրո՛ք, անհնարին է աշխարհում լինել  
հսկա կայրություն ու մնալ արդար:  
Ժխտեցնե՛ք, խնդրեմ, ի սե՛ր աստղու...  
Եվ մի՞թե, իրո՛ք, անկարելի է աշխարհում լինել  
ո՛չ նաև ճարպիկ, այլ միայն ճարտար:  
Ժխտեցնե՛ք, խնդրեմ, ի սե՛ր աստղու...  
Ժխտո՞ւմ է մեզ պետք, ո՛չ արդարացում,  
եթե դրանից դյուրին բան չկա,  
և արդարանալ կարող է նույնիսկ Գորշ Գայլ պաշտողը,  
որ դար ու դարեր ուսուցանում է գայլածագերին.  
— «Արդարանալու մի հնար ճարեք  
և... գորդ գողացեք մեշերից թեկուց»...

Բայց արժի՞ արդյոք հայելի ծախել կուլրերի թաղում:  
Ավելի լավ չէ՝ մեռենների մեջ որոնել ողջեր  
ու գոչել նրանց ականջների մեջ՝

ըն աջ ու թե ձախ.

— Բավական է, այս...

Ե՛լ բավական է բղավենք «մեր մեշօ»:  
Եկեք այսուհետ շշնչանք «մեր շո՞ւրջ»,  
որպեսզի գոնե վաղը հասկանանք,  
թե անբռնելի-անհասանելին  
միշտ սկսվում է մի՛միայն այնտեղ,  
ուր ավարտվում է ամենաերկար մեր միշնամատը...  
Ձէ՛, բավական է շշնչանք «մեր մեշօ»:  
Այսուհետ պիտի բղավենք «մեր շուրջ»,  
որպեսզի ընդմիշտ հիշենք, թե ինչպես  
մեր երազանքը, դարե՛ր շարունակ,  
մենք լեցունի մեջ լցրինք՝ չլցվեց,  
մենք դատարկի մեջ լցրինք՝ չմտավ,  
և... մեր լեցունը մեզնից դատարկվեց,  
և... մեզնով լցվեց դատարկն օտարի...

Մեր... հայրենի՞քը մեզնից դատարկվեց:

Բայց... ո՛չ մի վայրկյան, ո՛չ մի ակնթարք,

մենք չե՞նք դատարկվել մեր հայրենիքից:

Մե՞նք սպանվեցինք մեր հայրենիքում,

բայց հայրենիքը մեր մեջ չսպանվե՞ց,

ո՛չ, ապրում է նա կրկնակի՛ լյանքով:

Իսկ ով չսպանվեց, փրկվեց պատահմամբ,

նա աքսորված է իր հայրենիքի՞ց...

Սպակայն... ճշմարիտ-իրավ աքսորը գալիս է հետո,

երբ որ քեզանից ինքը ես աքսորվում,

երբ որ քեզանից զատվում է կարծես կյանքը մեխական,

օտարվում, ապրում անկախ քեզանից,

և ապրում այնտեղ՝,

այն բնագավառ-բնաշններում,

որոնց երեսն է երեսիդ կարուտ,

որոնք արթմնի ու երազի մեջ

Երակում են քնզ,  
ոտքե՞րդ անգամ...

Վաչկատուններից հալածված այսպես՝  
քաղաքակրթված մի վաչկատուն ենք հիմա ինքներս:  
Սակայն վաչկատուն-օտարականի  
թափառաշրջիկ մեր հայացքն առմիշտ նստակյաց դարձել.  
Կարուտի մեխով ու երազանքի ցցով գամվել է  
իր նախնիների ոտնահետքերում...

Եվ ամենուր են մեր մարմինները,  
բայց մեր աչքերը մի՛շտ էլ այնտեղ են՝  
նույնիսկ անունի՛ց զրկված այն երկրում,  
ուր տաճարների բազում խաչերը  
տեղագրության դաս էին տալիս  
երկնքի անգետ և անզրագետ հավերին անգամ  
որ մոլորվել են հիմա թերևն՝  
հարավ-արևմելք,  
հյուսիս-արևմուտք խառնելով իրար...

Եվ ամենուր են մեր մարմինները.  
բայց մեր աչքերը այնտեղ են,  
այնտե՛ղ,  
ուր ստվերներն են հսկումի կանգնում  
ավերակների դիակի հանդեպ.  
ուր բույսերն անգամ փոխել են իրենց հին ձեռագիրը՝  
դառնալով խառնակ-անընթեռնելի.  
ուր մորուքավոր թոնիրները ծեր՝  
վաղո՛ւց ածիլված հրով ու ջրով,  
պարարտացնում են իրենց մոխիրով եղինջ ու տատասկ,  
որ բեղավորվի հողը՝ վագրի պես,  
բայց և չհնձվի ու դեկ չդառնա  
ա՛յն անտիրական-անտեր աշխարհում,  
որ ինքն է խոտի մի դեկ վիթխարի  
և... շունն է նստած այդ դեկի վրա...

Իշխում է այնտեղ կիսատ ու պռատ մենակությունը,  
որ չի երկարում ու չի կարձանում...  
Եվ իր մատնային թվաբանությամբ  
կարող է հաշվել նույնիսկ մանուկը  
այնտեղ բնակվող հատուկներին,  
որ սովահարի իրենց կարմըրուկ քունը ներկում են  
մեր ձերմակ հացով,  
ինչ չկա՝ արդեն,  
և իրենց դատա՛րկ-դատա՛րկ գրպանի քար լուսայանը  
ձայն են ընծայում ա՛յն ոսկիներով,  
ինչ մեզնից խլել-խժողել են վաղո՛ւց...

Մի անփառունակ կյանքի հետ մեկտեղ,  
որ խառնիխուռն է Կորասի նման,  
այնտեղ կա միայն փոշի փառավոր,  
որ միշտ լցվում է նրանց ձաշի՛ մեջ,  
իսկ մեր՝ աչքերի՛,  
մեր ա՛յն աչքերի,  
որ միշտ այնտեղ են,  
մինչ մեր մարմինը ամենուրեք է,  
սակայն ոչ այնտեղ...

Եվ ապրում ենք մենք՝  
մեզնից դատարկված մեր հայրենիքը  
ու քաղաքակիրթ վաչկատուն դարձած իր կավակները,  
ապրում ենք այսպես՝ կրկնակի՛ կյանքով.  
կրկնակի՛,  
քանզի ամենապորեղ բանը աշխարհում  
հիշողությունն է,  
որ եթե նույնիսկ և ծակոտկեն է,  
ապա ոչ երբեք տոպրակի նման,  
այլ ա՛յն վանդակի, ա՛յն ամուր ցանցի,  
որի մեջ ցմահ դատապարտվածն է ստիպված ապրում...

Կան անուժ մարդիկ՝ ինչքա՞ն ցանկանաք,  
բայց անհո՞ւ լզ մարդիկ՝ միայն փնտրեցեք

այն գերիրական էլլորադոյում,  
որ հիմա ունի ամեն մի քաղաք,  
և որ կոչվում է «խելազարանոց»...  
Ուստի, խնդրում եմ, սղագի՞ր բերեք:  
Սղագի՞ր բերեք, որ սղագի մեր հուշերի չուն՝  
նետպած քարերից անվերջ փշրտվող,  
իրար հետամուտ-իրար ջարդուսող  
նրանց լճային ալիբումների տագնապը,

որ մեկ՝

փետուրի նման կամ տաշեղի պես,  
ցուցադրում է աստղերի առաջ և արեգակի,  
իրեն աճուրդի հանված առարկա,  
որին գին տվող չկա՝ ու չկա ...

Եվ հուշերը մեր՝

Երեկ-եռանդվա և հավարամյա՝ մեր հուշերը կեռ,  
թե՛ ինձ են կախում, թե՛ ձեզ են կախում  
պատմության ժանգու հարցականներից՝  
այս անգամ ո՛չ թե մսագործի պես,  
այլ այսպես, ինչպես թռչունն են կախում,  
ողջ ու կենդանի՝ թռչունն ընտանի,  
որ մի՛ շտ թարտա,  
անվե՛րջ թարտա...

Եվ հիմա բերեք ձայնագրական նորօրյա մի սարք,  
որ ձայնագրի  
մեր թարտոցի առթած աղմուկի ծվենները գեթ,  
մեր մկանների խաղի ժխորը  
ու մեր զղերի լարման ձայթումը,  
որ կարիք չունեն ո՛չ մի աճուրդի,  
փոռել ենք ձրի՝, վերցրեցե՛ք-կերե՛ք,  
անո՞ւշ մարսական...

Բայց այս հուշերը,  
Երեկ-եռանդվա և հավարամյա այս հուշերը մեր,  
ա՛խ, կու չեն գնում.  
Կես ձանապարհին վավում են-մնում

խակ պտուղի պես,  
ո՛չ, կատվի ձագի,  
վավում-մնում են մեր կոկորդի մեջ,  
մեր ա՛յն կոկորդի, որի շուրջ բոլոր  
կորած-կորցյած մեր գավառների, շեն ու քաղաքի  
տեղանունները ջարան առ ջարան  
հյուսվել-ոլորվել-դարձել են պարան  
ու խեղդում են մեզ  
սպանելու պես,  
բայց—դիտավորյա՛լ—չեն ել սպանում...

Եվ մեզնից ծնված մանուկների՝ մեջ,  
մինչև կամ նրանց կերակրությունների՝,  
նո՛վու տառապանքը՝ աղի փշարեն,  
անլուց է մուռմ ավագի նման,  
նո՛վու անկրկնելին-եղակին-մեկը,  
որ չի հասկացվում ամբողջ աշխարհից  
և չի հասկացվում լոկ ա՛յն պատճառով,  
որ անկրկնելի՛-եղակի՛-մեկ է:

... Տասնիինգ դար է, ինչ խում ենք այն,  
որ անգիր գիտի նաև աշխարհը.  
«Խնդրեցեք՝ տացի՛»:

Ո՛չ, սուտ է, Հիսո՞ւա,  
ո՛չ, կարեկի է շարունակ փնտրել,  
փնտրել մեզ նման,  
բայց և չգտնե՞լ:  
Եվ կարեկի է չգտնել ոչի՞նչ,  
նաև ամե՞ն ինչ չգտնել կյանքում,  
նաև ամե՞ն ինչ, բայց ոչ... հայրենիք:  
Հայրենիքն այս է, որ չեն որոնում:  
Հայրենիքն այս է, որ գտնված է  
ի սկզբանե, ի ծնե և միշտ,  
ուրեմն նաև չի էլ կորչում:  
Իսկ մերը... կորա՞վ...  
Եվ ընդմի՞շտ:

Օ՛, ո՛չ:

Հայրենիքն այն է, որ ոչ թե կորչում,

այլ ընդամենը հափշտակվում է,

ինչպես որ ձեռքի ափը չի կորչում,

երբ նա փակվում է,

բայց և չի կարող միշտ մնալ փակված,

ինչպես հայրենին՝ միշտ հափշտակված...

Եվ չի շփոթվում մարդն չի իրերին  
լոկ այն պատճառով,

որ հույս-հավատի լքումից հետո

մնում է դարձյալ հրաշքի անմեռ ակնկալիքը,

վասնվի մեր մեջ ամեն բանից վերջ,

ամենայն կարգի մահից հետո է մեռնում մանուկը՝

հրաշքներ ծնող-սնող մանուկը:

Իսկ մերպեսներից ամեն մեկին մեջ, միաժամանակ՝

ապրում է արդեն մի քանի մանուկ՝

նրանք, որ մեռան չծնված նույնիսկ,

ընդմիշտ համրացան՝ խոսելուց առաջ:

Եվ ճիշտ է, ավանդ, որ մեր ձեռքերը դատարկ մնացին,

բայց մեր աչքերը... լեցուն-լեցուն են,

և արդեն լնցուն

ո՞չ թե արցունքով և ո՞չ էլ արյամբ,

այլ հոծ հավատով, խտացած հույսով՝

այն մշտանորոգ անմարմին կույսով,

որին շաննարի հուրիկի նուան

ինչքան էլ լլկեն ողջ գիշերն ի լոյս՝

լուսաբացի հետ միշտ դառնում է... կուս:

Սիա թե ինչու երբ ես գոչում եմ.

— Կոչեմ ապրողաց,

ինձ ձայն են տալիս ոչ թե գիշատիչ ագռավ-ցիները,

արձագանքում են ոչ թե բորենի-գալյաշները,

այլ բոլոր նրանք, ովքեր քաջ գիտեն,

որ... կոճդ է դառնում մարդը գիշատված

և իր զսի շուրջ աճած սուսկերով

թռւնավորում է իր ողջ բոլորքը,

բայց երբ փորձում են մի... ա՛զգ գլխատեկ՝  
դառնում է կարծես աս մի... թթենի՝  
նորից նորանում,  
դալարում դարձյալ...

Նրանք են լսում և արձագանքում,

ովքեր քաջ գիտեն

(իրենց աչքերով),

թև մեր տան ծինին ինչպես է մաշվեկ՝

աղետի առաջ բացվել-փակվելուց.

ովքեր քաջ գիտեն, որ այլոց համար

մինչ նահանջ տարին չորսից մեկն է լոկ՝

մեկ համար միշտ էլ նահանջ էր տարին

ու փետրվարը՝ միշտ 28 օր...

Բայց գիտեն նաև, քաջ գիտեն, որ մենք

մենք էլ, վերջապես, մարդ ենք հասարակ,

ոչ թե տանջանքի մի սարք ու սարված,

և պիտի՝ պիծնի տանջանքն այդ մի օր,

մանավանդ որ կան պատեր այնպիսի,

որոնք քանդվում են ճակատով նաև,

եթե չեն պահպան թիկունքով օտար,

օտար՝ թիկունքով, որ հոգնել գիտի:

Լսում են նրանք և արձագանքում:

Ու... չեն պահանջում արյան գինն իրենց,

այլ պահանջում են իրենց այդ արյունը,

որ հեղեղել է սարեր ու ձորեր,

որ ծեր ծերպերի ներսն էլ է ծորել,

սակայն չի կորել,

ինչպես չեն կորել

մեր միլիոնավոր մեռեներն, այո՛,

քանի... չեն ենում շիրիմից իրենց

լոկ նրանք, ովքեր ունեն շիրմաքար,

որ նրանց ելքի դռնակն է փակում,

մինչ միլիոնավոր մեռեները մեր՝

կոկված և՛ շիրմից, և՛ շիրմաքարից,

միշտ էլ եկել են ու ելնում են դուրս՝  
քառապատկելով շարքերն ապրողաց.

— Կոչեմ ապրողաց:

Մեր մեռելները մեր հաշվի՝ մեջ են,  
մեր հաշվի՝ մեջ են ու... կաշվի՝ մեջ են,  
քանզի մենք, իրո՞ք, կապված ենք նրանց հիշատակներին,  
ինչպես մանուկը իր մորը՝ պորտով:

Մենք նրանց մեջ ենք,  
ու մե՞ր մեջ՝ նրանք,  
մեր բջիջների՝, մեր ոսկորի՝ մեջ,  
մե՞ր, մեր ծնվելիք թոռ ու ծոռի՝ մեջ:  
Ու եթե նույնիսկ մենք հոգնենք մի օր,  
սրանք՝ ապրելով մեր մեջ ու սրանց,  
մեր հոդերի՝ մեջ, սրանց մատների՝,  
աստվածաշնչան Այրի կնոջ պես՝ առանց հոգնելու,  
միշտ Դատավորի դուռը կըախտեն՝ այնքան ժամանակ,  
մինչև չասեն. «Ե՛կ, դատեցայց զայրին»...

Ու երբ գոչում եմ.

— Կոչեմ ապրողաց,  
ինձ ձայն են տալիս նրանք, որ երեկ  
խեղճ գաղլականի ցուպի փոխարեն իրենց ձեռքն առան  
անրադաշտիրիմ մի նահատակի ապդր կամ սրունք,  
և, Ահարոնի գավազանի պես, ոսկորն այդ ծաղկեց՝  
անարդ թշնամուն ապացուցելով,  
որ թեպետ մեշեթն ավերակված է,  
բայց Ալ Մեհրաբը դեռ մնացել է,  
դեռ մնացել է... Արարատի՝ շուրջ...

Եվ իսկապես էլ.  
այն, ինչ կատարվեց,  
մի նորադարյան ջրիեղեղ էր խոլ,  
որ անմարդկային աշխարհում ապրող  
մի ողջ մարդկության ջնջել սպառնաց,  
առաջան մոռացավ ու մտահանեց,  
որ Արարատն էր, ինչ Արարատն էր Նոյան փրկիչը,

որ Արարատի՝, ինչ Արարատի ստորոտներում  
ապրեց, բազմացավ մարդու սերունդը:

Նաև այս անգամ նոյնը կատարվեց:

Ու մղձավանջը գնալով քաշվեց իր ափերի մեջ,  
որոնք վերստին կանաչ ներկեցին իրենց շուրջերը,  
որ ամպավատված բիլ երկնքի հետ համբուրվեն հեռվում  
և ծնեն կավակ՝

մոտավոր տեսքով պարզ հորիզոնի:

Գիշերվա ամբողջ բովանդակությունն ինքն իրեն շրջեց՝  
աստանի վրա,

և բյուր երկրային աստղերն օրեցօր

կետադրեցին խառնակ գիշերը

իրենց լուսամիտ կենսիւմացությամբ:

Բոլոր արբազան խենթերի գանգից ժայթքած արյունը  
դարձավ դրոշակ:

Կախաղաններից ճոճված սրբերի վերջին խոսքերը  
դարձան անուններ նորածինների:

Եվ ջրիեղեղից մասսա՝ մբ ապատված երկիրն այս փոքրիկ  
մեծ ովուն նման փշերն իր ցցեց  
կեռ ատամի դեմ օձացող մահվան,  
և ամեն մի փուշ տնկվեց տունկի՝ պես,

ծաղկի՝ պես բացվեց,  
շիվի՝ պես լցվեց  
ավշով ու հյութով, խոստումով մրգի...  
Եվ մինչև անգամ մեր բոռնցքները  
արմատ ձգեցին ու հագան սաղարթ՝  
դառնալով ծառեր...

... Մեռնողը հարյավ,  
ապրողը ապրեց...

— Կոչեմ ապրողաց:

Եվ իիմա այն տունն, ուր մենք չենք ապրում,  
եթե լեցուն է չարք ու շեյթանով,  
ապա այն տունը, ուր ապրում ենք մենք,

դարձել է արդեն սրբության խորան,  
մասունքի ծաղկոց, տապկոց նշխարի:  
Ու եթե երեկ թվակառ չունեին լեզու,  
այսօր՝ այնև պերճախոսության ուսուցիչ դարձած՝  
դասեր են տալիս և՛ թվատներին, և՛ կակապներին,  
վերածննդի ու վերապրումի գրգռի՛ դասեր՝  
նույնիսկ ակամա ապացուցելով,  
որ սրածումից չի անհետանում բովանդակ մի ազգ,  
ինչպես որ սեզը՝ քաղ ու քաղիանից,  
նույնիսկ ակամա ապացուցելով,  
որ մոլախոտի ու հացարույսի վեճը դարավոր  
միշտ ավարտվում է հնձով, աղացով,  
փոռվ ու հացով  
և ապրողների կոչունք-կնունքի խնդությամբ թնդուն...

— Կոչեմ ապրողա՛ց:

Եվ ո՞վ է ասում, թե դուք ծով չունեք:  
Չեր Արյան ծովը ավելի մեծ է Մեծ կամ Խաղաղից,  
ծովը Քրտինքի՛ Արշանտականից ավելի խորունկ,  
Վրեժի ծովը՝ ավելի ահեղ, քան Սառուցյալը,  
իսկ ծովն Արցունքի՛ ...

Պե՛տք չեն արցունքներ:

Նրանց փոխարեն

թող հոսի ավո՛ն, թող հոսի քրտի՛նք  
ու սրբագրի վրիտակները նույնիսկ բնության՝  
ապառաժները դարձնելով հնձան ճմելիք գինու,  
առապարները՝ քաց շտեմարեն հացի և մրգի,  
անապատները՝ շեն-ապատների բաց ցուցահանդես,  
որպեսպի ամեն կտուրի ներքո, ամեն հարկի տակ,  
բախտավորության հարաները մահճում  
նորածնի հետ, երկվորյակի պես,  
ապահովությո՛ն բերեն լուս աշխարի,  
և ամեն տան մեջ խոսուն շշերը  
երապկոտ գինու շուրթերը բացեն,  
և ամեն տան մեջ, «Հայր մեր»-ի նման,

հոլովի մեր նոր նշանաբանը.

— Մեր թափված գինին

մեր ջարդված շշին թող մատադ լինի:  
Գինին, բայց երբեք ո՛չ արյունը բորբ,  
շշին, բայց երբեք ո՛չ երկր՛ն ավեր...

Եվ պետք չէ հիմա շարոց-շարական,  
նաև պատարագ ու հոգեհանգիստ:

Հողն ինքն է երգում իր ընդերքների մթին կոկորդով,  
նվազակցությամբ իր ջրվեժների,  
իր քամիների խմբերգով զորեղ,  
Մաւյաց անկեպկակ վասների հուժկու մենակատարմանը՝  
ի տես բյուրաբյուր ա՛յն հանդիսատես լաւագ ու լուսների,  
որ հիացմունքից թարթում են իրենց աչքերը շաղուն  
և ավելի են թթոռուն-ապրոյ,  
քան թե առկայծող աստղերը վերին:

— Կոչեմ ապրողա՛ց,

կոչեմ, վերապրած ժողովո՛ւրդ իմ, քե՛զ,  
որ ունես աչքեր, այն էլ ի՞նչ աչքեր,  
բայց ավելի ես տեսնում, առա՛յմ, քո ականջներո՛վ:

Ել ես, որ եղա տարաբախու վկան լացիդ ու կոծիդ  
և տառապանքիդ անոթը դարձա,

կործվա՛ծ անոթը.

որ վկան եղա սոսկումիդ ահեղ  
և զարևուշներիդ պահեստը դարձա,  
անտակ պահեստը.

որ վկան եղա ցասումիդ նաև,  
և ծառացումիդ, և ընդպկումիդ,  
ու դարձա նրանց խորհրդանիշը՝  
հողի մեջ խրված հսկա նիվակի սլաքը ցցուն.  
որ նաև ցայսօր ենուն անկատար  
երապեսք եմ քո, իղձե երկկատար,  
բայց նաև վկան, բախտավո՛ր վկան  
նահատակներիդ վերածննդի,  
վերապրողներիդ խանդ ու եռանդի,—

Ես ասում եմ քեզ՝  
պատվիրանի պես.  
Դո՛ւ, որ վաղուց ես կոչվում ժողովուրդ,  
թեպետ ակամա դեռ ժողոված չես,  
տակավին ցիր ես, ցան ես և սփյուռք,—  
դու այսուհետև ժողովվես պիտի  
նախ՝ ինքդ քո մե՛ջ,

և ապա՝ քո շո՛ւրջ՝  
իիշելով, որ այս ջարդ-կոտորածը, նախճիր-եղեռնը  
երե՛կ չսկսվեց, երե՛կ չսկսվեց...

5000 տարվա,  
500 տարվա  
և 50 տարվա

պատմություն ունի այդ ջարդ-սպանդը, նախճիր-եղեռնը,  
որ չի ավարտվել և չի ավարտվում.  
Լարմիր էր, հիմա ճերմակ է դարձել,  
և հիմա արդեն նա գանգ չի հատում,  
այլ գրավում է,  
չի կտրում ձեռքեր, այլ վարձում ընդմիջու,  
չի առևանգում, այլ հմայում է,  
չի ենորւմ արյուն, այլ ծախ է առնում  
և, միացնելով երակ-երակի,  
իր ամենակուլ արյանն է խառնում...

Ու կրկնում եմ ես՝  
ահապանգի պես.

— Այս ջարդ-սպանդը երե՛կ չսկսվեց,  
և ոչ էլ վազն է նա ավարտվելու,  
ուստի վախեցեք սպանդից ճերմա՛կ  
ավելի, քան թե եղեռնից կարմի՛ր.  
ուստի կրկնեցեք ինձ հետ միատեղ,  
ինչպես երդումի խոսքերն են կրկնում.  
— Բռնի ձուլվելիս թունավորում են ձուլողին՝ արյամբ,  
ինքնին ձուլվելիս թունավորվում են իրենք՝ արյունով:  
Ուստի թող գործեն ձեր հին զենքերը՝

ձեր ատամնե՛րը ու ձեր ոտքե՛րը.

ձեր ատամնե՛րը  
կովելու համար ու պաշտպանվելու  
կամ ժողովվելու ինքներդ ձեր մեջ,  
իսկ ձեր ոտքե՛րը՝  
վերաբառնալու, տուն գալու համար  
կամ ժողովվելու ինքներդ ձեր շուրջ...

Եվ արժի՞ ասել, որ ինչպես երեկ, այնպիս էլ այսօր  
օտարության մեջ ապատ լինեն էլ ա՛յլ գերություն է,  
իսկ տան մեջ նույնիսկ գերի լինելը՝ ա՛յլ ապատություն:  
Եվ արժի՞ այսօր, որ ես ինքը ինձ մանրեմ՝ հարդի պես:  
Թողե՛ք ես մսամ ինչպես կամ ցորուն:  
Եվ թողե՛ք նաև ես մնամ իմ նոր դավանանքի հետ,  
որ Երրորդության փոխարեն ունի լոկ Երկրորդություն:  
Եվ անզիր արեք իմ աղոթքը նոր.  
«Յանուն Մոլորեալ Ոչխարի. Յանուն Անառակ Որդւոյ»...

— Առչեմ ապրողա՞ց՝  
մղորյաներին:

Աքսորը միայն բռնի չի լինում,  
այլև կամովին,  
և առավել է տիսուր ու տրտում ոչ մեռելոցը,  
այլ գերելոցը:

Օտարության մեջ ապատ լինեն էլ ա՛յլ գերություն է,  
և տան մեջ նույնիսկ գերի լինելը՝ ա՛յլ ապատություն:  
Իսկ տունն էլ տո՛ն չէ, այլ հայրենի՛ք է,

և ի՞նչ հայրենիք.  
գայի երախից ձեռքերու խլված մի Դավիթ մանուկ,  
երկանքաքարի ակոայից պրծած-ողջանդամ մի տերմ...  
Եվ ո՛վ կատնի, որտե՞ղ կգտնի  
այսախի մեկ այլ՝ Երկո՞րդ հայրենիք  
և ի՞նչ հայրենիք...

Թերևս աշխարհում ո՛չ մի հայրենիք,  
մե՛ծ ու վիթխարի, վորե՞ղ ու կարող ո՛չ մի հայրենիք  
յուրայինների սրտում ու հոգում չի հարուցանում

այնքա՞ն սեր անանց ու կարո՞տ այնքան,  
որքան այս մի բոււշ-բռում սեղմըված երկիրը Հայոց.  
ո՞չ ոք աշխարհում իր հայրենիքը մեծ ու մեծանուն  
չի հապատանուր այնպիսի մանո՞ւկ միամտությամբ,  
այնքա՞ն ինքնամբո և անվճարապա՞հ,  
ինչպես որ սրանք.  
ո՞չ ոք աշխարհում իր հայրենիքը չի տենչում այնպես,  
ինչպես որ սրանք.  
և չի հավատում այնպիսի մանո՞ւկ միամտությամբ,  
ինչպես որ սրանք.  
և չի դոգրողում նրա այսօրվա ու վաղվա վրա,  
ինչպես որ Սրա...  
Սիրածի գրկում՝  
միշտ Սրա՛ մասին.  
բաժակի առաջ՝  
միշտ Սրա՛ մասին.  
աքսորում-բանտում՝  
միշտ Սրա՛ մասին.  
աշխարիի բայոր քառուղիներում՝  
միշտ Սրա՛ մասին.  
ապրելիս՝ Սրա՛,  
մեռնելիս՝ Սրա՛,  
միշտ Սրա՛ մասին...  
Եվ Սրան բնավ չճանաչողը սիխի որ կարծի,  
թե սա երկիր է մի հակայակեա՞ն,  
վիթխարի՛ աշխարի,  
հայրենիք հզո՞ր...  
Եվ իսկապես էլ՝ Ա. Տ. երկիր է մե՛ծ,  
վիթխարի՛ աշխարի,  
հայրենիք հզո՞ր:  
Եվ մի՛ պահանջեք, որ ես ինքըս ինձ մանրեմ՝  
հարոի պիս:  
Թողե՛ք ես մնամ ինչպես կամ ցողուն:  
Ու թողե՛ք նաև ես մնամ իմ նոր պաշտամունքի հետ  
և ամբողջ սրտով ցանկանամ տեսնել,  
որ դուք էլ՝ ինձ պես նորադարձվելով՝

իին աստծու նման, նրա փոխարեն,  
պաշտում եք արդեն մի... ծա՛ռ՝  
թթենի՛ն,  
որ գլխատումից ո՞չ թե չորանում,  
այլ նորանո՞ւմ է...  
— Կոչեմ ապրողա՞ց՝  
նորադարձելի՛ն:  
Մա՞րդ ենք, ո՞չ մանրէ,  
որ բազմանում է՝ իրեն կիսելով:  
Միանալով է ուսրող բազմանում.  
եկեք միանա՞նք:  
Եկեք միանա՞նք,  
որ մեր այս փոքրիկ շա՛տ փոքրիկ հողի երավանքը մնած  
մարմին սրանա մեր միս-ոսկորով.  
և մարմնավորված մեծ երավանքի բուժիչ բարությամբ  
մենք էլ ապատվենք մեր ոխ ու քենի ցածր զգացումից,  
որ դրանով յսկ չնամանանք անգամ մեր ներսում,  
այլ մսանք մեր վեհ նպարտությա՞ն հետ,  
նաև մեր վսեմ աշխայարհանքի՛,  
բայց ավելի շատ՝ մեր ծով բարությա՞ն  
ու մեր բնածին այլասիրությա՞ն,  
որից վրեկելով՝ մենք լարծես մե՞նք չենք,  
կիսավերակ ենք և կանգուն շե՞նք չենք...  
Մենք այսպիսի՞ն ենք  
ու ափտի՛ լինենք:  
Թողած ցավը մեր, ցավը լեռ ու բեռ՝  
կրում ենք ցավը համա՞յն աշխարիի:  
Թողած հոգալ մեր, հոգալ քար ու սար՝  
հոգում ենք հոգալ համա՞յն աշխարիի...  
Թո՞ղ որ համեցող, բայց չանհսմացող արդարությունը  
ամենից առաջ հասնի ամենքի՞ն,  
մեզ՝ միայն վերջո՞ւմ...  
Եվ մեր կսկիծը զսպանակելով՝  
մենք մասնակցում ենք այլոց հանդեսին,  
20—Պ. Սևակ, Երկ. ժող. 3 հաւատորով, հ. II

մասնակցում սրտա՛նց-անմախա՛նք-անքե՛ն...  
թո՛ղ ուրախության ուղղոր գեր վերջո՛ւմ, ամենա՛վերջում,  
իր ծունկը ծալի մեր դռան առաջ՝  
թեանտ ուշացած, բայց միշտ ցանկալի ուխտավորի պես...

Բայց սպառվում է մինչեսկ սրբի համբերությունը,  
ինչպես հոտում է մինչեսկ ջուրը՝ արգելակումով:  
Մենք հաջորդներն ենք Սուրբ Նահատակաց,  
սակայն բնավ էլ սուրբ չենք ինքներըս,


մա՛րդ ենք հասարակ

և... հավատում ենք, որ պիտի դառնա  
մեր յուրաքանչյուր խցակը՝ այսակ միատեղումի,  
և յուրաքանչյուր փշուրը՝ պաշար մոտադուռ վաղվա,  
մնացորդն՝ աճորդ,  
մասունքը՝ մսուրք,  
սփյուռքը՝ ապառք,  
նշխարը՝ աշխարհ...

Եվ այս ասում եք ո՛չ դուք, ո՛չ նրանք,  
այլ ես եմ ասում,  
ես՝ Սիս-Մասիսը,  
անդո՛վ-անդադա՛ր-անվե՛րջ զնգացող իմ անքուն զանգով:  
Գողթան երգերի չափով այլազան,  
բամբ բամբիների հնչումով պես-պես,  
ամենատարբեր ելեջումով շարականների  
Սին ու Մասիսն են զրնգում անվե՛րջ-անդադա՛ր-անդո՛վ.  
ով ականջ ունի,  
բլթակ հավատո՛  
նա պիտի՝ զգա

իմ եռադողանջ զանգի ասմունքը,  
իմ եռաբանյա ասքի դոդանջը.  
իմ եռամատնիա խաչակնքումի շնչող ստվերը.  
— ՈՂԲԱՄ ՄԵՌԵԼՈՇ...  
— ԲԵԿԱՆԵՄ ԸԱՆԹԵՐ...  
— ԿՈՉԵՄ ԱՊՐՈՂԱՇ...

# «ԵՎ ԱՅՐ ՄԻ՝ ՄԱՇՏՈՑ ԱՆՈՒ»



Մենք կայինք նաև Նրանից առաջ,  
Եվ դարե՞ր առաջ:

Մենք բռնությունից խուս էինք տալիս՝  
Բեղուն դաշտերին գերադասելով լեռները քարոտ.  
Իսկ մեզ ոտնկոյն հետապնդողին դիտապատ անում  
Եվ դրանով իսկ անուն ստանում՝  
Կոչելով մեզ Հայկ:

Մենք անջունչ քարը դարձնում էինք ձուկ,  
Չո՛մ,  
Որ անջրդի լեռնալանջերի շիկացած հողից  
Իր փորը վառած՝  
Կիսաբաց բերնով  
Երկրնքից անջուր  
Գոնե անձրնի շիթ էր պահանջում:

Լեռը ծակելով՝  
Մենք նրա միջով ջուր էինք տանում

Ու շրայլ բանում  
Մեր այգիների այրի արգանդին:

Իսկ ամուլ կավին տալիս էլոնք մենք  
Չեզ վարսանդի  
Եվ կոչում կարաս,  
Որի մեջ հետո լողացնում էլոնք գարին մեր մաքուր,  
Եվ մկրտության այդ ջուրը դեղին  
Հարբածությունից նույնիսկ առավել  
Զարմանք էր ավդում այն գոռովներին,  
Որ մեզ այնուհետ  
Տէին հանդըգնում կոչել «քարբարոս»:

Մենք համայ ոսկուն ստիպում էինք նաև մայրանալ՝  
Դառնալ դիցուհու արձան անթերի,  
Եվ այդ կրոգունն անձնատուր ոսկու  
Անվանում էինք Մայր զգաստությանց՝ Մեծըն Անահիտ:

Մենք տալիս էինք անհատակ վիհին մի նոր խորություն,  
Երկնամուխ կիրճին՝ բարձրություն մի նոր  
Եվ... կոչում Գառնի...

Մենք կայինք նաև Նրանից առաջ:  
Մեր արջաների և իշխանների արածի վրա չարածը դրած՝  
Նրանց գործն էինք դեռ շարունակում  
Լարերի վրա բամբ բամբիոների  
Եվ... դա անվանում երգ Վիպասանաց...

Արշակները մեր՝  
Հայրենի հողին ոտքով շփվելով,  
Լոկ հպարտության խոսքերով էին ջուրթերը բանում  
Եվ ըմբերանում տիրականներին:

Մուշեղները մեր՝  
Օտար գորությանն ընդդիմանալիս

Նրանց հարեմը գերի առնելով  
Ու ձեռք չտալով և ոչ մի կնոջ՝  
Առնականության և վեհանձնության դաս էին տալիս,  
Այնպիսի՝ մի դաս,  
Որ ոսդին անգամ անգիր էր անում...

Մենք կայինք նաև Նրանից առաջ:

Մենք աստղերն էինք մեր աչքով զննում,  
Արփալուս էինք թելերով հինում,  
Տաճարից ենում ու թատրոն զնում,  
Վայելում նաև հաճույքը զսեմ  
Մեր այն պարուիի-կաքավողների,  
Որոնց մարմինը նվազ էր լոած  
Եվ որոնք նաև «երգեին ձեռամբ»...

## Բ

Այո՛, մենք կայինք Նրանից առաջ:

Սակայն աշխարհի լայնքի վրայով  
Մի չտեսնըված մրրիկ էր անցել:  
  
Հրեա մի գունատ՝  
Քշված իր երկրից,  
Օտարականի ու հյուրի տեսքով,  
Մնջն իրեն տարավ աշխարհից աշխարհ:

Չորավոր էին աստվածները հին,  
Այնքան զորավոր,  
Որ անկեղծ էին ու չէին ստում:

Իսկ խեղծ ու աղքատ այդ երրայեցին  
Եկավ շաղ տալու խոստումներ օդում,  
Եկավ զինավառ գեղեցիկ ստով...

Միամիտ էին աստվածները հին,  
Միամիտ այնքան,  
Որ ծարավն իրենց հագեցնում էին լոկ արյամք զոհի  
Եվ իրենց քաղցը՝ նույն փոհի մսով:

Իսկ երրայեցին եկավ ասելու.  
«Այս է մարմինն իմ. առեք ու կերեք:  
Այս է արյունն իմ. ըստեցեք սիրով»...

Ուղղամիտ էին աստվածները հին,  
Ուղղամիտ էին՝  
Պարզ դերձակի պես.  
Իրենց հավատի հանդերձը նրանք  
Միշտ ձեռում էին ճիշտ կյանքի վրա:

Իսկ երրայեցին եկավ կարելու  
Մի համընդհանուր- կախարդիչ հանդերձ,  
Որով պիտի որ հավասարվեին  
Եվ պտիտ ու գեր,  
Եվ հաստ ու բարակ...

Ճշտախոս էին աստածները հին,  
Ճշտախոս էին՝  
Երեխայի պես.  
Մարդկանց մարդ էին նրանք անվանում,  
Իսկ իրենց՝ աստված:

Իսկ երրայեցին ասաց. «Մարդ եմ ես»,  
Եվ... դարձավ աստված՝  
«Մարդ եմ» ասելով...

... Չորավոր էին աստվածները հին,  
Այնքան զորավոր,  
Որ անկեղծ էին ու չէին ստում:

Իսկ պատմության մեջ կան ժամանակներ,  
Երբ ով չի սոտում պիտի կործանվի...»

## Գ

Եվ կործանվեցին աստվածները հին:

Մարդիկ,  
Որ երեկ ունեին տարբեր աստվածներ բազում,  
Պարտավոր էին հիմա ունենալ  
Միայն մի՛ աստված,  
Բոյո՞րը՝ լոկ մի՛, միայն մի՛ աստված:  
Եվ չգիտեին,  
Թե ո՞վ է այդ Մին  
Եվ ի՞նչ է ուզում...

Արամապդների, Միհրերի տեղակ,  
Բոցբեղ-բոցմորուք շեկ Վահագներին փոխարինելու  
Եկավ մի հրեա սևմորուք-սնբեղ,  
Եվ Աստղիկների, Անահիտների ու Նանեների  
Երեկվա տեղում այսօր հաստատեց  
Իր մորը լապո՞ւկ, թե՞ ամոթահար:  
Եվ խոսում էին նրանք մի լեզվով,  
Որ չէ՛ ր հասկացվում:

Մեհյանների տեղ ու բագինների,  
Նրանց դեռ տաք-տաք մոխիրի վրա,  
Հասակ նետեցին  
Դեռևս անծեփ և փայտակուր աղոթատեղիք՝  
Իրենց խաչերը սուր մխրճելով  
Նախ՝ սրտերի՝ մեջ,  
Ապա՝ երկընքի՝...  
Ատրուշանների խուրձ-խուրձ բոցերի առատության տեղ  
Կենտ-կենտ հասկերի չար աղքատությամբ

Պաղ-պաղ մոմերն են ուզում դառնալ հաց մի նոր հավատի,  
Որ իրեն կոչում կամավորություն,  
Բայց տարածվում է բռնությամբ անքող...

... Առանց հավատի կյանքում դյուրին չէ նույնիսկ մեռնելը,  
Իսկ ապրելն... արդեն անկարելի է:

Մարդուց խեցին իր հավատը հին,  
Իսկ հավատը նոր հաստատվեց խոսքո՞վ,  
Մի՛միայն խոսքով.  
— Դեռ նորը չկա՞ր:

Ավերվեց հինը ու վլատակվեց,  
Իսկ նորը միայն կառուցվեց խոսքո՞վ,  
Մի՛միայն խոսքով.  
— Դեռ նորը չկա՞ր:

Եվ այսպես՝  
Հանկարծ ու դանդաղորեն  
Ամե՞ն ինչ շրջվեց,  
Տակն ի վեր եղավ,  
Եվ կարօի բերել չէր կարող ոչ ոք.  
— Ինքը շրջողն իսկ չէ՛ ր կարող էլ, չէ՛:

Եվ այսպես՝  
Կյանքից մնաց մի «մեղա»,  
Որ պիտի նաև... բարձր չինչեր:  
Եվ այսպես՝  
Անցավ ողջ հարյո՞ւր տարի,  
Որ կարձ է թվում, երբ գիրք ես կարդում,  
Իսկ երբ ապրում ես և ամեն րոպե  
Զգում ես մաշկի՞դ, զգում ես սրտո՞վ,  
Ուղեղիդ բոլո՞ր ծալքերով՝  
այնժամ...

Դ

Հենց այսպես էինք մենք ապրում այնժամ:

Հայաստան կոչված աշխարհն էլ արդեն  
Լոկ անունով էր Հայաստան կոչվում:

Չոհված արջառի տաքուկ սրտի պես  
Մեր հողի էր կիսված  
Ու բռնի քաշված  
Երկու շիկացած ու սուր շամփուրի,  
Որոնցից մեկը պարսիկն էր բռնել կրակի վրա,  
Մյուսը բռնել էր մումերի վրա նենգ բյուզանդացին:

Խորովզում էինք.

Արցունքի տեղակ  
Մեր ձենձերն էին լաթում-կաթեթում,  
Ասես կամենում իրենց խորովող կրակը մարել:  
Սակայն ձենձերից—այդ ո՞վ չգիտի — չի՝ մարում կրակ,  
Այլ բորբոքվում է մոլությամբ մի նոր:

Մն՝ ր հողի վրա,  
Մե՛ր երկրնքի տակ  
Մենք դարձել էինք օտարի գաղութ:  
Նովիսկ մեր հորը երկրագելու  
Եվ կամ թե որդուն պագելու համար  
Այլ արքունիքից պիտի խնդրեինք մի թույլտվություն,  
Որ եթե հասներ՝  
Պարտավոր էինք համարել շնորհ  
Եվ շնորհակալ մնալ հավիտյան:

Հայաստան կոչված աշխարհը կիսված  
Նստել էր արդեն  
Իրար չկպած ծայրերի վրա ա՛յն աթոռների,  
Որոնց տակ անտակ անդրւնդն էր բացվում:

Բոկ մեր մարմնավոր տերերը բռնոր  
Ունեին լոկ մի մտահոգություն,  
Լոկ մի խոհ բարձը՝  
Իրենց աթո՛ռը,  
Գահո՛վքը իրենց  
Եվ իրենց բա՛րձը:

Միա՛յն չպրկել իրենց վերադաս տիրոջ շնորհից,—  
Զապանակի պես  
Այս միտքն էր նրանց վեր ու վար ճոճում:  
Միա՛յն թե կառչել ու նստած մնալ  
Իրար չկպած ծայրերի վրա ա՛յն աթոռների,  
Որոնց տակ անտակ վիհն էր որոճում...

Ավերակվէ! Էր երկիրը հայոց:  
Ու եթե նրա տերերը տանու  
Գեթ ունենային ապնըվությունը իրենց նախորդի՝  
Նրա պես պիտի մոռային նորեն.  
«Ավերակացըս ո՞ւմ թագավորեմ»...

Ե

Քաջերի սահմանն իրենց զենքն է հենց:  
Քաջեր մի՛շտ էլ կան,  
Չե՛նք է հարկավոր:

Քաջեր մի՛շտ էլ կան,  
Պետք է ասպարե՛զ,  
Որ նո՛վնայն չկար:

Կար միայն պարի՛սպ,  
Որ տարածվում էր աշխարհից աշխարհ:  
Եվ կային նաև ապնիվ ճակատներ,  
Որոնցով երբեք պարիսպ չե՛ս քանդի...

Աշխարհի վրա իշխում էր արդեն մի ճշմարտություն,  
Որ հարյուր տարի,  
Հարյուր ձի՛գ տարի  
Չէր կարողանում իր ճշտությունը կարգին հաստատել.  
Մի ճշմարտությո՞ւն,  
Որ ամեն վայրկյան  
Կամս-ակամս հերքում էր իրեն՝  
Անիբեր բացելով իր մերկությունը  
Եվ խնդրյունը:

Իսկ իսկությո՞ւնը...

Հիսուսը,  
Որ մի հրեա էր ապնիվ,  
Արդեն շա՞տ վաղուց դարձաւ էր իրոք  
Մի բյուզանդացի խորամանկ ու նենց.  
Եվ նոր հավատի նոհեմ-դրախտի պաճուճանքի տակ  
Հին Բյուզանդիոնը նոր հնարներով  
Իր օտարակուկ դժոխքն էր տանում ուրիշ երկրներ,  
Իր կայսերական մականն էր վարկում աշխարհի մեջքին,  
Ա՛յն խեղա աշխարհի,  
Որ վարկի ցավից նույնիսկ տնքայու իրավունք չուներ  
Եվ տնքոցի տեղ  
Դեռ «ալելո՛ւա» պիտի որոտար:

Իսկ իսկությո՞ւնը...

Հավասարության ու եղբայրության ապնիվ քարոզով  
Ուրիշի տուն ու երկիր էր մտնում  
Օտար վարք ու բարք,  
Օտար ծես ու կարգ:

Իսկ իսկություն չէ՞,  
Որ զորքից հետո  
Միշտ էլ լեզուն են մարտադաշտ հանում,

Եվ ինչ չի կարող ո՛չ մի զորք անել՝  
Լեզուն է անում:

Իսկ իսկությո՞ւնը ..

Նոր գաղափարը էլ գաղափար չէր,  
Այլ մի կաղապար,  
Մի նե՛ղ կաղապար,  
Որ արդեն հարյուր տարի էր տևում.  
Ո՛չ թե գաղափար,  
Այլ մի կաղապար,  
Որ երազն անգամ իր մեջ էր ձևում.  
Ո՛չ թե գաղափար,  
Այլ մի կաղապար՝  
Ե՛վ մարմնի համար,  
Որ շնչակտուր հեռում էր, հեռում,  
Ե՛վ հոգու համար,  
Որ վաղուց արդեն ապատ չէր թևում,  
Ե՛վ լեզվի համար...

Գեթ լեզո՞ւն գործեր:  
Մինչդեռ մեր լեզո՞ւն...

## Զ

Իրավունք չկար նրգել երգը մեր,  
Որ դարեր ի վեր  
Հնաել էր լեզվով մեր ոսկեղենիկ.  
Ե՛վ մեն ու մենիկ՝  
Սիրո խոսքերով,  
Ե՛վ ուրախության տաճարների մեջ՝  
Գինու հռոքերով,  
Ե՛վ մեր յոթնօրյա հարսանիքներին՝  
Մեր փակ բակերում,  
Բաց տանիքներին:

Իրավունք չկար նաև նվազել՝  
Ոչ վինի վրա,  
Ոչ էլ բամբիդի:  
Այս կյանքի համար հոգացի՞ր՝  
Պիղծ ես,  
Ե՛վ անօրեն ես,  
Ե՛վ բանադրված:  
«Ամեն ինչ արա հանուն այն կյանքի,  
Որ քեզնից հետո, հետո է գալու»...

Թատրո՞ն ես գնում  
Ուրեմըն պիղծ ես.  
Կեր ու խո՞ւմ անում  
Ուրեմըն պիղծ ես:

Պարի՞ նայեցիր  
Եվ կամ պարեցի՞ր՝  
Ուրեմըն պիղծ ես:  
Սիրասթա՞փ եղար,  
Նոր սե՞ր արեցիր՝  
Ուրեմըն պիղծ ես:  
Այս կյանքի համար գեթ մի՞տք արեցիր՝  
Ուրեմըն պիղծ ես:  
«Ամեն ինչ արա այն կյանքի համար,  
Որ քեզնից հետո, հետո է գալու»...

Եվ այս ամենից, այսքանից հետո  
Իրավունք չկար մինչև իսկ լալու:

Որդո՞ւդ ես սգում  
Ուրեմըն պիղծ ես,  
Ողբում սև օ՞րբ՝  
Ուրեմըն պիղծ ես:  
Իրենց իսկ տված ցավից ես լալիս՝  
Անօրեն ես դու,

Արժանի մահվան:  
Դավանանք կոչված դավի՞ց ես լալիս՝  
Անօրեն ես դու,  
Արժանի մահվան:  
«Մտածիր միայն այն կյանքի մասին,  
Որ քեզնից հետո, հետո է գալու»...

... Եվ այս ամենից, այսքանից հետո՝  
Իրավունք չկար մինչև իսկ... լալու:

## Է

Իրավունք չկար  
Արյան փոխարեն գեթ արցունք ոթել:

Եվ ի՞նչ էր մնում:  
Այլ բան չէր մնում,  
Բան թե աղոթել:

Աղոթել նրան՝  
Այն նոր աստղծուն,  
Որ խոստումներից աչք իսկ՝ չէր բացում,  
Բայց ողջը՝ այնտե՞ղ,  
Բայց ողջը՝ հետո՝,  
Եվ ոչի՞նչ՝ իհմաս,  
Եվ ոչի՞նչ՝ ցածում:

Այլ բան չէր մնում,  
Բան թե աղոթել:

Բայց նրանք նույնիսկ իրենց աստղծուն  
Աղոթում էին... օտար խոսքերով,  
Խոսքեր՝ ոչ պակաս անհասկանալի,  
Քան ինքն այդ աստված:

... Եվ մարդկանց հոգնած պրտերի վրա,  
որ երեկ այնպե՞ս հուլառաւ էին,  
Այնպե՞ս զգայիկ,  
Իշել էր արդեն անտարբերություն մի կործանարար  
Ե՛վ վաղվա հանդեա,  
Եվ ապագայի:

Ոչ ոք չգիտեր՝ վաղն ի՞նչ կբերի:  
Եվ ապագայի երաշխիք չկա՞ր:  
Բերք չէին տալիս արտերը բերրի:  
Նովսիսկ խոստացյալ երկինքը վերին  
Դարձել էր մի կեղծ-անկենդան նկար:

Անդընդանում էր մի անհայտություն,  
Անորոշություն մի ամենաքամ,  
Որ վատ է անգամ որոշյալ մահից:  
Մի անհայտություն, որ ինքն էր դարձել  
Երկրի իրական տիրամալը չար:  
Եվ կործանումի տուր հոտ էր փշում  
Ո՛չ միայն հացից, ջրից ու լողից.  
Այլ նաև օդից ու քամուց անգամ:

Պետք էր, շու՞տ էր պետք ինչ-որ բան անել,  
Սակայն ի՞նչ անել և ինչպե՞ս, ինչպե՞ս:

Ու բոլորն էին այդ հարցը տալիս,  
Խակ պատասխանող չկա՞ր ու չկա՞ր...

## Ը

Եվ այդ պահին էր, որ աշխարհ եկավ  
Նա՝

Այր մի՝  
Մեսրոպ Մաշտոց անունով:

Որտեղի՞ց եկավ,  
Ի՞նչ ակից բխեց:  
Եվ ինչպե՞ս եկավ,  
Հոսեց ի՞նչ հունով:

Այդպես՝ արցոնք է ծնվում աչքի մեջ,  
Երբ որ աչքի մեջ ընկնում է ավագ:  
Այդպես՝ դառնում է ավագն ապակի,  
Եվ ապակին է հայելի դառնում:

Այդպես՝ արեւ ամենից առաջ  
Լուսավորում է բարձրաբերձ ծառի  
Կատարին թառած թռչունի բույնը:

Այդպես՝ գոյության ահեղ պայքարում  
Անփոփոխ պահած իք ներքինն էին՝  
Գագանն է փոխում իր մաշկի գումնը,  
Եվ դա թվում է անսպասելի...

Նրանց ծնունդը միշտ էլ թվում է անսպասելի  
Եվ հետո մարդկանց դարեր շարունակ զարմանք  
պատճառում,  
Բայց Նրանք կյանքում միշտ էլ ծնվում են լոկ այն  
պատճառով.

Որ անչափ շատ են սպասել Նրանց:

Ժողովրդի մեջ ննջում են Նրանք,  
Ինչպես ջրի մեջ՝ ահեղ գոլորշին,  
Ինչպես ընտանի աքաղաղի մեջ՝  
Իր իսկ երբեմնի թռչունությունը,  
Ինչպես մանուկի պարապ բներանում՝  
Ակոա-ատամը:

Նրանք ծնվում են իրենց ծնողի անօգնությունից,  
Որպեսպի դառնան նոր կորեղություն:  
Նրանք ծնվում են ինչ-որ հանձարեղ մի հոգնությունից,  
Որպեսպի դառնան հանձարեղություն:  
21—Պ. Սևակ, Երկ. ժող. 3 հատորով, հ. II

Նրանք ծնվում են, որ ապացուցեն,  
Թե վերջը մի տեղ դառնում է սկիզբ:

Նրանք ծնվում են, որ ապացուցեն,  
Թե հրաշք չկա՝,  
Կա միայն կարի՞ք:  
Նրանք ծնվում են, որ ապացուցեն,  
Թե այնուեղ է լոկ սխրանքն սկսվում,  
Ուր վերջանում է ամե՞ն մի հնար...

Թ

Այսպես էլ ծնվեց մեկը Նրանցից,  
Ծնվեց Նա՝

Այր մի՝  
Մաշտոց անունով:  
Եվ նա չծնվեց, որ ավելացնի  
Հարց տվողների քանակն անպակաս:  
Նա եկավ աշխարհ՝ պատասխանելու,  
Եվ պատասխանը գտավ իսկապես...

... Քաջերի սահմանն իրենց վենքն է հենց:

Քաջեր մի՛շտ էլ կան,  
Չե՛նք է հարկավոր:

Քաջեր մի՛շտ էլ կան,  
Պետք է ասպարե՛զ:

Եվ նա էր ահա, որ ձևավորեց  
Մի վենք ժանգախույս,  
Եվ ծովավորեց  
Ասպարեկ մի նոր,

Ուր թույլ-ուժեղի,  
Շատ ու սակալի,  
Ջիշ ու բավումի  
Մրցության համար ասպարեկ չկա՝,  
Քանզի նորատիպ այդ մաքառնան մեջ  
Այրուժիի տեղ մտքերն են կրվում,  
Թանաք է հեղփում արյան փոխարեն,  
Եվ հաղթանակը կոչվում է Մատյան...

Մենք կայինք, այո՛, Նրանից առաջ:  
Սակայն Նա ծնվեց,  
Որ զա ու դառնա ինչ-որ նոր Սկիզբ:

... Նրանից առաջ կային աստվածներ՝  
Երկրների, սիրո, պտղավորումի,  
Ինչպես փոխորկի, նաև... դպրության:

Եթե բոլորը՝ մինչևխակ ստույգ,  
Վերջինըս սուտ էր, սուտ ստուգապես.  
— Աստված կար, սակայն դպրություն չկա՛ր:  
Նա՝ հավատավորն իր նոր հավատի,  
Դպրության մեր սուտ աստծուն վորոնդեց  
Եվ Ինքը մենաց նրա փոխանակ:  
Բայց մինչ դպրության հին աստվածը մեր  
Շարունակ միայն մի գործ էր առնում  
Մարդկանց հոգին էր առնում ու տանում,  
Սա եկավ, որ մեկ հոգի՝ պարզեի...

Այո՛, մենք կայինք Նրանից առաջ.  
Հկոր թե տկար՝  
Մարմին էինք մենք:

Սակայն Նա եկավ, որ Հոգի՝ դառնա,  
Ծոշափո՛ղ հոգի,  
Եվ անմե՛ռ հոգի:

Այո՛, մենք կայինք Նրանից առաջ.

Քիչ թե շատ՝ կար հաց,

Եվ ունեինք ջուր:

Սակայն նա ծնվեց, որ Սնո՞մնդ դառնա:

Ծնվե՛ց, որ ծնե՞նք,

Եղա՛վ, որ լինե՞նք,

Եվ անմահացա՛վ,

Որ անմահանա՞նք...

#### Ժ

Կիսված էր արդեն հայրենիքը մեր,

Եվ հետո պիտի այդպես էլ մնար.

Դարերով հեղված մեր արյունը սուրբ

Պիտի ապարդուն կորչեր ու գնար:

Դեռ պիտի գային օրեր ահավոր.

Մեր հողը պիտի մեզ կարուտելուց

Պատվեր եղինջով ու փշով խայթիչ,

Խսկ մեր երկինքը՝

Մեր աչքից կրկված,

Պիտի որ ինքն էլ իր կուքսից կրկվեր:

Հետո պիտի մեզ խարեին այնպե՛ս,

Որ իին խարեբան՝

Նոր բյուզանդացին,

Զարմանար ինքը:

Հետո պիտի մեզ...

Միջահատված էր մեր հողը բնիկ,

Ճեղքած էր արդեն հայրենիքը մեր:

Եվ նա ծծնվեց ինչ-որ մի մորից:

Նա հենց այդ ճեղքից ծառացավ հանկարծ,

Որ ճեղքը լցնի գեր ինքն իրենով:

Եվ այդ ճեղքը նա լցրեց իսկապես.

Մեր բաժան-բաժան հողերը նորից

Այդ նա էր միայն, որ բերեց իրար

Ու միավորեց... արդեն մեր մտքո՞ւմ:

Եվ այդ օրից վեր

Ու մինչև այսօր

Այդ միացումը մնում է անխախտ՝

Ըստդեմ ճշացող այն խախտումների,

Որ բախտն է անում սուսուփո՞ւս այնպես,

Եվ անում անձայն մի քմթիծաղով,

Որի տակ պիտի ամոթն իր ծածկի,

Բայց իկո՞ւր.

Ծածկել չի՛ կարողանում,

Ինչպես չի ծածկում ծածկույթը խոտի ձահճի գոլորշին՝ քրտինքն ամոթի...

#### ԺԱ

Չունեինք արդեն պետ ու պետություն,

Ծաղբանկար էր եղածը արդեն՝

Գծված ձեռքերով երկու նկարչի,

Որ ատում էին իրար ոչ պակաս,

Քան թե մենք իրենց:

Հետո մենք պիտի գաղութ դառնայինք՝

Գաղութի մարզպան-կառավարիչով:

Հետո մեզ պիտի դարեր շարունակ

Տանեին անվերջ անկումից անկում,

Մեր մեջքի վրա երկանք աղային

Եվ ստիպեին, որ ժպտանք նաև:

Հետո մենք պիտի մեր շենից կրկված՝

Քաղաք շինեինք ավերն ուրիշի:

Հետո մենք պիտի մեր հերկից կրկված՝

Հերկեինք օտար կրբդ ու առապար:

Հետո մենք պիտի մեր ոտնահետքի  
Դրոշմը դարձրած յուրովի դրոշ՝  
Մխելիսք բոլոր լայնքերի վրա  
Երկիր կոչեցյալ այն կլոր գնդի,  
Որտեղ պիտի որ ամեն ճանապարհ  
Վերստին բերի իր տեղը նախկին,  
Բայց մեզ... հայրենիք չբերե՞ց երբեք...

Չունեինք արդեն պետ ու պետություն,  
Հայրենյաց գահը փլամածք էր տվել:

Եվ նա չծնվեց ինչ-որ մի մորից,  
Նա այդ փլամածքից բուսնեց սխրանքով,  
Որ այդ փլամածքը ողջանա նորից:  
Եվ այդ փլամածքը իրոք ողջացավ:  
Այն, ինչ որ անել չկարողացաւն  
Արշակ-Վահարշակ,  
Մուշեղ ու Մուշե,  
Սա՛ արեց միայն՝ անվեն ու անվորք.  
Մեզանից խլված մեր պետության տեղ  
Ստեղծեց մի նոր՝  
Զելյա՛լ պետություն,  
Թագավորություն մի հպորապոր՝  
Ո՛չ թե մեզանից խլված հողերի,  
Մեր բաժան-բաժան հայրենու վրա,  
Այլ մեր անբաժան,  
Մեր անկիսելի,  
Երբե՞ք չխլվող հոգիների մեջ:

Եվ այնուհետև անվախճան եղավ  
Թագավորական նրա տունը մեծ,  
Եվ մեր հոգնոր թագավորության  
Գահին բարձրացող ամեն՝ թագսվոր  
Ծնվեց նո՛ւն տնից,  
Նո՛ւն ցեղից սերեց

Եվ պատվով-փառքով-վեհությամբ կրեց  
Նո՛ւն տոհմանունը՝  
Մեարոպ-Մաշտոցյանք...

Ժ.?

Այսպե՞ս ծնվեց Նա:  
Բախսի հակառա՞կ,  
Թե՞ վայրկենական նրա վղջումով,  
Նա եկավ, որ մեզ վերադարձնի  
Այն, ինչ խլել էր նոյն բախտը երեկ:

Առանց հավատի հեշտ չէ մեռնելը,  
Իսկ ասյրելն... արդեն անտանելի է:

Եվ մեր կործանված հին հավատի տեղ  
Մեզ նո՞ր հավատով վինեց վերստին:  
Էժան-ծախուի, անցնող-վասի տեղ  
Բերեց չքերվող-անշինջ-հավաստին:  
Սուտ ու կեղծիքի ծծակի տեղակ  
Մեր մանկանց տվեց անցամաք ստինք,  
Որով և նրանք կրկնամայր եղան.  
Ով օրով՝  
Նրանք մեծացան տարով,  
Ով տարով՝  
Նրանք մեծացան դարով,—  
Եվ բիրտության տեղ փովեց կրթություն,  
Պարապմունքներով պարապը լցվեց,  
Ու մեկ օր անգամ չըրեքթաթ չարած՝  
Մի արագութը կայտառ քերթություն  
Ընդուտնեց մեկն ու վակքի լծվեց:

Մեր փլատակված-փլուզվածի տեղ  
Նա նո՞րը կերտեց, նո՞րը կառուցեց.  
Նավարեկվածի ու սովորվածի տեղ  
Անտակ հատակից նո՞րը հարուցեց.

Արգելված երգի պվարթ գույնի տեղ  
Խորունկի վրա տրտումը հինեց.  
Անմիտ միտումով քանդիլած բույնի տեղ  
Հոգեբնակման մեր տունը շինեց.  
Օտարի գենի ու զորության դեմ  
Նո՞ր հզորությամբ—նորությանը պինեց՝  
Զենքով մի նորոգ և սքանչելի,  
Որի դեմ պիսի դառնային անզոր  
Նետ ու յաթաղան,  
Փղեր ու տանկեր,  
Եվ որ մեր ոգու անբառ կանչերին  
Պիտի որոտով միշտ արձագանքեր:

Դա զե՞նք էր արդյոք,  
Թե՞ լուս էր, մի լո՛ւս,  
Որ օտար հողմից երբեք չհանգավ,  
Այլ քանի գնար՝ պիտի որ հանգեր  
Սնծովս-կտաբոց անշեշ կբակի  
Եվ տառապալից մեր օրերի մեջ  
Լիներ կենարար պվարթ կիրակի:

Մեկ սպառնացող վտանգի չափ մեծ  
Եվ այդ վտանգից նաև ահագին՝  
Նա օտար հրի ճարակի դիմաց  
Մեր խնջությունը կոփեց ու կոեց.  
Օտար եկամուտ վարակի դիմաց  
Մահ համտես արած մեր ամենիմաց  
Առողջությունը որմի պես դրեց.  
Դրեց խարդախված կաթի դեմ՝ մերան,  
Քանակի դեմ՝ թև,  
Թվի դեմ՝ թոհչք,  
Արյան դեմ՝ թանաք,  
Սրի դեմ՝ գրիչ,  
Եվ դարանի դեմ՝ Մատենադարան...  
Եվ մենք՝ Նրանով միշտ զինավառված,  
Միասին եղանք՝ ցիր ու ցան արված.

Անվերջ կրելով պարկեր ու հարլիսած,  
Նույնիսկ հաղթվելով ժանտ բանակներից՝  
Ժանտերից ժանտին հաղթեցինք կյանքում—  
Հաղթեցինք դաֆան ժամանակներին.  
Կանգուն առ կանգուն թաղվելով հողում  
Հառնեցինք դարձյալ,  
Մնացինք կանգուն.  
Անվերջ ընկնելով՝  
Վերաթևեցինք.  
Մեռնելով անլերջ՝  
Գոյատևեցինք...  
Եվ հիմա արդեն այդ մե՛կ չեն պեղում,  
Այլ մենք ենք պեղում.  
Այդ մե՛կ չեն հիշում,  
Այլ մենք ենք հիշում.  
Մե՛կ չեն վկայում,  
Մենք ենք վկայում՝  
Հասնելով ուրիշ ժամանակների,  
Երբ մենք՝ տառապած միշտ քանակներից,  
Հպարտ ենք արդեն մեր նոր որակով.  
Մենք՝ բռնադատված արբանյակության,  
Հպարտ ենք հիմա այն արբանյակով,  
Որի ծիրի մեջ կա և վազքը մեր.  
Եվ հպարտ՝ նաև հրթիռով այն նոր,  
Որի թիռի մեջ կա հրաշքը մեր...

Այսպե՛ս ապրեցինք  
Եվ այստե՛ղ հասանք:  
Այսպե՛ս շիլվելով՝  
Դարձանք գոռ հոսանք:  
Մենք՝ հինը հնից,  
Նորացանք նորից:  
Եվ այս ամենը՝  
Նրա՝ շնորհիվ...

Այսքանից հետո ի՞նչ կոչես նրան.  
Սեր կեռանաշատ երթուղու վրա  
Մի նշանացի՞ց,  
Մի պո՞ւն  
Կամ թե ձո՞դ,  
Ինչ-որ գրերի ինչ-որ ստեղծո՞դ:

Ու եթե պիտի գիր ու տառ հիշվի,  
Ապա նա ինքն է այն մեծատառը,  
Որով հասարակ ու պարզուկ բառը  
Աճում է—հասնում խորհրդանիշի,  
Եվ... մարդը ձգվում ու դառնում է Մարդ,  
Անցողիկ մարտը՝ հավերժական Մարտ,  
Խեղճ տքնությունը՝ զորեղ Տքնություն,  
Ինքնությունն անուժ՝ հուժկու Ինքնություն,  
Պաշտողը՝ Պաշտոն,  
Բոլի հայը՝ Մաշտոց:


Մաշտոց...  
Այսինքն՝ Ա՛յր մի, որ եկավ ապացուցելու,  
Թե մի տեղ վերջը դառնում է Սկիզբ:

Այսինքն՝ Ա՛յր մի, որ ապացուցեց,  
Թե հրաշք չկա՝,  
Այլ կա լոկ կարիք:

Այսինքն՝ Ա՛յր մի, որ ապացուցեց  
Եվ կոչ է անում ապացուցելո՞ւ,  
Որ այնտեղ է լոկ սիրանքն սկսվում,  
Ուր վերջանում է ամեն մի հնար...

1962, փետրվար  
Երևան

# ՈՒԾԱՅԱԾ ԻՄ ՍԵՐ



Դու տեսնո՞ւմ ես հիմա, իս սիրելի՝,  
Թե մեկ ո՞ւր հասցըրեց քո ուշացած սերը,  
Քո ուշացած սերը.  
Դու չուշացած իս սեր:

Կշտամբանքի խոսքեր ես չեմ ուզում ասել:  
Բայց դու ո՞նց թույլ տվիր,  
Որ նա՛ դառնա տերըդ,  
Ում դու չէիր սիրում  
Եվ ում համար  
Չեխն դողում շրթերդ՝ ինչպես հիմա,  
Չեխն շողում աչքերդ՝ ինչպես հիմա,  
Ինչպես հիմա՝ կուրծքըդ չէր տըրոփում կրքով:  
Ինչպե՞ս դու քանդեցիր տունըդ քո իսկ ձեռքով:

Զուր մի՛ արդարանա:  
Սիրո հարցում  
Չի՛ ճանաչում կյանքը արդարացում:  
Զուր մի՛ ասա, թե դու  
Բոլորովին անփորձ աղջիկ էիր այնձամ,—  
Սե՞րը, ո՞չ, չի զգում փորձի կարիք:

Մի՛ մտածիր իզուր,  
Թե կյանքն ինքը քեզ իետ իբլր վարվեց լաժան,—  
Կյանքը չի՛ բաժանում չարիք-բարիք:  
Եվ մի՛ կարծիր իզուր,  
Թե չըներեց բախտըդ:  
Բախտ բերելըս ո՞րն է,  
Նրան ձե՞ռք են բերում...

## II

Եվ այսպես է լինում.  
Նրբության տեղ՝ սիրով  
Ումանք նուրբ մետաքսն են գերադասում հաճախ:

Եվ այսպես է լինում.  
Տաքության տեղ՝ սիրո՝  
Ումանք տաք մուշտակն են գերադասում հաճախ:  
Ո՞ր հիմարը կասի, թե վատ բան է  
Բարձըր աստիճանը,  
Փողով լի գրպանը,  
Եթե... սիրո հարցում շիրիմ չէ գրպանը:

Երախտապա՞րտ եմ ես դատարկ իմ գրպանին,  
Թե չէ, ի՞նչ իմանաս, աստված չանի,  
Չէ՞ որ կարող էր նա ինձ էլ գուցե  
Ուրիշների հիմար դրության մեջ գցել.  
Կարող էխն, այո՛, կարող էխն ինձ է՛լ  
«Աղվես»-ի տեղ իրենց ուսին գցել,  
Իբրև մուշտակ՝ կրել,  
Իբրև ոսկե քորոց՝ կրծքին խրել:

Չէխն կարո՞ղ:  
Ի՞նչ է,  
Նրանք՝ հետիոտըն,  
Իսկ ես ձիավո՞ր եմ,  
Նրանք՝ կրոր զրո,  
Իսկ ես միավո՞ր եմ:

Ախ, չէ՛. կարո՞ղ էին,  
Որովհետև կյանքում  
Մեծագույնը մեծին միշտ հաղթում է:  
Իսկ շատերի համար, անշուշտ, սրտից մեծ է  
Կահավորված-կարգին-շքեղ տունը:

Ախ, չէ՛. կարո՞ղ էին,  
Որովհետև կյանքում  
Թեաբն հաղթությունը միշտ նորինն է,  
Սակայն հինն էլ կյանքում  
Նրանով է կանգուն,  
Նրանով է զորեղ,  
Որ նա հին է:  
Իսկ «քաղքենի» կոչումն այնքան է հին կյանքում,  
Որքան... ինքը կինը:

Բայց արտաքուստ քեզ պես  
Ու քեզ նման կարծես  
Նույն այդ կինը  
Անհունորեն քեզնից և տարբեր է այնպես,  
Ինչպես նկարներից՝ «նեզատիվը»:

Եվ ինձ համար բախտ է,  
Մեծ պատիվ է,  
Որ դու ուրիշ կին ես,  
Իմ անգինը,  
Որ հեռու ես ամեն մի քաղքենուց,  
Ինչպես պղտոր ջուրը՝ կարմիր գինուց...

## III

Բայց, սիրելին՝, քեզ հետ եղել է վատթարը,  
Քեզ հետ պատահել է ահավորը:  
Քաղքենուին անգամ պակաս մեղավոր է,

Քան դու՝  
Իմ անմեղըս,  
Իմ արդարըս:

Նա՝ վատ թե լավ՝ կյանքում առևտուր է անում.  
Մի բան՝ տալիս,  
Տեղը ուրիշ բան է առնում:  
Նրան կարելի է արհամարհել,  
Իսկ քեզ... կարելի է քեզ չներե՛լ,  
Որովհետև նրանք սեր են խաղում,  
Իսկ դու... խաղացել ես դու սիրո՞ հետ.  
Որովհետև նրանք կյանք են խաղում,  
Իսկ դու... խաղացել ես դու կյանքի՛ հետ:

Քեզ ո՞նց ներել, թե դու  
Գնացել ես մարդու  
Այնպես, ինչպես մի օր քո հեռավոր տատը,  
Երբ որ հարցը ոչ թե սերն ու սիրտն են լուծել,  
Այլ, ամենից առաջ, մատնեմատը:  
Ինչպե՞ս ներել, թե դու  
Գնացել ես մարդու,  
Ինչպես Արենելքում ընդունված է եղել  
Երկու հավար տարի՝  
Զավակի հետ մի լավ գերդաստանի,  
Որի յոթը պորտին ճանաչել է հայրըդ.  
Որի յոթը պորտին ճանաչել է մայրըդ,  
Ճանաչել են,  
Սակայն նրա գերդաստանին,  
Բայց ո՞չ նրան, ում դու  
Գնացել ես մարդու:

Գնացել ես մարդու  
Եվ... մտածե՛լ,  
Թե սերն ինքը,  
Եթե կյանքում նա կա,

Հետո մի օր կզա.  
Թո՞ղ որ առաջնեկի՝  
Քեզ պես ու քեզ նման մի աղջըկա,  
Թո՞ղ որ երկրորդ մանկան՝  
Իր հոր քթից թռած մի շեկիկի  
Ծնընդի հետ,— մե՞կ է՝  
Միայն թե գա...

Սակայն սերը փառք չէ,  
Ոչ էլ հաջողություն,  
Որ հետո գա  
Եվ կամ  
Բնավ չզա:  
Հյո՞ւր չէ,  
Որ մերթ ընդ մերթ այցելի ձեր տունը,  
Մերթ պատճառի հաճուք  
Ու մերթ՝ տիհաճություն,  
Խանգարելով անուշ ձեր ետճաշյա քունը:  
Ախ, չէ.  
Սերը հյո՞ւր չէ,  
Տանը հյո՞ւր չէ սերը:  
Թե բանն այդտեղ հասավ՝  
Նա տանտե՞ր է:

Հիմա դու լավ գիտես,  
Իմ սիրելի՝,  
Որ սիրո հետ խաղալ չի՝ կարելի.  
Ո՞չ նա խաղալիք է,  
Ո՞չ էլ մանուկ ես դու:  
Իսկ թե խաղալիք է՝  
Նա չի ջարդվում ինքը.  
Հետը խաղաղողին ինքն է այնպե՞ս ջարդում,  
Ինչպես որ նա քեզ է ջարդել հիմա...

Մի՞թե արդեն պարզ չէ և քե՞զ համար,  
Որ կարող է սերը... վրեժխնդի՞ր լինել,  
Վրեժ լուծել՝  
Իրեն անտեսելո՞ւ համար.  
Տառապալից սիրով չսիրողին պինել,  
Ինչպես որ քեզ՝ հիմա...

## IV

Ես սառուցի նման կիաչլեի  
Քաղքենական տաքուկ ու գաղց օդում,  
Եվ ինձ... ինձ չեր փրկի  
Եվ ո՞չ մի սառնարան՝  
Վերջին «մարկան» վրան:

Ես թշնամո՞ւս անգամ չեմ կամենում  
Տնաբույս ճյուղ լինել արմավենու՝  
Լուսամուտի գոգին,  
Կըճուճի մեջ կավե,  
Եվ կամ լինել ոսկե- չգործածվող գավե՞ր:

Չէ՛, ես սառուցի պես կիաչլեի  
Քաղքենական տաքուկ ու գաղց օդում:  
Բայց... ես ո՞նց եմ ուկում  
Ու երապում,  
Անգի՞ն,  
Քո ոտքերը տեսնել իմ գրկաբաց շեմքին,  
Քեզ մեկընդմիշտ տեսնել իմ տանն աղքատ ու իին  
Եվ հավատալ, որ դո՞ւ,  
Դո՞ւ ես տանտիրուիին:

Բա՞րձր,  
Բա՞րձր է ինչում.  
«Իմ սիրելի»,  
«Իմ սե՞ր»:

Բայց ես ո՞նց եմ ուզում  
Ու երապում,  
Անգի՞ն,  
Քեզ շշուկով, ան-ծա՛յր մի շշուկով ասել,  
Քեզ շշնչալ.  
«Իմ կի՞ն»...

## V

Իսկ դու ուրիշինն ես,  
Իսկ դու ուրիշինն ես,  
Դո՛ւ— ուրիշի՞ն:

Դո՛ւ, իմ հարապա՛տը,  
Մոտի՞կ հարապատը,  
Եվ— ուրիշի՞ն...  
Ա՛խ, ուրիշին թող որ մեկ ուրիշը լիներ,  
Հէ՞ր կարելի, ասա՛:  
Ա՛խ, դու այդ ինչպե՞ս ես ուրիշինը եղել,  
Իմ սիրելի՛, ասա՛...

Եվ նու ով է՝ գիտե՞մ:  
Պարզ է. նա ո՞չ կարիձ  
Եվ ո՞չ էլ իժ է նա:  
Գուցե վատ չէ այնքան,  
Գուցե լավն է անգամ,  
Բայց քեզ համար օտա՞ր— ուրիշ է նա...

## VI

Ինձ բռնեցի հանկարծ ես այն բանում,  
Որ ոտները հաճախ ինձ, ակամա,  
Անվերջ այգիներից այգիներ են տանում.  
Իսկ դուք մի՛ շտապեք հանցանքի մեջ բռնել:

Այգիներ եմ գնում ո՞չ թե նրա համար,  
Որ շրջում են այնտեղ կանայք ամեն ոճի.

Կանայք՝  
Նման նրբին ձենապակու.  
Հիանալ ես ուզում, ուրիշ ոչի՞նչ ..

Կանայք՝  
Նման շքեղ սիրամարգի.  
Իրենք՝ անգույն, մինչդեռ նրանց հագի՞ն...

Կանայք՝  
Նման դրան, որ չեն փակում.  
Կողպեք բաց անելու ո՞չ մի հակում...

Եվ աղջիկնե՞ր.  
Աչքերն այնպե՞ս վճիռ,  
Որ լեռնային շրին եթե ասես՝  
«Զինչ ես աղջլկական աչքերի պես»,  
Զուրը հիացմունքից կլճանա մի պահ,  
Շոյվա՛ծ կպա այնպե՞ս,  
Կպա այնպե՞ս հապատ:

Եվ աղջիկներ բազո՞ւմ—  
Այնպես նապո՞ւն,  
Նապո՞ւկ,  
Որ ամե՞ն մի պախրա,  
Ամեն եղնի՞կ,  
Այծյա՞մ  
Ցնծությունից պիտի շիկնի ներքուստ,  
Եթե հանկարծ լիի իր հասցեին.  
«Ասես աղջիկ լինի, ահա թե ի՞նչ»:

Եվ աղջիկներ—

Այնքան կախարդիչ ու թուլիչ

(Նրանց թովչանքն արդյոք ի՞նչ մակդիրով չափես),

Եվ աղջիկներ—

Թովիչ՝

աղջըկա՝ պես...

Բայց այգի են տանում ոչ թե նրանք՝

Ո՛չ թե այս բոց կանայք,

Աղջիկներն այս կրակ,

Ո՛չ էլ անծանոթին,

Իբրև մոտիկ,

Վերջ ի վերջո «դու»-ով անվանելու հույսը...

## VII

Սակայն ձիշտ է, որ ես այգիներ եմ գնում,

Եվ ձիշտ է, որ այստեղ կանա՛յթ չեն ինձ տանում:

Մանուկներն են տանում, երեխները:

Լայն ծառուղի:

Ավագ, որ և շեկ է,

Ինչպես այս թմբիկը, ա՛յ, այս մեկը,

Որ իր գլխին,

Ասես

Թասակի պես,

Անվտանգ արևն է մազերի տեղ կրում:

Ինչպես և այս մե՛կը,

Այն մե՛կը, տե՛ս,

Որ ավագին, մատով, ինչ-որ բան է գրում:

Ժպտուն դեմքը նրա,

Նրա ձեռ ու ոտը

Այնպես պեպենոտ է.

Որ ուզում ես լվալ առվի ջրով այս ջինջ.

Քեզ թվում է տղան ոչ թե պեպենոտ է,

Այլ որ նրա դեմքը,

Նրա ձեռ ու ոտը

Այս ավագն է նախշել, ուրիշ ոչինչ:

Իսկ հապա ա՛յս մեկը...

Ա՛յս, այս երեխները...

Ամեն մեկըս ունի իր մեծ թուլությունը.

Մեկին՝ բարությունը,

Մեկին՝ մայրությունը,

Մեկին՝ խմիչքները,

Մեկին՝ սերը կանաց:

Ինձ մոտ մանուկների տիրություն է.

Ինչքան ինձ հիշում եմ՝

Հպատակն եմ նրանց:

Ես, իսկապես ասած, այսպես եմ հասկանում.—

Մարդիկ ուրիշ բան չեն, բան թե մանուկ՝

Մանուկ—հասակ առած,

Մանուկ—տարեց դառած,

Եվ, վերջապես, նաև մանուկ-ծերուկ:

Ես, իսկապես ասած, այսպես եմ հասկանում.—

Մեր մեջ ամեն լավ բան մանկականն է,

Ուստի «մանկականն» է լավի ածականը.

Այդպես չի՝ կարելի կոչել ժմտականը...

Իսկ դուք նկատե՞լ եք.

Բոլոր մանուկները

Ե՛վ նման են իրար,

Ե՛վ իրարից տարբեր:

Չե՛ք նկատել արդյոք, որ աշխարհում

Տգեղ մանուկ, երբե՛ք,

Աշխարհումը բոլոր մանուկներն են սիրուն...

... Ու ես թափառում եմ այգիներում,  
Որ վերստին լսեմ կանգ-ծիծաղը նրանց,  
Տեսնեմ ինքնամոռաց-տարված խաղը նրանց.  
Տեսնեմ,  
Թե ինչպես են կավից տնակ շինում,  
Գոտի շինում խոտից.  
Տեսնեմ,  
Թե ինչպես են իրենք իրենց պինում՝  
Լաց լինելով ստից.  
Լսեմ,  
Թե ոնց նրանք բլբլում են անվերջ  
Ու մոր հոգին հանում.  
— «Դևկ այս ի՞նչ է, մա՞մա»...  
Լսե՞մ,  
Թե հալվելով՝  
Ի՞նչ սիրով է նրանց մայրը պատասխանում,  
Մերը էլ.  
— «Բավական է, դե մի՛ հանիր համը»...  
Տեսնե՞մ,  
Թե ինչպես են մեկը մեկի առաջ  
Իրենց հայրիկներով հպարտանում.  
Սրան ինժեներ է,  
Նրանն օդաչու է,  
Որ... երկընքից անգամ անց է կենում...  
  
Այստեղ ես հասկանում,  
Չգում ու հասկանում ամրող սրտով,  
Որ դու ի՞նչ էլ լինես՝  
Ճարտարապե՞տ,  
Վարպե՞տ,  
Միլիցիոնե՞ր;—  
Դու ամենից առաջ՝  
Այս ամենից առաջ և կամ հետո՝  
Պարտավոր ես կանքում... «հայրի՛կ» լինել...

Եվ խենթ մի ցանկություն  
Լավիլիպում է քո սիրտն ու քո հոգին,  
Որ քե՛զ,  
Եվ քե՛զ,  
Եվ քե՛զ  
«Հայրիկ» կոչի ձայնը ինչ-որ մեկի:  
  
Ինչո՞ւ ինչ-որ մեկի:  
Ո՞չ թե ինչ-որ մեկի,  
Այլ, սիրելի՞ս, ձայնը մե՛ր մասկիկի...

## VIII

Մեսք ինչքա՞ն ենք տխրել՝ երապելով.  
Ես աղջիկ եմ ուզում,  
Իսկ դու՝ տղա:  
Ես աղջիկ եմ ուզում՝ քո՛ մավերով,  
Դու տղա ես ուզում ի՞նձ պես թխաչ...

Ես աղջիկ եմ ուզում,  
Որ քեզ նման լինի.—  
Քեզ պես՝ կախարդանքով իրեն վինի.  
Քո հասակի նման՝ մանրանկար հասակ.  
Ինչպես քո դեմքի շուրջ՝ լուսապատճ.  
Լինի քեզ պես նազո՞ւկ,  
Քեզ պես նազո՞ւն,  
Եվ քեզ նման զգաստ,  
Ե՛վ երապուն.  
Ու երբ ժպտա քեզ պես՝  
Բացվի արշալուսը.  
Ու երբ նայի քեզ պես՝  
Վառվի մարած հույսը.  
Երբ ծիծաղի քեզ պես՝  
Զգաս—

Կյանքն է կնգում,  
Ու երբ սիրի—  
Զգաս՝  
Արժե՛ ասլրե՛ կյանքում:  
Ամե՛ն ինչով նման,  
Թուլությունո՞վ անգամ,  
Քե՛զ պես,  
Միայն... քեզ պես դառնություննե՞ր չպա...

Խսկ դու «չէ՛» ես ասում,  
Դու տղա ես ուզում:

Թո՞ղ որ իր հոր նման տգեղ լինի, ոչի՞նչ,  
Բայց թող աստղով լինի՝ իր հոր նման:  
Մոր հոգու հետ, ոչի՞նչ, իր հոր նման  
Թող նա մեկ-մեկ խաղա,  
Չարություններ անի,  
Բայց թող՝ իր հոր նման՝ երբե՞ք երես չառնի:  
Թո՞ղ որ՝ իր հոր նման՝ շա՞տ բան տեսնի կյանքում,  
Բայց թող՝ իր հոր նման՝ մի՞շտ էլ մնա կանգուն.  
Թո՞ղ նա իր հոր նման՝ մեղկությունը ատի,  
Փոքրոգություն, քծնանք իր հո՛ր նման դատի,  
Իր հոր նման՝ երբեք չշանա փառքից,  
Թող շլանա, լավ է, աղջիկների քայլքի՛ց.  
Իր հոր նման՝ թող որ հափշտակվի՛, տարվի՛,  
Բայց, երբ ժամը հասնի, հո՛ր պես սիրահարվի,  
Հո՞ր պես կարողանա ատել, սիրել,  
Կարողանա քե՛զ պես բախտի տիրել...

Ես ինչպե՞ս եմ ուզում  
Ինձ հա՛յր տեսնել,  
Դու ինչպե՞ս ես ուզում  
Քեզ մա՛յր տեսնել...

## IX

Բայց դու արդեն... արդեն մայր ես վաղուց.  
Բակում քո տղան է հիմա խաղում...

... Ես ո՞չ փոքրոցի եմ,  
Ո՞չ տգետ եմ,  
Սակայն արի և տես, որ խանդոտ եմ:

Ես խանդոտ եմ, ինչպես գարնան գետը՝  
Ամեն ջրի հանդեպ,  
Ինչպես արեգակից խանձրած խոտը՝  
Ամեն իրի հանդեպ:

Ի՞նչ փույթ, թե խանդելու չունեմ տեղիք.  
Բայց իրավո՞ւնք...  
Չէ՞ որ ամբողջովին քոնն եմ:  
Քո՞նն եմ,  
Բայց ո՞չ իբրև կրծքիդ թառած ծաղիկ.  
Քո՞նն եմ,  
Սակայն իբրև ո՞չ պաշարված քաղաք,  
Ո՞չ էլ հարձակումով մեկեն շահված քաղաք:  
Քոնն եմ ամբողջովին՝

Ա՞յն տան նման,  
Ուր դու և տանտեր ես այդ տան համար,  
Ե՞վ տան միհա՞կ-միհա՞կ բնակիչը:  
Չէ՞ որ ես այլ բան չեմ,  
Ես լոկ սիրո ճիշ եմ  
Խոսուն կասկածներիդ լուռ փարատման համար:  
Քոնն եմ իմ անցյալո՞վ,  
Իմ ներկայո՞վ,  
Երավներո՞վ բոլոր,  
Սպագայո՞վ.  
Քոնն եմ ամբողջովի՞ն,  
Իմ սիրելի՛ս:

Սա իրավունք մի՞թե ինձ չի տալիս  
Գեր այսքանից հետո պահանջեղու,  
Որ իրավունք չըսնես ինձ տանջեղու,  
Որ դու պիտի լինես ի՞մը՝ անվերապա՛հ,  
Ի՞մը՝ ոտից գլո՛ւս,  
Ի՞մը՝ ամբողջովի՞ն.  
Որ քո գորովագին սիրո ծովին  
Ես տեր լինեմ,  
Բնշանս ծովի հին աստվածը՝  
Ինքը Պռսելդոնը.  
Որ դու ամբողջովին ի՞մը լինես այնպես,  
Ինշանս ես եմ քոնը.  
Որ մի՛ կաթի անգամ դու չցրես,  
Ել չեմ ասում սիրե՛ս...

Ել չեմ ասում սիրե՛ս...

Բայց ես գիտեմ, թե դու ո՞նց ես երկըրապագում,  
Ո՞նց ես պաշտում... նրան,  
Որ կոչում է քեզ «մայր»:  
Ու ես, որ ո՞չ կույր եմ,  
Ո՞չ ել հիմար,  
Միշտ մի հարցի առաջ աչք եմ փակում.—  
Ո՞վ է առաջինը քո մեծ հոգում.  
Ե՞ս եմ արդյոք, թե նա,  
Ու վա՞յ թե նա...  
Եվ ի՞նչ ել որ լինի՝  
Ես չեմ խանդում նրան,  
Ա՞խ, չե՛, ես լոկ քեզ եմ որդուդ համար խանդում.  
Չե՛ որ նա լոկ քոնն է և... իմը չե՛:

Ու ես ո՞նց կուպեի,  
Ո՞նց կուպեիր և դու,  
Որ նա լիներ ի՞մը,  
Որ ինձ «հայրիկ» կանչեր,

«Հայրիկ» այնպե՛ս կոչեր,  
Այնպե՛ս գոչեր,  
Որ աշխա՛րհը լսեր հոր անունը:

Բայց նա քոնն է միայն և իմը չե՛:  
Ցավն ել այստեղ է, որ... խորանում է...

## X

Հռ ասեղ չե՛ս սերը, որ կորցընես,  
Իսկ թե ասեղ է նա՝ կբաքցընե՞ս  
Ինչ-որ բարձիկի մեջ կամ տոպրակում:  
Եթե ասեղ է նա՝  
Աչք է ծակում...

Դե՛հ, ո՞ւմ լավ հայտնի չե՛ մեր իսկ թուլությունը.  
Մենք բոլորս ել մի քիչ փսփսուք ենք սիրում:  
Իսկ գեղեցիկ սերի դրությունը  
Շատ է նախանձելի: այս հարցերում:  
Ումանց համար արդեն դա մի թուլություն է,  
Ինչպես ջուր խմելը, հաց ուտելը...  
Պատկերացրեք հիմա դուք մեր դրությունը:  
Պարզ է. հայտնի դարձավ և մեր սերը:  
Ուրիշները դարձան կիսով նրա տերը.  
Ե՛վ այս, և այն կողմից տնտըլեցին նրան,  
Մերթ թաղեցին նրան,  
Մերթ պեղեցին նրան:  
Ուրիշ խոսքով ասած՝  
Նա մի դրոշ դարձավ,  
Որ ո՞չ թե ձեռքից ձեռք—բերնից բերա՛ն անցավ...

Չե՛, ասե՞ղ չե՛ս սերը, որ թաքցընես,  
Իսկ թե ասեղ է նա՝

Աչք է ծակում.

Իսկ թե ասեղ է նա,

Հենց թաքցընես՝

Քո ցանկության ընդդեմ կիազցընես

Պոչին երկա՞ր մի թել,

Որ երևա՞ խկում:

Մենք ասեղը թելել բնավ չենք էլ փորձել:

Բայց ի՞նչ...

Դուրս է գալիս՝

Հիմար բան ենք գործել.

Կարելի է, ինչ խոսք, սիրահարվել,

Միայն... հարկավոր էր խելոք վարվել,

Սուսի՞կ-փուսի՞կ այնպես...

Աստված վկա, այսպես

Չէ՞ որ կարելի է անգամ խելագարվե՞լ:

Ախար իմ ի՞նչ գործն է՝ մարդիկ ո՞նց եմ անում:

Իմ ի՞նչ գործն է.

Մարդիկ շա՞տ բաներ են անում,

Հավար ու մի տեսակ վա՛տ բաներ են անուս.

Ես գործ ունեմ մարդկա՞նց,

Ո՛չ թե ամեն կարգի նրանց արարքի հետ.

Ես գործ ունեմ սիրո՞՝,

Ո՛չ թե թաքուն կապի հրայրքի հետ.

Միայն աղբյուրի՞ հետ հավերժախոս ու ջինջ,

Եվ ո՞չ հռանքի հետ հեղեղային,

Եվ ո՞չ երբեք մոր հետ այն տղայի,

Որին չար ընկերն է խաղում դադում.

— «Է՞ յ, բի՛ ձ...»:

XI

Ու մեր սերը բացվեց,

Բերնեբերան անցավ.

Օրվա հերոս դարձավ

Ու նյութ օրակարգի:

... Ու ես էլ իմ կարգին

Խոսք տվեցի, անգի՞ն,

Այսուհետև էլ քեզ... քե՛զ... չսիրե՞լ,

Իշխել հոգուս վրա,

Սրտիս տիրել...

Ա՞խ, սրտի տեղ եթե լիներ լեզո՞ւն,

Որ խոստացավ հանգիստ քեզ չսիրել:

Հասկանո՞ւմ ես, թե ես ինչ եմ ասում,

Հասկանո՞ւմ ես արդյոք. քե՛զ... չսիրե՞լ...

Գուցե գիտակցաբար ես ստեցի՞,

Գլուխս ավատեցի՞:

Չէ՞, պարզապես

Կարծես ընդունված է ժողովներում

Ուրիշ տեսակ խոսել:

Ինչպես ընդունված է ժողովներում

Նույն արեցի ես էլ...

Բայց և այնպես հիմա ա՛յլ լեզվով են խոսում

Այս տողերը:

Բարեկամնե՞ր,

Անգի՞ն,

Այսօր ես հուզվել ու սրտնեղել եմ:

Բարեկամնե՞ր,

Անգի՞ն,

Չէ՞ որ խոսք եմ տվել էլ չսիրել,

Չէ՞ որ խոստացել եմ իշխել հոգուս վրա,

Սրտիս տիրել...

Խոստացել եմ:

Սակայն

Եթե բան դուրս չգա՞...

Թո՞ղ որ ասեն, թե սա  
Սովորական մարդուն բնա՛վ սապական չէ,  
Թո՞ղ որ ասեն, անգի՞ն,  
Որ մեր սերը կյանքում բնա՛վ տիպական չէ:  
Թո՞ղ որ այդպես:

Սակայն

Չէ՞ որ կյանքում նա կա,  
Չէ՞ որ արժան գտան նրան նիստի տանել,  
Քննարկումից հետո կերպուշ ու կեսկատակ  
Չէ՞ որ խորհուրդ տվին.  
— «Կարելի՞՛ է անել...»:

Ո՛չ: Միայն ո՛չ այնպես, ինչպես հարմար գտան:  
Ես գործ ունեմ մարդկա՞նց,  
Ո՛չ թե ամեն կարգի նրանց խորհրդի հետ.  
Ո՛չ թե թաքռն կապի,  
Ես գործ ունեմ միայն սիրո ու սրտի՛ հետ...

## XII

Հիմա դու տեսնում ես, իմ սիրելի՛,  
Թե մեկ ո՞ւր հասցըրեց քո ուշացած սերը,  
Քո ուշացա՞ծ սերը,  
Դու չուշացա՞ծ իմ սեր:

Դատափետում են քեզ  
Ու խսորեն դատում  
Նրա՛ համար, որ դու  
«Ընտանիք ես քանդում»:  
Բախտի ի՞նչ չար կատակ  
Եվ ի՞նչ ծաղր է հիմար.  
Դո՞ւ, որ հենց ծնվել ես ընտանիքի համար,  
Սուրբ օշախի՛,  
Սիրո քո տանիքի՛ համար,  
«Ընտանի՞ք ես քանդում»...

Եվ դու պարտավոր ես փրկե՞լ մի ընտանիք,  
Որ շա՞տ վաղուց արդեն կործանվել է ինքը.  
Հանուն կործանվածի կործանումի մատնել  
Ուրի՞շ մի ընտանիք:

Ո՞ւր է այստեղ խիղճը,  
Դատողությո՞ւնն ուր է,  
Ո՞ւր է առողջ միտքը.  
Հանուն վիված մի տան՝  
Մեկ այլ տանիք քանդել,  
Եվ ինչպիսի՛ տանիք...

Եվ մի՞թե քեզ դատող,  
Դատափետող մարդիկ չեն իմանում,  
Որ դու... հեղո՞ւկ չես դու,  
Որ քո ձևը փոխես այն ամանում,  
Որտեղ որ քեզ կածեն...  
Մի՞թե միման ումանք չեն հասկացել.  
Դու կենդանի՞ մարդ ես,  
Ամենամա՞րդ մարդը,  
Սիրո՞ղ մարդը,  
Քեզ չի կարող ձև տալ ամեն կուժ ու կուլա,  
Եվ որ չորստառանի «մարդ» կոչվածը կյանքում  
Չա՞տ ավելի բարդ է,  
Քան թե հապարատառ, թեկուզ սրբագործված, մի ֆորմուլա...

Եվ դու ինչպե՞ս հիմա բերան խև չբանաս,  
Ինչպե՞ս դու նրանց դեմ չըմբռստանաս,  
Եթե շա՞տ յավ գիտես.  
Բոլո՞ր օրենքները նրա՛ համար են լոկ,  
Որ պաշտպանեն կյանքում մարդկայի՞նը,  
Մարդո՞ւն,  
Եվ որ բոլոր տեսակ օրենքներից բացի  
Կա մի օրենք եքս— և շա՞տ խելոք.  
Բոլոր օրենքների ո՞չ թե տառն են կարդում,  
Այլ էությո՞ւնը լոկ...

Եվ դու ինչպես հիմա բերան իսկ չքանաս,  
Ինչպես դու նրանց դեմ չըմբռստանաս,  
Ինչպես չասես, որ քեզ  
Դետք է սուրբ ընտանիք,  
Բայց ո՛չ ընտանիքի ծաղրանկար,  
Դետք է օշախ մաքուր,  
Սիրո գողտրիկ տանիք,  
Ուր չի կարող լինել ոչ մի կարիք  
Խաղալ «լավ ընտանիք».  
Մի հարկ,  
Ուր հարկ չկա  
Խաղալ, թե «սրա պես լավ հարկ չկա».  
Մի հարկ,  
Ուր խկապես չկա կեղտի նշույլ,  
Եվ ո՛չ երբեք մի հարկ,  
Որտեղ մութ անկուն են կեղտը քշում  
Հանուն ըն-տա-նե-կան սուրբ մաքր-րու-թյան...  
Այս, չէ.  
Քո մեծ սրտով  
Դու սովոր չես նման մի փոքրության...

Ու ցավում է հիմա մեր վիրավոր հոգին,  
Նա ցավում է հիմա՝ ատամի՝ պես:  
Մենք և երջանիկ ենք,  
Եվ պատըժված հիմա.  
Դու՝ Եվայի՛ նման,  
Իսկ ես՝ Ադամի՝ պես:  
  
Այս, ցավում է հոգիդ նրա՝ համար,  
Որ աստըծո գործած հին սխալից հետո,  
Եվ քանի՛ դար հետո,  
Այս անաստված մարդիկ նաև հիմա  
Մեր նկատմամբ, կյանքը, նույն սխալն եմ գործում,  
Մեզ պատժում են... գտած երջանկության համար:

Թո՞ն որ դրախտ պետք չէ.  
Մենք մեր ձեռքերով ենք այդ ստեղծել փորձում:  
Բայց դե ինչի՞ համար,  
Ախար ինչի՞ համար  
Պնդել, որ դու ընդմիշտ նույն դժոխքում մնաս:  
Բայց դե ինչի՞ համար,  
Ախար ինչի՞ համար  
Մի նոր դժոխք սարքել և ինձ, և քեզ համար,  
Նույնական վարվել նաև քո մասնկան հոր՝  
Մեզանից ոչ պակաս դժբախտի հետ...

Այս, ի՞նչ հեջտ է  
Խաղալ մարդկանց խեղճ բախտի հետ...

### XIII

Ես լավ գիտեմ.  
Այստեղ հերոսություն է պետք,  
Հերոսություն է պետք՝  
Ինչպես երեկ կովում:

Փոքրոգություն կյանքում ես չեմ արել երբեք,  
Մահվան հանդեպ վախից չեմ կորանում-կեռվում:  
Ճանչում եմ և քեզ.  
Մենք հեռու չենք հիմա  
Հերոսական քայլից: Բոլորովին:  
Ինքը Զոյային ես անհունորեն նման,  
Իսկ ես շատ եմ սիրում Մատրոսովին:  
Սակայն այստեղ մահով բան չես շահի,  
Իսկուր բան է հիմա դիմել մահի:  
Նա չի կարող այստեղ ցույց տալ մեզ օգնություն:  
Երեկ՝ կովում մահը հերոսություն եր մեծ,  
Այսօր՝ աններեկի փոքրոգություն:  
Երեկ այստեղ մահով շահում էիր դու կյանք,

Մահօդ նոր կյանք դարձնում,  
Այսօր այստեղ մահով,  
Քո մի՛ հատիկ մահով,  
Երեք կյանք ես կորցնում.—  
Երկու՝ ամբողջովին, ու երկու՝ կես.  
Փոքրիկ որդիի՝ կիսո՞վ,  
Նրա հայրը՝ կիսո՞վ,  
Ամբողջովի՞ն՝ դու ինձ,  
Ու ես է՛ քեզ...

Իսկ թե փոթորիկ է սա մի բաժակ ջրո՞ւն:  
Թո՛ղ որ այդպես,  
Սակայն նա կյա՞նք է կործանում:

Իսկ թե մի հարց է սա,  
Որ փակ նիստից պիտի լայն ասպարեզ քաշվի՞.  
Իսկ թե մի հարց է սա,  
Որի մասին պիտի ամբո՞ղջ ձայնով խոսվի:  
Խոսվի բա՛ րձըր և բա՛ց,  
Եվ ո՛չ լոկ մերպեսի,  
Այս բոլո՞ր նրանց,  
Բոլոր նրա՞նց մասին,  
Ովքեր կեպրչորեն ու կեսկատակ  
Վաղը մեր նմանին խորհուրդ կտան.  
— «Կարեի՞՝ է անշուշտ,  
Մարդը մարդ է, քար չե...»:

Չէ՛, նման խորհուրդը մեզ համար չէ:  
Չէ՛, նման խորհուրդը մեզ հարմար չէ,  
Մեր աշխարհի՞ն նման ու հարմար չէ:  
Թեկուզ նրա՛ համար մեզ հարմար չէ,  
Որ մարդն, այն՝ մարդ է, մարդը քար չէ:  
Թեկուզ նրա՛ համար մեզ հարմար չէ,  
Մեր աշխարհի՞ն նման ու հարմար չէ,  
Որ նա մեր աշխարհն է,

Որ նա Սպարտա՞ չէ,  
Որտեղ դատում էին ու խիստ պատժում գողին  
Ո՛չ հափշտակութան,  
Ո՛չ էլ գողության մեջ խառնըվելու համար,  
Այլ լոկ անբավարար ձարավըկությա՞ն՝  
Բռնըվելո՞ւ համար:  
Իսկ մենք չէ՞ որ դեմ ենք ամե՞ն տարուլության,  
Ամե՞ն չափսի գողի,  
Եվ առավել կըս՝ լա՛վ գողության,  
Եվ առավել կըս՝ ձարպի՞ն գողի...

#### XIV

Իսկ ի՞նչ անել հիմա:  
Անուղղեի-հիմար  
Սիրտըս ահա նորից  
Կուրծքըս այնպե՞ն թակում,  
Այնպե՞ս է տկտկում,  
Լարձես թե Մորվեի այբուբենով  
Ամենքին է դիսում մի կուսայ քենով,  
Ամենքին է տախս իր նույն հարցը հիմար  
— «Իսկ ի՞նչ անել հիմա»...

Սիրտըս մոլեգնորեն կուրծքս է ծեծում.  
Ինչ-որ մեկն էլ  
դուռն է ծեծում հուշիկ:  
Հարբածի պես ելնում,  
Գնում դուռն եմ բացում:  
Դուռն ես բացում—  
Եվ ի՞նչ.  
Դո՞ւ ես, իմ անգի՞րս,  
Դու իմ տունն ես եկել,  
Եվ այնպես ես եկել,  
Որ որոշված ժամին վեր չկենաս  
Ու մորթվողի նման դուրս չգնաս,—

Որ չգնա՞ս,  
Մնա՞ս,  
Ընդմի՛շտ մնաս...

Ու ես լուռ նայում եմ քո աչքերին,  
Սիրո՞վ, ցալո՞վ լեցուն,  
Տագնապներո՞վ լեցուն  
Այս աչքերին:

Մի՛ տագնապիր, ոչի՞նչ, առանձին բան չկա՞.  
Թո՞ղ որ քո մանկիկը ինձ անվանի «քնոյ!»,  
Բայց եա «քուրի՛կ» կասի վաղը մեր աղջրկա՞ն...

1952—53

Մուկվու

# ԵՐԳ ԵՐԳՈՅ



## ԳԼՈՒԽԱ

... Խնդրեցի զնա՞ւ և ոչ գտի,  
Կոչեցի զնա՞ւ և ոչ ես ինձ զձայն...  
... Իւղ թափեալ է անուն քո...  
«ԵՐԳ ԵՐԳՈՅ»

## 1. Գարունն այս անգամ ձմռանը եկավ,

Այն էլ հյուսիսում.

Ես բոլորովին չեմ սպասում,

Զմեռն այս վկա:

Քեզ չփրնտրեցի՛, չըրորնեցի՛  
Ելլ... գտա հանկա՛րծ,

Ինչպես դու մի օր անունդ ես գտել,  
Օ Սուլամի՛թա:

## 2. 0 Սո՛ւ...

Սուլամի՛...

Օ Սուլամի՛թա.

Քո բիբիական անունն եմ սիրում,

Սիրում են, այն էլ բիբիակա՞ն սիրով.

Օր երբ իր նեղլիկ բառէ շապիկն է աշխատում հագնել,

Թվում է հիւմա հեշանոսակա՞ն՝

Նույնիսկ անպարկե՞ցա,

Բայց... նրա՛ աչքում,

Ում համար սիրո սրբությունն արդեն

Դարձել է հագուստ տոնակա՞ն օրվա,

Մինչ նա իմ միա՛կ շապիկն է. մսե՛...

## 3. Եվ ես սիրում եմ քեզ՝ ամբողջօվի՛ն:

Իսկ ի՞նչ ես, ի՞նչ ես դու ամբողջօվին,

Եթե ոչ մարմին

Ու նաև արյուն:

Իսկ մնացածը՝ բառեր են միայն,

Պա՛ղարհեստակա՞ն ու ձապա՞ղ լեզվի

Մի թարգմանությո՞ւն:

Իսկ ես խոսում եմ մայրենի՛ լեզվով՝

Աղամի՛ նման

Ու Եվայի՛ հետ:

## 4. 0 Սուլամի՛թա, օ Սուլամի՛թա.

Մենք, կարծեմ, արդեն խնձորը կերանք,

Քանզի նա, ով որ մտքով է տրվում,  
Տրվում է, անջուշտ, մարմնից առավել...

Ո՞ւր է դրախտը,

Եթե ոչ՝ միայն քո թարթիչների հովանու ներքո,  
Քո

դեռ վիակ

ծոցում,

որի գռները

Արդեն թակում են,

Եվ երկո՞ւ կողմից.

Քո սիրուց՝ ներսի՛ց,

Իմ ձեռքը՝ դրսի՛ց...

## 5. 0 Սուլամի՛թա, թա՛ց արա դուռը:

Ես քեզ չե՞մ փնտրել, քեզ չե՞մ որոնել,

Չե՞մ էլ հարցըրել ես պահակներից

Քո՝

Իմ չունեցած-չիմացած հասցեն:

Ես ձամփորդի պես,

Ու մոլորվածի,

Հասել եմ դուռը,

Որ և բախում է իմ ձեռքը լրսից,  
Քո սիրտը՝ ներսից:  
Ընդունիր հյուրիդ,  
Որ կդառնա տե՛ր,  
Բայց նաև՝ ծառա՛...

6. Եվ թո՛ւլլ տուր խոսել.  
Գրկելուց առաջ,  
Փարվելուց առաջ,  
Թույլ տուր քեզ նայել  
Մի փոքըր հեռվից:  
Եվ թո՛ւլլ տուր կրկնել՝  
Համբուրից առաջ,  
Համբուրի նման  
Կրկնել անունըդ.  
— Օ Սո՞ւլ...  
Սուլամի՛..  
Օ Սուլամի՛թա...

#### ԳԼՈՒԽ Բ

... Գեղեցիկ ես իբրև կերուսաղեմ...

«ԵՐԳ ԵՐԳՈՅ»

1. Օ Սուլամի՛թա.  
Հապա շո՛ւտ արի, որ ես քեզ տեսնեմ:
2. Գեղեցիկ ես դու, ինչպես բոլորը,  
Որոնց սիրում են.  
Եվ ո՛չ ավելի ու ո՛չ էլ պակաս:  
Ի՞նչդէ գեղեցիկ՝ ուրի՛շը կասի,  
Մինչեա ինձ համար դու գեղեցիկ ես,  
Ինչպես բոլորը, որոնց սիրում են:  
Եվ կախարդիչ ես, ինչպես բոլորը,

Որոնց չեն տիրել:  
Ե՛վ անսովոր ես,  
Քանի որ նոր ես,  
Ե՛վ սովորական՝ քանի որ դու էլ  
Երբեք չես կարող չսիրված մնալ:

3. Դու սև ես՝ ինչպես քո ժողովը դարավոր բախտը,  
Եվ սովորական մեջ՝ այնքան լուսավոր:  
Որքան լուսավոր անուն է տվել քո ժողովուրդը:  
Մն են աչքերդ՝ իմ աչքերի պես,  
Եվ գիտեն նայել այնպես որտումորեն,  
Որքան տրտում է սիրտը ա՛յն պահին,  
Երբ ինձ թվում ե, թե չե՛ս սիրելու:
4. Սն են վարսերը, ինչքան ձերմանկ է.  
Դեռ վակ կուրծքը քո,  
Ավելի՝ ձերմակ  
Միշտ անհալ ձյունից իմ Արարատի,  
Որ փրկեց Նոյին,  
Ուրեմնը՝ և քե՛զ,  
Ի՞նձ ու... մեր սե՞րը.  
Ավելի՝ ձերմակ, քանի որ նրան  
Իմ աչքերի պես և ո՞չ մի սև աչք  
Դեռ չի ստվերել անգամ հայացքո՞վ:
5. Մի՛ լինիր այսքան... այսքան սպիտակ.  
Բացվի՛ր հայացքիս և աչքերիս դեմ,  
Նաև մատներին,  
Յուրաքանչյուրը՝ միւս դարձած մի շող:  
Արևառուրյուն ընդունիր մի քիչ  
Իմ հայացքի՛ տակ,  
Նաև մատներին:
6. Քո կրծքի նման ձերմակ են նաև քո ատամները:  
Եթե պարկեշտ ես՝  
Մի՛ ժպտա երբեք...

7.        Օ Սուլամի՛թա.

Այդպես ամաչկոտ շուր մի՛ եկ ինձնից,  
Բայց շիկնի՛ր, շիլխի՛ր,

Որ իմ նեղ խցում

Արևածագի պատրանքն զգամ ես:

Շիկնի՛ր ու թռ' ուլ տուր,

Որ հետքը խոսեմ՝

Փարվելուց առաջ.

Փարվելուց առաջ՝

Մի փոքը հեռվից

Քեզ նայեմ այնպես,

Կարծես առաջի՞ն անգամն եմ տեսնում:

8. Ա՛խ, այդ քո շիկնած այտերը մաքուր՝

Քո թուլս մալերով լուսապսակված:

Եվ քո շուրթե՞րը...

Խչո՞ւ է բվում,

Թե քո այտերին— առաջի՞ն անգամ—

Հպվելը նույնքա՞ն դժվար է հիսա,

Որքան որ հնում հավատափոխսան— դարձի բերումը,

Եվ քեզ համբուրեն— առաջի՞ն անգամ—

Նո՞ւնմ է, ինչ մի նոր տաճա՞ր ավերել,

Թե՞ իիմնաղըրել մի եկեղեցի...

9.        Քո պարանոցը՝

Ապնիվ մարտարե մի գե՞հ աշտարակ,

Որտեղից—դարե՞ր—մարդիկ են կախվել՝

Ինձ նմաննե՞ր...

Նման երշանիկ կախաղանի դեմ

Ես չե՞մ բողոքում:

10.       Օ Սուլամի՛թա

Դու ամաչելուց շրջվում ես ինձնից:

Ա՛հ, քո կոնքերը քնար են բարված:

Դու չե՞ս կամենում, որ ամբողջ գիշեր

Քնարը ինչի,

Որ իմ մատները ողջ գիշերն ի լուս

Սաղմոննե՞ր երգեն.

«Օ Սուլամի՛թա...

Սուլամի՛...

Օ Սուլամի՛թա...»:

11.       Օ Սուլամի՛թա.

Տեսնո՞ւմ ես, թե քեզ ինչպես եմ սիրում.

Առասպեկական քո նախապապի՝

Սողոմոնի՛ պես:

Նրա արյունից մի՞րե մի կաթիլ

Հորձանք չի տակիս քո երակներում:

Որտեղի՞ց հապա

Նրա արյունը օտարի՛ս սրտում

Ի՞մ սրտում, որ քեզ

Սիրում է այսպես՝

Աստվածաշնչյան ա՛յնտեսակ սիրով,

Որ երբ իր բառե շապիկն է հագնում,

Թվում է այսօր հեթանոսական՝

Նովիսիկ անպարկե՞շտ,

Բայց... նրա՛ աչքին,

Ում համար սիրո սրբությունն արդեն

Դարձել է հագուստ տոնակա՞ն օրվա:

Իսկ նա իմ միա՛կ շապիկն է. մսե՞:

12. Ես քեզ սիրում եմ քո նախապապի՝

Սողոմոնի՛ պես,

Որ մի արքա էր,

Մինչդեռ ես...

Գիտե՞ս,

Ես ինչ-որ չափով նո՞ւնպես արքա եմ:

Ո՛չ նրա հաւար, որ ունեցել եմ

Հարձեր ու կանայք,

Ո՞չ էլ նրանով, որ ես կարող եմ  
Երգ երգոց թողնել:  
Եթե ինձ համար թագուհի ես դու,  
Ի՞նչ եմ ե՞ս հապա,  
Ինչպե՞ս ի՞նձ կոչել, եթե ոչ արքա,—  
Այլ կերպ չի՝ լինում.  
Թագուհիները Շ՝ բը են պատկանել մանկավիկների...»

#### ԳԼՈՒԽ 4

Մուծք ինձ ի տուն գինոյ...  
Վասնպի խանդակաթ եմ սիրով...

«ԵՐԳ ԵՐԳՈՅ».

#### 1. Երուսաղեմում երբևէ չեղած աղջիկներ՝ խարտյաշ,

Դուստրե՞ր՝ Հյուսիսի.

Ի՞նձ էլ սնուցեք կապդուրիչ գինով,  
Քանի որ սիրուց ես նվազում եմ:

#### 2. Ես նվարդում եմ, իսկ կրծքիս ներքո

Կախված է նաև ծանրաքար մի բեռ՝

Սեփական սիրտը:

Նա ծանր է դարձել,

Եվ... ծանըր այնքա՞ն,

Որ հավիվ մի ցուլ իր մեջքին տանի:

Իսկ մինչև անգամ եթե ցուլ եմ ես,

Այդ բեռը գոնե մեջքին չեմ կրում,

Որ դյուրին լինելու.

Այդ ծանրությունը ներսում է կախված:

Երուսաղեմում երբևէ չեղած խարտյաշ՝ աղջիկներ,

Ինձ էլ սնուցեք կապդուրիչ գինով,

Քանի որ— տեսե՞ք— ձկվում են արդեն

Սեփական սրտիս ծանրության ներքո:

#### 3. Երուսաղեմում երբևէ չեղած խարտյաշ՝ աղջիկներ, Դուստրե՞ր՝ Հյուսիսի.

Երուսաղեմում երբևէ չեղած

Երուսաղեմի դուստրը սևահեր

Ի՞նձ չի պատկանում:

Նա կա և չկա՝ ինչպես երկինքը,

Իմն է- իմը չէ՝ ինչպես որ ինքը...

#### 4. Ողջ գիշերն ի լուս իմ մահճակալին

Փնտրում եմ նրան, չեմ գտնում սակային:

Ողջ ցերեկն ի բռւն իմ նեղ սենյակում

Կանչում եմ նրան, և ձայն չի տալիս:

Եվ դուրս եմ զալիս,

Որ փողոցներո՞ւմ որոնեմ նրան:

#### 5. Երուսաղեմում երբևէ չեղած աղջիկներ՝ խարտյաշ,

Դուստրե՞ր՝ Հյուսիսի.

Երուսաղեմում երբևէ չեղած

Երուսաղեմի դատերն եմ փնտրում,

Փնտրում եմ նրան ես փողոցներում,

Փնտրում եմ նրան նաև ձեր դեմքին,

Գտնում եմ մի մա՞ս, մի նշո՞յլ, մի շո՞ղ,

Իսկ իրեն՝ բնա՞վ:

#### 6. Երուսաղեմում երբևէ չեղած խարտյաշ՝ աղջիկներ.

Թե պատահաբար հանդիպեք նրան՝

Երուսաղեմի թխահեր դատեր,

Ի՞նչ պիտի ասեք:

Երդմեցնում եմ ձեզ. ասացեք նրան,

Որ ես հիվանդ եմ կարեվեր սիրով:

#### 7. Ասացեք նրան, որ սիրում եմ ես

Նրա անծանոթ մորը սիրելի,

Նրա դարավոր արյունն եմ հարգում,

Ինչպես հարգում են հոյիությունը:

8. Երդվեցնում եմ ձեզ. ասացեք նրան,  
Որ սերն իմ իին է ու վաղընջական՝  
Իր բազմադարյան  
Հրեական արյան  
Եվ նոր՝  
Նոր զարթնած իր սրտի՛ նման,—  
Հին ու նոր՝  
Ինչպես առավոտն ինքը:

9. Դուք լսո՞ւմ եք ինձ, խարտյա՛շ աղջիկներ:  
Դուք գիտե՞ք արդյոք, թե ի՞նչ եմ ուզում,  
Որ ասեք նրան՝ այդ սեահերին:  
Երդվեցնում եմ ձեզ, ասացե՛ք նրան.  
Ուզում եմ լինի նա սերն իմ վերջի՛ն,  
Իսկ ես էլ՝ նրա առաջի՛ն սերը:

10. Երուսաղեմում երբեմ չեղած աղջիկնե՛ր խարտյաշ.  
Թե իմ փոխարեն դուք պատահաբար հանդիպեք նրան՝  
Երուսաղեմի մրահոն դստեր,  
Ասացեք, որ նա մի փակ այգի է,  
Այզու մեջտեղում՝ դռնփակ հնձան,  
Բուրող հնձանում՝ եռացող գինի,  
Իսկ դուք, բարիներ, սնուցում եք իհած  
Ուրի՛շ մի գինով,  
Որպեսպի սիրո անհագ ծարավից  
Ես չնվաղեմ:

11. Երդվեցնում եմ ձեզ. ասացեք նաև,  
Որ եթե հանկարծ նա ինձ որոնի,  
Եթե իմ դուռը նա բախի հետո,  
Եվ նույնիսկ կանչի՛,  
Ինձ ձա՛յն տա սիրով՝  
Կլսի միայն  
Իր խվզող ձայնի արձագանքը թույ.  
Կյանքի և սիրո եպերքին ընկած

Խեցին կա՛,  
Սակայն...  
Անփոփոխ խեցու խեղճ բնակիչը  
Հափշտակված է օտար գազանից  
Եվ կամ թաղված է իր քարե բնում...

12. Երուսաղեմում երբեմ չեղած աղջիկնե՛ր խարտյաշ.  
Թե ինկարծ տեսնեք Երուսաղեմի սեակըն դստեր.  
Ավելացրեք,  
Որ առայժմ ես ննջում եմ անուժ,  
Բայց դեռ արթուն է սիրտըս նվազուն:  
Թող նա շտապի՛,  
Թե չէ՝ կուշանա՛,  
Թե չէ՝ կլսի  
Ոչ թե իմ կանչը,  
այլ վերջիս ճի՛չը...

#### ԳԼՈՒԽ Դ

Անեակ նորա ընդ գլխով իմով, և՝ աչ  
նորա պատեսցէ զինն...

ԵՐԳ ԵՐԳՈՅ»

1.     Եվ դու չուշացա՛ր.  
Դու շտապեցի՛ր,  
Իմ Սո՛վ...  
Սուլամի՛...  
Իմ Սուլամի՛թա...

2.     Իմ Սուլամի՛թա.  
Եկար վագեվազ՝  
Եռամբա կայտառ վամբիկի նման,  
Եվ զամբիկի պես գեղեցիկ՝ եկա՛ր:

3. Եկա՛ր... և իսկուն, իմ Սովամի՛թա,  
Հազարամակներն իմ ու քո միջն ասես ջնջվեցին...  
Ես այգի չունեմ,  
Որ հիմա քեզ պես դալար վազերից  
Կողերիդ համար մահիճ այտրաստեմ:  
Ես այգի չունեմ... և այգին չեկար:

4. Մայթե՛ր կան հիմա  
Ու գորշ քաղաքնե՛ր,  
Շենքե՛ր բազմահարկ,  
Նրանցից մեկում՝  
Սենյակ մի նեղլիկ:  
Դու այնտե՛ղ եկար:
5. Եկար փարվեցիր՝  
Քո ամբողջույթա՛մբ:  
Մամուն է այդայես քարերին փարվում,  
Եվ արշալույսի գույները՝ երկնին:  
Ու ես այդ պահին զգայուն եի՝  
Ինչպես քո մա՛շկը,  
Եվ մաքուր եի՝  
Ինձ վրա հառված հայացքի դ նման:
6. Եվ դու բացվեցի՛ր...  
Այդպես բացվում է մահձում երեխան,  
Մթնում ծաղիկը:  
Ու ես այդ պահին՝  
Քո անմեղության բույրերից արբշիո՝  
Մոռացա իմ ողջ անցյալը հարուստ  
Ու երջանկացա իմ... աղքատությա՛մբ:
7. Ու տրվեցի՛ր դու՝  
Ծնվելով նորից:  
Այդպես տրվում է հողն արմատներին,

- Իր հունին՝ ջուրը:  
Ու ես հասկացա, որ ես ո՛չ մի տեղ  
Այնքան չեմ զգում իմ գոյությունը,  
Որքան քո՛ գրկում:  
  
8. Ես այլ բան չեի,  
Քան մի ապակի,  
Որ թափանցիկ է — լուսը չի բեկում:  
Եկար ու նրան ամալգամ դարձար,  
Եվ ինձ դարձըրիր դու մի հայելի,  
Ուր անդրադարձավ սերօդ երփներանգ...  
  
9. Իմ սերերն իրար և նման եին,  
Ե՛վ նման չեին,  
Ինչպես աշխարհի մեծ քաղաքները:  
Եկակ սերը քո  
Եվ ծննդավա՛յր դարձավ ինձ համար...  
  
10. Իմ Սո՛ւ...  
Սովամի՛...  
Իմ Սովամի՛թա:  
Գիշերը կարծես իր սկիզբն առավ  
Քո թուխ վարսերից  
Ու ծավալվելով՝  
Վերըստին եկակ խառնըվեց նրանց.  
Երկինքը նորից  
Զբաղվեց աստղեր տեղաշարժելով,  
Բայց մենք չտեսանք ո՛չ այս և ո՛չ այն.  
Քո զիլի տակ էր իմ ձախը դրված,  
Եվ քո մեջքն էի պատել իմ աջով.  
Չկա՛ր ժամանակ,  
Չկա՛ր նաև միտք.  
Կար շնչառությո՞ւն,  
Որ շատ էր նման  
Օվկիանոսների տուրևսառությա՞ն...

## ԳԼՈՒԽ Ե

Ես ննջեմ, և սիրու իմ արթուն կայ...  
Դիր վիս իբրև զինիք ի վերայ սրոր  
Քո... վասնվի հկօր է իբրև զմահ սեր...

«ԵՐԳ ԵՐԳՈՑ»

Լաւ են երկու, քան զմի... պի երէ  
Նևշնցնն երկուոք՝ շեռուցանեն զմի-  
մնանս, իսկ մինչ վիա՞րդ շեռուցու...

«ԺՈՂՈՎՈՂ»

## 1. ԻՄ ՍԻՇԱ...

Սովամի՛...

ԻՄ ՍՈՎԱՄԻ՛ԹԱ:

Ես այլ բան չեի,  
Քան մի ապակի,

Որ թափանցիկ է — լուսը չի բեկում:  
Եկար ու դարձար նրան ամալգամ,  
Եվ ինձ դարձըրիր դու մի հայելի,  
Ուր անդրադարձավ սերըդ երփներանգ:

Հիմա դու չկա՞ս,  
Ու ես վերըստին

Ահա հայելուց ապակի դարձա՝  
Մի սովորակա՞ն-աննե՞րկ ապակի,  
Որ թափանցիկ է — լուսը չի բեկում...

2. Ինձ արդեն վաղո՞ւց այնպես է թվում,  
Թե ես ննջում եմ, իսկ սիրու արթուն է:

Եվ փնտրում եմ քեզ,  
Սակայն չեմ գանում,  
Ու կանչում եմ քեզ,  
Բայց ձայն չես տալիս.

Տարածությունն է ընկած մեր միջև,  
Ինչպես մի սահմա՞ն,  
Որ բաժանում է  
Երկու թշնամի երկիր մեկմեկուց:  
Իսկ մենք — թշնամի՞...

## 3. Գարունը նորից

Իր վտանգավոր քարոզն է կարդում,  
Կոչեր է անում ինչ-որ նոր սիրո,  
Եվ չի հասկանում,  
Որ վտանգավոր իր քարոզի դեմ  
Թե ես արթուն եմ՝ իմ սիրուն է քնած:

## 4. Հեռու ես, հեռո՞ւ,

Ու ձայն չես տա ինձ՝ որքան էլ ձայն տամ:  
Գիտե՞մ, որ չկա՞ս,  
Ու չե՞մ գտնի քեզ՝ որքա՞ն էլ փնտրեմ:  
Բայց... մի՞թե սրտին բան կհասկացնես:  
Նորից ականա ելնում եմ փողոց,  
Սանրող հայացքով իմ շուրջն եմ նայում:  
Մայթերը լի են ժայտ-ծիծաղով,  
«Ներողություն»-ով ու «համեցեք»-ով,  
«Ճտեսություն»-ով ու «բարև»-ներով.  
Բոլորն այսուեղ են — իրենց տեղերում,  
Միայն դո՛ւ չկաս — իմ սիրուն է թափուր...

## 5. Եվ նո՞ր հասկացա,

Որ ես էի, գիտե՞ս, ես էլ եմ նախանձ:  
Նախանձում եմ ես սիրող զուգերի՞ն.  
Ծրջում են գրկված, ձեռք ձեռքի, կիպ-կից:

Մենակ եմ լոկ ե՛ս,  
Դո՞ւ չկաս, լոկ դո՞ւ:

## 6. Ձեռքիս ափերը հալվել են ուզում:

Ո՞ւր է կրակը.  
Քո ձե՞ռքը չկա:

Մատներս ուզում են լուս ու շող հունցել.

Ո՞ւր են ուսերդի,  
Եվ լանջը ո՞ւր է:

7. Եվ ամենուրեք ծաղիկ են ծախում,

Սիրա՛ծ ծաղիկը:  
Ես ո՞ւս նվիրեմ:

8. <եռախոսային խցնրն ապատ են,

Եվ խոսափողի կեռերը բոլոր  
Չորս կողմից ինձ են հարցական նայում:  
Ո՞ւմ զանգահարեմ, եթե դու չկաս:

9. Ու ես պատված եմ

Մեր անցած օրվա հուշերով այնպես,  
Ինչպես Պուլպեյը՝ սառած լավայով:

10. Եվ ինձ վրա են լուս ու ստվերը՝

Այժմ և ընդմի՛շտ:  
Այժմ և ընդմի՛շտ  
Այդ քո ստվերից ու լուսից՝ արդեն  
Շերտավոր եմ ես,  
Ինչպես հովազը:

11. Ա՛խ, երանի թե

Իմ տառապանքը բռնազբրավեն  
Եվ անմիջապես հանեն աճուրդի՝  
Ցանկացա՛ծ գնով:

Եվ ո՞ւր էր հանկարծ ձերբակալեին

Ու տային դատի

Կարոտ հորջորջված այս հանցապարտին:

Իսկ այս հուշե՛րը,

Որ կենդանի են կենդանի մարդուց,  
Ինչո՞ւ չեն կարող  
Հանկարծ ենթարկվել ավտոադետի...

12. Իմ Սո՞ւ...

Սուլամի՛...

Իմ Սուլամի՛թա.

Առանց քեզ ապրելն այնքան է իիմա  
Անհասկանալի ու տարօրինակ,  
Որքան սառուցի կամ ձյունի վրա  
Վառվող խարուցկը:  
Ու ես ապրում եմ  
Այդպե՛ս վառվելով:

13. Դու կարծես չկաս

Ու չես լինելու,

Այլևս ինձ համար մեռած ես կարծես:  
Սակայն ես գիտեմ,  
Որ դու անմահ ես,  
Ինչպես ամսմահ է կրակն աշխարհում.  
Այստեղ կիանգչի,  
Կվառվի ալլուր:

Եվ դու—ինձ համար— չե՞ս մեռնի երբեք,  
Ինչպես չի մեռել

Քո նախա-նախա-նախամայրիկը,  
Որ քո սիրելի անունն էր կրում,  
Իմ Սուլամի՛թա:

14. Եվ ուզում եմ ես փորձը մոռանալ,


Ահավոր փորձը իմ ամբո՞ղջ կյանքի,

Եվ ի հակառակ՝ անկասկա՞ծ ասել,  
Որ կմոռանա շունը տիրոջը,  
Ծառն՝ իր ծաղկելը,  
Ցուն՝ իր բառաչը,  
Եվ ժամապահն՝ իր նշանաբանը,  
Սակայն ո՞չ ես՝ քե՞զ,  
Իմ Սո՞ւլ...  
Սուլամի...  
Իմ Սուլամի՛թա...

1957 դեկտեմբեր, 1960 մայիս

Մոսկվա

# ՆԱՀԱՆ ԵՐԳՈՎ



## I

Ես շատ էի նման այն հեքիաթի կատվին,  
Որ երբ մինչև անգամ չքանում է աչքից՝  
Վառ ժպիտը նրա դեռ մնում է երկա՞ր...

Ես զյուտարարն էի քո այն գեղեցկության,  
Որ միգուց չկար ինձնից առաջ  
Եվ չինի գուցն ինձնից հետո:

Ու նիրեցի (գուցն և քնեցի<sup>7</sup>)  
Քո այդ գեղեցկության ստվերի տակ՝  
Բոլոր կասկածներս արձակուրդի ճամփած  
Եվ ծածկված տաքուկ այն չփիտեմ ինչով,  
Որ կոչվում է... հավա՞տ, վստահությո՞ւն:

Արթնացել եմ արդեն:

Օ, չէ՛, արթնացրի՛ր:  
Եվ իմ գրչի ծայրից, օր-ցերեկով,  
Մի պուտ միին գիշեր հենց նոր կաթեց  
Այս միամիտ-անմեղ  
Մաքուր-ձերմակ թղթին,  
Մաքուր-ձերմակ՝  
Ինչպես ինքըդ երեկ...



## II

Ես գիտեի հաստա՞տ,  
Ես գիտեի վաղո՞ւց:  
Դա գիտեի՝ նույնիսկ քո ծննդի՞ց առաջ:

Ես սպասում էի և գիտեի՝  
Կզա՞ս:

Եվ գիտեի նաև, որ ինձ համար  
Քո զալստյան օրը պետք է լինի  
Սարսափելի, բայց և հանդիսավոր այնքան,  
Որքան հավատացյալ մարդու համար  
Ակնկալված օրը Ահեղ Դատաստանի:

Հավատացյալն եմ ես մշտայցելու սիրո,  
Եվ օրերի օրը հասա՞վ.  
— Եկա՞ր:

Գործած և չբաված իմ մեղքերի ծովից  
Ես դուրս եկա մաքուր՝ որպես որոր ձերմակ:

Եվ ինձ պետք չէր դրախտ կամ եղեմյան այգի.  
Քաղաքամերձ անտառ և այգիներ կային...

## III

Քաղաքամերձ անտառ և այգիներ կային,  
Որ ինձ համար դարձան արվեստանոց սիրո...

Թե մինչև իսկ կայիր դու ինձանից առաջ  
Ես քեզ միանգամայն նորի՞ց ստեղծեցի,  
Չեզ տվեցի նո՞ր կերպ՝  
Ըստ իմ սիրո:

Ու երբ քաշված մի կողմ՝  
Քեզ նայեցի հեռվից,  
Սառած իմ աչքերը միանգամից դարձան  
Անշնչ հիացմունքի կրակարան երկու:  
  
Ո՞վ չի սքանչանում իր խսկ ստեղծածով...

Իրոք. այդ ես էի, որ քեզ ստեղծեցի,  
Այդ ես էի, որ քեզ կյանք տվեցի կյանքում.  
Եվ վաղ թե ուշ պիտի դու ապրեիր  
Քո առանձին կյանքով:

Եվ ապրեցի՞ր:

Խսկ ես միայն մարդ եմ:  
Ես աստված չեմ բնավ,  
Որ բարկանամ հանկարծ և որոշեմ.  
— «Ես տվեցի քեզ կյանք,  
Ես էլ ետ եմ առնում»...

#### IV

Աղջիկները կյանքում ուժենու են նման.  
Շա՞տ արագ են աճում:

Եվ աճեցի՞ր:

Ինչ ես էի զգում հասցըրեցիր զգալ,  
Ինչ ես էի սիրում դու սիրեցիր:

Ինձ հետ— կմոռանա՞մ— դու երջանիկ էիր  
Ավելի, քան գուցե՝  
Դաղձը՝ առվի ափին,  
Ցուլի վզին՝ զանգը,  
Զրիորի մեջ՝ աստղը:

— Քեզ ի՞նչ եղավ հանկարծ,  
Իմ բախտավո՞ր...

... Քո երգեցիկ քայլից  
Իմ ականջի համար  
Անրու դրդդացող այս քաղաքի  
Դժոխային աղմուկն ու ժխորն էր լուսմ:

— Նվազդ ինչո՞ւ լոեց,  
Իմ երգեհո՞ն...

... Ոչ մի արդուկ կյանքում չի՝ հարթեցնում կնձիո:  
Քո ձեռքն— ի՞նքդ գիտես— շա՞տ դյուրին էր հարթում.  
— Չեռքդ ինչո՞ւ չվեց՝  
Ամռան կեսի՞ն...

... Սերն իմ գեղեցիկ էր քնած մանկան նման,  
Որ ժպտում է նաև՝ երավի մեջ:

— Ինչո՞ւ արթնացըրիր՝  
Լացացնելո՞վ...

... Բայց նման չե՞մ հիմա ես այն մանկանն արդեն,  
Որ հարցնում է նաև իր իմացա՞ծ բանից:

— Զէ՞ որ ինքս գիտեմ,  
Աղջիկները կյանքում  
Ուժենու են նման—  
Աճում են շո՞ւտ այնպես:

Եվ աճեցի՞ր:

Հիմա  
Ի՞նչ կա գարմանալի,

Որ քո ըստվերի տակ,  
Քո շվաքի ներքո  
Նաև ուրիշներն են հանգըստանում...

## V

Այս, ես սիրո հարցում երեխա եմ տարեց...

Ու ծխամորձն է լոկ իմ ստընտուն բարի  
Եվ իմ աղախինը, որ չորս կողմից հիմա  
Շրջապատում է ինձ իր հոգատար ծխով:

Բայց չորս պատերի մնջ բանտված ծովիզ հլու.  
Համբերությունն արդեն խապառ հատած,  
Ապըստամբում իմ դեմ,  
Իմ աչքերն է ճանկում:

Ես ամեն ինչ գուցե կյանքում լինեմ.  
Բայց բռնակա՞լ—  
Երբեք,  
Ինչպես ել նա կոչվի՝  
«Հայր», «Ռեկակա՞ր», «արքա՞», —  
մինանո՞ւնն է:

Ու ես բաց եմ անում լուսամուտիս փեղկը՝  
Ապատություն շահած ծխին ուղեկցելով  
Ներողություն հայցող իմ հայացքով տիսուր...

Նո՞ւն հայացքով հիմա ուղեկցում եմ և քեզ,  
Ալելի ճիշտ՝  
Թնջըս նահանջում եմ դանդաղ,  
Միշտ դեպի քեզ՝ դեմքով,  
Մեջքով՝ դեպի այնտեղ,  
Որտեղ դու չես լինի,

Բայց կյիւնես նաև՝  
Թեկուզե այն բարի հիշողությամբ,  
Թե քեզ ապատեցի՝  
չսպասելով  
Քո ապըստամբ խոսքին  
Եվ ակնարկին անգամ...

## VI

Բայց քո սե՞րը... գիտե՞ս.  
— Նա ինձ համար նույնն էր,  
Ինչ «Ամեն»-ը՝ խորունկ հավատացյալ մեկի...

Թե զգեցած էիր՝  
Մարիամ էիր մի նոր:  
Թե մերկացած էիր՝  
Հելլեն էի մի իին...

Ասես մի շերմեռանդ կրակապաշո՝  
Ես քո լույսին էի միշտ կարկառվում...

Քո գրկի մեջ ես ինձ զգում էի հնդիկ  
Ու հասկանում էի, թե ինչ է «նիրվանա»...

Եթե մահմերական ես լինեի,  
Եվ լինեի նույնիսկ սովորան մի ցոփ,  
Հարեմ չէի պահի՝  
Քո՛ պատճառով...

... Աւ նստում եմ հիմա իմ նախընտիր ձեռվ՝  
Այնպես, ինչպես Բուդդան՝  
ծալապատիկ,  
Բայց խաչված եմ զգում՝  
Քրիստոսի՝ նախն...

## VII

Եվ էջերն եմ շրջում մեր անկատար սիրո,  
Ինչպես հավատացյալն՝ Ավետարանն իր սուրբ:

Չա՞տ բան անգիր գիտեմ— որպես աղոթք·  
Չա՞տ բան սուտ եմ գտնում— եղել եմ կույր:  
Չա՞տ բան հասկանում եմ ես նո՞ր միայն:  
Չա՞տ բանի մեջ հիմա նո՞ր ինաստ եմ դնում:

Միայն հավատս է, որ... չի՝ խորանում արդեն:

Իրենց գլուխներն են թերահավատ շարժում  
Մրսած զրուայգու մերկ ծառերը նույնիսկ:

Ու ես տուն եմ դառնում  
հասկանալով,

Որ ես՝  
հավատաքա՞ղ  
և հավատի ծարա՞վ,

Ես պատրաստ եմ հիմա  
էժան-հարմար գնով

Սե՞ր զամանել նույնիսկ,

Միայն թե տան հավատ.

Միայն թե կասկածը չփոսանա իմ մեջ,  
Ինչպես տաք երկարը՝ շեղչի մեջ ձյան,  
Ինչպես պտուղի մեջ՝ իր իսկ ծնած ձիճուն.

Միայն թե այլքըս չմտածեմ,  
Ու շուրջերը նաև համրույրով են ստում  
(Խուրով ստեն ասես քիչ էր, տե՞ր իմ աստված):

... Ինձ պես գունատ պատից՝  
քո փոխարեն,  
հիմա,

Տիցիան կոչված ինչ-որ արդար մեկի կամքով

Իր մեղքերն է լալիս Մագդաղինեն՝  
քույրը:

Եվ հակառակ գլխիս ու հակառակ կամքիս,  
Սիրտը՝

ամսուղղելի՞ն,  
այդ հիմա՞րը,  
դարձալ

Հավաքել է ուզում տեղեկանքներ սիրո  
Եվ հավատի չեղյալ կամ սուտ վկայական՝  
Հենց որ խոսում են դու սիրելո՛ւ պես:

Ու ես խեղիելո՛ւ պես քո ձեռքերն են սեղմում...

## VIII

Ես աշխարհ եմ եկել,  
Որ... ամենքի՞ն ներեմ,  
Բայց ո՞չ երեք նրան, ում սիրում եմ:

— Ինձ նմաններն անգամ... սիրածին չե՞ն ներում...

Բայց ես ի՞նչ եմ ասում: Ինչի՞ համար:  
Ե՞հ, ասելը հեջու է:

Ձե ասելով լիներ՝  
Կարեի էր շուր տալ աշխարհն իրոք  
Եվ իսկովն էլ տեղը մի նոր աշխարհ շինել...

Ու ես, որ ինքնակամ դատապարտել եմ ինձ  
Մի՞ տնային կոչված՝ բանտարկության,  
Բողոքարկման մասին անգամ չխորհելով՝  
Լոկ այիքն եմ փոխում ռադիունդրունիչի,  
Ինչպես ուրիշները իրենց սերն են փոխում:

Դրաւմ՝ սառնաւանիք,  
Եվ ձմռան մնջ, հանկարծ,  
Իս իին բարեկամը, որ Բրաւս է կոչվում,  
Տարածում է ամա՛ռ,  
Լույս ու արև՝,  
Չերմուգյան է սփոռում  
Ու փռում զոգ:

Եվ ձմեռն է չվում՝ թռչունի պես ձերմակ:  
Ու սուտ-մագաղաթե այն թղթերը շերտ-շերտ,  
Որ պինդ սոսցնձվելով նեղ ձեղքերին բոլոր՝  
Ասես հագցըրել են իմ տան պատուհանին  
Աքսորական մարդու զոլ-զոլ հագուստ,—  
Մի վայրկանում պոկվում-ընկնում են վար,  
Եվ բաց պատուհանը շքադրու է դառնում  
Արքայաքար մտնող ամռան համար:

Այս դարը հերքումն է բոլո՞ր հրաշքների  
(Նաև՝ հավերժական կոչված սիրո),  
Սակայն ներշնչումով իս այն բարեկամ՝,  
Որ Բրամս է կոչվում և այցելում հաճախ,  
Հրաշքին եմ նորից ես հավատում խորունք:

Եվ ամառը՝  
Կախած ինձ իր փեշից,  
Իսկ քեզ թելս զցած՝  
Տանում է մեզ  
Քաղաքամերձ անտառ...

Դու իիջո՞ւմ ես արդյոք...

Այնտեղ ամառային սովերն անգամ  
Թեթև հագուստի հետ մտնում վեճի  
Ու հաղթում էր նրան  
Եվ ստիայում,

Որ կանաչի վրա կարկատանվենք՝  
Ստեղծելով մի իին բարձրաքանդակ:

Դու իիջո՞ւմ ես արդյոք...

ՊՃնում էի ես քեզ  
Անտառային լայնթուփ տերևներով  
Ու պսակում էի շարով ծաղիկների,  
Որ դու ամեն ինչով ձավայուիի դաշնաս,  
Ու մեզ մի պահ զգանք ջունգիներում...

Դու իիջո՞ւմ ես արդյոք...

Ինչո՞ւ իիջել սակայն:

Զե՛, ավելի լավ է, որ հասկանամ իմաս,  
Թե քեզ կորցըրեցի ջունգիներում կյանքի,  
Թե իսկապես ջուտով ամառ կգա կրկին,  
Բայց մենք էլ չե՛նք լինի մեկը մեկի համար...

Կգա կրկին ամառ,  
Եվ տառապած փոշին  
Ազահ կներծծի անձրևի ջուրն այնպես,  
Ասես վալերյանի կաթիլներ է ըմպում,  
Որ չինի ինձ պես ուշագնաց...

## IX

Եվ ինձ նման ամպած երկինքն է լուռ ձնում:  
Ու մայթերն են իրենց դեմքին շպար դնում:

Դու չունեիր ոչ նե՛րկ,  
Ոչ շպա՛ր ու մնգո՞ւյր:

Դու ի՛նչ էիր, գիտե՞ս, թե ի՛նչ էիր:  
Դու կիս էիր, բայց և աղջիկ ու քովը,

Սնդիկի սյա՞ն նման ուղիղ ու ջինջ էիր,  
Իշակաթնո՞ւկ չէիր, այլ սինձ էիր,  
Գինի՛, որ չի տափս մրուր-տականք:  
Եվ ի՞նչ.

Դու քե՞զ չէիր, այլ ի՞նձ էիր  
Այս ամենի համար լոկ պարտական...

## X

Զյուն է գալիս կրկին:  
Եվ վաղո՞ւց է արդյոք:  
Հանդիպակաց շենքի քիվ-ձակատի լայնքին  
Նա նստել է հիմա  
Վիրակապի նման:

Իսկ իմ խեղճ ձակատը, ի՞նչ է, կարիք չունի՞:

Ու ես դուրս եմ գնում՝  
Ապաքինման հույսով:

Անհոգորեն սուլող ինչ-որ ջահել քամի,  
Ինչպես երևում է՝ դեռ չսիրահարված,  
Իմ պատանի կյանքն է հիշել տալիս կարծես...

Եվ սաղցապատ մայթը, որ իսկական դեմքին  
Չնի փափկությունն է որպես դիմակ հագել,  
Ինքն իրեն է մատնում  
Ստում ամեն վայրկյան.  
Ու ես սայրաքում եմ՝  
Ետ ու առաջ,  
Ենս-ինս...

Զյունն է անվերջ տեղում:  
Կարծես ուռկան լինի,

Հսկայական մի ցանց՝  
Նետված երկնից երկիր:  
Ասես հսկա մի ծովկ այդ ուռկանում գերված,  
Ուռկանն այդ քարշ տալով ու տանելով ինձ հետ՝  
Ես լողում եմ առաջ,  
Ո՞ւր—  
Հգիտե՞մ:

Այս ձյուն-ձմեռվա մեջ՝  
Ողջ իմ ներսն է տենդում,  
Նոր դողերոցքով է ասես հիվանդ հոգիս,  
Ուստի վարժանալի ոչի՞նչ չկա,  
Թե մտքերըս բոլոր վառանցանք են թվում...

Զյուն է գալիս: Անվե՞րջ:  
Նա ե՞րբ դադար կառնի:  
Ու ե՞րբ դադար կառնի և այս վրույցը մեր,  
Որ նման է երկու խոսակցության...

## XI

Բայց երբ վերըսկսենք մեր վրույցը կինատ,  
Որ կոչվում է կարծեմ բացատրություն,  
Ինչ որ կոկված-սոկված խոսքերի տակ ծանոթ  
Պիտի ջանամ ծածկել լուսթունքս հսկա,  
Որ դրանով, հանկարծ, քեզ չփիրավորեմ:

Միշտ խորհելով նույնը՝ պիտի չասեմ նաև,  
Տիր ինձանից երբեք դու չե՞ս ապատվելու,  
Ինչպես չես ապատվի ո՞չ թե միայն փեշից,  
Այլ քո մաշկի՞ց նաև,  
Որի վրա  
Իմ մատներն են թողել իրենց դաշվածքը խոր,  
Որ չպիտի ջնջվի մոռացումից անգամ...

Պիտի չասեմ նաև,  
Որ աչքերս էլ փակեմ՝  
Իմ հայացքը կպաս դու քո մեջքո՞վ նույնիսկ,  
Անգամ հավարավո՞ր կիլոմետրի վրա:  
Ու սայթաքես եթե կամ քայլերը խառնես՝  
Չուր մի՛ կարծիր, թե դա դարուփոսից եղավ:

Այդ իմ հայացքն է քեզ շփոթեցնում հեռվից...

## XII

Ելեկորական լարին միշտ կիա ու հուա  
Դր եղանով անկոթ  
      տրոլեյբուսը  
      մերթ-մերթ  
Չաղ է տալիս կայծի խրձեր խառն ու խոփ,  
Չաղ է տալիս այնպես,  
Ասես անտես մի մարդ  
Դնչ-իր բան է զողում  
Խավարի մեջ,  
Օդում:

Մեր սրտերն էլ չէ՞ որ զոդված էին իրար,  
Զոդված էին՝  
      ասես աստծու հենց ի՞ր ձեռքով.  
Ո՞չ մի սպի չկար զոդման տեղում:  
Զոդված էին՝  
      ինչպես մոլեկուն է զոդված,  
Եվ ատոմը...

Ու մենք—բաժանվո՞ւմ ենք:

Հիմա անգիր գիտի ողջ աշխարհը  
Երբ անբաժանելին բաժանում են՝

Անջատվում է ահե՛ղ մի չերմություն:  
— Վկա՝ ատոմն ինքը:

Իսկ մեր բաժանումից... ծնունդ կառնի  
Մի այնպիսի ահեղ սառնամանիք ու ցուրտ,  
Որ չի կարող չափել եղանակի՝ վրա:  
— Վկան՝ բևեռները...

## XIII

### Իրոք՝

սառնամանի՞ք,  
Այնպիսի ցուրտ իրոք,  
Որ կարող է նույնիսկ ահաբեկել  
Դեռ նոր սիրահարված այն զույգերին,  
Որոնք հանդիպումի այլ տեղ չունեն,  
Բացի փողոցներից ձմեռնաշունչ:

Տեղ չունեինք մե՛նք էլ:

Ու ցրտի մեջ ձմռան  
Քայլում էինք՝  
Ասես կոխվըրտելով  
Ոչ միայն ձյուն-սառուց,  
Այև ժամ-ժամանակ:  
Իսկ մեր շրթումքներից ու ոռւնգներից  
Ընդհատ պողոթկացող չնչառությունը տաք  
Ասես ծուխը լիներ այն լուր կրակոցի,  
Որ «սոլյուտ» է կոչվում օտար բառով...

### Քայլում էինք՝

գուցե ցրտից սրբարթալով  
Ու թերևս ցրտից փոքր-ինչ և կուչ եկած,  
Բայց... տաքանում էին մեզ նկատող մարդիկ...

Սառնամանիքի մեջ անծայրածիր  
Քայլում էինք այնպես, ինչպես հավանաբար  
Երկրագնդի երկու սառած բնեղների  
Հայտնագործողներն են քայլել մի օր...

Եվ մենք ինչո՞վ չենք հայտնագործող, ատա՛:  
Ես քե՛զ էի գտել,  
Գտել էիր դռւ ի՞նձ...

## XIV

Սենյակում բուն դրած հսկա սարդի նման՝  
Համայն աշխարհով մեկ իր ոստայնն է փոռում  
Ռադիոնդունիչը:

Երկու մատով  
Ես սեղմում եմ նրա սապատները մեկ-մեկ,  
Եվ որտեղից որտե՞ղ, չանցած երկու վայրկյան,  
«Ավե Մարդիա»-ն է մսերիս մեջ խրում  
Նոտաների փուշը...

Չե՞ս նկատել արդյոք,  
Որ հասնում է մի տեղ,  
Սարսրուազո՞ւ մի տեղ,  
Երբ նվագող բոլոր գործիքները  
Լոկ մի բան են ձչում.  
— «Զարմանո՞ւմ եմ»:

Զարմանում եմ ե՞ս ել,  
Միայն զարմանում եմ:

Զարմանում եմ, թե այդ ինչպես եղավ, ինչպե՞ս,  
Որ կարծ պաչի փոխվեց մեր համբույրը երկար,  
Եվ ժպիտը փոխվեց քմծիծաղի...

... Խավարատյաց էին աչքերն իմ սև,  
Մթահալած էին աչքերն իմ մութ.  
Չույզ լուսարձակ էին կարծես նրանք:

Զարմանում եմ, թե ո՞նց, ո՞նց պատահեց,  
Որ բնակվեց այստեղ մթին տրտմությունը՝  
Ինչպես որ չղջիկը քարտնաձավում...

... Դու շատ հաճախ էիր իմ մավերը գովում,  
Որովհետև ուրիշ գովելու բան չունեմ:  
Եվ ինձ զգում էի զորե՞ղ զարմանալի:

Զարմանում եմ, թե ո՞նց իմ մտքով իսկ չանցավ,  
Որ կարող ես մի օր դու Դալիլա դառնալ  
Եվ քո ձեռքով խուզել մավերը Սաւանոնիդ...

... Իմ ձեռքերի գործը քեզ սիրելն էր որ կար՝  
Փայել-փայփայելը,  
Գրկել-գուրգուրելը:  
Հիմա նրանք ի՞նչ են.  
Խեղճ գործազո՞ւկ:  
Ու թե նրանց նույնիսկ նշանակեն նռաստ՝  
Պիտի հրաժարվե՞ն:

Զգարմանա՞մ...

... Ներսը հացադուկ է հայտարարել հիմա,  
Ու սիրադուկ՝ սիրտըս:  
Եվ ոտներս են միայն, որ չեն հայտարարում  
Իրենց գործադուլը.

Փողոցներում նրանք  
Կոշկատակ են մաշում:

Զգարմանա՞մ...

Ու մոքերս են գործում,  
Նույն փորձանքն են փորձում.  
— Սկըսելով քեզնից՝ վերադառնում են քնզ,  
Այն ընտանի սովոր կենդանու պես,  
Որ դուրս գալով տնից՝ տուն է գալիս վերջում,  
Իսկ տունն արդեն չկա՛:

Չպարմանա՞մ...

Չպարմանա՞մ, ասա՞,  
Ինչպե՞ս չպարմանամ,  
Որ այսքանից հետո ես, մտովին,  
Քո անունն եմ տալիս՝ շա՛տ ավելի հաճախ,  
Քան վտանգված նավի ռադիո-հեռագրիչը  
Իր ահարեկ «SOS»-ը...

## XV

Դու փորձում ես գտնել արդարացում.  
«Սայթաքում են... ընկնում... բայց չե՞ որ ես...»:

Իսկ ես վերիիշում եմ քո երազը.  
Իբր թե ընկել ես ու ոտներըդ շարդել,  
Բայց... չես կարողանում քայլել ո՛չ թե ինքը,  
Այլ ե՛ս, քո փոխարեն, ե՞ս չեմ կարողանում...

Ե՛ս, որ երազների չեմ հավատում բնավ,  
Հիմա ինչպե՞ս չասեմ,  
Ասա՞ ինչպե՞ս չասեմ,  
Որ այս երազը քո ձի՛շտ դուրս եկավ:

Քո՛ ոտներն են ջարդվել,  
Քայլել ե՛ս չեմ կարող...

## XVI

Դու մեղք բնա՛վ չունես,  
Ես այլ գիտե՞մ, գիտե՞մ:  
Եվ ուզում եմ ցավըս արդարացման փոխել,  
Բայց և հասկանում եմ, որ դա շատ է նման  
Մի աչքը շիլ մարդու այն ձգտումին,  
Եթե նա նկարվում է միշտ կիսադարձ,  
Կարծես պիտի աչքը շտկի նկարվելով...

## XVII

Եվ սևահեր-սևաչ կարոտ կնոշ նման,  
Ինձ գիշերն է կանչում—հրավիրում  
Տաք ժայտով զառ-վառ իր լուսերի,  
Իր գինդերով լամպե,  
Ռեկլամ-հեռագրերով:  
Եվ չգիտի խեղճը,  
Եվ չգիտի, թե ես,  
Ե՞ս, որ հայցքով իմ  
Անցնող-դարձող կանանց  
Մեխում էի մի պահ իրենց տեղում  
Եվ տիրաբար անխոս հրամայում.  
«Կանգնիր՝ քեզ աչքերով սիրե՞մ մի քիչ»,—  
Ես դաբել եմ հիմա ինչ-որ էակ անսեռ...

Ու ես դուրս չեմ գնում,  
Ես իմ տանն եմ մնում,  
Որտեղ մի այնպիսի՝ մքնողորտ է հիմա,  
Այնպիսի՝ գարզ մի օդ, որից հավանորեն  
Կսատկեին և՛ ճանձ, և՛ փայտողիլ...

Իսկ աչքերիս առաջ, նույն սեղանին,  
Հարցականի պես կեռ նույն լամպն է միշտ տնկված՝  
Կոպիդ այնքա՞ն նման լուսամփոփով:

Ու մտքերս են հիմա իմ ուղեղը խածում՝  
Իշամեղուների անտես պարսի նման...

Ու բերանը հիմա ասես դուռն է դառնում  
Այն մութ քարանձավի, որտեղ ձմռան մուտին  
Տարթն են կրակ տալիս հովիվները...

Ել իմ տառապանքը նորից նմանվում է  
Մեր լեռնային կեռւեան կածաններին...

Ա՞յս, այդ լեռնաշխարհը...

Թե լինեի այնտեղ  
Ել այս կեսգիշերին ելնեի բակ՝  
Սյա արթընմի ծանըր մըղձավանցից  
Դուրս հանելու բարի կամեցությամբ,  
Ինձ կղիմավորեր մի ողջ հաչո՞ղ երկինք...

Դու չպիսի՛ տեսնես այդ երկինքը երբեք,  
Եվ չպիտի՛ զգաս, որ այդ լեռնաշխարհում  
Երբ նայում ես վերև՝  
Գիշերային երկնին,  
Ասես զուգ ա՛չք չունես,  
Այլ զուգ հեռաղիտա՞կ...

Թե լինեի այնտեղ  
Ու դուրս զայի հիմա  
Չեղնածածկ ու կավե մեր տնակից,  
«Քար-կշեռքը» պիտի աչքերիս դեմ ճռվեր:

Ինձ թվում էր, թե նա իր թաթերով  
Լույս ու մռւխն է կշռում ազնըվորեն,  
Որ հաշտեցնի երկու վիճող հարևանի՝  
Գիշեր-ցերեկվանը:

Իսկ հիմա նա  
Հավանաբար պիտի իմ կորուստը կշռեր՝  
Մի նժարին դրած քո արդարացումը...

### XVIII

Գարնան քայլն եմ լսում.  
Հասեհաս է արդեն:

Իսկ դու հետանում ես:  
— Գնաս բարո՞վ:

Գնա՛, սակայն հիշի՛ր,  
Կան այգիներ,  
Որոնց շուտով երբ դու այցի գնաս,  
Ծանօթ ծառերը քեզ պիտի հարցնեն անշուշտ.  
— Իսկ ո՞ւր է նա... ո՞նց թե...

Դու մտածիր,  
Թե ի՞նչ պիտի նրանց պատասխանես:

Կա նստարան կանաչ:  
Պիտի կանչի նա քեզ,  
Եթե մինչև անգամ փոխես ձանապարհը,  
Եվ իր կանաչ դեմքը թուխս բիբերիդ հառած՝  
Պիտի հարցնի.  
— Ո՞վ է այս օտարը կողքիդ...

Լիձ կա կը ոսայգում,  
Կան նսιվակներ ափին:  
Ամեն անգամ հենց որ թիերն անվարժ բանեն՝  
Զուրը պիտի հարցնի.  
— Ո՞նց թե... առանց նրա՞...

Ճոճ կա լճի ափին,  
Հսկայակա՞ն մի ճոճ,  
Որ պտույտ է գործում ջուրջանակի  
Եվ լույգեր է ճոճում՝  
Նրա՛ համար կարծես,  
Որ նոր ծնված սերը հասունանա:

Ճոճն այդ,  
Քեզ տեսնելով ուրիշի հետ՝  
Իր պտույտով պիտի գծի մի մե՛ծ... կրո:

## XIX

Ես չեմ եղել Համետ,  
Չեմ ել ուկում լինել.  
«Լինել-չլինելը», մեկանից չէ կախված...

Եթե պետք է, որ ես ո՛չ ինձ նանան լինեմ,  
Այլ անպատճառ ինչ-որ ուրիշ մեկի նման,  
Ապա ես կուկեի, ջա՞տ կուկեի  
Լինել շեքըսպիրյան մի խեղկատակ,  
Որ ասեի հենց այն,  
Ինչ բոլորը գիտեն,  
Բայց բարձրաձայն ասել չեն հանդընում...

Սակայն ես դեռևս քեզ սիրում եմ այնքան,  
Որ, է՛հ, դուրս եմ զալիս իմ երազած դերից  
Եվ կաշխատեմ հագնել Առյեկինի դիմակ.

— Սուտ սե՛ր պիտի խաղամ, անհա՛յտ Կողմքինա...

## XX

Արդյոք չէի՞ր ուսի գեթ մի պատառ լեզենդ:

Աստված, երբ Մովսեսին գերապատվեց՝  
Բոլորի մեջ նրան նախընտրելով,  
Եվ պատվիրեց իր ձայնը հասցընել  
Մեղքերի մեջ թաղված ժողովրդին,—  
Աստված, որ աստված էր՝  
Զեր նկատել մի բան.  
Իր Մովսեսն էր թլվա՛տ, կակա՛զ, ծանրալեզո՞ւ:

Աստծու համար ի՞նչ կա.

Ամենապոր է նա:  
Եվ թուլ տվեց աստված, որ իր վրուցներին  
Ներկա լինի նաև Ահարոնը,  
Որ, իհարկե, ուներ ձարտար լեզու:

Մովսեսի պես թլվա՛տ,  
Մովսեսի պես կակա՛զ՝  
Ես որտեղից գտնեմ մի Ահարոն,  
Որ քեզ սիրող սրտիս պատվիրաններն ամեն  
Ականջիդ մեջ թողնի՝  
Հեռանալուց առաջ:

Սակայն ինչի՞դ են պետք պատվիրաններն իմ սուտ,  
Չէ՞ որ ամեն նոր սեր իր նոր օրենքն ունի,  
Ուրեմն ունի նաև արդարացումն իր նոր...

Ու ես պիտի մեռնեմ որոշակի մահով.

— Մի օր ես խեղդամա՞հ պիտի լինեմ,  
Սակայն ո՛չ թե ջրում,

թեպետ մինչև այսօր  
Չեմ սովորել գոնե կյանքում փո՛քր-ինչ լողալ:

Ապրած-զգացածըս ասել չփորելո՞ւց  
Ես կիսեղբվեմ մի օր՝  
ինչպես մահանում են  
Կոկորդի մեջ խցված սուր ոսկորից...

## XXI

Բոլոր փողոցներում՝  
քամիների ժողով,  
Իսկ խաչմերուկներում՝  
խորհրդակցություն բքի.  
— Ի՞նչ են քննում արդյոք,  
Ի՞նչ կորոշեն:  
Իսկ ես...  
արդեն խորին  
ու մտածեն եմ ես,  
Ինչ որ ծածուկ էր դեռ՝  
Արդեն բացել եմ ես,  
Եվ մեկընդիշու՝ ցավով՝ արդ հասկացել եմ ես,  
Որ դու գիշերային իմ սարսափն ես անանց.  
— Թույլ տուր մի քիչ քնե՞մ...  
Եվ այն ափն ես հեռու,  
Որ ընկած է անձիր օվկիանոսից անդին.  
— Եթե այստեղ՝ գիշեր,  
Այստաղ ցերեկ է վառ...

Այս առածիգ կյանքի ցատկան լարի վրա  
Թե ես՝ լարախաղաց,  
Դու այն ձողն ես փրկիչ,  
Առանց որի վաղուց փշոել էի գանգըս...

Դու՝  
վրիպա՛կ իմ սեր,  
Եվ այսպիսի՝

Որին շտկում չկա,  
Ու դրանից  
Աղճատվում է կյանքի իմա՛ ստը ող...

Եվ ինձ ի՞նչ է մնում, որ ի՞նչ անեմ:

Թե իմ տառապանքից ես արձաններ շինել՝  
Դու կարող ես խկույն մի կռատուն դառնալ,  
Ուր կարող է անթիվ տոտեմների  
Մի ո՞ղ կենդանական աշխարհ լինել.  
Բացի շնի՛ց գուցե,  
Որ տոտեմն էր կարծեմ հավատարիմ սիրո...

Սակայն կուռք են կերտում լոկ հավատի՛ց դրդված  
Ել հավատի՛ համար,  
Ինչ ես չունեմ հիմա,  
Ու թե տառապում եմ՝  
Այդ պատճառով...

Ու ես տառապանքից խաղալիք եմ շինում,  
Որ... ինձ նման տարեց մանուկներին խաբեմ...

## XXII

Եվ իշնում է ահա մի գոգավոր գիշեր,  
Ասես հսկայական մի կափարիչ մրոտ:  
Եվ զգում եմ հիմա իմ սեփական կաշվին,  
Որ—հակառակ խելոք օրացուցի պնդման—  
Գիշերներն են աճում ցերեկների հաշվին...

Դրսում վրնջում է սանձակոտոր քամին՝  
Իր զամբիկից զրկված հովատակի նման:  
Եվ իս կուրծքն է իշնում ու բարձրանում շուտ-շուտ՝  
Անխղճորեն քշված ձիու կողերի պես...

Մե՞կ էլ անակնկա՛լ,  
ռադիո-ալիքներով,  
Առանց դուռ բախելու՝  
օգնության է գալիս  
Բախը՝ բարությամբ իր աստվածային:  
Անշունչ երգեհոնը տառապյալ է դառնում.  
Ընկնում-վերականգնում՝  
ավաղանքի ծխով  
Ճշմարտում է սերը զուգակշիռ ցավին  
Եվ անձնադատ խոսքով պատժապարտում իրեն:

Ու ես վերանում եմ,  
Այս աշխարհից պոկվում,  
Ու ես կորցընում եմ զգացումը կշռի:  
Բայց... հիշում եմ համարծ,  
Տիր այսպես էր լինում,  
Երբ զլուխը հանգչում քո ծնկներին  
Ու ճակատս էր շոյվում քո ափերով տաքուկ:

Վերացումի այդ կարծ-երկար վայրկյաններին  
Ես հավատում էի մարդկայնորեն,  
Որ կարո՞ն են լինել և խսկապն՝ որ կան  
Ուրիշ մոլորակներ և աշխարհներ ուրիշ,  
Որտեղ չկա կշիռ ու ծանրություն...

... Հիմա կշշում եմ ես երեք հավար չորս փուր,  
Եվ չի կարողանում հողն ինձ կրել.  
— Նրա կեղևի մեջ իմ ոտներն են խրվում՝  
Սեր ու կորուստ չափող կարկինի պես...

### XXIII

Բքի հարվածներից ծառերն ահա  
Խեղճ-խեղճ կկոցում են աչքերն իրենց:

Ե՞ս եմ արդյոք լալիս,  
Թե այդ՝ ձյունն է հալչում  
Տառապանքից ջերմած դեմքիս վրա...

Իմ տղամարդ տեղով լաց եմ ուզում լինել:  
Ի՞նչ կա ամաչելու.  
Հսապա ինչպե՞ս,  
Բա ո՞նց...  
Չե՞ որ իհմա ես մի թանկ մեռել եմ թաղում,  
Այն էլ՝ ո՞ղ ու առո՞ղ,  
Ապրո՞ղ ու կենդանի...»

Գիտե՞ս, թե ինչպե՞ս են մեռելատեր մարդուն  
Միխիթարում մերոնք՝  
Լեռնաշխարհի մարդիկ.  
«Աստված ձեռիցդ առակ,  
Թող սրտիցդ էլ առնի»:

Քեզ իմ ձեռքից առա՞ն.  
Մեռելատեր եմ ես:  
Իսկ ե՞րբ այսոի գնաս և իմ սրտից, սրտից...

Իսկ թե ի՞նչ է լինում իմ սրտի՛ հետ, գիտե՞ս:  
Հարմար բառը գտնել այնքան հեշտ է իհմա,  
Ինչքան որ աստղուն բակում հանդիպելը:

Եվ այստեղ է, ահա, որ չես կարող  
Չնախանձել,  
թե կան այլ լեզուներ,  
Որ և՛ բաժանումը, և՛ պայթումը սրտի  
Նո՞ւն բառով եմ կոչում,  
Նույն մե՛կ բառով...

## XXIV

Եվ ուզում եմ ասել քեզ երկու խոսք:  
Ու խցիկն եմ մտնում հեռախոսի:  
Բայց իիշում եմ հանկարծ, որ ամիսներ առաջ,  
Երբ ես խոսում էի հեռախոսով քեզ հետ՝  
Սառած լսափողը շիկանում էր ձեռքիս  
Քո կարոտի խոսքից ու շշուկից սիրո:

Ինչպես ուսկորի մեջ ծուծն է մնում՝  
Լսափողի մեջ էլ մնում էր քո ձայնից  
Ինչ-որ ալիք մի տաք,  
Ու ես—  
Գագանի պես—  
Պատրաստ էի ջարդել,  
Միայն թե դուրս հանեմ...

Հիմա, հավանաբար, լսափողով այդ նույն,  
Ինչպես մութ անցուլով,  
Պիտի մի ցուրտ սողա,  
Մի միջանցիկ կեղծիք...  
Ու ես  
Անմիջապես  
Զեռքըս ետ եմ քաջում լսափողից՝  
Այն գագանի նման, որ սխալմամբ  
Թաթռ է հանկարծ դնում ովնու վրա:

## XXV

Ասեղներ են հոսում ամեն ջրհորդանից:  
Ասեղների հոսք է և իմ ներսում...

Սեծքթանի մի ամպ առաջ մեկնած դնչով  
<ոտոտում է հեռվից մի երկնաքեր շինվածք,

Որ երեխ նրան ուրույն կին է թվում՝  
Սլացիկ ու ձերմակ,  
Հնարավոր սիրով...

Ես իմ տառապանքից տոկունություն հյուսում  
Եվ ձգոտում եմ կախվել կանանց թարթիչներից.  
— Գոնե չինեհին այսքան ներկված-սարքված...

Եվ կորելով իսկովն՝  
Իրթիոի պես  
Հայացքս եմ վեր նետում  
Ու նկատում,  
Որ մեկ ուրիշ ուս ամպ, խոալիաձև՝  
Իր կոշիկն է կախել ուղիղ գիխիս.  
— Ուր էր թե հարվածեր՝  
Խելքի գայի...

Այս, թե խելքի գայի  
Ու չպայի,  
Որ քո մաշկով էին իմ մատները սնվում,  
Մինչդեռ հիմա, երբ ես քեզ եմ դիպչում հանկարծ՝  
Ընկրում եմ իսկովն բնապղական վախով,  
Ասես հանկարծ դիպա էեկտրական լարի.  
— Իմ մատները քեզնից օտար հոտ են առնում...:

Եվ համբուրում էի ես այն տեղերը քո,  
Որ տարիներ հետո խորչումներ են տախի.  
— Այդ խորչումներն արդեն են չպիտի տեսնեմ...

Օր ու գիշերները հաշված ժամերն իրենց  
Ծախսում են միշտ՝ տնտես մի տանտիրոց նման:  
Սալայն կույրի վեցն է, թե թանկ արժեն մոմը:

Մենք՝ կուրացած սիրուց  
Ու կուրացած թախտից,

Եերեկ էինք վառում գիշերվա մեջ  
Եվ գիշերվա հաշվին ձգում ցերեկները...  
— Ո՞վ կարող է ասել, թե այդ ե՞րբ է հասնում  
Իր չհաշված աիրո օրակավասարը...

## XXVI

Սիրում էի ես քեզ «Խմ խնդություն» կոչել:  
Եվ դոս սիրուն բա՛ն չէր,  
Եվ կամ սո՛ւտ չէր սիրուն...

Հիմա...

Նույնիսկ լեզուն, կենդանու պես,  
Իր բնապդը ունի:  
Ու երբ բնապդաբար  
Նորից կոչում եմ քեզ «Խմ խնդություն»,  
Բերանիս մեջ լեզու դադղըղվում է այնպես,  
Ինչպես, հավանաբար, այն ձագուկի լեզուն,  
Որ եղինաց է կրծում՝ խոտ կարծելով...

Քեզ ի՞նչ կոչեմ հիմա,  
«Խմ տառապա՞նք»,  
«Խմ ցա՞վ»:  
Ի՞նչ, ի՞նչ ասեմ հիմա...

Լավ է՝ ոչի՞նչ չասեմ  
Եվ ինքնակամ թուլ տամ, որ իմ միտքը գործի  
Հախմատային ծանոթ ձիուկի պես՝  
Թոշկոտելով թեքվի ամեն կողմի վրա,  
Որտեղ եղել ենք մենք ու չենք լինի...

## XXVII

Ծորորում է նորից հնատարավ մի օր:  
Իսկ ես քո նոր շորերն էլ չպիտի՝ տեսնեմ...

Սակայն աչքերն ունեն հեռուստացուցն իրենց.  
Ու կտեսնեմ ես քեզ նաև հեռվից հեռու:  
Քեզ կտեսնեմ հենց այն ծաղկանկար շորով,  
Որի զանգակածն քղանցքներից  
Վարպետորդի քամին կարուսել էր սարքում,  
Մի կարուսել, որ միշտ փշանում էր շուտ-շուտ,  
Բայց և վերասարքվում արագորեն...

Եվ ձեռքերն ել ունեն հիշողությունն իրենց...

Ու հիշում են իմոնք  
Եվ կիշեն անվերջ  
Իրենց նվազումը  
Մազերիդ մեջ,  
Ռւզաբափումն իրենց՝  
Կրծքիդ վրա,  
Ել արթնացումն իրենց՝  
Տաք կողերիդ...

Եվ ոտքերն ել ունեն բնապդն իրենց.  
Ինձ այնտեղ են տանում, որ «մերն» էինք կոչում,  
Ինձ տանում են այնտեղ՝  
Կամքըս չհարցնելով:

Ահա փողո՞ցը մեր.  
Կուլ եմ տալիս աղմուկ:  
Ահա նրբա՞նցքը մեր.  
Ներծծում եմ իսակար,  
Եվ իմ կնճիռներում ցավս է կապտին տալիս...

Ահա ծառուղի՞ն մեր...

Դվ իյուսիսում այս պաղ  
Գարնան վերահասից ծառերն են լաց լինում  
Արևադարձային մե՛ծ-մե՛ծ կաթիլներով...

Ահա կանգա՛ռը մեր...

Ներջնչում եմ հառաչ,  
Արտաշնչում մեռյալ մի լոռվթյուն,  
Եվ լալիս է հոգիս՝  
քարանձավի նման—  
Ինչ-որ անմարդկային արցունքներով...

Ահա մեր անտա՛ռը...

Եվ իմ ականջներում  
Անվերջ զրնգում է արյունը տաք,  
Այնպես յիշնթացընող և միալա՛ր այնպես,  
Ինչպես մժղովների պարսի բզվոցը խուլ՝  
Ամռան անտառի մեջ,  
Ըոգ կեսօրին...

Ահա երկի՛նքը մեր գիշերայի՛ն...

Հողանդական պանրի գլխի նման դեղնած  
Մի լուսին է հիմա ինձ խեթ ու մեթ նայում  
Գուցե ակնարկելով հացաղուզը անկամ...

Սևամութ մի ամպ, իմ աչքերի առաջ,  
Ասես վերքիս վրա աղ ածելով,  
Լուսնի ձաղն է կրծում՝  
արծաթ հյութով նրա  
Իր սև բեղ-մորութը թունդ օծելով...

Ահա երկի՛րը մեր...

Եվ մեր երկրի նման՝  
Իմ կլորված սիրտն էլ իր բնեօներն ունի,  
Քո «այո»-ն ու քո «չէ»-ն՝  
Երկուսն էլ սա՛ռն ու պա՛ղ...

## XXVIII

Ե՛հ, հանդերձյալ կյանքի չի հավատում հիմա  
Հռոմի պա՛պը նույնիսկ, ել ուր մնաց թե ես:

Բայց իսկապես սերը իր հանդերձյալն ունի՝  
Ուրիշ—անդրստերյան— երկրորդ մի կյանք,  
Որ կոչում է կարծեմ հիշողություն,  
Եվ չի գնում փութանց,  
Ինչպես առաջինը,  
Այս տևում է այնքան,  
Ուրիշն ինքը կյանքը:

Այդ կյանքով է ապրում իմ սերն արդեն՝  
Նորի՛ց նորոգելով,  
Ապրեցնելո՛վ  
Այն ամենը, որ կա՛ր և չի՛ լինի...

Ու խլացած արդեն տառապանքի ցավից՝  
Քեզ եմ դարձյալ լսում,  
Լսում քո խոսքերը,  
Որ խառնվում էին սիրով հունցած կյանքիս,  
Ինչպես աղմբկարտը այս քաղաքն է խառնում  
Թռչունների ծիլ-վիլն իր ծխացող շնչին՝  
Քաղցըր թթվամորի՛,  
Անուշ մակարդի՛ պես...

Ինձ փողոց եմ նետում,  
Գցում բուքի բերան,  
Իսկ դու բռքի միջից իմ առաջ ես ելնում  
Թեթև-ծաղկուն շորով գարնանային  
Ու ճշմարտում սերը մի ժպիտով,  
Որից ամեն կասկած խուսափում է այնպես,  
Ինչպես խուս է տալիս դեք խաչից...

Այն, ինչ անվանում են վիրավորանք,  
Անհնար է դառնում երկար պահել.  
Մեկ էլ տեսար՝ հոտեց—գարշահոտեց մեջըդ:  
Եվ այստեղ է ահա, որ մի հարբած արցունք,  
Երկա՛ր ու տանջալի՛ց տատանվելուց հետո,  
Տապավում է ներքն՝  
Հասկացնելով,  
Թե կարոտը մարդ չէ, որ բռնես ու մորթես,  
Եվ անզոր է այստեղ այն դահիճը նույնիսկ,  
Որին անվանում են վիրավորանք...

Աչքերիս եմ սաստում՝ պինդ փակելով:  
Սակայն կոպերիս տակ քո աչքերն են բացվում.  
Ինձ հարազա՛տ այնքան սև աչքերը,  
Որ երբ ինքնամոռաց նայում էին երկինք՝  
Ճերմակ ամպերն էին նրանց խորքում լողում,  
Հեռանալուց առաջ մի պահ կաշկանդվելով  
Քո կեռ թարթիչների վանդակի մեջ թափուտ:

Ա՛խ, այդ աչքերը քո  
Ու քո թարթիչները...

### XXIX

Սերն ինձ համար կյանքում այն կնիքն է եղել,  
Որ միշտ դրոշմում են ոսկու վրա:  
Եթե կյանքըս զուրկ է այդ կնիքից սիրո՝  
Եվ սեփակա՞ն աչքիս կեղծ է թվում ոսկիս:

Հիմա... որտե՞ղ ծախսեմ  
Եվ ո՞ւմ ծախեմ ոսկիս,  
Ինչպե՞ս հավատացնեմ, թե կեղծվա՛ծ չէ, ինչպե՞ս,  
Եթե ինքս արդեն չեմ հավատում դրան,  
Եթե ինքըս գիտեմ, որ նա պիտի  
Այս քեզակուրկ օդից ժանգապատի...

### XXX

Ու բռնում եմ հանկարծ ինձ հանցանքի վայրում...

Քո խակակութ սիրուց ատամառու սրտով, •  
Ստուգապիս խաբված և մահառիթ խոցված՝  
Ես հպարտությանըս բարձր թոշակ տալիս,  
Որով բողոքարկու նրա ջուրթն եմ փակում  
Եվ... նորոգում սերս այն ներումով,  
Որ մտովին է լոկ, ուրեմն՝ անցողակի...

Թանաքի պես թանձըր ցավս է տարրալուծվում՝  
Տալով կապո՛ւտ մի շինչ  
Եվ ջո՛ւր վճիտ...

Ինձ խաբելով ինքըս՝  
Ինձ չեմ հաշվում խաբված.  
Ինքըս ինձնից գաղտնի՝  
Քեզ եմ դարձյալ սիրում...  
Եվ այսքանից հետո՝  
Այս ցավերի  
Եվ այս տանջանքի մեջ քեզ սիրելը  
Այնքա՞ն արտառոց է,  
Տարօրինա՞կ այնքան,  
Որքան արտառոց է, որ ծովերի  
Աղի ջուրի մեջ ողջ ժամանակ ապրող  
Զկներն այնուհանդերձ անալի են...

### XXXI

Ծենքերն ահա նորից հարբուխով են հիվանդ.  
— Սկըսվում է արդեն ձնհալն էլի:

Ցուրտ է, սակայն արդեն պաշտոնակա՞ն մի ցուրտ,  
Եվ ուր որ է պիտի գործն ավարտի-գնա:

Եվ ուր որ է կգա ինքը գարունն արդեն,  
Ու պատառու նման հողը կապրի արբունք.  
Կանաչ թեղեր կածեն նրա շրթունքներին,  
Եվ կմազակալի անմակ դեմքը նրա:

Կվարարեն շուտով վտակ-գետակ-գետեր:  
Չվարարե՞ն, բա ո՞նց...

Թե ամեն ինչ լրի՝  
Մինչև անգամ հեռվից  
դու կարող ես լսել  
Արյան գոչգոչումը և իմ երակներո՞ւմ.  
Ընդերկյա՞ գետեր՝  
Վարարել են, բա ո՞նց...

Կվարարեն շուտով վտակ-գետակ-գետեր,  
Եվ ջրերը ելման կստանան գույն յոդի:  
Ո՛չ, ջրերը ելման յո՞դ կդառնան իրենք,  
Որ վերքերը բուժեն խեղճ ափերի,  
Իրե՞նց իսկ հասցըրած վերքերը խոր,  
Որոնք, միևնո՞ւն է, չե՞ն բուժվելու,  
Խչպես վերքերն իմ այն,  
Որ դու տվիր...

### XXXII

Իսկ դու գիտե՞ս արդյոք,  
Թե մարդկային լեզվի  
Ո՞ր բառով է կոչվում այս վիճակը՝ իմը,  
Որին ո՞չ մի մակդիր չի սոսընձվում բնավ:  
  
Իսկ ես գիտե՞մ արդեն.  
— Ճգնաժամ է կոչվում:

Ճգնաժամն էլ այն է, որ անցնում է վաղ-ուշ,  
Թե չէ պիտի որ նա ուրիշ բառով կոչվեր:  
Եվ սա ճիշտ է նույնքան,  
Եվ անխուսափ նույնքան,  
Որքան որ մազերի ձերմակումը:

Իսկ իմ մազերն իրոք սկսել են փոխվել:  
Ե՛վը մի քիչ ձերմակ՝  
Ու կազատվեմ քեզնից.  
Էլ չե՞մ քայլի այնպես,  
Ասես մարդ չեմ ապրող,  
Այլ կախարան քայլող, որից կախ են տվել  
Մի վերարկու մաշկած և մի ծանոթ գիշարկ...

Էլ չե՞մ շնչի արդեն խոխռալով այնպես,  
Խնչպես բութ սղոցը՝ թաց գերանում...

Մաքսանենգի նման ինձ վտանգի մատնած,  
Զունենալով նրա ձարպըկությունը գեթ,  
Էլ ես՝ կոխվոտելով՝ չեմ անցնի և դառնա  
Հպարտության հսկած այն սահմանից,  
Որի հին անունը ինքնասիրություն է...

Տառապանքի տապից աչքերս էլ չե՞ն քրտնի,  
Եվ չի՝ կաղա ժպիտն իմ շուրթերի վրա՝  
Դեմքըս վերածելով ծուռ հայելու...

Էլ չե՞մ գերադասի ես խավարը լուսից,  
Խնչպես անում է դա նախապապը մեր այն,  
Որին պատվում ենք մենք «անձրևառդ» բառով...

Եվ ինձ չսիրելուդ, ինձնից հեռանալուդ  
Հանկարծահաս գյուտին ես կնայեմ այնժամ,  
Խնչպես որ նայում ենք այդ վառողի գյուտին.

— Ահավոր էր՝ երեկ,  
Սովորական՝ այսօր...

... Ով որ ուսանել է սիրո դպրոցներում՝  
Դաս է առնում նաև պըրոֆեսոր սարդից:  
Ուստի ես ել գիտեմ, որ երբ — սարդի նման—  
Մի մահաբաղձ պահի կախ են տալիս իրենց՝  
Իրենց ավշե հյութից իրենց հյուսած թոկով,  
Ապա... չե՞ն խեղդվում, չէ՞։  
— Անվնա՞ս են մնում...

### XXXIII

Հեռանալուց առաջ ձմեռն ահավասիկ  
Թաց կոկորդն է մաքրում մի անհարմար հազով՝  
Իբրև ճարահատայլ իր մեկնումի նշան։

Մեկնելու եմ ե՞ս ել...

Ու ես ճիշ եմ խպում իմ կիսաբաց բերնում՝  
Կիա շարժումով ձեռքիս,  
Հապ՝ րտ ձեռքիս։

Մեկնելու եմ ե՞ս ել...

Թե լինեին մտքեր ձայնագրող նիշեր՝  
Կղանայի գուցե նո՞ր բեթիովեն.  
Ե՛վ խլացած արդեն՝  
Բիրու աղմուկից ցավի,  
Բայց և լեցուն սիրո նվագներո՞վ։

Մեկնելու եմ ե՞ս ել...

Վաղը կայարանում ես ջունչ կառնեմ ազատ՝  
Գործող իրաբուխի ինձ հարավատ վայրում.  
— Շոգեքարշերն իրենց խառնարանից նեղիկ

Ծուխ կփնչուն երկինք՝  
Հուր ժայթքելու պատրաստ։

Իսկ իմ ծովսը երբեք դու չե՞ս տեսնի...  
Ու կմեկնեմ հեռու,  
Ու կմեկնեմ անդարձ,  
Ու կնստեմ մարդկանց սրտերին մոտ,  
Որ տաքանամ մի քիչ նրանց բարությունից,  
Եվ տաքանան մի քիչ նրանք իմ բարկ սիրուց...

### XXXIV

Նորահաստա՞տ մի սեր և նորաքա՞նդ մի սեր,—  
Սա մի պատմություն է, որ չի հնանալու,  
Ինչպես երբեկցե չեն հնանա  
Մահն ու ծնունդը նոր,  
Լացը երեխայի  
Ու ծերացած աչքի արցունքութելն անլաց.  
Ինչպես երբեկցե չեն հնանա  
Բախի վրուցները արարչի հետ,  
Կասկածն Օթելլոյի՝  
Իմ հորեղբոր որդու,  
Եվ իմ Սոկրատ պապի վարքը ծանոթ...

Դերը չսիրվածի կամ մերժվածի  
Ես կարող եմ խաղալ նո՞կն հեշտությամբ,  
Ինչ հեշտությամբ կյանքում պիտի դառնա  
Համ չզգացող մարդը՝ լավ գինեգործ,  
Գույն չզոկող մարդը՝ լավ ծաղկագետ։  
Մերժված ես չե՞մ եղել  
Ու չե՞մ լինի—երբե՞ք։  
Եվ ինձ չսիրելը—անհնար է նույնքա՞ն...  
Ես լոկ նահանջում եմ,  
Որ սկըսվեմ նորի՞ց...

### XXXV

Երբ հաղթում է խոսքը՝ մեղեղին է մեռնում:  
Ես կլոեմ իհմա, որ մեղեղին հնչի.

- Կնահանջեմ,  
Սակայն կնահանջեմ... երգո՞վ:
- Ե՞ս եմ ստեղծել քեզ  
Եվ ստեղծել՝ սիրո՞վ:  
Եվ դու պիտի ապրես սիրով միայն,—  
Լոկ այս երգն է թառած իմ նահանջող բերնին...
- Մի ընդ-օրին-նա-կի՞ր,  
Օ-րի-նա՞կ տուր սիրո,—  
Ես այսպես եմ երգում նահանջելիս...
- Օրինյալ եղիք այնպես, ինչպես կայիր՝  
Թեկուզ ինձնից հեռո՞ւ,  
Ա՛չ ինձ համար...
- Հավետ օրինյալ լինի քո անունը,  
Որ ինչում է մերթ «Կին» ու մերթ էլ «Սեր»...
- Հավետ օրինյալ լինի քո ժպիտը՝  
Հայտարարք սիրո և ինդության...
- Հավետ օրինյալ լինեն քո կողերը.  
Որոնք կյանք են ծնում տաք հպվելուց,  
Ինչպես որ շփվելուց ծնվում է հուր...
- Հավետ օրինյալ լինի նաև հեռացումը,  
Որ իբրև նոր գալուստ կարձագանքի հեռվում...
- Օրինյալ լինի նաև տված տառապանքը,  
Որից ոչ թե մեռնում, այլ ծնվում են կրկին...
- Օրինյալ լինի նաև իմ մեկնումը,  
Իմ այս նահանջումը,  
Որ նահանջ է... երգով:  
1961 թ., փետրվար  
Մուկվա

# ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ ՄՐՏԻ ԱՐԱՏ ՁԵ



1  
 Դարե՞ր շարունակ,  
 Դարե՞ր շարունակ  
 Բոլոր գույներից կապուտն առավել  
 <ուզել է մարդուն,  
 Միտքը խռովել:

Օվկիանին տիրած,  
 Խշենով ծովին՝  
 Նա աչքը տընկեց  
 Երկընքին ծավի:

Խպուր կարծելով,  
 Որ այլ ճար չունի  
 Վերին ծովերում լողալու համար՝  
 Մարդը միտք արեց կապկել թռչունին:

Սակայն...  
 Կապկելուց այդ ե՞րբ է ախար մեծ բան դուրս եկել,  
 Որ դուրս գար հիմա:

ԶԵ՞ որ ծովերում լողալու համար  
 Ճայ լինեն անգամ կատակ է հիմար—  
 Պետք է ձո՛ւկ լինել:

Եվ Մարդը հիշեց,  
 Որ ինքն առաջին իր նավակները  
 Իրոք որ ձկան տեսքով էր շինել:

Եվ հենց ա՛յն պահին,  
 Երբ թռչուններին կապկելուց պրծավ,  
 Այդ պահին էր հենց,  
 Որ երկրո՛րդ անգամ  
 Մարդը աշխարհում կապկից մարդ դարձավ:

## 2

Ստեղծվեց ահա, վերջիվերջո, նա՝  
 Այն երկնաձուկը,  
 Որով պիտի որ շուտով վերջանա  
 Մարդու անձուկը:

Երկնային ծավիշնավա՛կն առաջին...

Նավա՛կ,  
 Որ արդեն կարող է լողալ  
 Առանց հովերի.

Նավա՛կ,  
 Որ արդեն կարող է տիրել  
 Վերին ծովերին.

Նավա՛կ,  
 Որով Մարդն ուր որ է ահա  
 Պիտի կատարի  
 Տիեզերական տեղափոխություն.

Տեղափոխությո՛ւն,  
 Որ համեստություն անելուց եթե մի պահ դադարի՝  
 Կարող է խսկուն ինքն իրեն կոչել... հեղափոխությո՛ւն:

Հեղափոխության շունչն է զգացվում և Տիեզերքում,  
Ու շուռ է եկել ամեն ինչ իհմա:  
Խսկապե՞ն.

ԶԵ՞՞ որ դարե՞՞ շարունակ  
Մեր Հողագնդի կտորից վերև  
Չի անցել ոչի՞նչ—  
Ո՛չ քամուց քըշկած աշնան մի տերև,  
Ո՛չ գընդակ,  
Ո՛չ ձիչ:

ԵՎ մինչև անգամ ամեն մի թըշուն,  
Որ վերևում է շընչում  
Ու շըրջում,  
Թըշունն ինչ է որ—  
Փա՞ռք ստեղծողին—  
Թըշունն էլ վերջում  
Հանգստանում է կամ... սատկում հողին:

Վայր ընկնող աստղեր՝  
Երկնային ծովից մի պահ դուրս թռած  
Օձաձկան պես—  
Նո՞ւնպես վերևից:

Գիսավոր աստղեր՝  
Դումաշից կարած  
Զանգածն շորի փեշերը փռած  
Բոց աղջլկա պես—  
Նո՞ւնպես վերևից:

Հրեշտակները՝  
Դարձա՞լ վերևից:  
Նաև՝  
դնե՞րը:  
ԵՎ ինքը՝  
աստված...

Բայց... շուռ է եկել ամեն ինչ իհմա.  
Վերևից սուրող աստղերի տեղակ  
Այժմ ներքնից  
Եռաստիճանի աստղեր գիսավոր  
Վերև են սուրում  
ԵՎ հանդիսավոր  
Կոչում են իրենց  
Ո՛չ վար ընկնող աստղ,  
Ո՛չ էլ գիսավոր—  
Կոչում են հըրթի՞ն:

Լո՞ւմ ես,  
Ո՞վ Մարդ՝  
Սևանից—Բայկալ,  
Չունգիից—տայգա:

Լո՞ւմ ես,  
Ով Մարդ.

Չունը՝  
Մի Լայկա՝,  
Որ իբրև մակդիր  
Դարեր շարունակ միշտ քարշ է տվել  
Մի բառ՝  
«կապովի»,  
Երեկ չէ՞ր,  
Դարձավ... տիեզերական խիստախ կապավոր:

Չունը՝  
Մի Լայկա՝,  
Որ ամբողջ կյանքում  
Հանգով—չափավոր  
Հաչել է միայն Լուսյակի՞ վրա,  
Երեկ չէ՞ր արյուր,  
Որ իր վերևից

Լաղկանձեց նաև Արևի՝ վրա,  
Հողմաղացային անխվի չափ մեծ  
Մի խո՛րթ Արևի...  
Նա չէ՞ր, որ երեկ  
Հենց այն էր անում,  
Ինչ և ոչ մեկիս  
Բախտ չէր վիճակվել գոնե մե՛կ անգամ.  
Գոռով երկընքին տնապ էր անում—  
Լեզու էր հանում...

## 5

Հեղափոխության մրրիկն է ճայթել  
Նաև վերևում:  
  
Եվ միանգամից—չուզելով—հանկարծ  
Հեղափոխվում է հայացքդ անգամ.

Քիչ առաջ հանգիստ,  
Խսկ հիմա գժված  
քամուց  
Պոշնիվար տանիթից քշված  
Գյուղական ծաղկուն ավելը ծանոթ  
Ինձ ցերեկային գիսաստղ է թվում...

Նույնիսկ հավերն են հիմա ինձ թուկում—  
Անվարժ-անձոռնի քայլող հավերը  
Կարծես թե այսօր  
(Առաջին անգամ)  
Իրենց տոտերով դաշում են... աստղեր՝  
Հողի երեսին երկինք նկարում...

Ծիրանի ծառից խեժն է վար ծորում—  
Ասես վայր ընկնող մի աստղ է ծյուրում...

Ճերմակ մալաչա տանձերն են կաթում—  
Կարծես թե օդում  
Գյուխվայր շրջված պարացյուտներ են լիլիպուտային..

Մի ողջ Ծիրկաթին ողկուզ-ձութային,  
Եվ մի աննշան, մի խելառ ձպուռ  
Խարջու գնդածն շրջանն է ահա  
Լարված բպկոցով անվերջ չափչփում,  
Պտույտներ տալիս նույն ուղեծիրով  
Ու հետո՝  
Թափով ընկնելով ձութին,  
Չոհվում է նրա ձյութի պես կաչուն  
Ու ձահձի նման ներս քաշող հյութին,  
Չոհվում է—  
Խնչես մթնոլորտային խիտ շերտերի մեջ  
Արբանյակներն են խրվելով կորչում...  
  
Հեղափոխվել է հայացքը անգամ:

## 6

Հեղափոխության մաքրող ալիքից  
Եվ Տիեզերքն է մտովին բերկրում:  
  
Բայց դա սկըսվեց նախ այստեղ՝  
Երկրում:

Թեպետ և վաղուց—  
Թղթով ու գրով—  
Ճորտատիրական իրավունք չկար,  
Բայց Մարդը ճորտ էր—  
Եղել էր ու կար:  
Ճորտ էր ու գերի  
Իր ամեն տեսակ՝  
Ամեն օր  
Մի նոր  
Անուն ստացող  
Բոլոր տերերին.

Դրախտ խոստացող,  
Բայց դժոխք բացող  
Ծըրագրերին.  
Սուտ-սուտ խոսքերով  
Խաբող ու գերող  
Լըրագրերին.  
Եվ այն հրերին,  
Որ մուր են տալիս ավելի,  
Քան իուր.  
Եվ այն ջրերին,  
Որ պապակի տեղ  
Մարում են փափագ.  
Եվ այն սերերին...  
սրերին...

Կարծես  
Դեռ այս ամենը քիչ էր ու թերի—  
Եվ Մարդը նաև... հողին էր գերի.  
Այսպես էր գանձած միևնույն վայրին,  
Խնչպես Պրոմեթեան՝ իր քարաժայոին:

Եվ փրկությունը վերևից չեկավ՝  
Ո՞չ չար աստըծուց,  
Ո՞չ բարի դնից:

Մա՞րդ,  
Փրկությունը վերևից չեկավ—

Ափի՛դ մեջ ծնվեց,  
Պոկվեց քո թևի՛ց...

Նորի՛ց մարդացած,  
Կրկի՛ն գիտակից՝  
Մարդը ենում է այս խուփի տակից,  
Որ կոչել է նա երկնային կամար:

Ել բավակա՞ն է  
Որքան պտըտվեց,  
Խնչպես բանտվածը՝ իր բանտախցում,  
Խնչպես խխունջը՝  
Ծածկի տակ խեցու:

Ել բավակա՞ն է:

Կեցցե՛ երազի ձեավորումը,  
Կեցցե՛ սողունի թեավորումը:  
Վե՛րջ ճորտությանը,  
Մի մորից ծնված բյուր զավակների  
Զուր խորթությանը—  
Կորչի՛ երկնային բյուր երկրոների  
Հին կատությունը:  
Կեցցե՛ ու կեցցե՛ ապատությունը:  
Կեցցե՛ ...

Բայց կացեք,  
Սպասե՛ք մի պահ,  
Թող դադար առնի  
Այս հասկանալի գոռում-գոչումը:

Որտեղի՞ց հապա,  
Խնչի՞ց է գալիս  
Անհասկանալի  
այս զգացումը,  
Այս զգացումը... խըզահարության:

Ե՛ս,  
Որ շատ հաճախ  
Ուկել եմ նույնիսկ  
Մեր Հռղագունդը լինի իսկապես  
Փոքրիկ գլուրբու աշակերտական,

Ու... կորից բռնած՝  
Չոր գետնին խփես,—  
Ես  
Հիմա,  
Հանկարծ,  
Հանդեպ աշխարհի  
Դառնում եմ ինչ-որ չափից դուրս բարի,  
Մոռացած նոպան արդար չարության՝  
Լցում եմ ինչ-որ անհասկանալի խղճահարությամբ:

Ել ուրիշ ինչպե՞ս:

Տէ՛ որ այս Երկրում  
Եվ այս Երկրի հետ  
Ես արդեն քանի՛ ու քանի՛ տարի  
Ապրել եմ մեկտեղ,  
Մեկտեղ մահացել—  
Փոխել միասին  
Քանի՛ կերպ ու ձև:

Ինչպե՞ս չինեմ քնքուզ ու բարի,  
Թե արդեն քանի՛ ու քանի՛ տարի  
Ինչ ունեցել է՝  
Նա ինձ է տվել  
Եվ տվել այնքան,  
Որ հեջու չէ թվել:

Տվել է անտառ  
Ու որս է տվել.  
Տվել գետ դանդաղ  
Ու կոճըդ—նավակ.  
Բքի դեմ մորթի,  
Շոգի դեմ շվաք,  
Եվ մահ է տվել,  
Բայց նաև՝ զավակ...

Ինչ ունե՛ր-չունե՛ր՝  
Իմ դեմ շաղ տվեց,  
Չտես-վայրենուս  
Անզամ... ա՞ղ տվեց:

Ինչ ունե՛ր-չունե՛ր՝  
Ամե՛ն ինչ ուներ,  
Ամե՛ն ինչ, բացի  
Կրակ ու բոցից:  
Բայց երբ կրակը՝  
Շանթի տեսք առած,  
Երկընքից թռած  
Ու երկրին թռած,  
Մեկ՝ ցըցվեց պոչին,  
Մեկ՝ սողաց-սահեց,—  
Անզեն Երկիրը,  
Դարձյա՛լ ինձ համար,  
Իրեն վառելով  
Ու սպառելով  
Կրակը պահեց:

Կրակը պահե՞ց—  
Եվ ձեռ ու ոտին ահեղ կրակի  
Ես անմիջապես դրեցի շղթա,  
Որ ինձ չթռղնի ու Երկինք չերթա:

Եվ լի օր չեր դա,  
Այլ վառ Կիրակի՛—  
Դեռևս չեղած,  
միա՛կ,  
առաջի՛ն՝  
Նախապատկերը Տեաղընդառաջի...

Հետո,  
Շա՛տ հետո,  
Դար-դանդաղ հերթով,

Եկավ շո՛ւն, կատո՛ւ,  
Զի եկավ ու ե՛կ...  
Սակայն առաջին վայրի կենդանին,  
Որ բռնել եմ ես,  
Դարձըրել եմ հեզ  
Եվ անվանել եմ նրան «ընտանի»,  
<ենց կրակն ի՞նքն էր,  
Որ ինձ չի բաշխել ժատ Երկինքը,  
Այլ նույն Երկիրն է պարզմել:

9

Ու ես  
Լքո՞ւմ եմ նրան—  
Իմ օրորո՞ցը,  
Եվ իմ մահի՞ճը,  
Եվ իմ շիրի՞մը...

Ու թվում է, թե իմ մտերիմը,  
Իմ քանի՞տարփա հավատարիմը  
Իր թեռների ձնհալով  
Ահա՝  
Լուր լաց է լինում  
Եվ ասում կամաց.  
— ... Լքո՞ւմ ես հիմա:

Ու ես,  
Որ հաճախ նրա նկատմամբ  
Լցված եմ եղել արդար չարությամբ,  
<իմա— ո՞վ զարմանք— նրան եմ նայում  
Անհասկանալի խղճահարությամբ:

Ծով գորովանքի  
Ու սիրո խոսքնը շըրթներիս վրա՝  
Ծոյել եմ ուզում  
Սանըր չտեսած գլուխը նրա,

Ծոյել ու ասել.  
— Մի՛ լար,  
Իմ անգի՞ն,  
Լսո՞ւմ ես,  
Իմ սե՛ր.  
Ո՞վ էլ քեզ լքի՝  
Ես չե՞մ լքելու,  
Ո՞վ էլ ինձ ձգի՝  
Չո՞ւր է ձգելու—  
Թո՞ղ որ մեծ լինի հմայքն օտարի,  
Օտարի կամքը ես չե՞մ կատարի—  
Դարձյա՞լ կմընամ քեզ հավատարիմ...

10

Բայց թեռների վարար ձնհալով  
Համրածայն լալով՝  
Կարծես ակամա  
Ասում է կամաց.  
— ... Լքո՞ւմ ես հիմա:

Չե՞մ լքի ես քեզ,  
Չեմ լքի ցմա՞հ:

Ե՞վ իմ կինն ես դու՝  
Տանտիրուիին ես,  
Ե՞վ հավատարիմ իմ սիրուիին ես:

Ճիշտ է,  
Որ քեզ հետ ես չամուսնացա—  
Ամուսնացըրի՞ն,  
Եվ ա՞յս ժամանակ,  
Երբ ես տակավին չեի հասկացել,  
Թե ինչ է կյանքը,  
Թե որն է սերը—  
Չևի համար էլ ոչ ոք չըդիմեց

Ու չըհարցըրեց անգամ իմ կամքը.  
— «Որդյակ իմ, տե՞՞ր ես»:

Չըհարցըրեցի՞ն:  
Բայց ես հասկացա,  
Որ եթե հետո խուլ լինես ու կույր,  
Դառնաս կոնդ ու թույլ՝  
Քեզ,  
Ինչպես որ կաս,  
Պիտի ընդունեմ—  
Ե՛լ քեզ լքելու իրավունք չունեմ,  
Պիտի ծերանանք մեկտեղ՝  
Մի բարձի:  
Եվ իրո՞ք.  
Քանի՞ սավան փոխեցինք—  
Երկրաբանական դարաշրջաննե՞ր...

Սավա՞ն փոխեցինք,  
Բայց աստված չաներ,  
Որ փոխվեր բա՞րձը:

Բարձը չփոխվե՞ց:

## 11

Եվ ահա կախվեց  
Քո ծանըր հարցը.  
— ... Լքո՞ւմ ես իիմա:

Ո՞նց լքեմ,  
Հիմա՞ր:  
  
Ոնց լքեմ,  
Թե մենք  
Հնդկաստաններում մեկտեղ ենք սովել,  
Եվ քըթներիս տակ— կողքներիս ծովեր՝

Անջուր սլապակվել,  
Տապից տապակվել  
Սահարաներում,  
Արևին մոտիկ՝  
Բքից տապակվել  
Բների սաղցե սահարաներում...

Ջեզ ինչպե՞ս իիմա  
Ես լքեմ, իիմա՞ր,  
Եթե միասին  
Մեկտեղ ենք արել ապուշություններ՝  
Բըռնականներին չերմություն տվել,  
Սողուն ծընվածին՝  
Ոտքեր ու թևեր...

Մեկտեղ ենք արել և գժություննե՞ր.  
Գահեր ենք շրջել,  
Արյունով թրջել  
Գոռ հաղթանա՞կը արդար ոխության—  
Ապըստամբելով՝  
Փըրկվել ենք փորձել  
Եվ պարզել դըրոշ հեղափոխության...

Մեկտեղ ենք կրել,  
Միասին տարել  
Նաև ահավոր խժոժություններ՝  
Բարբարոսներից մինչև Աթիլա,  
Հոներից—թուրքեր,  
Թուրքերից—ֆաշիզմ.  
Վճարել արցունք,  
Ո՛չ միայն տուրքեր.  
Նաև՝ մեր կաջին,  
Ո՛չ միայն քուրքեր.  
Կորցըրել հավատ,  
Ո՛չ միայն կուրքեր...

Քանի՞ որդի ես դու ինձ պարզեել...

Հիշել ո՞ր մեկին,  
Ո՞ր մեկին թվել...

Նրանցից մեկը գոչեց. «Եվրիկա»...  
Երկրորդն էլ գտավ — ողջ Ամերիկան...

Երրորդն սկսեց Պարթենոն շինել...  
Չորրորդը խորհեց. «Լինել-չլինել»...

Մեկն ինձ քանդակեց՝  
Մովսեսի դեմքով  
Ու մարմով Դավթի:

Մեկ ուրիշն ահա  
Ծընվեց,  
որ հետո  
Զրից հուր զավթի  
Ու թներ՝  
նավթից:

Մեկը խլացավ,  
Զընկրծվեց սակայն  
Ու «Հերոսական սիմֆոնիա» գրեց:

Մեկ ուրիշ որդիդ՝  
Ծագումով հրեա,  
Հրեա Հիսուսի իին միֆը ցրեց  
Եվ ինքը դարձավ իրական փրկիչ—  
Իր միտքը դրեց  
Մի կյանքի հիմքում,  
Ուր՝  
Ո՛չ տեր-ծառա,  
Ո՛չ զրկյալ-զրկիչ...

Քանի՞ զավակ ես դու ինձ պարզեել...

Իսկ քանի՞ զավակ մենք զոհ ենք տվել:

Հիշել ո՞ր մեկին,  
Ո՞ր մեկին թվել...

Այսքանից հետո  
Լքե՛լ քեզ հիմա:

Ախար հասկացի՛ր.  
Որքան ջանում եմ՝  
Ելի մտքերս քո շուրջն են պըտտում,  
Պըտտում են համառ,  
Ինչպես թիթեռը...  
(Չէ՛ մի, ի՞նչ թիթեռ)  
... Ինչպես որ հիմա  
Օդապւրկ օդում  
Արբանյակներն են քո շուրջը պըտտում...

Մինչդեռ դու, նորի՛ց,  
Քո բնեօների վարար ձընհալով  
Համրածայն լալով՝  
Ասում ես կամաց.  
— ... Լքո՞ւմ ես հիմա:

Իկուր ես լալիս,  
Զուր ես հոգ անում:

... Քո վախը սակայն լավ եմ հասկանում:

Իրարից հեռու,  
Բայց դեմ-հանդիման՝  
Մոլորակներով լի է երկինքը,

Եվ ամեն մեկը... կին է քեզ նման:  
 Իսկ դո՞ւ...  
 Չէ՞ որ դու քո մրցակցուիուն  
 Երբեք չես պիշի ո՞չ մի բան,  
 Ոչի՞նչ—  
 Ո՞չ չոր մի ցողուն,  
 Ո՞չ կանաչ մի սինձ,  
 Եվ ո՞չ էլ անգամ  
 Սովորական քար,  
 Որ երբ նետում են,  
 Չի գնում հեռու—  
 Իսկույն ձգելով՝  
 Դու ետ ես բերում...

13

Ահա հենց ինքը Լուսինը լաչառ,  
 Որ քո դեմ անվերջ դավեր է նյութել,  
 Քեզ տըրվածներին ձըգտել է դյութել,  
 Բայց մինչև այսօր չեն օգնել նրա  
 Ո՞չ մարմինը մերկ,  
 Ո՞չ դեմքը սիրուն,  
 Ո՞չ անկեղծ պահեր,  
 Ո՞չ խաղ ու կեղծիք:  
 Ու թե ապդել է՝  
 Լոկ նրանց վրա,  
 Որ քեզ ամենից տկար են սիրում—  
 Լոկ ծովի վրա  
 Ու... բանաստեղծի:

Լուսնա-կնամոլ ու հեջտաբարո  
 Օվկիանոսներն ու ծովերն իսկապես  
 Մակընթացության իրենց ալիքով  
 Չըգտում են թողնել փակ ափերը քո,  
 Չըգվում են դեպի լանջաբաց ու հին  
 Այդ Լուսին կոչված էժան պըշտուիին,  
 Չըգվում են...

Սակայն  
 Դու ամեն անգամ  
 Բարկությամբ կնոշ  
 Ներքուստ ծփում ես  
 Եվ ստիպում ես,  
 Որ ետ դառնան գան:

Եվ անուղղելի,  
 Բայց և ձախողակ  
 Այդ կնամոլը՝  
 Նույն ծովն այդ  
 ահա՝  
 Չըշացած արդեն  
 Եվ ամոթահար,  
 Աչքերը լեցուն  
 Ներումահայցման արի թագությամբ՝  
 Նորից,  
 Շան նման,  
 Փարում ոտերիդ,  
 Ափերդ է լիկում—  
 մակընթացությամբ...

Իսկ պոետնե՞րը...  
 Եթե ճիշտն ասել՝  
 Թույլ տղամարդ են,  
 Քան թե կնասեր...

Եվ դու  
 Նույնիսկ քո այդ պաղ ու ջիջուն,  
 Այդ թույլ ու տկար սիրեկաններին,  
 Մինչնիսկ նրա՞նց  
 Լուսնին չե՞ս պիշում.  
 Ինչպես մանկանը՝ իր խաղալիքով,  
 Խաբում ես նրանց ծառ ու ծաղիկով,  
 Արբեցնում նրանց փառք-ըմպելիքով,

Հմայում նրանց  
Մայրամուտներով ու ծեզով ոսկե,—  
Եվ նրանք քեզ, կի՞ն,  
Ասում են կրկին  
Երդումի՛,  
Սիրո՛,  
Քնքանքի՛ խոսքեր...

14

Այնպես որ՝ Լուսնից դու մի՛ վախենա:

Եվ ի՞նչ դու չունես,  
Որով խարի նա:

Ինչ-որ «կրկեսնե՞ր»:

Բայց մի՞թե երբեմն  
Ինչպես ինձ՝  
Եվ քեզ  
Կյանքը չի թվում  
Կատարյալ կրկես...

Իրոք. ի՞նչ չունես,  
Որով խարի նա:

Իսկ այն,  
Ինչ ունես՝  
Նա չունի բնա՛վ:

Արևը ս վկա.  
Այստեղ էլ, ուր կա  
Մթնոլորտ  
Եվ օդ,  
Այստեղ էլ ախար  
Այնքա՞ն անհոգի բան է կատարվում

Նեղում են այնքա՞ն,  
Սեղմում են այնքա՞ն,  
Որ հաճախ մարդու շունչ է կտրվում:  
Հերիք չէ՞ այս դեռ:  
Իսկ Լուսնի վրա  
Բնավ օ՞դ չկա,  
Մթնոլո՞րտ չկա...

Եվ այնտեղ չկան  
Ամպե՞ր,  
Զո՞ւր,  
Քամի՞,  
Չկան տեղումնե՞ր.  
Որպիսի՞ տաղտուկ—  
Ո՞չ հուս փոփոխման,  
Ո՞չ էլ շեղումներ...

15

Սակայն երկյուղը դեռ անց չի կենում,  
Եվ ես քո վախը լավ եմ հասկանում:

Քո դե՞մքը...

Գիտե՞մ,  
Նա գրավի՞չ չէ,  
Գուցե վանի՞չ է,  
Անախորժալի՞—  
Ծաղկատար է նա՝  
Չոր ու խորշերից:

Մինչդեռ Վեներա՞ն...  
Նա չժանգոտող ազնիվ արծաթ է  
Եվ կամ պարզապես խորացած կաթ է:

Իսկ հապա Մա՞րսը...

Նա վտանգաւոր մի նորահարս է,  
Դա պարզ է,  
Թեպետ սուտլիկն այդ սիրուն  
Տղամարդկային անուն է կըրում:

Մինչդեռ մի ուն լըրստված Սատուրն՝  
Գայթակըդելու ախտին անձնատուր  
Մի անվանափոխ այլ խանում-խաթուն,  
Հերիք չէ ունի ձիգ-ջահել հասակ,  
Երկըրայսգուներ հազար մի տեշակ,  
Հերիք չէ—  
Որ դեռ գիլին էլ ունի  
Մի մեքսիկական շքեղ սոմբրերո՞՝  
Թե՛ մի երկնային վառ լուսապըսակ,  
Ու ման է զայխո՞՝  
Ծուլջը սըփոնելով  
Դյութանք  
Ու վտանգ...

16

ԵՎ ՀՎԱԽԵՆԱ՞Ս:

Ո՞նց չվախենաս,  
Երբ քո մարմինը—  
Գուցե ի ծնե—  
Պատված է՝  
տեղ-տեղ  
Դակությամբ ձնե.  
Տեղ-տեղ՝  
կապուտով—  
Օվկիաններ ու ծով.  
Խսկ քո շատ տեղին՝  
Մահցու դեղին—  
Խոցերի նման թարախակարմիր  
Քեզ այլանդակող քանի՛ անապատ,—

Մի տգե՛ղ մարմին՝  
Կապտադեղնապատ:

Բայց մի՛ սրտնեղիր:

Վաղը կամ մյուս օր,  
Երբ որ իմ հկոր  
Զերբերի առաջ պիտի տեղի տան  
Գաղտնասեր նյութի թաքուն դեղատան  
Ամենակարող պահարանները,  
Միամի՛տ եղիր,  
Որ ես կըրուժե՞մ  
Քո մեծ ու փոքր Սահարաները՝  
Միեղ բնության դաժան պըճեղի  
Բոլո՞ր հետքերը—  
Քո խոր վերքերը,  
Թունոտ ու լեղի  
Խոցերըդ դեղին:

Կըրուժե՞մ:

Վկա՝

Այն Կարա-Կումը,  
Ուր վարակում է  
Արդեն կանաչը,  
Ուր բարակում է  
Ասվերջ դեղինը  
Եվ—մեկ էլ տեսնես—  
Կար... ու էլ չկա:

Կըրուժե՞մ:

Վկա՝

Այն տափաստանը,  
Որ պապակին է դարեր շարունակ  
Ու հետոն է՝  
Սովյալ անունն է կրե,  
Խսկ իհմա այստեղ—  
Ծփուն արտերի մի անդաստան է

Որ երկրի բոլո՞ր գործապուրկներին  
Կարող է մենակ կուշտ կերակըրել...

17

Քեզ հույս եմ տալիս,  
Անկեղծ խոստանում,  
Որ քեզ,  
Սիրելի՞ ս,  
Չե՞մ թողնի, գնա,  
Բայց դարձյա՞լ լալիս,  
Չես հանգըստանում:

Եվ քիչ է մսում,  
Որ չհասկանամ:

Բայց հանկարծ— այնպես պարզ եմ հասկանում,  
Թե ինչո՞ւ բնավ խոսքի չես գալիս,  
Թե ի՞նչն է, որ քեզ հանգիստ չի տալիս:

Ճէ՞ որ, իսկապես, այնպե՞ս կուպեի  
Լինել անկըշիո  
Եվ առանց քաշի,  
Որ մեր մարդկային այս մաշկը թըշվառ,  
Որ մեր խեղճ կաշին  
Անվերջ չըքաշի,  
Չըտանի դըմկար  
Ա՛յն ծանրությունը,  
Որ բնավ չըւնեն  
Այս Լուսին կոչված բոլոր լըրբերը.  
Ա՛յն ծանրությունը,  
Կշիռն ու բեռը,  
Որից վըրկվելու,  
Որից փըրկվելու  
Վառ անըրջանքից լուռ կըկոցվելով՝

Բարակ ասեղի կետեր են դառնում  
Իմ խեղճ բիբերը:

Սակայն...

ի՞նչ արած.  
Դե՛հ, սերը սեր է—  
Լավ ես, թե վատ ես՝  
Ես եմ քո տերը.  
Դարձյալ չե՞մ լքի  
Ու չե՞մ հեռանա՝  
Կըշօպըրկումի հույսով տարվելով:  
Դարձյալ չե՞մ լքի  
Ու չե՞մ հեռանա՝  
Այնքանով գոնե մխիթարվելով,  
Թե անկըշության այդ զգացումը  
Դու քնիս մեջ ես երբեմն ինձ տալիս:

18

Սակայն դու եփի չես հանգըստանում:

Հասկանում եմ քեզ... մի վերջի՞ն անգամ:

Հասկանում—

և ի՞նչ.

Ահա մի բոպէ

Սիրուս սկըսեց կըրկին տըրովել

Իր քենով նախկին

Ու իին չարությամբ՝

Առանց նորօրյա խղճահարության:

Վերջասին ահա մտաբերեցի,

Որ պսակելիս չհարցըրեցին.

— «Որդյա՞կ իմ, տե՞ր ես»:

Չհարցըրեցին,

Բայց ես հասկացա,

Որ եթե հետո

Խոռվ լինես ու կույր,

Դաքնաս կոնդ ու թույլ՝  
Քես,  
Խչայես որ կաս,  
Պիտի ընդունեմ—  
Ե՛ քեզ լքելու իրավունք չունեմ:  
  
Հետո, իսկապե՞ս, համրացար հաճախ,  
Եվ նույնքան անգամ նաև խացար.  
Ով քո օգնական ձեռքին էր նայում՝  
Դու ժատորեն նույնիսկ վլացար  
Դատարկ խոսք ասել քաջալերումի,  
Ով արժանի էր սրտաբուխ ներման՝  
Ոչինչ չարժեցող մի բառ ներումի...

Նաև կա՞ղ եղար—  
Միշնադարներո՞ւմ,  
Երբ դար էր տևում քո ծանր տարին...

Եղար նաև կույր,  
Հիմա էլ հաճախ  
Խառնում ես աշ-ձախ  
Եվ չար ու բարի.—  
Ում տեսնել է պետք՝  
Դու չես նկատում.  
Ում միրել է պետք՝  
Նրան ես ատում.  
Ում պետք է ատել՝  
Ամենից հաճախ  
Սիրով ես պատում,  
Տալիս ես շոյանք.  
Ում պետք է խոյանք՝  
Նրան ոտնում ես.  
Ում գրկել է պետք՝  
Նրան գետնում ես.  
Անարժաններին՝  
Հասցենում փառքի,

Արժանավորին՝  
Մուրողի պարկի...  
Իմ սրտից իինա արյուն է կաթում,  
Արդար չարությունն ինձ մշուշում է:  
Երբ չուկելով իսկ՝  
Դարձալ իիջում եմ,  
Որ կյանքիդ համար կյանքը վտանգած  
Խնջնավոհ քաջին  
Զգիտեմ ինչու  
Չըրկում ես հանկարծ իր վորեղ աջից.  
Փըրկել ուկողիդ  
Գամում ես խաչի.  
Խարվում ես հաճախ հուղայող պաշից.  
Շոյված խոսքերից կեղծավոր բիճի՝  
Կյանքից ես վրկում ուղղամիտ լաճիդ.  
Դրախտի հույսով՝  
Չըրկիւմ ես նաև  
Քեզ կերակրող խոփից ու մածից.  
Ու չես տարբերում  
Պանիրը՝ գաջից.  
Հառաչը՝ հաչից,  
Ծաղիկը՝ դաշից...

Միջակությունը մետրաչափ շինած  
Ու սուր մըկրատով ինքը քեզ սինած՝  
Դու այդ քո մետրով-արշինով- գավով  
Չափում ես մարդկանց  
Եվ այնպես խուզում,  
Որ նբանք դառնան... հավասար գազոն:  
Եվ ո՞նց է ուզում  
Մըկրատը քո սուր—  
Մինչևիս առանց թույլ ափսոսանքի—  
Որ կյանքի թափուտ անտառը դառնա  
Չափած ու ձևած մի... կրոսայգի...

Ու ձիշտ այդպէս է՝  
 Հաճախ քեզ համար  
 Մե՛կ է  
 Մանվածքի բարակն ու հաստը...  
 Եվ չես ընդունում շողջուրուն աստղը—  
 Գերադասում ես աստղակույտ-բակումք...

Եվ ի՞նչ ես շինել քեզ համար լոկունգ՝  
 Ինչո՞վ ես դու քեզ շարունակ պինել:  
 Ինչո՞վ,  
 Եթե ոչ միշտ նույն... խոստումո՞վ,  
 Որ սակայն տարբեր կերպ է ընդունել—  
 Մերթ կոչմել է նա  
 Նիրվանա  
 Ու մերթ՝  
 Դրախտ ու շենուեթ...  
 Եվ մութ խորքերում քո անձավների  
 Առավել սակավ,  
 Քիչ կա ավելի  
 Կրծոտված ոսկոր վայրի կենդանու,  
 Քան թե քո մթին բանտ ու վնդանում...

Ծնում-մնում ես հազար բռնակալ  
 Ու... թույլ չես տալիս,  
 Որ այդ բառն անգամ  
 Գեթ հսչի:  
 Օ, չէ.  
 Ստիպում ես դու  
 Աստված էլ կոչել...  
 Այսքանից հետո՝  
 Ո՞նց ըստարտափես,  
 Ինչպե՞ս չըդողաս,  
 Երբ քեզ—  
 Վերջապե՞ս—

Կարող եմ լքել՝  
 Զգել—  
 <նոանալ,  
 Քո ամե՞ն տեսակ բերից վերանալ  
 Եվ ընկերանալ երշանկությանը—  
 Տիրանալ հիմա ուրի՛շ մի բախտի:

19

Բայց դեմ եմ կանգնում իմ ցանկությանը:

Ո՛չ,  
 Մինչև անգամ այսքանից հետո՝  
 Դարձյա՛լ չեմ դիմի ես արտագաղթի:

Սեղմ շըրթունքներիս՝  
 Սուր ձիչեր թառած,  
 Սրտիս մեջ՝  
 Լիքը բոյլոք ու հառաչ,  
 Դարձյա՛լ չեմ լքի  
 Ու չեմ հեռանա,  
 Բայց...  
 Դու էլ հիշի՛ր,  
 Էլ մի՛ մոռանա,  
 Որ հիմա պիտի քեզ խելո՞ք պահես—  
 Ո՛չ թե երեսս հնապանդ ու հեզ,  
 Ո՛չ էլ կոտըրված իմ սիրտը շահես,  
 Այլ—  
 Վերջ տաս բոլոր չարությունների՛դ...  
 <հիշի՛ր, որ տե՛րդ եմ,  
 Եվ ո՞չ թե գերիդ:

Վերին օվկիանոս ու երկնային ծով  
 Արդ բաց են իմ դեմ.  
 Կարող եմ արդեն  
 Վաղը կամ մյուս օր,

Անվախ-անվարան,  
Հանգիստ ճամփորդել  
Կամ գնալ այնտեղ,  
Ինչպես որ այսօր—  
Ուղեգիրներով—  
Ծովափ են գնում:  
Կամ առողջարան:

Կըգնա՞մ...  
Եվ իմ մարմինը հոգնած  
Կըթրջեմ հրի անձրևի ներքո—  
Չե՞մ վերադառնա հին խոց ու վերքով...  
Կապատվեմ գուցե թաքուն դողերից—  
Արմների մեջ ես ինձ կըսուզեմ...  
Կընդունեմ ցնցուղ բուժիչ շողերի—  
Մաշված ջղերս թերևս բուժեմ...

Մի երկնաջարժից ցած կիշնեմ փութով,  
Եվ այս անգամ էլ անտում ու ձրի,  
Չըհամարելով բնավ անվայել՝  
Մեկ այլ մոլորակ կընստեմ շուտով  
Եվ, խիղճը հանգիստ, կըտրամվայեմ  
Կանգառներից կուրկ հսկա ինարշուտով...

Իմ հիացագին ապշած աչքերին  
Կըշողան բոլոր կրակներն այն ծով,  
Որ տեսնում էր իմ Զորդանո քերին  
Մըսակեր հրի  
Բոցերի միջով...

Եվ աշխարհներն այն տիեզերական,  
Որոնց մասին է հորեղբայրս ասել՝  
«Բայց... պտըտվում են»,—  
Աշխարհներն այդ նույն

Թե ինձ՝

Լողորդիս,  
Վտանգի պահին հեռվից փարոսեն,  
Այս մոտիկից՝  
Ինձ ընդունելով,  
Օրորեն պիտի՝  
Որպես կարուսել...

Իմ տեսածներից ես կըսարմանա՞մ,  
Թե՛ հիանալով ապշած կըմնամ,  
Ու դրանից էլ  
Ես էլ միգուցե  
Քայլեմ Շուռումուռ,  
Ոլոր ու մոլոր,  
Ինչպես քայլում է մի ինչ-որ Սիրիուս...

Բայց ինչ էլ լինի՝  
Չե՞մ մնա այնտեղ,

Դարձյալ եւո կըգամ  
Եվ իմ շուրթերին  
Ես ներողության խոսքեր կըբերեմ,  
Որ ամոթահար-քըրտնած սըփոեմ  
Քո՛ ուցերի տակ՝  
Միակ տիրուհուս...

Ու եթե քեզնից  
Կամ—  
Ավելի շուտ—  
Չար փորձությունից լինի հրաման,  
Եվ վերևներում  
Ես—  
Լայկայի պես—  
Նույնիսկ սատկեմ էլ՝  
Ես քե՞զ կըճամփեմ սրտիս կարկերը—  
Սըրտիս կարկերի կարդիոգրաման...

Իսկ եթե մնամ ես ողջ ու առողջ,  
Նույնիսկ կապրուրվեմ,  
Խչպես այնպիսի՝ առողջարանում,  
Որ անձարին է նույնիսկ ճար անում,  
Ապա  
Ծիրկաթնի հըսկա կամուրջին՝  
Կանգառում վերջին,  
Իմ կոշիկներից թափ կտամ փոշին տիեզերական  
Ու երթագծով վար ընկնող աստղի,  
Անօդ անհունի և օդի միջով,  
Կըսուրամ կըգամ:

Ու եթե իրոք խելքը հավաքես,  
Այնժամ, հավատա՛,  
Թնքս էլ կօգնեմ քեզ,  
Եվ գիտե՞ս  
ինչո՞վ:

20

Վերին օվկիանոս  
Ու երկնային ծով  
Արդ բաց են իմ դեմ:  
Այստեղից այնտեղ  
Մեքենայուրյուն ես կարտահանեմ  
Ու կըներմուծեմ նոր մեքենաներ:  
Ես կարտահանեմ սև միտք ու խավար  
Ու կըներմուծեմ նույնչափ... սև խավիար:  
Ամենայն սիրով ես կարտահանեմ  
Կարձամիտ հավկուր-հավատեսների  
Ու ոչխարային լավատեսների  
Ե՞վ կուր հավատը,  
Ե՞վ հեկուրյունը՝  
Ուժից վեր բեռից միջտ շտապելու  
Եվ ոչ թե մեջքից ներքն թափելու

Այդ մարդկայնացած իին իշությունը,  
Եվ կըներմուծեմ դրա փոխարեն  
Լուրջ բաղդատելու  
Ու պաղ դատելու  
Հավետ անվըտանգ ա՛յն գժությունը,  
Ուր կատաղության նշո՞ւլի իսկ չկա,  
Ու մոլեգնության մի շյո՞ւլի իսկ չկա,  
Ուրեմնը՝ չկա չընչի՞ն իսկ առիթ զգուշանալու,  
Սակայն—  
Չըգիտես, թե ինչչի՞ համար—  
Լուրջ բաղդատելու  
Ու պաղ դատելու  
Հավետ անվըտանգ այդ գժությունը  
Ենթակա է միշտ... մեկուսացումի,  
Եվ այն էլ—  
Այն էլ... ո՞չ գժանոցում,  
Չէ՛ (երանի չէ՛ր) ...

Ես կուկենայի  
Եվ առևտըրի մի էժանացում,  
Որով Ճար լիներ  
Այս չար աշխարհի հերը անիծել—  
Մի նոր ու խորունկ հավատ ստանալ  
Դառնորեն կորած հույսերի գնոլ,  
Սառը վաճառել՝  
Ու շերմ ստանալ դրա փոխարեն.  
Խառնը վաճառել՝  
Ու սերմ ստանալ—  
Հատիկ-հատիկ սերմ.  
Եվ ճառ վաճառել՝  
Ու ճար ստանալ...  
Ես կուկենայի—  
Մեկփական անձիս ի գործածություն  
Պըլտորված ջրում ուռկան գցելու  
Քիչ փորձկածություն,  
Երբեք չգործած հանցանքիս դիմաց՝

Փոքր-ինչ թողություն,  
Եվ հեշտ կապուի՛ն  
Ու թութակելի՞ն  
Մեծ կարողություն...  
  
Ու ներմուծելով էժանության միտք՝  
Կարտահանեի տեղը՝ մտքերի ճոխ էժանություն:  
Կարտահանեի և չարդարացվող նոր դաժանություն,  
Որ դրա դիմաց ձեզ բավարարեմ  
Լայնացրությա՞մբ,  
Խըզնո՞վ,  
Գթությա՞մբ՝  
Թեկուկ դա թվա ինչքան հնացած,  
Նույնքան միամիտ:  
  
Ե՞ս,  
Որ լոկ ունեմ  
Կիսով քայլայված մի տընտեսություն՝  
Տիեզերական շուկա կըտանեմ  
Կարիք,  
Հո՞գ առատ,  
Պակասություննե՞ր,  
Որ տեղու տոտամ  
Հռախ ու կարքի քիչ պակասություն.  
Եվ հակասության լուծումի հուսով՝  
Ես կարտահանեմ  
Կարծիք ու փորձի,  
Խոսքի և գործի  
Զարմանահրաշ մի հակասություն...  
  
Բայց...  
Մինչև անգամ դիցուք վիկայի հարց էլ չինի—  
Եվ դուրին լինի հա՛ գնալ ու գալ  
Տիեզերական փակ սահմաններով,—  
Բայց չէ՞ որ մեկ է.  
Սատանա՞ն տանի,  
Ախար ո՞վ ինձ հետ առևտուր կանի  
Խոստ անհավասար այս պարհաններով:

Եվ այս պատճառով  
Ես ինձ չեմ զգում ինչ-որ պարագայուն,  
Մնում եմ նորից Ես անհատ մի անձ՝  
Ինչքան որ անուժ,  
Նույնքան էլ միանձն.  
Ու դուրս չըգալով՝  
Մնալով այստեղ,  
Սիա—  
անհատո՞ւց—  
Ուղարկում եմ ես Երկրի չորսբոլոր՝  
Կախյալ ու անկախ,  
Հըսկա և փոքրիկ ամե՞ն պետություն,  
Խորունկ սիրելու և չդրժելու մի վարպետություն  
Ու հետն է—  
Ոչ թե իբրև սուստ ռեկլամ,  
Այլ մի ակնառու պարզ ցուցադրում—  
Ես սե՞ր եմ ցրում  
Հորդ ողողելով  
Ու հեղեղելով  
Համաշխարհային դատարկված շուկան—  
Ունիվերմագներ,  
Խանութ ու դուքսան...  
  
Ինչպես որ ջոգից անվերջ բարակուլ  
Առվակի ջուրը բանդից են կապում  
Ճիշտ աղաքն էլ ես  
Հիմա բարության  
Որքան անվնաս,  
Նույնքան վարակող  
Մի բացիլային հորդ հոսք եմ թափում  
Նեսի-կեսթափուր  
Մարդկային սըրտում,  
Հանդում ու արտում,  
Օդ-մթնոլորտում:  
  
Եվ ամեն կարգի՝  
Բաց ու բերանփակ,

Խորուկ ու տափակ,  
Թե՛ մարդկայնության իրում թրծված,  
Թե՛ վառ հնոցից հում-հում վերցըված  
Ամե՞ն անորում  
Հիմա տեղում եմ,  
Հիմա հեղում եմ,  
Նույնիսկ մղում եմ  
Խոր մարդկայնությո՛ւն....

Զեկ իմ հասցե՞ն է գուցե հարկավոր.

Ինչո՞ւ եք քաշվում—

Խընդրե՞մ, ի՞նչ կա որ.

Դա պիտի գըտնի

Չափակը՝

իր մոր,

Թոռը՝

իր տատի,

Սիրահար տղան՝

Սիրածի սըրտում,

Մեծատառ Մարդը՝

Իր նման Մարդու,

Եվ մյուսներդ էլ—

Հեռու եք արդյոք,

Թե մոտ հարևան՝

Խընդրեմ.

Կարող եք հասցեագըրել.

«Այստեղ,

Հողագունդ,

Քաղաք Երևան,

Այն խելառ Մարդուն,

Որ շադ է տալիս

Սիրո թարմությո՛ւն—


Հավատարմությո՛ւն....»:

11—15. IV,

3—21. V. 59

Մոսկվա

# ՏՐԱՆՁԵՍԿԱ ԴԱ ՌԻՄԻՆԻ (ՀՍՏ ԴԱՆԹԵԲԻ)



Ինչպե՞ս եղավ,  
որ (տե՛ր աստված) այսպես եղավ...

Ի՞մ միամիտ-անգետ ձեռքով,  
Քո՞ կույր կամքով.  
Թե՞ պարզապես բախտի բերմամբ  
Անկարելին տնկվեց ձախում  
Մեկ այունի պես,  
Անհնարինն աջոսմ տնկվեց՝  
Երկրորդ մի այուն,  
Սյուներն այդ կույգ միացվեցին  
Անթուպատու հույսի լծով  
Եվ ստացվեց...  
Եվ չստացվե՞ց մի... կախաղան՝  
Մի այնպիսի հանցավոր սեր,  
Մի այնպիսի սեր ահօնի,  
Որից հետո չի կարելի  
Նախկին անվամբ ապրել կյանքում:  
Եվ այսուհետ ես Պաղո,  
Դու այսուհետ՝ Ֆրանչեսկա...

Ինչպե՞ս եղավ,  
որ (տե՛ր աստված) այսպես եղավ...

Ինչպե՞ս եղավ,  
Որ ողջ կյանքը թողած մի կողմ,  
Ասես ուրիշ էլ գործ չունենք,  
Հիմա պիտի, Ֆրանչեսկա՝,  
Տասը ծանոթ պատվիրանի անդաստանում  
Քաղիան անենք,  
Եվ ի՞նչ քաղիան տառապալից.  
Բա՛ն չգտնենք քաղիանելու...  
Միշտ պրաղված անկարելի այս քաղիանով,  
Եվ խաշվելով մի քրտինքով շիկսկրակ,  
Որ չի պտղում դեմքի վրա,  
Այլ պտղում է հեգ հոգու մեջ,  
Հիմա պիտի ստվերաջատ այս աշխարհում  
Ստվեր փնտրենք ու չգտնենք  
Եվ ստիպված տնկենք... ասե՛ղ,  
Որ ասեղի՝ ստվերի տակ  
Ոչ թե մի կերպ հանգստանանք,  
Այլ թաքցնենք մեր գաղտնիքը...

Ֆրանչեսկա՝,  
Այդ գաղտնիքը՝  
Գաղտնիքներից զարկուրելին,  
Հաստանալով հաստանում է,  
Ինչպես շյուղը օտար աչքում:  
Որտեղ որ է նա կրտանա գերան մի մեծ՝  
Այլևս մե՛ր աչքերի մեջ,  
Եվ մարդկանցից ամենաբուժն անգամ դարձյա՛լ կիասկանա,  
Որ մեկ իրար շաղկապողին Սեր չեն կոչում,  
Այլ անվանում Աններելի՛...

Ի՞նչ ես անում դու առանց ինձ.  
Ֆրանչեսկա՝:

Ես առանց քեզ այդ գերանն եմ անվերջ տաշում.  
Մեր գաղտնիքի ա՛յն գերանը,  
Որ մեր աչքում հաստանալով հաստանում է:

Ու տաշում եմ՝ ամեն ձևով,  
Մինչև անգամ եղունգներով իմ հնամազ:  
Ու տաշու յ եմ,  
Ու քերծում եմ,  
Ու ճանկուում,  
Որ բարակի՛,  
Գեթ բարակի՛...

Դու առանց ինձ արդյոք ի՞նչ ես միշտ երապում:  
Ես առանց քեզ երազում եմ,  
Թե սա, իբր, մի խլական սեր չէ բնավ,  
Իբր, միայն փոխ է տրված,  
Ու ես պիտի ժամանակին վերադարձնեմ իր տիրոջը:  
Ֆրանչեսկա՛,  
Ի սեր սիրո՛ խլականի՛,  
Ինձ այս սերը փոխին մի կերպ գտի՛ր,  
Որ իր փոխը փոխադարձեմ,  
Հետո էլ տամ շահ, բարձր տոկոս...

Իսկ այդ սերը՝  
Աններելին,  
Ինձ է ահա շրջափակել  
Նայսերական մի անիրավ սահմանի պես...  
Բայց դա քիչ է,  
Ֆրանչեսկա՛,  
Սահմանապահ զորամասերդ ավելացրու,  
Սահմանախախտ ամեն հայացք  
Եվ հետախույզ ամեն ակնարկ ձերբակալի՛ր,  
Ֆրանչեսկա՛:

Կա և ուրիշ մի կայսրություն՝  
Կովորերինը:  
Եվ վարժվել եմ այնտեղ ապրել ու գործելուն.  
Մթան մեջ էլ,  
Փակ աչքով էլ ես գտնում եմ  
Ողորկություն-կորությունները քո բոլոր,

Ակնկալիված նորությունները քո բոլոր,  
Որոնք— գուցե մինչև անգամ քեվսից բաքում —  
Որոնում են իմ շոյանքը,  
Որոնում են՝  
Աղվամապիդ յուրաքանչյուր շոշափուկով...  
Ի սեր արյան և թանկարյուն եղբայրության,  
Մի հրաշքով բաց անել տուր աչքերը կույր,  
Մի կերպ գտիր ամենաբուժ Հիսուս մի նոր,  
Որ նայեմ քեզ նախկինի պես՝  
Բայց աչքերով՝  
Ու նայելով բաց աչքերով՝  
Չտեսնե՛մ քեզ այս տեսությամբ...

Բայց աշխարհում  
Թե ամեն բան իր բույրն ունի և իր հոտը,  
Մի՛թե դժբախտ երջանկությունն է, որ չունի:  
Ա՛խ, չէ՛.  
Նա էլ իր բույրն ունի՝  
Քո արգելված մարմնի բույրը,  
Որ միայն ինքն է չարգելված  
Այն ամենից, ինչ ունես դու...

Տե՛ս,  
Ծառերի արյան ձնշումն ահա կրկին  
Բարձրանում է և բարձրանում այսքան գուցե,  
Որ գնում է ուշքը նրանց.  
Նրանք ճոճվում ուշակորուս, բայց չեն ընկնում:  
Ես վաղուց եմ եղբայրացել նրանց բախտին՝  
Քո՛ պատճառով,  
Ավելի ճիշտ՝ քո բռնընքի՛,  
Որ միայն ինքն է չարգելված  
Այն ամենից,  
Ինչ որ ունի քո արգելված այս մարմինը...  
Դու չես կարող  
Դառնալ անհոտ և անբռնուեք,  
Բայց աղաջում-պաղատում եմ,

Վերստացի՞ր նախկին բույրը:  
 Իսկ նախապես դու ունեիր ցորենի՞ բույր,  
 Սուլը ցորենի՞, ոչ թե սրճի,  
 Որ հանգստի ու քնի դեմ ունի իին ոխ  
 Եվ խոռվիք աջակիցն է ավանդական...  
 Դու ապնիվ ես,  
 Ինչպես ինքը որթատունկը,  
 Ընորհալի ողկույզի այես,  
 Եվ այսքանը ավելի քան բավական էր.  
 Պետք չէր դառնալ նաև գինը  
 Եվ առավել պետք չէ հետո օդի՞ դառնալ...

Իսկ ես մարդ եմ, ոչ թե ջայլամ,  
 Որ ամեն ինչ կուլ տամ իսկույն:  
 Իսկ ես մարդ եմ, ոչ թե ստվեր,  
 Որ հեշտությամբ  
 Կտրեմ-անցնեմ ամեն արգելք ու խոչընդոտ:  
 Եթե անգամ ամեն արգելք ու խոչընդոտ՝  
 Ո՛չ այս մեկը,  
 Այս միա՞ը,  
 Ֆլանչեսկա'...

Մենք առավել ենք մտերիմ,  
 Քան թե դադը և առվակը:  
 Մենք ավելի ենք մտերիմ,  
 Քան թե շունչը և կոկորդը:  
 Մենք առավել ենք մտերիմ,  
 Քան թե օղակն ու կոճակը:  
 Սակայն պիտի, Ֆրանչեսկա',  
 Հավիտենից հավիտյանը մնանք կարոտ  
 Մտերմությանն այն հասարակ,  
 Որ սփոռոցին է լուր թառում՝  
 Տերեկային անքուն-անգույն բուի նման,  
 Իսկ երբ հոգնում է նստելուց՝  
 Պողոտվում է լուսանմիոփի ուղեծիրով:

Ու բերանը,  
 Որ եղել է խոսքի փեթակ,  
 Նովյանը բերանը վերածվել է արդեն բանտի.  
 Կալանքել եմ այնտեղ բառեր՝  
 Սիրո՛,  
 Տենչի՛,  
 Ու ցանկությա՞ն բառնը անթիվ,  
 Ամեն մեկը՝ մի ավազակ,  
 Ամեն մեկը՝ մի հանցագործ,  
 Ես է՛ միակ պահակ բանտի...  
 Եվ նրանցից ո՞վ է արդյոք բանտարկյալը.  
 Բանտարկյա՞լը, թե՞ պահակը բանտարկյալի:  
 Եվ նրանցից ո՞վ պաելի է կաշկանդված.  
 Դուն հետև կալանվա՞ծը,  
 Թե՞ տնկվածը դուն առջն...

Ֆրանչեսկա',  
 Զէ՞ որ եթե մենք իրա՞ր չենք, ես քո՞նն եմ գեր:  
 Գոնե խղճա իբրև քոնի՞ն,  
 Եվ արձակիր բոլոր նրանց,  
 Եվ ավատիր ինձ էլ մի կերպ  
 Անվանարկու և խոշտանգող  
 Այս պաշտոնից բանտապահի...

Ա՛խ, մի՛ լսիր, Ֆրանչեսկա',  
 Իսկ լսել ես եթե արդեն՝  
 Մի՛ կատարիր իմ խնդիրքը,  
 Թե չէ հենց որ արձակեցիր փակ բերանը՝  
 Ես քեզ կասեմ...  
 ... Զարհուրելի՛ խոսքեր կասեմ:  
 Կասեմ, որ դու միշտ ինձ հետ ես,  
 Միշտ ինձ հետ ես,  
 Ինչպես ծուխը ծխախոտի՛  
 Բերնիս վրա,  
 Հագուստիս մեջ,  
 Իմ թռերում...

Քո անունց, անո՞ւնց լոկ  
Ինձ ձգում է,  
Ինչպես աղբյուրին անռապատռում.  
— Եվ գեղեցի՝ կ-գեղեցի՝ կ ես,  
Ինչպես մեղքը...  
— Իսկ բերանըդ հրաբխի խառնարան է...  
— Իսկ քայլքիդ տակ  
Ինքը հողն է հեռախոսում  
Հրահեղուկ իր արգանդից...  
— Իսկ աչքերըդ ապատամբած երկրներ են.  
Նոր արքայի են սպասում...  
— Կըշիկանան մատսերը... քեզ մերկացնողի  
Ու շիկացած՝ կեռերի պես կըկորանան,  
Իսկ քեզ այդպես՝ մերկ տեսնողը, անտարակույս,  
Տեղն ու տեղը և մեկընդմիշտ կը... կուրանա...

Ֆրանչեսկա՝,  
Ի սե՞ր աստծո,  
Ըմբերանիր ինձ վերստին և առհավետ:  
Ըմբերանիր և դրանով օգնիր դու ինձ,  
Որ ես դառնամ  
Երապեկի այն մարդն էի,  
Որ ստվերի՛ց, և ստվերի՛ց է ամաչում:  
Թե չէ այսպես բարբաջելիս ինքըս հիմա  
Զպիելու չափ շատ եմ նման  
Մի երշանի՛կ դատավորի,  
Որ իր անկուշտ վառարանը ձմեռային  
Տաքացնում է օրենսգրքի այն էջերով,  
Որոնցով նա ամբողջ կյանքում դատ է վարել...

Մեքենական դարում ապրել  
Եվ խեղաքրեն չկարենա՛լ փախչել հեռու։  
Որոշել եմ, քանի՛ անգամ,  
Նստել ինչ-որ մի մեքենա

Եվ... ագատել քեզ ինձանից—ինձ քեզանից:  
Բայց մի՛թե դու չես նկատել,  
Թե ինչպես են մեքենաներն ընկնում գործի։  
Բանալիի փոքրիկ շարժում,  
Վարելիքի չնչի՛ն հոսանք՝  
Եվ մեքենան կենդամանալ է սկսում,  
Սկսում է խայտալ, ինչպես...  
Ինչպես... կինը անկողնու մեջ իր սիրածի...  
Ինք ասա.  
Ես ի՞նչ տեսակ մեքենայով  
Եվ ո՞ւր փախչեմ  
Պատկերավոր այս աշխարհից...

Հավար տեսակ պատկերի հետ  
Հավար տեսակ լուրջուններ կան աշխարհում:  
Իմն ամենից ահավորն է,  
Որովհետև լցված է նա միշտ քեզանով:  
Ու ես ինքըս, որ մարդ էի,  
Քո պատճառով կարծես հիմա  
Նկարագարդ գիրք եմ դարձել.  
Հուշ—հիշատակ—հիշողություն՝  
Եղած—չեղած,  
Մթահանգած—մտահանգված,  
Գեղեցիկ ու զարհուրեկի.  
Ինչպես ինքըդ...

Եվ հոգուս մեջ  
Շինություն է և ավերմունք:  
Եվ գլխիս մեջ  
Դատարան է ու դատաւտան։  
Եվ աչքիս դեմ,  
Թոշունները, տե՛ս, երկինքն են նոսագրում,  
Եվ ինչուս է ոչ թե նրանց երգը վճիռ ու պարզունակ,  
Այլ քո քայլքի եղանակը  
Վսեմ ու պիղծ...

Ժպիտներից լավագույնը  
Փակ աչքերովն է երևի:  
Քոնն է հասցեն:  
Եվ լավագույն երազանքը  
Բաց աչքերովն է, անկասկած:

Նոյնն է հասցեն:  
Իսկ դու գիտե՞ս, թե մենք ո՞վ ենք:  
Մենք նրանք ենք.  
Ովքեր ինչքան խոնք են խոսե՞ւ  
Ողջը թերատ,  
Ովքեր ինչքան խոհ են խորհե՞ւ  
Ողջը լրիվ:

Նայի՞ր,  
Թղվատ սովերները  
Ինչո՞ր մի բան են բարբաջում.  
Թարգմանում ես ինձ երևի:  
Տե՛ս,  
Չքի մեջ շող-շառավիղն է կրնդացել.  
Պատճենում է ի՞նձ երևի:

Տե՛ս,  
Երկնքից սահանքվում է լոռությունը,  
Բայց խրվելով խոտ ու թփի թափության մեջ,  
Հոծ տաղարթում խիտ ծառերի.  
Կասեցվում է ու... վիշրջում,  
Եվ ի վերջո դառնում խշշոց—շրջյուն—սոսափ:  
Անիրավված այդ լոռությանն ինչո՞ւ մարդիկ  
Չեն անվանում հերուս և կամ գեթ նահատակ:  
Եթե հերոս կամ նահատակ չեն անվանում,  
Թող որ կոչեն կա՛մ իմ. կա՛մ քո անվամբ գոնե...

Համբերությունն այս քարեղենն  
Կարող է և ճաքել մի օր՝ ժայրի նման,  
Եվ այդ ճաքից բխելու է ոչ թե աղբյուր,  
Ժայթելու է սեր՝  
Խառնըլած ամոթի հետ,  
Այսինքն՝ արյուն լերդակալած...

Արևը՝  
Չար նկարչի պես,  
Նկարչական իր գործիքի կիկլոպային միակ աչքով  
Չորսբոլորքում՝ որոնում է իր—առարկա,  
Մարդ—կենդանի,  
Որ բոլորին այլանդակի՝  
Ամեն մեկին ի՛ր ստվերով:  
Փախչե՞նք սիրո կիկլոպային միակ աչքից.  
Չայլսնդակվենք...  
Բայց մինույն արեգակը  
Նաև բարի վարչավիր է.  
Չբաղված է ծառ ու ծաղկի,  
Խոտ ու հասկի  
Սանրվածքը հարդարելով:  
Այնպէ՛ս չանես,  
Որ քո ծանոթ ու սիրելի սանրվածքը  
Հանկարծ խախտվի ի՛մ մատներով:  
Օ՛, որանով մի շանրվածք չի ավերվի.  
Այլ մի աշխարհ՝  
Ամենասուրբն ամեն տեսակ աշխարհներից:

11. XI. 65  
Չանափիչ

**ԹՐՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Անլոկի զանգակատուն	. . . . .	5
Եռաձայն պատարագ	. . . . .	247
«Եվ այր մի՛ Մաշտոց անուն»	. . . . .	307
Ուշացած իմ սեր	. . . . .	331
Երգ երգոց	. . . . .	337
Նահանջ երգով	. . . . .	375
Հավատարմությունը սրտի արատ չէ	. . . . .	415
Ֆրանչեսկա դա Ռիմինի	. . . . .	451

**ՊԱՐՈՒՅՐ ՌԱՖԱԵԼՈՎԻՉ ՍԵՎԱԿ**

Երկերի ժողովածու 3 հատորով  
հատոր Երկրորդ

Պոեմներ

**ПАРУЙР РАФАЕЛОВИЧ СЕВАК**

Собрание сочинений в 3-х томах  
том второй

Поэмы

(На армянском языке)

Издательство «Советакан грох»  
Ереван, 1983

Խմբագիր՝ Ա. Ա. Քիշոյան

Նկարիչ՝ Լ. Հ. Մանասերյան

Գեղ. խմբագիր՝ Գ. Խ. Գյուրամիրյան

Տեխ. խմբագիր՝ Ս. Ս. Մինոյան

Հերստուգող սրբազրիչ՝ Օ. Ղ. Թերպյան

ИБ 4467

Հանձնված է շարվածքի 14. 12. 1982 թ.: Ստորագրված է տպագրության  
21. 03. 1983 թ.: Ֆորմատ  $84 \times 108^1/32$ : Թուղթ տպագր. № 1: Տառատեսակ՝  
«Մեացականան»: Տպագրություն՝ բարձր: 24,36 պայմ. տպ. մամ., 19,0  
իրատ. մամ.: Տպաքանակ 50.000: Պատվեր 2975: Գիրը՝ 2 ռ. 20 լուս.:

«Առվելական գրող» իրատարակչություն, Երևան-9, Տերյան 91:  
Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ իրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտությունների պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան փող. № 65:

Типография № 1 Госкомитета по делам издательств,

полиграфии и книжной торговли Арм. ССР.

Ереван, ул. Алавердяна, 65.